

Շ. Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ
ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՊԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ
XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Ш. Л. ХАЧИКЯН

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО
НОВОЙ ДЖУЛЬФЫ И ЕГО
ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИЕ СВЯЗИ
С РОССИЕЙ В XVII—XVIII ВЕКАХ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

9/479.25/1 +
9/47 + 57)1

SECRET


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

✓

Շ. Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ
ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

A II
76607



*Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

*Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր
Հ. Դ. Փավազյան*

*Գիրքը հրատարակության են Երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտորներ
Վ. Ա. Բալյուրովյանը և Խ. Ա. Մուշեղյանը*

Խաչիկյան Շ. Լ.

Խ.288 Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա
առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII—
XVIII դարերում /Պատ. խմբ.՝ Հ. Դ. Փավազյան; ՀՍՍՀ
ԳԱ Պատմ. ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988.—223
էջ, 1 թերթ|Նկ.:

Աշխատանքում ջուղահայ վաճառականների XVII—XVIII դա-
րերի հաշվմատյանների և արխիվային փաստաթղթերի ուսումնա-
սիրության հիման վրա քննարկվում են Նոր Զուղայի վաճառակա-
նության ծավալուն զործունեությունը և դերը, մասնավորապես, հայ-
առևտրական առևտրատնտեսական հարաբերություններում, ջուղահայ
նշանավոր առևտրական ընկերություններն ու նրանց կաղամակերպ-
չական սկզբունքները, հայ խոջայական միջավայրում վարկադրա-
մական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Մենադրությունը նախատեսված է պատմաբանների, տնտեսա-
գետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

0503020913

Խ 703(02)—88 27—87

ԳՄԻ 63.3(2) 46

+ 63.3(22) 46

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն 1988

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հին Զուղայում և տնտեսապես նրա հետ առնչվող վանանդ, Բիստ, Շոռոթ, Ագուլիս, Օրդուբադ, Շահկերտ և այլ հայկական գյուղաքաղաքներում հաստատված խոջաների մեծաշնորհն էր դարձել անդրկովկասյան երկրների և Իրանի մետաքսի հումքի արտահանումը եվրոպական շուկաներ՝ Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա:

Զուղահայ վաճառականների ծավալած առևտրական գործունեությունը իրենց բնօրրանում՝ Հին Զուղայում, հայտնի էր Իրանի պահակալ Շահ-Աբբասին: Այդ հանգամանքը հանդիսացավ 1604—1605 թթ. իրագործված «մեծ բռնագաղթի» («մեծ սուրգունի») տնտեսական սլաուճառներից մեկը: Բռնագաղթի ընթացքում հիմնահատակ կործանվեց վաճառաշահ քաղաք Հին Զուղան, որը նաև հայրենի մշակույթը վարդացնող մի ուրույն օջախ էր:

Շահ-Աբբասը Հայաստանից Իրան քշված խոջաների ու արհեստավորների համար բնակություն վայր հատկացրեց Իրանի նոր մայրաքաղաք Սպահանի արվարձաններից մեկը, ուր հայերը հիմնեցին նոր Զուղա քաղաքը: Շահը ծրագրում էր ջուղահայ վաճառականների օգնությամբ վարդացնել երկրի ներքին ու արտաքին առևտուրը, վերջինիս ուղին թուրքական ճանապարհներից տեղափոխել ղեպի Պարսից ծոց, հարստացնել իր զանձարանը, բարձրացնել նոր մայրաքաղաք Սպահանի տնտեսական նշանակությունը¹:

Օգտվելով իրենց վերապահված իրավունքներից ու ար-

¹ Հայ ժողովրդի սլաուճություն, հ. IV, Երևան, 1972, էջ 325:

տոնություններից (մասնավորապես առևտրի լիակատար ազատությունից), ջուղայեցիները ծավալեցին առևտրական լայն գործունեություն: Նոր Զուղան ստացավ նաև ինքնավարության իրավունք:

Նոր Զուղայի ինքնավար մարմինների մեջ ընդգրկված էին քաղաքի 20 թաղերի կառավարիչները՝ «տասնակավագները», արհեստավորների ավագը՝ «ուստաբաշին», վարչության ղեկավարը՝ քալանթարը, որն ընտրվում էր համայնքի և հաստատվում էր Իրանի շահի կողմից: Սրանք բոլորն էլ խոջայական ամենահարուստ գերդաստանների ներկայացուցիչներ էին՝ արտոնված համայնքի բոլոր գործերը տնօրինող աշխարհիկ ու հոգևոր վերնախավի կողմից:

Զուղահայ համայնքի ղեկավար մարմինների ղիտությամբ ու հրահանգներով էին լուծվում նաև հայ մշակույթի ու եկեղեցու հետ առնչվող և համահայկական նշանակություն ունեցող շատ հարցեր:

Իրանից Ռուսաստան, ինչպես նաև եվրոպական երկրներ արտահանվող ապրանքներից ամենագլխավորը մետաքսի հումքն էր: Զուղահայ առևտրականները կարևոր դեր էին կատարում նաև արևելյան և արևմտյան երկրների տնտեսական կապերի ամրապնդման գործում ընդհանրապես, մետաքսի հետ միասին արտահանելով արևելյան այլ ապրանքներ ևս. մետաքսյա տարբեր գործվածքներ, ուղտի բուրդ, գորգեր, թանկագին քարեր, ոսկյա զարդեր, խոնկ, սուրճ, լեղակ, արևելյան բազմապիսի համեմունքներ և բազմաթիվ այլ ապրանքներ:

Եվրոպայից ու Ռուսաստանից հայ վաճառականները Անդրկովկաս ու Իրան էին ներմուծում այդ երկրներում արտադրվող և արևելյան շուկաներում մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ: Ռուսաստանից արտահանվող ապրանքների մեջ գերակշռում էին տարբեր կենդանիների մորթիները, և դրանցից կարված մուշտակներն ու գլխարկները, ինչպես նաև եվրոպական երկրներից Ռուսաստան ներմուծվող բազմաթիվ ապրանքներ՝ մահուդի գործվածքներ, ժանյակ-

ներ, ժամացույցներ, հեռադիտակներ, ակնոցներ, ասեղներ, պերճանքի իրեր, մանուֆակտուրային արտադրութեան տարրեր արտադրատեսակներ և այլն:

Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները ներթափանցելով նաև Հնդկաստան, Հնդկաշին, հեռավորարևելյան մի շարք երկրներ և հաստատելով այդ վայրերում կայուն հայկական դադուքներ, սկսեցին իրենց ակտիվ մասնակցութեամբ բերել Արևելքի և Նվրոպայի միջև կատարվող ապրանքաշրջանառութեան ընդլայնման գործին:

Նշենք նաև, որ Նոր Զուղայից դեպի հեռավոր կողմեր ծավալվող այս առևտրատնտեսական գործունեութեամբ իր նշանակալի հետևանքները թողեց նաև երկրի մշակութային կյանքում: Կարևոր է ջուղահայ բնակչութեան ներգործութեամբ մի կողմից հայ-իրանական, մյուս կողմից՝ հայ-ռուսական մշակութային հարաբերութեան ներքին վրա:

Նոր Զուղայի տնտեսական պատմութեան խնդիրների լուծման համար անհրաժեշտ մեթոդական նախապայման է հանդիսանում առաջին հերթին ժամանակի քաղաքական-տնտեսական առավել կարևոր իրադարձութեանների վերականգնումը և նրանց լուսի ներքո ջուղահայ վաճառականների առևտրական գործունեութեան յնարակումը: Այդպիսի իրադարձութեաններից են առևտրական պայմանագրերը, որոնք լավագույնս արտահայտում են պայմանավորվող կողմերի առևտրատնտեսական քաղաքականութեան ներքին բովանդակութեամբ, բարձրացնելով խոջայական կապիտալի տարերային գործունեութեան բարդ մեխանիզմը պատմական փաստի աստիճանի: Այս իմաստով Նոր Զուղա հայաքաղաքի վաճառականութեան բաղմակողմանի գործունեութեան համար շափանիշ է դառնում 1667 թ. առևտրական պայմանագիրը: Դրա շնորհիվ կարելի է հետևել, թե ինչպես է ջուղահայերի առևտրական գործունեութեամբ տեղափոխվում հայ-ռուսական հարաբերութեան ներքին ուղիքը և հատկապես այնտեղ ձևավորում իր պատմաքաղաքական ամենամեծ նշանակութեամբ հայ ժողովրդի համար:

1667 թ. ռուսական արքունիքի և Նոր Զուղայի հայկական համայնքի ինքնավար մարմինների ներկայացուցիչների (և ո՛չ թե կոմպանիայի, ինչպես փորձում ենք ցույց տալ աշխատության I գլխում) միջև կնքվում է նշանավոր առևտրական այն պայմանագիրը, որի թեւադրանքով հայ վաճառականները, մի շարք արտոնութւոյններ ստանալով, պարտավորվում են այսուհետև Իրանից արտահանվող մետաքսի հումքի բեռները Եվրոպա փոխադրել միայն Ռուսաստանի վրայով: 1673 թ. վերանայվում են այս պայմանագրի որոշ կետեր, հարմարեցվելով ժամանակի պահանջներին, իսկ դարավերջին մեծ չափերով ընդարձակվում են հայ վաճառականների գործունեության շրջանակները Ռուսաստանում: Հայ-ռուսական տնտեսական կապերն ավելի լայն ծալալ են ստանում Պետրոս I-ի գահակալութւան տարիներին (1682—1725): 1711 թ. մարտի 2-ին Պետրոս I-ը հրապարակեց մի նոր հրամանագիր՝ հայ վաճառականներին նախկինում տրված արտոնութւոյնները վերահաստատելու մասին: Այս քաղաքականութւան դրական հետևանքները չուշացան: XVIII դ. 10-ական թվականներից սկսած հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներից շատերը սկսեցին ընդարձակել տնտեսական կապերը Ռուսաստանի հետ, ավելի մեծ չափերով օգտագործելով Աստրախան—Մոսկվա—Արխանգելսկ ճանապարհը՝ Իրանի և Անդրկովկասի տարբեր շրջաններից արտահանվող հում մետաքսը Ռուսաստանի վրայով Եվրոպա փոխադրելու համար:

XVIII դ. 40-ական թվականներին, տարբեր ճանապարհներ ընտրելով, խոջայական առևտրական կապիտալի ներկայացուցիչներից շատերը դուրս գալով Նոր Զուղայից, բնակութւոյն են հաստատում տնտեսական ավելի նպաստավոր պայմաններ ունեցող երկրներում, հիմնականում Ռուսաստանում, Հնդկաստանում, ինչպես նաև Իտալիայում, Ավստրիայում: Այսպես, օրինակ, կաղարչանները մեծ հարստութւան տեղ դարձան և բացառիկ դիրքի հասան այն ժամանակ, երբ դուրս եկան Նոր Զուղայից և մշտապես բնակութւոյն հաստատեցին Ռուսաստանում, դրական դեր կատարելով երկրի

տնտեսական զարգացման մեջ, իսկ Շահրիմանյանները՝ Ի-տալիայում:

Նոր Զուղայի տնտեսական պատմության հարցերը տարբեր առիթներով շոշափվել են մի շարք ուսումնասիրողների, այն է՝ գաղութի հմուտ քննիչ Հովհ. Տեր-Հովհանյանցի, Լևոնյի, Աշ. Հովհաննիսյանի, Լ. Խաչիկյանի, Հ. Փափաղյանի, Վ. Բայբուրդյանի, Ա. Աբրահամյանի, Վ. Պարսամյանի, Վ. Ոսկանյանի, Ն. Կուկանովայի, Ա. Յուլիտի, Ռ. Կյուլպենկյանի, Ռ. Ֆեոֆերի և այլոց կողմից:

Զուղահայ վաճառականների առևտրատնտեսական հարաբերությունները լուսաբանված են հայ պատմագիտության նշանավոր գեմքերից մեկի՝ Լեոյի (Առաքել Բաբախանյան) «Դրվագներ հայ կղերական դիվանագիտության պատմության» ընդհանուր խորագիրը կրող կիսավարտ աշխատության I հատորում²: Հեղինակը ծրագրել էր հինգ ընդարձակ հատորներով ներկայացնել հայ առևտրական կապիտալի քաղաքական-հասարակական դերը հայ ժողովրդի պատմության մեջ: Մտադիր էր, մասնավորապես, ցույց տալ հայ ժողովրդի ազատագրական պայքարի էտապները՝ սկսած XVI դարից մինչև XIX դարի վերջերը, երբ կապիտալիստական հարաբերությունները հաղթանակում են Հայաստանում կամ, ինչպես ենքն է նշում. «խոջայական կապիտալը վերջնականապես տեղի է տալիս նորածին արդյունաբերական կապիտալին»: «Խոջայական կապիտալը» խորագիրը կրող հատորում գիտական շրջանառության մեջ դնելով նոր նյութեր, Լեոն փորձել է բացահայտել Զուղայի և նրա հետ կապված հայկական առևտրական կենտրոնների կատարած դերն Իրանի և Նվրոպայի երկրների միջև ծավալվող առևտրում, ցույց տալ Հայաստանի ազատագրման համար մղված պայքարում խոջայական կապիտալի ներկայացուցիչների կատարած դեկավար դերը, այդ դասի ներկայացուցիչ համարելով Իսրայել Օրուն ու ազատագրական շարժման մյուս ներկա-

² Տե՛ս Առ, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական և հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934:

յացուցիչներին: Սակայն նա գերազնահատիկ է առևտրական կապիտալի դերը պատմության մեջ, բավարար չափով չի պարզաբանել հայ ժողովրդի ուսական կողմնորոշման պատմական պրոցեսի իրական բովանդակությունը և բախտորոշ նշանակությունը Արևելյան Հայաստանի ազատագրման գործում:

Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, առևտրական հարաբերությունների բազմազան երևույթներին անդրադարձել է Ա. Գ. Հովհաննիսյանը իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության»³ աշխատության մեջ:

Տնտեսական պատմության մի շարք կարևոր հարցերին մեծ ուշադրություն է հատկացրել Լ. Ս. Խաչիկյանը: Նա իր աշխատանքներում վեր է հանել նոր նյութեր Հայաստանի, Միջին Արևելքի երկրների տնտեսական պատմության, ջուղահայ վաճառականության միջսոցալին առևտրում խաղացած դերի և հարակից այլ հարցերի վերաբերյալ: Այս տնտեսակետից ուշադրով է հատկապես Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի համատեղ աշխատանքի արդյունքը՝ «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը», որով հիմք դրվեց «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի⁴:

Զուղահայ վաճառականության դերի ուսումնասիրման

³ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959:

⁴ Տե՛ս Լ. Խաչիկյան, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձևագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը. Բանբեր Մատենադարանի, № 5, 1960, էջ 21—42: Լ. Խաչիկյան, Յովհաննես Զուղայեցու հաշվետումարը, „Armeniacae“, Melanges d'Etudes Arméniennes, Վենետիկ, 1969, էջ 241—252; Levon Khachikian, The ledger of the merchant Hovhannes Goughayetsi, Journal of the Asiatic Society, vol. VIII, № 3, 1966, Calcutta; Levon Khachikian, Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682—1693), „Annales“, Paris, 1967, p. 231—278; Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը, աշխատասիրություն Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, 1981 (այսուհետև՝ «Հովհաննես Զուղայեցու հաշվետումարը»):

քնագավառում ղգալի աշխատանք է կատարել Վ. Ա. Բայ-բուրդյանը: Նա իր «Նոր Զուղայի հայկական գաղութը XVII դարում»⁵ աշխատության մեջ, ինչպես նաև հոգևածներում, հանգամանորեն քննարկել է Շահ-Աբբասի տնտեսական և քաղաքական ծրագրերը կապված հայ առևտրական կապիտալի հետ, ջուղահայ վաճառականության գործունեությունը, նրա դերը Իրանի և արևմտաեվրոպական երկրների տնտեսական ու քաղաքական հարաբերություններում, ուսական տրանզիտ ուղին և այլ հարցեր:

Նոր Զուղայի հայ վաճառականության դերի, առևտրատնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն հայ վաճառականների կազմած ելումուտային գրքերը (հաշվեմատյանները) և դրանց հետ առնչվող աբխազային փաստաթղթերը, որոնց որոնման, հայտնաբերման և ուսումնասիրության աշխատանքները կարող են շատ արդյունավետ լինել ինչպես հայ-ուսական, այնպես էլ Նվրոպայի, Հնդկաստանի և, նույնիսկ, հեռավորարևելյան երկրների առևտրատնտեսական կապերի բացահայտման համար:

Նշված հարցերի պարզաբանման համար օգտագործել ենք հետևյալ սկզբնաղբյուրները (թվարկումը կատարում ենք ժամանակագրական հերթականությամբ)։

1. Կոստանդ Ջուղայեցու «Վասն նորահաս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ» (կոչված նաև «Աշխարհաժողով») աշխատությունը: Այն շարադրված է 1685 թ. Նոր Զուղայում (Մաշտոցի անվան Մատենադարան, № 10704 ձեռագիր):

2. Տեր Դավթի որդի Հովհաննես Ջուղայեցու 1682—1693 թթ. Իրանում, Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում գրված «Հաշվետվումարը»⁶ (Լիսաբոնի Աղգային գրադարան, № 7970 ձեռագիր):

⁵ См. В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в врано-европейских политических и экономических связях), Е. 1969.

⁶ См. «Հովհաննես Ջուղայեցու հաշվետվումարը»:

3. Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, գրանցված է 1711—1718 թթ. Իրանում, Ռուսաստանում, Հոլանդիայում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6241)։

4. Եղիա Կարնեցու նամակները, հաշվետուամրից արված քաղվածքները և նրա անձնական գործերի մեջ պահվող այլ փաստաթղթեր, որոնք ընդգրկում են 1711—1725 թթ.։ Մրանք պահվում են «Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի» «Ռուսաստանի կապերը Հայաստանի հետ» ֆոնդում⁷։

5. Նաղարեթի որդիներ Հարություն, Աղաղար և Մանուկ Լաղարյանների առևտրական ընկերության «Ռուզնամայ» (օրագիր) կոչվող հաշվեմատյանը, որ կազմել է Հարությունը 1741—1759 թթ. Սպահանում, Ռեշտում, Աստրախանում, Մոսկվայում և Պետերբուրգում (Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Լաղարյանների ֆոնդ, թղթապանակ № 101, գործ № 123, վավերագիր № 1)։

6. Հարություն Լաղարյանի 1744—1745 թթ. Մոսկվայից գրած 100-ից ավելի նամակների սեագիր օրինակների ժողովածուն, որը պահվում է Մատենադարանում 6240 համարի տակ։

7. Հետաքրքրական շատ նյութեր կան Բրիտանական թանգարանի (այժմ՝ Բրիտանական գրադարան) Օ. Ք. Բ. Lansdowne 1047 և 1048 համարների տակ պահվող հայերեն շուրջ 335 փաստաթղթերի մեջ, որոնք պարտամուրհակներ, փոխանցագրեր, վարկային տարբեր ընույթի փաստաթղթեր, կտակներ և նման այլ գրություններ են՝ շարադրված XVIII դ. առաջին կեսի ընթացքում Նոր Զուղայում, Սուրաթում, Մադրասում, Կալկաթայում, Բասրայում և այլ առևտրական կենտրոններում ու խոշոր քաղաքներում։ Փաստա-

⁷ Տե՛ս «Եղիա Կարնեցու դիմանը», նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, Առաջարանը և ծանոթագրությունները Ա. Գ. Արրահամյանի, Երևան, 1968 (այսուհետև՝ «Եղիա Կարնեցու դիմանը»)։

թղթերից մի քանիսի վրա կան հնից եկող համարներ, որոնց տակ դրանք պահվել են նոր Զուղայում⁸:

8. «Աստրախանի Հայոց դատաստանագիրքը»⁹, որի մի քանի բաժինները, հատկապես 4-րդ գլուխը՝ «Վասն սանահիս», 5-րդը՝ «Վասն գրաւութեան» և մասնավորապես, 15-ը՝ «Վասն բարաթի» պարունակում են հետաքրքրական նյութեր, որոնց մեջ առկա են նաև պարտամուրհակների և վարկային գործարքների մի շարք օրինակելի ձևեր:

9. XVII—XVIII դարերի հայ-ռուսական հարաբերությունների փաստաթղթերի ժողովածուները, որոնք շրջանառության մեջ են դնում բազմաթիվ արժեքավոր տվյալներ կապված Ռուսաստանի, Անդրկովկասի և Իրանի հետ¹⁰:

⁸ Ըստ փաստաթղթերի լուսանկարների վրա պարզ երևացող համարանիշների կարող ենք ասել, որ Ստեփան դի Խոջիանի և Jacob-ի գրանցման ժամանակ դատարանում եղել է առնվազն 1586 փաստաթուղթ, իսկ մեզ է հասել մոտ 335-ը: Կորել է 1251 փաստաթուղթ: Այս փաստաթղթերի մասին անհ. A catalogue of the armenian manuscripts in the British Museum. By Frederic Cornwallis Conybeare, London, 1913, էջ 352—353: Ս. Տեր Մ. Գրիգորյան, Հայկական հին ձեռագիրներ Հոնդոնի Բրիտանական թանգարանում, «Բազմավեպ», 1913, էջ 5—7:

1746 թ. անգլիացի ազմիրալ Գրիֆինը Հնդկական օվկիանոսում բռնադրավեց իսպանական մի ընկերության պատկանող «Սանտա Կատարինա» անունով առագաստանավը, որը վարձել էին մի քանի հայ վաճառականներ Բասրայից Կալկաթա ճամփորդելու նպատակով: Դա բավականին տարածված երևույթ էր, քանի որ եվրոպական գաղութարարները Հնդկական օվկիանոսում չկարողանալով տնտեսապես մրցել հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների հետ, փորձում էին ամեն կերպ խանգարել հայ վաճառականների ծովային առևտուրը: Այս մասին անհ. Ю. Г. Барсегов, Из истории борьбы армянского купечества против европейского пиратства в XVII в., «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1984, էջ 35—42: Հայերը 1751 թ. Հոնդոնում անգլիական պետության դեմ դատ բացեցին, պահանջելով վնասի հատուցում: Ի նպաստ իրենց դատի մեջտեղ բերեցին վերոհիշյալ փաստաթղթերը: Դատավարությունից հետո առաջին լորդ Լանդսդաունը ձեռք բերեց վերոհիշյալ չափազանց արժեքավոր փաստաթղթերը և ապա նվիրեց Բրիտանական թանգարանին:

⁹ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967:

¹⁰ «Армяно-русские отношения в XVII веке», Сб. документов,

Մեր նպատակն է եղել նախ հնարավորին շափ հավաքել» համախմբել և հետազոտել արխիվային փաստաթղթերը, ելումուտային հաշվեմատյանների գրանցումները, որոնք համարյա ուսումնասիրված չեն, և որոնց հիման վրա միայն հնարավոր է պարզել մի շարք խնդիրներ, այն է հայ առևտրական կապիտալի կենտրոն Նոր Զուղա հայկական գաղութի ինքնավար մարմինների կառուցվածքն ու գործունեության շրջանակները, դերն ու նշանակությունը՝ կապված 1667 թ. և հետագա տարիներին կնքված հայ-ռուսական առևտրական սլայմանագրերի հետ, ջուղահայ խոշոր առևտրական ընկերությունների կառուցվածքն ու կազմակերպման սկզբունքները, հետևել առևտրական, վարկադրամական հարաբերությունների, վարկավորման տարբեր ձևերի զարգացման ընդհանուր դինամիկային և վերոհիշյալ խնդիրների հետ սերտորեն առնչվող հարակից այլ հարցեր:

т. I, под редакцией проф. В. Парсамяна, Е., 1953. «Армяно-русские отношения в первой трети XVIII века», Сб. документов, т. II, ч. 1, под редакцией Ашота Иоаннисяна, Е., 1964. «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века», Сб. документов, т. III, отв. редактор В. К. Восканян, Е., 1978.

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը և Նոր Զուղայի ինքնավար մարմինները

XVII դ. կեսերին արևելյան բաղամասի վերկրներում տնտեսական ամուր հենակետեր էին ստեղծել եվրոպական առևտրական կապիտալի, միմյանց դեմ անհաշտ պայքար մղող երեք հզոր կաղամակերպություններ: Դրանցից առաջինը անգլիական Արևելա-հնդկական կոմպանիան էր, որ կյանքի կոչվեց 1600 թ. և գոյատևեց մինչև 1858 թ.: Երկու տարի անց՝ 1602 թ., միմյանց դեմ մրցակցող մի քանի կոմպանիաների համաձուլումից ստեղծվեց Հոլանդական, կամ Նիդեռլանդական կոմպանիան (դադարել է գոյություն ունենալ 1798 թ.), իսկ 1664—1770 թթ. մեծ գործունեություն էր ծավալել նաև Ֆրանսիական Արևելա-հնդկական կոմպանիան: Իրենց մայր երկրում ձեռք բերելով Արևելքի հետ առևտուր անելու մենաշնորհը, այդ կոմպանիաներն ստեղծեցին զինված ուժեր ու ռազմական նավատորմ և արյունահեղ պատերազմներ մղելով զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող հեռավորարևելյան ժողովուրդների դեմ, իրենց դաժան տիրապետությունը հաստատեցին Հնդկաստանի, Հնդկաչինի, ինդոնեզիայի, Ֆիլիպինյան կղզիների վրա, դարեր շարունակ շահագրգռելով իրենց կողմից նվաճված ժողովուրդներին: Վերոհիշյալ կոմպանիաները լիազորված էին իրենց երկրների պետական մարմինների կողմից կառուցելու բերդեր, ամրություններ, պայմանագրեր կնքելու տեղական

իշխանությունների հետ, պատերազմելու՝ նոր երկրամասեր գրավելու համար և այլն¹։

Առևտրական ամենադոր աշտ կոմպանիաները կյանքի էին կոչվել բազմաթիվ խոշոր վաճառականների, բանկիրների, կալվածատերերի, պետական բարձրաստիճան պաշտոնյաների կապիտալներով։ Հոլանդական կոմպանիան, օրինակ, հիմնադրվել էր 6,5 մլն ֆլորին դրամագլխով, որի կեսից ավելին պատկանում էր Ամստերդամի վաճառականներին ու բանկիրներին։ Սրանք վճռական դեր էին կատարում նաև կոմպանիայի ղեկավար մարմիններում։ Կոմպանիաների հասույթները համամասնաբար, ըստ իրենց մուծած դրամագլխի և ձեռք բերած ակցիաների, բաժանվում էին բոլոր փայտատերերի միջև։ Առյուծի բաժնին, բնականաբար, տեր էին դառնում խոշորագույն փայտատերերը։

Միջազգային ապրանքափոխանակության մեջ, հնագույն ժամանակներից սկսած, առաջնակարգ նշանակություն ուներ մետաքսի հումքը, որի պահանջարկը Եվրոպայում շեշտակի աճեց մանավանդ XVII դ. կեսերին։ Մետաքսի արտադրության համաշխարհային նշանակություն ունեցող հիմնական կենտրոնները գտնվում էին Իրանի հյուսիսային շրջաններում՝ նախ Գիլանում (որտեղ արտադրվում էր Իրանի մետաքսի գրեթե կեսը), ապա Մազանդարանում և Խորասանում։ Կարևոր նշանակություն էր ստացել նաև Անդրկովկասը, հատկապես Շիրվանը, Վրաստանի արևելյան շրջաններն ու Ղարաբաղը։ Ադամ Օլևարիուսի հաղորդած տվյալներով, «հենց միայն Գիլանը հաջողակ տարիներին տալիս է 8 հազար հակ մետաքս, Շիրվանը և Խորասանը մատակարարում էին 3 հազար հակ, Մազանդարանը և Ղարաբաղը՝ 2 հազար։ Միայն շուրջ 1 հազար հակն էր օգտագործվում երկրի (Իրանի) ներսում»²։

¹ S. A. H. Чистозвонов, Крестные отцы Нидерландской Ост-Индской компании, «Новая и новейшая история», 1976, № 4, с. 130; № 6, с. 134.

² Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 гг., составленное секретарем

ԱՅԵ
7660


Այսպիսով, արտադրվող հումքի 90%-ից ավելին նախատեսվում էր եվրոպական երկրների պահանջարկը բավարարելու համար, իսկ այն տարեցտարի հսկայական չափերով ավելանում էր, քանի որ մետաքսե գործվածքների գործածությունը լայն տարածում էր գտնում ամենուրեք: Լեյն օգտագործում էին ոչ միայն անգլիական դասին պատկանող մեծահարուստ անձինք, այլև բուռն ղարգաջման ընթացքի մեջ մտած քաղաքների բնակչության բարեկեցիկ խավը: Անգլիայի, Հոլանդիայի, հետադաշյում նաև Ֆրանսիայի արագ զարգացող մետաքսագործական ձեռնարկությունները ընդարձակվելով՝ բավարարում էին անընդհատ աճող մետաքսե գործվածքների պահանջարկը, ընդառաջելով նաև արագ փոփոխվող նորաձևությունը³:

Բնականաբար, արդյունաբերողները մտահոգված էին մետաքսի հումքի արտահանության վայրերի հետ անմիջական կապեր հաստատելու, այն ավելի էժան գներով ձեռք բերելու և ապահով ու կարճ ճանապարհներով իրենց երկրները փոխադրելու հոգսերով: Կար երեք ճանապարհ: Առաջինն ու հնագույնը Թուրքիայի վրայով անցնող ավան-

тарем посольства Адамом Олеарием, М., 1870, с. 791. Н. Г. Куказова, Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII—первой половине XIX вв., Саранск, 1977, с. 69.

Նշենք նաև, որ արտադրվող մետաքսի շափի մասին կան նաև այլ, իրար հակասող տվյալներ: Ըստ Շարդենի, XVII դ. կեսերին Իրանից ամեն տարի արտահանվել է 22 հազար հակ մետաքս (ան՝ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 44), իսկ ըստ Գրիգոր Լուսիկովի «տարլն մօտ ԸԹ (8000) խակ Շային քուլի հրկրումն (այսինքն՝ ողջ Իրանում) ապրիշում դուս գիու, որի մին խակն 2 (6) փուտ այ» («Армяно-русские отношения в XVI веке», т. I, с. 71): Նույնանման տվյալ կա նաև ուսսերեն մի գրության մեջ. «Ղզլբաշից ամեն տարի դուրս է գալիս մոտ 8 հազար թայ հում մետաքս» (նույն տեղում, էջ 46): Եթե Շարդենի տվյալը չափազանցված համարենք, իսկ Լուսիկովի տվյալը՝ նվազեցված, կգտնք այն համոզման, որ իրականությունն ավելի մոտ է Ադամ Օլեարիուսը:

³ Տե՛ս А. Д. Ролова, Основные черты экономического развития Италии в XVI—XVII вв., «Возникновение капитализма в промышленности и сельском хозяйстве стран Европы, Азии и Америки», М., 1968, с. 85—86, 92—93.



դեպի Միջերկրական ծովի արևելյան ափերը, անցնելով նաև պատմական Հայաստանի նահանգներով: Այս ճանապարհով առևտուր էին անում գերազանցապես հայ վաճառականները՝ թուրքական պետական գանձարանին վճարելով գրեթե այնքան մաքս, որքան վճարում էին մետաքսը դնելիս:

Երկրորդը, Դիլանից Կասպից ծովով դեպի Աստրախան, այնուհետև Ռուսաստանի վրայով և Սպիտակ ծովով դեպի եվրոպական երկրներ տանող ճանապարհն էր: Այստեղ ևս հայերն առաջին տեղն էին գրավում: Երրորդ ճանապարհը ցամաքային ուղիներով ձգվում էր դեպի Պարսից ծոցի նավահանգիստներն ու այնուհետև օվկիանոսային ուղիներով դեպի Եվրոպա:

Կասպից ծովով դեպի Ռուսաստան տանող ճանապարհը շատ ավելի ապահով էր, ձեռնառու և կարճատև քան այս երրորդ և նորագույն ճանապարհը: Չնայած դրան, հայ վաճառականները փորձում էին այս ճանապարհով կատարվող առևտրի մեջ ևս իրենց մասնակցությունը բերելու⁴:

Մետաքս վաճառող կողմը՝ Պարսից շահն ու արքունիքի հետ սերտ կապերի մեջ եղող հայ վաճառականները, ինչպես նաև եվրոպական երկրների մետաքսե գործվածքներ արտադրող ձեռնարկատերերը, հասկանալի է, որ ձգտելու էին առավել չափով օգտվելու ամենից ավելի ապահով, կարճ, ուստի և քիչ ծախսեր պահանջող ճանապարհից: Ուսումնասիրողների մի զգալի մասը նշում է, որ այդպիսին էր Կասպից ծովով և Ռուսաստանով անցնող վերոհիշյալ ճանապարհը:

Սպիտակ ծովով Ռուսաստան ներթափանցելու և Վոլգ-

⁴ Տե՛ս B. A. Баһыртян, նշվ. աշխ., էջ 31—33: Այս աշխատությունն մեջ տվյալներ կան այն մասին, որ 1580 թ. հետո, երբ Իսպանիան և Պորտուգալիան միասնական պետություն կազմեցին, հայերը մետաքսի բեռներ էին փոխադրում օվկիանոսով, հասցնելով այն Իսպանիայի Կադիքս նավահանգիստը, չնայած ստիպված էին Հորմուզում վճարել պորտուգալացիներից գանձվող մաքսի կրկնապատիկը:

Կասպյան ճանապարհով Իրանի ու արևելյան այլ երկրների հետ անմիջական կապ հաստատելու գծով առաջին լուրջ քայլերը կատարել էին անգլիացիները՝ դեռևս XVI դ. կեսերից: Անտոնի Ջենկինսոնն էր, որ որպես «Մոսկովյան առևտրական ընկերության» գործակալ ստացավ այդ ճանապարհով առևտուր անելու որոշ առանձնաշնորհումներ: Նրան հետևեցին կոմպանիայի ուրիշ անդամներ ևս⁵: Սակայն ռուսական իշխանությունները գիտակցելով այն մեծ վտանգը, որ սպառնալու էր ռուսական ներքին շուկային և արտաքին առևտրական կապերին անգլիական կապիտալի ներթափանցման հետևանքով, վերացնում են այդ արտոնությունները: Անգլիական Արևելա-հնդկական կոմպանիայի ներկայացուցիչները շարունակում են առևտուր անել հյուսիսային ծայրամասում՝ Արխանգելսկում, բայց Իրանի հետ անմիջական կապ հաստատելու այդ հնարավորությունից ևս զրկվում: Ասպարեզն ամբողջովին բացվում է հայ խոջայական կապիտալի համար⁶:

Հոլանդիան, որ ազատագրվելով իսպանական լծից բուռն զարգացման ուղին էր բռնել և XVII դ. կեսերին հասել առևտրական իր հզորության բարձրակետին⁷, անգլիացիների հետ միասին պայքարում էր իտալացի և իսպանացի մրցակիցների դեմ և ընդարձակում իր առևտուրը Լեանտյան եր-

⁵ Տե՛ս Հովհ. Հակոբյան. Ուղեղրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253—1582), Երևան, 1932, էջ 344—459: T. S. Willan. The early History of the Russia Company 1553—1603, Manchester, 1968, p. 58, 59.

⁶ Տե՛ս Ե. Շ. Зевакин, Персидский вопрос в русско-европейских отношениях XVII в., „Исторические записки“, № 8, 1940, с. 132—134. XVIII դ. անգլիացիները մեկ անգամ ևս փորձեցին օգտագործել այդ ուղին, այս անգամ Սպիտակ ծովի փոխարեն Ռուսաստան ժամանելով Բալթիկ ծովի և Ս. Պետերբուրգի վրայով: Այս մասին տ՛ս Ա. П. Соколов, Астрахань в прошлом и настоящем, Астрахань, 1843, с. 13; С. Я. Боровой, Вопросы кредитования торговли и промышленности в экономической политике России XVIII века., „Исторические записки“, № 33, 1950, с. 109.

⁷ Տե՛ս Կ. Մարխ, Կապիտալ, առաջին հատոր, Երևան, 1954, էջ 784:

կըրների հետ: 1624 թ. Ամստերդամում ստեղծվել էր հատուկ մի հիմնարկութուն, որի պարտականությունն էր հսկել Միջերկրական ծովում կատարվող միջազգային կապերի վրա: Տարեկան 30-ի չափ առևտրական նավեր Ամստերդամից այցելում էին Զմյուռնիա և Լեանտյան այլ կենտրոններ: Մեծ չափերի էին հասել նաև հոլանդացիների կապերը Հալեպի հետ⁸: Այստեղ հոլանդացիները, ինչպես և ևլրոպական մյուս երկրների ներկայացուցիչները, առևտուր էին անում առաջին հերթին ջուղայեցի հայ վաճառականների հետ, որոնց ձեռքում էր կենտրոնացված Իրանի մետաքսի ներմուծումը Հալեպ: Հոլանդական Արևելա-հնդկական կոմպանիայի ներկայացուցիչները XVII դ. 20-ական թվականներից սկսեցին ներթափանցել նաև Իրան և դարի կեսերին դարձան իրանական շուկայում առաջին տեղը զբաղող ևլրոպացիները: Այդ հաջողութուններն զգալի չափով պայմանավորված էին տնտեսական այն սերտ կապերով, որ ստեղծվել էին հոլանդական կոմպանիայի և հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների միջև: Ամստերդամը ծանոթ էր հայերին XVI դ. 60-ական թվականներից: 1560—61 թթ. այս բաղաբնայեցիկն մի բանի դոհարավաճառ հայեր, որոնց նստակն էր վաստակած գումարներով ձեռք բերել հոլանդական ապրանքներ, արևելյան երկրներ տանելու համար: Այդ կապերը հատկապես 1634 թ. հետո շատ ավելի մեծ ծավալ ընդունեցին⁹ և XVII դ. կեսերին արդեն Հոլանդիա էին այցելում մեծ թվով վաճառականներ ինչպես Նոր Զուղայից, այնպես էլ Գողթան գավառի հայկական առևտրական գյուղաքաղաքներից (հատկապես Ագուլիսից) և այլ վայրերից:

⁸ Տե՛ս *Адольф Бэр*, История всемирной торговли, часть вторая, М., 1876, с. 175—176.

⁹ Ըստ Ն. Գ. Կուկանովայի, այդ բացատրվում է այն իրողությամբ, որ հենց այդ թվականին էր, որ Հոլանդիայի կոմպանիան հրաժարվեց Ռուսաստանի վրայով պարսկական մետաքսը Նվրոպա փոխադրելու այն պայմաններից, որ առաջարկում էին ռուսական պետական մարմինները: Տե՛ս *Н. Г. Куканова*, նշվ. աշխ., էջ 71:

1660 թ. Ամստերդամում գոյութիւն ունէր կազմակերպւած գաղթօջախ՝ հայկական եկեղեցով, 60 տուն բնակչութեամբ: Ամստերդամը միաժամանակ դարձել էր հայ տպագրութեան կենտրոններից մեկը: Ոսկան Երեանցու, Ղուկաս Վանանդեցու և ուրիշների ջանքերով XVII դ. երկրորդ հիսնամյակի ընթացքում այստեղ հրատարակվեցին հայերեն փառահեղ գրքեր՝ առաջին տպագիր Աստվածաշունչը, պատմագրական մի շարք արժեքավոր բնագրեր, ինչպես նաև հայ վաճառականների համար պիտանի առևտրական ձեռնարկներ, աշխարհագրական ու գիտական երկեր¹⁰:

Հետևելով անգլիացիների օրինակին, հոլանդացիները նույնպես եռանդուն փորձեր կատարեցին մետաքսի հումքը Ռուսաստանի վրայով Հոլանդիա արտահանելու ուղղութեամբ: 1615 թ., 1620 թ. և 1630 թ. այդ նպատակով կատարված փորձերը դրական արդյունք չտվեցին: Ռուսական իշխանութիւնները, խուսափելով Արևելահնդկական հզոր ընկերութեան Ռուսաստանում հենակետեր ունենալու անցանկալի հետևանքներից, մերժեցին ընկերութեանը տրանզիտի իրավունք շնորհել: Տրանզիտի իրավունքը, որի ստացման համար մեծ ջանքեր էին դործադրում և՛ անգլիացիները, և՛ հոլանդացիները, և՛ եվրոպական մի շարք այլ երկրների կառավարող շրջաններ ու առևտրական կոմպանիաներ¹¹ ի վեր-

¹⁰ Տե՛ս Գաբելին Լևոնյան, Հայ գիրքը և տպագրութեան արվեստը, Երևան, 1946, էջ 101—125:

¹¹ Այս հարցին անդրադարձել է Ե. Ս. Զևակինը, մասնավորապես ուշադրութիւն դարձնելով այն հանգամանքների վրա, որ բացի Վոլգ-Կասպյան ճանապարհից, Եվրոպայի և Իրանի միջև ապրանքափոխանակութիւնը կատարվում էր նաև Վարշավա—Լյուբլին—Յաշ—Սև ծով—Անդրկովկաս—Իրան երթուղով, որը բանուկ էր դարձել հատկապես նշված վայրերի բոլոր անտեսական կենտրոններում կարևորագույն դեր կատարող հայ վաճառականների շնորհիվ: Խոսելով այդ մասին և անդրադառնալով լեհական դիվանագետ հայազգի Բոգդան Գուրդիի գործունեութեանը, Ե. Զևակինը հիշատակում է այն փաստը, որ այդ Բոգդանը, հանդիպելով նորջուղացիների, լիազոր ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովին, ասել էր նրան, որ հայ-ռուսական սրայմանագրով շահագրգռված են նաև լեհերը: Քննարկելով այս հարցերը, Ե. Զևակինը հզրակացնում է, որ «ոչ միայն

ջո, 1667 թ. և 1673 թ. պայմանագրերի համաձայն ռուսական պետական մարմինները շնորհեցին Նոր Զուղալի հայ վաճառականներին: Հոլանդացիներին թույլատրվեց միայն Արխանգելսկոմ առևտուր անել արևելքից ժամանող վաճառականների, այսինքն՝ հայերի հետ, իսկ հայ վաճառական-

պարսկահայերն էին ուղևորվում Լեհաստան, այլև Լեհաստանից Պարսկաստան էին մեկնում վաճառականներ (հալանարար նույնպես) մեծ մասամբ ծագումով հայ» (Е. С. Зевакин, նշվ. աշխ., էջ 141—146): Այստեղ ամեն ինչ հիմնավորված է բացի փակագծերի մեջ ասված «հավանաբար նույնպես» բառերից: Հայ-ուկրաինական դարավոր առնչություններն ուսումնասիրողները մեծ աշխատանք են կատարել վերջին տասնամյակներին և արժեքավոր փաստեր դրել շրջանառության մեջ, սուլացուցելով, որ Լեհաստանից Իրան այցելող վաճառականները եղել են Լեհահայեր:

Ռուսաստանի վրայով Իրանի հետ տնտեսական կապեր հաստատելու փորձեր կատարվել են նաև Շվեդիայի կողմից: Շվեդական դեսպան Ֆարբիցիուսի ջանքերով 1686 թ. ռուսական իշխանություններն իրավունք են տալիս հայերին արևմտյան կվրոպական երկրներ մեկնել ոչ միայն Արխանգելսկով, այլ նաև Նովոռոդով, անցնելով Շվեդիայի տիրապետության տակ գտնվող շրջաններով: Տեղին է նշել նաև Ցաղուր Սամոկուտլի հայ վաճառականի մասին, որը 1670 թ. Բրանդենբուրգի կյուրֆուրստի նամակով ժամանել էր Մոսկվա: Նամակում ասված էր, որ այդ Ցաղուրը կյուրֆուրստի առևտրական գործակալն է և նպատակ ունի Իրանից Պրուսիա արտահանել մետաքս և այլ ասյրանքներ (նույն տեղում, էջ 153—154):

Հարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ռուսաստանի վրայով Իրանի և արևելյան այլ երկրների հետ տնտեսական կապեր հաստատելու բոլոր փորձերը, անկախ նրանից թի եվրոպական որ երկրի նախաձեռնությամբ էին ներկայացվում ռուսական պետական մարմիններին, մեծամասնությամբ հայ վաճառականների թելադրանքով էին արվում: Իրանի մետաքսի արտահանման մենաշնորհը նրանց ձեռքում էր կենտրոնացված, և նրանք էին առաջին հերթին շահագրգռված նոր, ապահով, ռուսի և շահավետ ուղիներ գտնելու գործում: Ջուղահայ առևտրական կապիտալի գործակալ Ֆիլիպ դի Զադլիի գործունեությունը Մերձարևելքի կայում 1696 թ. և Լիվոնիայի, Կուլանդիայի ու Սեկալինի դուքս Ֆր. Կադիմիրի հետ կնքված պայմանագիրն այդ մասին են վկայում: Տե՛ս R. Gulbenkian, Philippe et Zagly, Marchand Arménien de Julfa et l'établissement du commerce Persan en Courlande en 1696, „Revue des Etudes Arméniennes“, tome VII, Paris, 1970, p. 361—426.

ներին էլ խորհուրդ տրվեց Արխանգելսկից ևվրոպական
երկրներ մեկնելիս՝ առաջնությունը տալ Հոլանդիային¹².

Ռուսաստանի տնտեսական դարգացմանը խթանող ծրագրերի հեղինակ, նշանավոր քաղաքական գործիչ Բ. Ի. Օրդին-Նաշչեկինը, որի գլխավորությունը էին նախապատրաստվում հայ-ռուսական առևտրական պայմանագրի կետերը, իր գործընկերների հետ միասին քաջ գիտակցում էր, որ հայ վաճառականները, ի տարբերություն արևելյան երկրների հետ առևտրի մենաշնորհ ձևը բերած ևվրոպական առևտրական կոմպանիաների, չեղոք քաղաքական ուժ չինելով որևէ կերպ չէին կարող խոչընդոտել Ռուսաստանի տնտեսական դարգացմանը:

Այսպիսով, հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները հաղթանակով դուրս եկան շուրջ մեկ դար ձգվող (XVI դ. վերջերից մինչև 1667 թվականները) այն պայքարից, որ մղում էին Ռուսաստանի վրայով անցնող և միջադպյին նշանակություն ունեցող ճանապարհներն օգտագործել ցանկացող ուժերը՝ անգլիական և հոլանդական արևելեա-հնդկական կոմպանիաներն ու ևվրոպական այլ երկրների առևտրական շրջանակները:

1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը ձևակերպելիս քննարկման առարկա էր դառնալու այնպիսի կարևոր հարց, թե ով էր կանգնած ռուսական պետության առջև՝ որպես պայմանագիրը կնքող կողմերից երկրորդը: 1667 թ. պայմանագրի հետ առնչվող և ԱԴԱԼԱ-ում պահվող նյութերի մեջ չի պահպանված կամ, գուցե, դեռևս չի հայտնաբերված ու հրապարակված որևէ փաստաթուղթ այն մասին քե ո՞ւմ լիազորությամբ էին Մոսկվա ժամանել նորջուղայեցի հայ վաճառականներ Ստեփան Ռամադանսկին¹³ և Գրիգոր Լուսիկովը կամ ո՞վ է ներկայացրել ռուսական պե-

¹² Տե՛ս Է. Շ. Зезакин, նշվ. աշխ., էջ 136:

¹³ Ռուսական փաստաթղթերում հիշատակված Ռոմոդանսկի ազգանունը Ռամադանենց ազգանվան ազգավաղված ձևն է: Հմմտ. հայերեն փաստաթղթերում հանդիպող «Քոմամայանենց» ձևը: ԱԴԱԼԱ, «Сношения России с Арменией», 1660, дело 1, л. 14(об.).

տական մարմինների հետ 1667 թ. առևտրական պայմանագիրը կնքող հայկական կողմը: Ըստ ավանդական տեսակետի, XVII դ. կեսերին Նոր Զուղայում գոյություն է ունեցել տնտեսական ուժիղ մի կաղմակերպություն՝ «Հայկական առևտրական ընկերություն», որը ստեղծված լինելով հիմնական երկրներում գոյություն ունեցող վերոհիշյալ արևելա-հնդկական կոմպանիաների սկզբունքներով, առևտրական հարաբերությունների մեջ է մտել օտար պետությունների հետ, կնքել տարբեր պայմանագրեր ու համաձայնագրեր և հենց այդ կաղմակերպության կողմից առաքվել են Մոսկվա և պայմանագիր ստորագրել վերոհիշյալ լիազոր-ներկայացուցիչները¹⁴:

Պայմանագրի տարբեր հատվածներում կան որոշ ձևակերպումներ, որոնք հիմք են հանդիսացել այս տեսակետի համար և նպաստել նրա կենսունակությանը: Դրանցից են, օրինակ, հետևյալները. «Սպահանի հայ բնակիչներ, իրենց ընկերության հետ ժամանեցին», «Սպահանի հայ բնակիչներ Ստեփան Ռոմոգամսկին և Գրիգորի Լուսիկովը իրենց ընկերության հետ ժամանեցին», «Ստեփան Ռոմոգամսկին և Գրիգորի Լուսիկովը հայկական կոմպանիայի ընկերների հետ», «Ալեքսեյ Միխայլովիչը... հրամայեց մեզ մեր հայկական ընկերությանը և մեր գործակատարներին» և այլն¹⁵:

Նման արտահայտությունների կան նաև հայ-ռուսական հարաբերությունների մասին առկա բաղմաթիվ այլ արխիվային փաստաթղթերի մեջ¹⁶:

Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ

¹⁴ Այս տեսակետը համընդհանուր տարածում է գտել և տարբեր ձևակերպումներով արձանագրվել հայ-ռուսական հարաբերությունների պատմության մասին գրված բազմաթիվ աշխատությունների մեջ: Տե՛ս E. C. Зевакин, *հշվ. աշխ.*, էջ 158: Աշոտ Հովհաննիսյան, *Դրվադներ հայ ազատագրական մարի պատմության, զիրք առաջին*, էջ 441—442: Վ. Դիլյան, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից* (XVIII դ. երկրորդ կես), Երևան, 1966, էջ 21—22 և այլն:

¹⁵ «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 56, 58.

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 111, 113, 203, «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, с. 15, 22, 26 և այլն:

ռուսական պետական մարմինների տեսանկյունից 1667 թ. պայմանագիրը կնքող հայկական կողմն, իրոք, պատկերացվել է որպես առևտրական մի մեծ ընկերություն: Իրականում, սակայն, պայմանագիրը ստորագրող Ստեփան Ռամադանսկին ու Գրիգոր Լուսիկովը ներկայացել են ռուսական արքունիք ոչ թե որպես առևտրական ընկերության ներկայացուցիչներ, այլ XVII դ. սկզբներին Իրանի մայրաքաղաքի մոտակայքում հիմնադրված և դարի կեսերին Իրանի արտաքին առևտուրը մեծ չափով իրենց ձեռքն առած Նոր Զուղա հայկական քաղաքի ինքնավար մարմինների կողմից լիազորված բանագնացների: Այս եղրակացության համար հիմք կա 1671 թ. մարտին պարսկերեն շարադրված եղակի կարևորություն ունեցող այն փաստաթղթի մեջ, որն ուղղված էր ռուս թագավորին, և որով Նոր Զուղայի հայ մեծածնեծները երկրորդ անգամ լիազորում էին Գրիգոր Լուսիկովին՝ իրենց անունից բանակցություններ վարելու ռուս թագավորի հետ, բացատրելու, թե ինչու հայերը չէին կատարել Իրանի մետաքսը Ռուսաստանի վրայով Եվրոպա արտահանելու 1667 թ. ստանձնած իրենց պարտավորությունը (այդ բացատրում էին Ստեփան Ռամադանի ապստամբության հետևանքով ստեղծված ճանապարհների անապահովությանը) և Նոր հավաստիացումներ. ստանալու՝ առևտուրը վերսկսելու պայմանների մասին: Այդ փաստաթղթի մեջ ասված է. «Ձեր հետին ծառա Բոգդանը, Սպահանի Զուլֆա արվարձանի քալանթար, «ընկեր ավագների» հետ միասին երկրպագում ենք և հայտնում, որ (հանձնարարական—Շ. Խ.) գրությանը Ռուսաստան ենք ուղարկում Գրիգորին (Լուսիկով—Շ. Խ.), որպեսդի տեղեկություն ստանա ճանապարհի ապահովության մասին և Ձեր թագավորական մեծության ողորմածությունը շարունակվի, և երբ ճանապարհը շարագործ կազակներից ազատ և ապահով լինի, և ամբողջություններ ու հանգրվաններ կառուցվին, այդ ժամանակ հրահանգ տրվի պաշտոնակատար անձանց, որպիսով վաճառական մարդիկ երթևեկեն երկու ուղղություններով՝ ապրանքով և առանց ապրանքի, այնտեղ

(Ռուսաստան—Շ. Խ.) և նրա վրայով գերմանական (իմաս-
եվրոպական—Շ. Խ.) երկրներ» և այլն¹⁷:

Գրիգոր Լուսիկովին տրված այս լիազորագրի տակ ի-
րենց ստորագրություններն ու կնիքներն են դրել Զուղայի
մեծամեծներից 23 անձինք: Ինչպես և սպասելի էր, առա-
ջին ստորագրությունը պատկանում է Զուղայի վերոհիշյալ
քաղանթար Բոգդանին, որը ստորագրել է այսպես. «Ընտրո-
վի անձ Աստվածատուր Միրեթենց»: Փաստաթղթի ուսերին
թարգմանիչը, ինչպես Աստվածատուր անվան փոխարեն
դրել է դրա ուսերին համարժեքը՝ Բոգդան, այնպես էլ քա-
ղանթարի (քաղաքի կառավարիչ) փոխարեն՝ «Ընտրովի անձ»,
շեշտելով այդ պաշտոնի ընտրովի լինելը: 1671 թ. նոր Զու-
ղայի քաղանթարի պաշտոնը դրված այս Աստվածատուր
Միրեթենցից հետո ստորագրած անձինք կոչված էին «ընկեր
ավագներ», որոնց մասին հիշատակություններ կան Գրիգոր
Լուսիկովի բանակցությունների վերաբերյալ այլ փաստա-
թղթերի մեջ ևս: Նրանք կամ կոչված են «հայկական ընկե-
րության ղեկավար անձինք»¹⁸ կամ էլ «Սպահանում գտնվող
հայերից լավագույնները»¹⁹: Մեկ անգամ միայն, և այդ հենց
Գրիգոր Լուսիկովի ինքնաձեռագրով մեզ հասած և թագա-
վորին ուղղված հայերեն խնդրագրի մեջ (գրված 1671 թ.

¹⁷ «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 90—91.

¹⁸ Այսպես է գրված Դևսպանական վարչատանը կազմված այն փաս-
տաթղթի մեջ, որ վերաբերում է Գրիգոր Լուսիկովի ժամանման նպա-
տակին ու բանակցություններին: Այստեղ թվարկված են նաև նրա ներ-
կայացրած պաշտոնական գրությունը. 1) Շահ-Սուլեյմանի հրովարտակը,
2) Գանձասարի կաթողիկոսի կոնդակը և 3) մեզ հետաքրքրող փաստա-
թուղթը, որ կոչված էր «Հայկական ընկերության ղեկավար անձանց 21
հոգու խնդրագիր, իրենց կնիքներով զրոգմված» (23-ի փոխարեն այստեղ
ասված է 21: Այս տարբերությունը կարևոր նշանակություն ունի, որի մա-
սին քիչ հետո): Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», т.
I, с. 83.

¹⁹ Այս գրված է Գանձասարի Պետրոս կաթողիկոսի կոնդակի մեջ,
որով խնդրվում է Ալեքսեյ Միխայլովիչ ցարին բարեհաջող ընթացք տալ
Գրիգոր Լուսիկովի բանակցություններին: Տե՛ս «Армяно-русские отноше-
ния в XVII веке», т. I, с. 92.

հուլիսի 27-ին), նրանց ստորագրած և քննարկման ենթակա փաստաթղթի մասին (որի լիազորությամբ ինքը ժամանել էր Մոսկվա), Լուսիկովը գրում է. «դարձեալ մեր Բալանթարըն կուպանէֆն արգայ այն գրել մեծ թագաւորին, համէնքընին արդին յետևուրն ձեռն այն դրել մըրել թէ ինչ օր ֆաղի-րիս Մօսքօւայ մեծ թագաւորին ուղարկումն հառէլմէ շինէլէ այմ, կամ էլ ինչ բայն յետ [կ]ու շինեմ, դաբուլ այ, էս արդէս էլ բերում այմ մեծթագաւորին ղուլուղն»²⁰:

Այսպիսով, ստացւում է, որ Գր. Լուսիկովին ռուսական իշխանությունների հետ բանակցելու հանձնարարությամբ Մոսկվա են ուղարկել նախ՝ Նոր Զուղայի քաւանթարը, ապա՝ 22 անձնավորություններ, որոնք կոչված են «ընկեր ավագ-ներ», «ղեկավար անձինք», «հայերից լավագույնները» և, վերջապես, «կուպանեքն», այսինքն կոմպանիաների (շեշ-տում ենք՝ կոմպանիաների և ոչ կոմպանիայի) ղեկավար-ները:

Ծանոթանանք ղեկավարների այդ ցանկին, ռուսական տառադարձությամբ ներկայացված և զգալի չափով աղա-վաղված հայերեն անուն-ազգանուններին հնարավորին չա-փով տալով իրենց նախնական կերպարանքը²¹:

- (1) Աստվածատուր Միրեթէնց (Զուղայի քաւանթար)
- (2) Պստիկաղա Շահիխասէնց
- (3) Աղափիրի Զախաթունէնց
- (4) Մարգար Շահրիմանէնց
- (5) Սաֆար Թոփչէնց
- (6) Զաքար Գերաքէնց
- (7) Մարտիրոս Աղէնց
- (8) Ավետիք Գիւլանէնց²²
- (9) Վախագում Զուաիրի

²⁰ «Армяно-русские отношения в XVII веке, т. I, с. 72.

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 90—91: Հովհաննեսի փոխարեն ցանկում, օրինակ, գրված է Գոանես, Գրիգորի փոխարեն՝ Գրիշորեյ, Քառասման-կացը՝ Կարաս Մանկաու, Փանոսէնցը՝ Պոնոսենց, Քամալէնցը՝ Կամաէ-լենց և այլն:

²² Փաստաթղթում գրված է Ավետիք Գերաքենց նկատի ունենալով,

- (10) Գրիգոր Գիուլէնց
- (11) Հովհաննէս Զհարկալանէնց
- (12) Աղաղար Քամալէնց
- (13) Ղուկաս Զամալէնց
- (14) Գրիգոր Ամիրասաթէնց
- (15) Աղափիրի Միրզաբէգէնց
- (16) Ոսկան Զահիրունց
- (17) Մինաս Փանոսէնց
- (18) Վալյանդիս Թաղարինց
- (19) Հակոբջան Ուստարաշի
- (20) Ապով Լուսիկէնց
- (21) Հովսէփ Նանէնց
- (22) Կարապետ Քառասմանկաց
- (23) Հովհաննէս Ասկանդարով²³,

որ ցանկում արդեն կա Զաքար Գերաբէնցի ստորագրութիւնը, կարծում ենք, որ այստեղ եղել է Ավետիք Գիւանէնցի անունը (հավանաբար սխալ է թույլ տրվել պարսկերեն փաստաթուղթը ռուսերեն թարգմանելիս)։ Այս տարիներին նոր Զուղայում մեծ հեղինակութիւն էր վայելում Գիւանէնց պարոն Ավետիքը՝ եզգանբաշի որդին, Աղաղարի և Ծատուրի եղբայրը։ 1667—1668 թթ. նա կառուցել էր նոր Զուղայի Քուշեր թաղի Ս. Ներսէս եկեղեցին։ Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 469։

²³ Ինչպէս տեսնում ենք, փաստաթուղթը ստորագրողների բոլոր ազգանունները տրված են հայկական ձևով՝ «էնց» վերջավորությամբ, բացառութեամբ այս վերջին ազգանվան (Ասկանդարով)։ Այս հանգամանք մտածել է տալիս, որ նա ոչ թե մեկն է ջուղահայ մեծամեծներից, այլ ռուսական մի պաշտոնյա է՝ ազգութեամբ հայ, որ խնդրո առարկա փաստաթուղթը պարսկերենից թարգմանել է ռուսերեն։ Եթե այդպես է, ուրեմն ստորագրողները 23-ից դառնում են 22։ Իսկ երբ հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ քաղաքապետը հատուկ ձևով է հիշատակվում փաստաթղթի մեջ՝ անջատվելով մյուս ստորագրողներից, ապա ճիշտ է ստացվում Գրիգոր Լուսիկովի ժամանման կապակցութեամբ շտաբարկած վերահիշյալ (ձանոթագրութիւն 18) փաստաթղթի այն տվյալը, որի համաձայն լիազորագիրը ստորագրել են 21 անձինք։ «Армяно-русские отношения в XVII веке», т. 1, с. 90—91. ИГЛА, фонд Сношения России с Арменией, 1672, л. № 3, л. 3—4. Այստեղ և հետագայ անկերում (թվարկված անձանց) հերթական համարադրւնները զրված են մեր կողմից։

Ջուղահայերի անունից այս լիազորագիրը ստորագրող անձինք XVII դ. 70-ական թվականներին հայկական այդ բնակավայրի տնտեսական կյանքում ամենից ավելի ակտիվ դեր կատարող առևտրական գերդաստանների ղեկավարներն են՝ խոջայական դասի ընտրանին։ Քալանթարից հետո լիազորագիրն ստորագրողների ցանկը գլխավորում է Պըստիկաղա Շահիխասենցը։ Շահիխասենց կամ Սաֆրազյան կոչվող գերդաստանը դեռևս Հին Ջուղայում ամենաբարձր դիրքն էր գրավել գյուղաքաղաքի կյանքում։ Այս գերդաստանի ավագը՝ խոջա Խաչիկը, Հին Ջուղայի քալանթարն էր, որը Շահ-Աբրահսից ստացել էր հատուկ հրովարտակ՝ ազատ առևտուր անելու իրավունքով, կառուցել էր երկու մեծ քարավանատուն և այլն²⁴։ Բռնագաղթից հետո նորաշեն Ջուղահայաքաղաքի քալանթարներ են դառնում նրա որդիները, նախ խոջա Սաֆարը (վխճ. 1618 թ.), ապա եղբայրը՝ խոջա Նադարը (վխճ. 1636 թ.), որից հետո էլ վերջինիս մեծանուն որդի խոջա Սարֆրազը (1601—1656), որին ժամանակակիցները նույնիսկ «Հայոց թագավորի» տեղ էին ընդունում²⁵։ Սարֆրազից հետո քալանթար են դառնում ուրիշները, որոնք այլևս ազգակցական կապ չեն ունեցել այս գերդաստանի հետ²⁶։

²⁴ Տե՛ս С. В. Тер-Аветисян, Город Джуга (Материалы по истории торговых сношений джугульфинских купцов XV—XVII вв.), Тбилиси, 1937, с. 32—37.

²⁵ Նրա տապանարարի վրա գրված է.

«Ա՛, իմ աննման Խոջայ, որ էիր Հայոց թագաւոր,

Անումտ Սարֆրազ կոչի՝ սրընթաց զօրեղ դատաւոր...»

Հ. Տեր-Հովհաննէսեց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 91։

²⁶ Նոր Ջուղայի քալանթարների որեւէ ցանկ գոյութիւն չունի։ Նրանք 1660-ական թվականներից հետո հաճախակի փոփոխվել են և այնքան արագ են հաջորդել մեկը մյուսին, որ Ստ. Դաշտեցին նույնիսկ իր բանաստեղծութիւններից մեկում գրել է.

Քալանթարին սուտ սէրն գցին,

Բաներ կապ տան, մէջն ղցին,

Պատիկադա Շահիխասենցը Սարֆրազի նշանավոր թոռ-
ներից է՝ Մելիքադայի որդի հաշիկը, որը ժամանակակից-
ների կողմից ճանաչված է ավելի իր Պատիկադա մական-
նունով²⁷։

Դեռ չեն դրել՝ շուտ վեր գցին,

Դեռ ուրիշի տնադ կանեն։

(«Էջմիածին», 1947 թ., հունվար-փետրվար, էջ 52)։

Օգտագործելով հայերեն ձևապրերի տարրեր հավաքածուների (նոր
Ջուղայի, Երուսաղեմի, Զմմառի, Վասպուրականի) տպագիր ցուցակները,
Բրիտանական դրոշարանի հայերեն փաստաթղթերը (միկրո-պատճե-
նով), Հ. Տեր-Հովհանյանցի աշխատությունը և այլ աղբյուրներ՝ կազ-
մել ենք XVII դ. և XVIII դ. առաջին կեսի ընթացքում նոր Ջուղայում
քաղանքարի պաշտոն դրաված անձանց ոչ ամբողջական և ճշգրտման
կարիք ունեցող հետևյալ ցանկը.

Սաֆար (1605—1618 թթ.)

Նազար (1618—1636 թթ.)

Սարֆրազ (1636—1656 թթ.)

Աստվածատուր Միրեթենց (հիշված 1671 թ.)

Աղափիրի (հիշված 1671 թ.)

Ղուկաս (հիշված 1687 թ.)

Ավետ որդի հաշիկի (հիշված 1691 թ., որն ընդունեց մահ-
մեղականություն և կոչվեց Մահմատ Հուսեյն բեկ)

Ղուկաս (հավանաբար 1687 թ. հիշված Ղուկասն է, որ կրկին
քաղանքար է դարձել)

Ստեփան Մուսարեկենց (հիշված 1708 թ.)

Զաքար (հիշված 1709 թ.)

հաշիկ (որը 1722 թ. գլխատվեց աֆղանների կողմից)

Ամիրջան որդի Դավութիանի (հիշված 1739 թ.)

Նազար (հիշված 1743—45 թթ.)

Ավետ որդի Սարգսի (հիշված 1747 թ.)

Սարգիս (հիշված 1750—51 թթ.)։

²⁷ Հ. Տեր-Հովհանյանցը ձևապրի տակ վստահելի նյութեր չունենալով,
չի կարողացել վերականգնել Սարֆրազյան կամ Շահիխասենց նշանա-
վոր գերդաստանի տոհմագրությունը։ Այս թերին հաջողությամբ լրացրել է
Հ. Քյուրտյանը «Ջուղայեցի խոջա Նազար և իր ընտանիք» (Բոստոն,
1943) հոդվածով, որի մեջ օգտագործված են տարբեր վայրերում պահ-
վող բազմաթիվ ձևապրերի հիշատակարանների Սակայն, նրան անձա-
նոթ է եղել Մաշտոցի անվան Մատենադարանի № 201 ձևապրերը (գրե-
ված 1660 թ.), որի մեջ ևս ստույգ տվյալներ կան այս գերդաստանի

կիազորագրի երրորդ ստորագրողը Աղափիրի Ջախա-
թունենցն է։ Այս գերդաստանը ևս 1660-ական թվական-
ներին եղել է Ջուղայի ամենահարուստ ու նշանավոր խո-
ջայական գերդաստաններից։

Ստորագրութուններից չորրորդը՝ Մարգար Շահրիմա-
նենցինն է։ Շահրիմանյանները Ջուղայի կաթոլիկ հայերի
պարագլուխն էին և հսկայական դեր էին կատարում Իրանի
արտաքին առևտրի բնագավառում։ Մարգար Շահրիմանյանի
որդի Զաքարն էր, որ հայ-ռուսական պայմանագիրը կնքե-
լուց մի քանի տարի առաջ Ռուսաստան էր տարել նշանա-
վոր ադամանդյա գահը և այլ թանկարժեք արեւելյան աւյ-
րանքներ։

Ստորագրողներից 6-րդը Դերաքենց գերդաստանի ներ-
կայացուցիչն է։ Այս գերդաստանը հանդես է եկել նաև Միր-
ման-Դերաք ազգանունով և մեծ դեր կատարել Վենետիկում,
Լիվոռնոյում և այլ վայրերում։ Հ. Տեր-Հովհանյանցը անդ-
րադառնալով դրանցից մեկի գործունեությանը նշում է, որ
նրա «տուրեկառութիան բազուկ ձգեալ կայր յնւրոպայ և ի
կողմն Աստրախանայ և Դիլանայ»։ Այստեղ ստորագրողնե-
րից խոջա Զաքարը և նրա Ըմպրումաղա հղբայրը բազմա-
թիվ գործակատարներ ունեին։ 1682 թ. նրանք վարկավորե-
ցին Հովհաննես Տեր-Դավթյան վաճառականին, որն իր ա-
ղաների ուրիշ գործակատարների հետ միասին առևտուր էր
անում Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում²⁸։

Ամիրասաթենց Գրիգորի հայ կաթողիկե գերդաստանը
սերտորեն շաղկապված էր Շահրիմանյանների հետ։ Նրա
թոռներից մեկը, որ կրում էր պապի անունը, XVIII դ. 40-

մասին։ Պարզվում է, որ խոջա Սարֆրազն ունեցել է Վաթան, Մելիքա-
ղա, Յոանկիգուլ, Սուլթանում և Զալալ անունով որդիներ, իսկ խոջա
Նազարի որդիների անուններն են՝ Սարֆրազ, Էլիազ և Հայկազ (Մա-
սենաղարան, ձեռ. № 201, էջ 612 ր)։

²⁸ Տե՛ս «Հովհաննես Ջուղայեցու հաշվետուարը», „Armeniac“,
Mélanges d'études arméniennes, p. 244—252.

ական թվականներին հաստատվել էր Մոսկվայում և ղեկավարվում էր թանկագին քարերի առևտրով²⁹։

Ղուկաս Զամալինցի մերձավոր ազգականները XVII դ. վերջին հսկայական հարստության տեր էին դարձել։ Նշանավոր էր հատկապես Հովհաննես Զամալինցի որդի Հովհաննեսը, որի միջոցներով 1701 թ. կառուցվեց Ամենափրկիչ վանքի ղանդակատունը։ Այդ մասին փորագրված արձանագրության մեջ այդ խոջան մեծարված է. «դոյլը և ընչիւք իշխանաշուր, աղևուստոհմ և պերճապատիւ պարոնաց պարոն» տիտղոսով³⁰։

Կարապետ Քառասմանկանցի գերդաստանը, նույնպես, հայտնի է եղել իր ճոխությամբ ու հարստությամբ։ Ըստ ավանդության, այդ ազգանունը ծագել է նրանց հարկի տակ միաժամանակ 40 ծծկեր մանկանց առկայությամբ³¹։

Նշանավոր են եղել նաև Լուսիկենց կամ Լուսիկով տան անդամները։ Գրիգոր Լուսիկովը հայ-ռուսական սլավոնագիրը ջուղայեցիների հանձնարարությամբ ստորագրողներից մեկն էր և բանակցությունների երկրորդ փուլի միակ վարողը։ 1692 թ. նույն գերդաստանի երկու անդամների՝ Մարութին ու Եսայուն, հանդիպում ենք Կալկաթայում³², իսկ XVIII դ. 40-ական թվականներին Ամստերդամում էր գրոնդվում ոմն Գրիգոր որդի Հովհաննեսի, որի ազգանունն է Ապովենց։ Մեծ հավանականությամբ, նա Ապով Լուսիկենցի թոռներից է, ուստի այդ գերդաստանը ևս ճյուղավորումներ է տվել ու տարածվել Եվրոպայի ու Ասիայի առևտրական կենտրոններում³³։

Այսպիսով, պարզ է դառնում, որ ջուղահայերի կողմից Ռուսաստան առաքվող բանագնացների թիվունքում կանգ-

²⁹ Տե՛ս Լարություն Լադարյանի նամականի, Մատենադարան, ձև. № 6240, էջ 39ա։

³⁰ Զ. Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան, -Տ. Բ, Նոր Զուղա, 1881, էջ 5։

³¹ Զ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 149։

³² «Հովհաննես Զուղայեցու հաշվետու մարը», էջ 265—266։

³³ Տե՛ս «Լարություն Լադարյանի նամականի»։

Նաժ էին այդ հայաքաղաքի խոշորագույն առևտրական գեր-
դաստանների ավագ ներկայացուցիչները: Նվ չկա թեկուզ մի
ակնարկ այն մասին, որ նրանք միավորված են եղել մի
հսկա առևտրական կազմակերպության մեջ ու հանդես եկել
որպես եվրոպական տիպի՝ բաժնետիրական սկզբունքներով
կյանքի կոչված, առևտրական կոմպանիայի ներկայացուցիչ-
ներ:

Անդրադառնալով միջնադարյան եվրոպայի առևտրական
ընկերությունների կառուցվածքի հարցերին, Ֆ. Էնգելսը հան-
դել է այն եզրակացության, որ նրանք կյանքի են կոչվել
համայնքի (մարկայի) ազդեցությամբ, ժառանգելով նրա
ավանդական ձևերը³⁴: Այս եզրակացությունը արժեքավոր է
նաև արևելյան երկրների առևտրական բնակավայրերի՝ քա-
ղաքների ու գյուղաքաղաքների, վարչական մարմինների ու
տնտեսական կյանքի ղեկավարման օղակների ուսումնա-
սիրության համար: Անդրադառնալով հայկական միջավայ-
րին կարելի է եզրակացնել, որ միջադարյան ապրանքափո-
խանակության հետ առնչված բոլոր հայկական քաղաք-գյու-
ղաքաղաքների նմանությամբ Նոր Զուղան ևս իր ներքին
գործերում ինքնավար էր և, նույնիսկ այնքան, որ որոշ եվ-
րոպացիներ այն համարում էին «փոքրիկ հանրապետու-
թյուն»³⁵:

Այդպիսին էր Զուղան նաև մեծ բռնագաղթից առաջ,
Արաքսի ափին՝ իր հին բնօրրանում: 1595 թ. Հին Զուղա-
յում ընդօրինակված մի ճառընտրի հիշատակարանի մեջ
գրված է. «Նւ արդ, եղև լրումն եւ աւարտ կատարման այսմ
աստուածախօս տառիս ի մայրաքաղաքն Զուղայ, որ է հան-

³⁴ Տե՛ս Ֆ. Էնգելս, Լրացումներ «Կապիտալի» երրորդ հատորի, Մարտ, «Կապիտալ», հ. III, մ. II, Երևան, 1949, էջ 441:

³⁵ Դե-Շինոն, որ Նոր Զուղայում եղել է XVII դ. կեսերին, գրել է այսպիսի տողեր. «Քաղաքս որ այդ փոքրիկ հանրապետության կառավա-
րութունը տվել էր հայ խոջա Սաֆարին, իսկ հետո էլ նրա եղբորը,
Նրանց այժմյան կառավարչի հորը՝ խոջա Նազարին»: John Garswell,
New Julfa, Armentian churches and other buildings Oxford, 1968,
p. 78.

գիստ եւ պարծանք Հայկազեան տոհմիս»։ Աղաչելով արարչից շեն պահել իրենց այդ «մայրաքաղաքը» գրիչը հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակման աշխատանքները կատարել է «ի մեկիբրութեան Զուղայու պարոն Սուլթանօլալուն»³⁶։

Բաղմաթիվ փաստեր կան այն մասին, որ մեկիբրության պաշտոնը ընտրովի է եղել։ Զաքարիա Ագուլեցին, օրինակ, իր Օրագրության շաքաղրանքի ընթացքում միշտ էլ նշումներ է արել այն մասին, թե տվյալ նյութը գրանցելիս ով է եղել իր հայրենի գյուղաքաղաք Ագուլիսի մեկիբը³⁷։ Այդ պաշտոնի ընտրովի լինելը պարզվում է բաղմաթիվ սկզբնաղբյուրների վկայությամբ։ Նույն Զաքարիան 1673 թ. մի գրանցման մեջ հայտնում է, որ այդ տարի Ագուլիսն ունեցել է երկու մեկիբ, որովհետեւ վեճ է առաջացել գյուղաքաղաքի երկու թաղերի միջև։ Ներքին թաղեցիները առաջադրել են Քուրդոնց Ալեքսանի, իսկ վերին թաղեցիները՝ Օվլիի թեկնածուները. «Այսպես Բ (2), բաժանեցան,—գրում է Զաքարիան,—շատ աղմուկ լինէր մէջն»³⁸։ Գյուղական տանուտերմեկիբներն էլ էին ընտրովի։ Տեղեկություն ունենք այն մասին, թե ինչպես քանաքեռցիները միաբանությամբ տանուտեր են ընտրել իրենց համագյուղացի ոմն Ամիրջանի։ «Միաբանեցան ամենայն զեղականքն և ասին, եկայք դիցուք զսա տանուտէր, թերևս տանձեսցուք զհպարտութիւն դորա։ Եւ արարին այնպէս և եղին զնա տանուտէր Քանաքեռոյ»,—գրել է լավատեղյակ պատմիչը³⁹։ Ըստ որոշ տվյալների, քաղաքատիպ վայրերում համայնքի կողմից ընտրված մեկիբից բացի, շահի կողմից ուղարկվում էր հատուկ պետական պաշտոնյա՝ քալանթար, որ պետության ներկայացուցիչն էր այդ վայ-

³⁶ Ս. Տիր-Ավետիսյան, Յուցակ հայերեն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Վիեննա, 1970, էջ 271։

³⁷ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 70, 78, 80, 112 և այլն։

³⁸ Նույն տեղում, էջ 119։

³⁹ «Զաքարիա սարկաազի Պատմագրութիւն», Կ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 1—2։

րում և պետք է ապահովեր պետական հարկերի պանծումը և ալյն: Սակայն, մեծ մասամբ հայկական առևտրական կենտրոններում քալանթարի պաշտոնը շահական հատուկ հրովարտակով հանձնվում էր համայնքի կողմից ընտրված մեկիքին: Ազուլխում մեկիք, միաժամանակ և քալանթար էր ընտրված Մեկիք Շահնազարը: 1678 թ. Ազուլխի ու Դաշտի բնակիչները հատուկ համախոտականով Սպահան ուղարկեցին իրենց նորընտիր մեկիք Օվուն, ոգախաղի նրան ևս տրվի քալանթարության պաշտոնը⁴⁰: Մեկիքի ու քալանթարի պաշտոնը միավորված էր նաև Ջուղայում: Բռնագաղթից առաջ այնտեղ քալանթարի պաշտոնը գրավում էր Շահխաթանց զերդաստանից՝ վերոհիշյալ խոջա Խաչիկը, որը Շահ-Աբբասից ստացել էր հատուկ հրովարտակ՝ ազատ առևտուր անելու իրավունքով: Պահպանվել է նրա խաչքար-մահարձանը, որի վրա փորագրված է. «Սուրբ խաչս բարեխառ առ Քրիստոս մեծ և անուանի քաղաքապետ Խաչա Խաչիկին»⁴¹: Նոր Ջուղայի հիմնադրումից հետո, ինչպես արդեն նշվել է, նորաշեն հայաքաղաքի քալանթարներ են դառնում նրա որդիները: ապա թուրք՝ Սարֆրազը: Շահխաթանց հզոր այս խոջաներից հետո, որոնք մեծ կշիռ ունեին Իրանի արքունիքում և երեք-չորս սերունդ շարունակ ժառանգական սեփականություն էին դարձրել քաղաքի քալանթարի պաշտոնը, համայնքի կյանքում մեծ կշիռ ունեցող խոջաների կամքով և ընտրությամբ քալանթար են դառնում ուրիշ գերդաստանների ներկայացուցիչներ:

Գրիգոր Լուսիկովին տրված վերոհիշյալ լիազորագիրը ստորագրված խոջաների ցանկը, ինչպես արդեն նշվեց, իր անուն-ազգանունով բացել է 1671 թ. քալանթարը՝ «ընտրովի անձ» Աստուածատուր Միրեթինը: Քննարկվող ցանկի մեջ իր տեղն է գրավել նաև քաղաքի արհեստավորական դասի

⁴⁰ Զարարիա Ազուլեցին հայտնում է, որ 1678 թ. «Քանդի առաջմէ օրիշ քալանթար Արուսաց ու Դաշտին դախլ չէն անիլ, ով որ Արուսաց ու Դաշտին ճէլիք լինի, որ քալանթար էլ նայ լինի», տե՛ս «Զարարիա Ազուլեցու օրագրությունը», էջ 139:

⁴¹ С. В. Тер-Аветисян, *Նշվ. աշխ.*, էջ 32, 37:

ներկայացուցիչը՝ ուստարաշի Հակոբջանը: Հայտնի է, որ Մերձավոր ու Միջին Արևելքի միջնադարյան քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքում զգալի դեր էին կատարում ուստաբաշու ընտրովի պաշտոնը գրավող անձինք, որոնք պետական մարմինների առջև հանդես էին գալիս որպես տվյալ քաղաքի արհեստավորական համքարությունների ղեկավարներ: Այդպես էր կոչվում բոլոր համքարությունների կողմից ընտրված ղեկավար պաշտոնյան, որի գլխավորությունը իմի էին դալիս տարբեր մասնագիտության արհեստավորական համքարությունների ղեկավարները: Նրանք քննարկում էին ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, հարթում միմյանց միջև ծագած վեճերն ու անհամաձայնությունները, հավանաբար մասնակցելով նաև հարկերի ու տուրքերի մասնատրման և գանձման աշխատանքներին⁴²:

Այսպիսով, շատ որոշակի են Նոր Զուղաջի համայնքի ղեկավար անձերից երկուսի՝ քալանթարի և ուստաբաշու պաշտոնական հանգամանքները: Սոցիալական իրենց դիրքով մեզ համար արդեն պարզ է, որ մյուս ստորադրուղները, բոլորն էլ Նոր Զուղաջի մեծահարուստ խոջայական ղերդատանների ներկայացուցիչներն էին, իսկ թե հայաքաղաքի ինքնավարության օգուկներում գրաված իրենց պաշտոնով ովքեր էին նրանք, կարելի է պարզել ուսումնասիրելով Նոր Զուղաջի ստեղծման պատմությունն ու թաղային համակարգը:

Արևելյան Հայաստանի շեն նահանգներն անապատ դարձնելու հրեշավոր իր ծրագիրն իրագործելիս, Իրանի դաժան տիրակալ Շահ-Աբբասը հատուկ պայմաններ էր ստեղծել ջուղայեցի և, ընդհանրապես, քաղաքաբնակ հայերի համար: Նրանց փոխադրելով իր նոր մայրաքաղաքը՝ Սպահան,

⁴² См. С. А. Егуазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891, с. 267—328.

հան հատուկ հողամաս էր հատկացրել հինջուղայեցիներին, որոնք այնտեղ կառուցեցին իրենց նոր գյուղաքաղաքը, սլահայանիլով բնօրրանի անունը՝ Զուլա: XVII դ. 50-ական թվականներին այդ հայաքաղաքն ընդարձակվեց կից կառուցված նոր թաղամասերով, որտեղ բնակություն հաստատեցին նախապես Սպահանի արվարձաններում տեղավորված երեանցիները, դաշտեցիները, գասկեցիները, թավրիլեցիները և ուրիշներ: Սրանք, սակայն, վարչական առումով չձուլվեցին Զուլայի հետ, չենթարկվեցին նոր Զուլայի ինքնավար մարմիններին, այլ՝ երկար տասնամյակներ գոյատևեցին որպես ինքնուրույն համայնքներ⁴³: Իսկ նոր Զուլան կառուցվեց որոշակի մի նախագծով՝ գլխավոր պողոտայով ու նրան հատող փողոց-թաղամասերով: Դլխավոր այդ պողոտան, որն ուղղադիրձ ձգվում էր արևելքից արևմուտք (ուներ 3276 քայլ երկարություն, 16 քայլ լայնություն), քաղաքի նշանավոր քալանթար, խոշա նաղարի անունով կոչվել է նաղարի խիավան: Այս պողոտայի վրա էին գտնվում բազմաթիվ վաճառատներ ու արհեստանոցներ⁴⁴: Պողոտան բաժանված էր երկու հատվածի, որի արևմրտյան կողմում՝ կոչված Սարֆրադենց դուռ, բնակություն էին հաստատել հայ առաքիլական եկեղեցու դավանանք ունեցող (լուսավորչական) հայերը, իսկ արևելյան կողմը՝ Շահրիմանյանց դուռ կոչվող, հետագայում դարձել էր հռովմեադավան հայերի քաղաքամաս: Զանդարուդ գետից դե-

⁴³ Այս առումով հետաքրքրական է 1702 թ. մի ձեռագրի հիշատակարանը. «Աւարտեցաւ սուրբ զիրքս, որ կոչի Ազաթանգեղոս,—գրված է այնտեղ,—ի քաղաքն Շօշ, որ է Ըսպահան, ի զիւզն նոր Երևան, ի դուռն սուրբ Ամենափրկչին, ձեռամբ փծուն և ախմար զրչիս՝ Խաչատուր իրիցի» (Ս. Եզանյան, Տուցակ ձեռագրաց նյութորքարնակ Հ. Հազարչանի, ձեռ. № 60, անտիպ): Սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում ենք ջուղայեցի տարրեր անձնավորությունների, որոնք կոչվում են երեանցի (օրինակ՝ Ոսկան Երևանցի), դաշտեցի (օրինակ՝ Ստեփանոս Դաշտեցի) և այլն, որոնք, սակայն, ոչ բուն երևանցի են և ոչ էլ դաշտեցի (Ազադիսի երկու թաղերից մեկն է), այլ նոր Զուլային առընթեր կառուցված համանուն բնակավայրերի ծնունդ:

⁴⁴ Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 172:

պի հարաւ ձգւած են եղել տասը ուղղագիծ ու լայնարձակ փողոցներ, որոնք հատվելով Նազարի խիավանի հետ, բու-
ժանվել են 20 ինքնուրույն հատվածների (տասական հատ-
վածներ՝ աջ և ձախ մասերում): Այդ փողոցներից յուրա-
քանչյուրը, որն ունեցել է իր մուտք-դարբասը, դիտվել է
որպես ինքնուրույն մի թաղամաս՝ «տասնակ»: Հայկական
միջնադարյան դպրոցական համայնքից ժառանգված ու դա-
րավոր ավանդույթ ունեցող տասնակային այս սխառմը, ըստ
Նոր Զուղայի հետ առնչվող փաստերի, ընկած է եղել նաև
հայկական քաղաքների կաղմակերպչական կառուցվածքի
հիմքում: Գյուղական տասնակների գլխավոր խնդիրն է ե-
ղել համայնքի օգտագործման ենթակա հողի ու ջրի տնօրի-
նումը, ինչպես նաև պետական հարկերի ու տուրքերի բաշ-
խումը տասնակի մեջ ընդգրկված ընտանիքների վրա և այլն:

«Տասնակավազները» (այդպես էին կոչվում տասնակ-
ների ղեկավարները) իրենց մշտական տեղն են ունեցել հա-
մայնքի ղեկավարութան մեջ, տանուտերերից (գեղջավազից)
հետո եղել են ամենահեղինակավոր և վարչական իրավունք-
ներով օժտված անձինք⁴⁵: Թաղապետ-տասնակավազի պաշ-
տոնը ևս ընտրովի է եղել: Այն միշտ էլ գրավել են տվյալ
թաղի մեծահարուստ գերդաստանների ներկայացուցիչները,
համապատասխան օժանդակութուն ստանալով համայնքի
բոլոր գործերը տնօրինող աշխարհիկ ու հոգևոր վերնախա-
վի կողմից: Այս մասին է գրել Զաքարիա Ազուլեցին, «տա-
նակավազի» փոխարեն դորժածելով դրան համարժեք «տա-
նուտեր», ինչպես և թուրքերեն «աղսախկալ» տերմինները:
Նա հայտնում է, որ երկար տարիներ Ազուլիսի Դաշտ թա-
ղամասի տանուտեր կամ աղսախկալ է եղել մեծատուն մի
անձնավորություն՝ մղղսի Մելքումը, Թովմա առարչալի

⁴⁵ См. С. А. Егуазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община, Казань, 1889, с. 110—120. Л. А. Ханларян, К характеристике армянской деревни дореформенного периода (40—60-е годы XIX в.), «Исторические записки», № 58, 1956, с. 162.

վանքի վանահոր կուսակիցն ու թեկնածուն: Դաշտեցիները, հակառակ վանահոր ցանկության, այդ պաշտոնից զրկել են Մեկքումին, նրա փոխարեն տանուտեր ընտրելով ոմն տեր Մարգարի որդի Ազարի: Այս կապակցությամբ հակառակ կողմերի միջև երկարատև պայքար է ծավալվել⁴⁶:

Նոր Զուղայի «տասնակավազ»—թաղապետերի մասին ակնարկներ կան նաև եվրոպական աղբյուրներում: Նրանցից մեկում, օրինակ, գրված է, որ «նրանք (իմա նորջուղացիները—Շ. Խ.) ունեն իրենց բալանթարը կամ քաղաքագլուխը և իրենց քաղխուղաները կամ թաղապետերը, որոնք իրավունք ունեն դատելու բոլոր հասարակ վեճերը: Ավելի կարևոր հարցերը ենթակա են թաղավորի կամ պետական խորհրդի իրավասության, իսկ որոշումներն ի կատար են ածվում քաղաքագլխի կամ թաղապետերի կողմից»⁴⁷:

Համադրելով մեզ հասած գրավոր ու աղգագրական տվյալները, կարելի է ուրվագծել թաղապետերի գործունեության հիմնական բնագավառները: Նրանք, առաջին հերթին, հայաքաղաքի ինքնավարության ղեկավար մարմնի մնայուն անդամներն են եղել և, բնականաբար, մասնակցել են բոլոր այն ժողովներին, որոնցում բնարկվել են քաղաքի ներքին կյանքին վերաբերող կարևոր հարցերը: Թաղի բնակիչների միջև առաջացած վեճերն ու անհամաձայնությունները հարթվել են «տասնակավազների» որոշումներով⁴⁸: Նրանց գլխավոր պարտականություններից մեկն էլ պետական հարկերի, ինչպես և տարբեր առիթներով բռնագանձվող արտակարգ տուրքերի, թաղին բաժին ընկած պահանջարկի բաշխումն է եղել թաղի բնակիչ գերդաստանների վրա՝ ըստ նրանց նյութական հնարավորությունների: Այդ նպատակով

⁴⁶ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 77—78:

⁴⁷ Cornelis de Bruyn, Travels into Muscovy, Persia and part of the East Indies, London, 1937, p. 225, John Carswell, Նշվաշխ., էջ 78:

⁴⁸ Տե՛ս Պաղոս Պետրոսյան, Նոր Զուղայի նախկին բնակիչների կյանքը, Նոր Զուղա, 1974:

գումարվում էին թաղային ժողովներ, որոնք հաճախ բուռն վեճերի ու հակամարտությունների ասպարեզ էին դառնում: Մեծահարուստ և ազդեցիկ թաղականներն ամեն ջանք գործադրում էին իրենց վրա դրված հարկը ղեղջեղու համար⁴⁹: Այն մասին, որ հենց «տասնակավագները» հավաքում ու քալանթարի միջոցով պետական գանձարան էին մուծում հարկերը, պահպանվել են նաև մի քանի ստացագրեր, զբրված 1743—45 թթ. տասնակներից մեկի (չի նշված որ տասնակի)՝ ավագ ոմն Հովհաննեսի կողմից: Այդ վավերագրերով նա հավաստում է, որ քալանթար նաղարի գերդաստանից կամ նրա երեք որդիներից ստացել է պահանջվող այս կամ այն հարկը՝ «մալը» և «մութմամիշը»⁵⁰:

Գիշերները թաղերի («տասնակների») դարբասները փակվում էին և թաղականներից, որոշակի հերթականությամբ, գիշերային պահապանների խմբեր էին կազմվում, որոնց պարտականությունն էր մինչև լուսաբաց շրջել թաղում և կանխել ամեն մի պատահար և գողություն, ենթարկվելով ղեկավար կարգված անձի հրահանգներին: Պահակային այս ծառայությունը շատ ավելի կտրուկ էր դառնում, երբ իրանի մայրաքաղաքը դառնում էր պատերազմական դեպքերի ասպարեզ⁵¹: Տասնակավագի պարտականությունների

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 17—19:

⁵⁰ Պահպանվել են այգսիսի 5 ստացագրեր, որոնցից 2-ը տրվում են ասորե. «Թիվն փոքր ԱՃՀԹ (1744)-ն քալանթար նաղարենց մութմամիշն Գ (թուման) ԲԹ դիան, որ կեսն այ Ա (թուման) ԶԹ դիան, խասավ ինձ՝ տասնակավագ Յովանիսիս» (Բրիտանական գրադարան, № 1048, էջ 29): «Թիվն փոքր ԱՃԼ. (1745) քալանթար նաղարին երեք տղին սարշմարն մալն այ ԲԹ դիան, խասավ ինձ՝ տասնակավագ Յովանիսիս» («Բրիտանական գրադարան, № 1048, էջ 30):

⁵¹ «Մին ճոթածախ դօլվաթաւորի տունն մտին Զեղուխի վանքին կուշան՝ Լ (30) ձիաւոր, Ժ—Ի (10—20) հեռեակ, թրով ավին, ճոթածախին փորն ճղեցին, մարլաղ ապրանքն տարան... Զուղեցիք ամենայն գիշերն իւրեանց տներն կու պահեն, քոն շեն լինեք, աշտպէս խմանաս», — գրել է Եղիան իր նամակներից մեկում: «Նզիա կարնեցու Դիվանը», էջ 30:

մեջ էր մտնում նաև թաղի պաշտպանություն հետ կապված կազմակերպչական աշխատանքների հսկողությունը:

Նոր Զուղայի բոլոր թաղերն անխտիր իրենց ներսում ունեին լավ մշակված պարտեզներ, որի մասին տվյալներ կան սկզբնաղբյուրներում: Հասկանալի է, որ քաղաքի ինքնավար մարմինների կարևոր պարտականությունների շարքում առաջնակարգ տեղ էին գրավում նաև ջրամատակարարման գործի կազմակերպման ու անխափան աշխատանքի ապահովման հետ առնչվող հոգսերը և այլն:

Նոր Զուղայի տնտեսական կյանքի զարկերակը շաղկապված էր արտաքին առևտրի հետ: Նշանավոր խոջայական գերդաստանները, իրենց մեծաքանակ գործակատարների հետ միասին, առևտուր էին անում ասիական ու եվրոպական մայրցամաքների շատ երկրների հետ: Ուստի, նրանց համար ամենօրյա մտահոգությունն առարկա պետք է լինեին Իրանի մայրաքաղաքից դեպի օտար երկրներ ձգվող ցամաքային ու ծովային ճանապարհների ապահովության հետ առնչվող բարդ հարցերը, օտար երկրներից Արևելք ներթափանցող առևտրական ընկերությունների նկատմամբ իրենց վերաբերմունքի ճշգրտումը և այլն: Այս կարգի հարցերը ևս, հավանաբար, լուծվում էին քաղանքարի գլխավորությունում և տասնակավազների մասնակցությամբ պարբերաբար գումարվող ժողովներում:

XVII դ. կեսերին Հայաստանում երկար տարիներ քարոզչական գործունեություն ծավալած կաթոլիկ միսիոնար Փիրոմալլին իր գրությունների մեջ շեշտել է այն մեծ ազդեցությունը, որ ունեցել են ջուղայեցիները հայ եկեղեցու կյանքում և մշակութային գործունեության բնագավառներում: Նրանք, ըստ Փիրոմալլիի, «ի վիճակի են ըստ իրենց ցանկության պաշտոնադրվել որևէ վարդապետի, եպիսկոպոսի կամ, նույնիսկ, կաթողիկոսի»⁵²: Նվ, իրոք, պատմական աղբյուրներում կան բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են այս տեղեկությունը: Զուղահայ համայնքի ղեկա-

⁵² Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան վարդապետ Երևանցի և իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 119:

վար մարմինների գիտությամբ ու հրահանգներով էին լուծ-
վում նաև հայ մշակույթի ու եկեղեցու հետ առնչվող և հա-
մահայկական նշանակութուն ունեցող շատ հարցեր:

Այսպիսով, Նոր Զուղայի տասնակալագները, յուրա-
քանչյուրը հանդես գալով իր տասնակի անունից, միա-
խմբվում էին բալանթարի շուրջը՝ լուծելու քաղաքի առջև
ծառացող բոլոր կարևոր խնդիրները:

Ըստ Հ. Տեր-Հովհանյանցի ձեռքի սակ եղած շատ կա-
րևոր փաստաթղթերի, որոնք այսօր էլ պահվում են Զու-
ղայի Ամենափրկիչ վանքի գարաններում, Նոր Զուղայի
տասնակներն ունեցել են իրենց անունները, կապված էջա-
նավոր տասնակալագների անվանց հետ: Դրանք, սակայն,
փոփոխվել են, երբ որևէ տասնակի ղեկավարությունը այս
կամ այն խոջայական գերդաստանի ներկայացուցչից ան-
ցել է մեկ ուրիշի ձեռքը:

1735 թ. Նոր Զուղայի ինքնավար մարմինները, պահան-
ջել են բոլոր տասնակների բնակչությունից համապատաս-
խան խոստումնագիր ներկայացնել այն մասին, որ իրենք
թույլ չեն տալու իրենց թաղում օթևանելու ուրիշ վաճառից
ժամանող անձանց՝ վարդապետների, քահանաների, ասնաֆ-
բարների, դուքանդարների և այլն: Մեջ բերելով տասնակ-
ներից մեկի (Թաղվալէնց) տասնակի ներկայացրած խոս-
տումնագրի բնագիրը և ուսումնասիրելով մյուս տասնակ-
ների նույնատիպ խոստումնագրերը, Հ. Տեր-Հովհանյանցը
կազմել է 1735 թ. տասնակների ցանկն ըստ այն անունների,
որոնք գործածության մեջ են եղել այդ ժամանակ: Ստորև
բերում ենք այդ ցանկը.

(1) Դիւաբէնց, (2) Մեծ խօջէնց, (3) Փիրմսէնց, (4) Գի-
լանէնց, (5) Բաղրամէնց, (6) Աւագէնց, (7) Միրմանէնց,
(8) Զէքէնց, (9) Իսրայէլէնց, (10) Փանոսէնց, (11) Թօփչէնց,
(12) Զախաթունէնց, (13) Ղօշղարէնց, (14) Թաղվալէնց,
(15) Աղիջանէնց, (16) Տէր Անանէնց, (17) Մուշկէնց,
(18) Ղարաջանէնց, (19) Ավագ Եգանէնց, (20) Դավթէնց⁵³:

⁵³ Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 40—42:

Բացի սրանից, նույն աշխատության մեջ հրատարակված է նաև մեկ ուրիշ ցանկ, որով ամփոփված են 1770-ական թվականներին Նոր Զուղայի առաջնորդ Մկրտիչ Կալուկոսի անցկացրած մարդահամարի տվյալները: Այստեղ տրված են Նոր Զուղայի արվարձանների և տասնակների անունները՝ կից թվանշաններով, որոնք ցույց են տալիս, թե տվյալ թաղում կամ տասնակում այդ ժամանակ բնակվելիս են եղել այսքան (ըստ բերված թվանշանի) արական բնակիչ, «թէ քահանայ և թէ աշխարհական»,—ինչպես գրված է առաջին տողում⁵⁴:

(1) Երևան (թաղ)—199	(13) Դիլանէնց—28
(2) Գասկէն—6	(14) Դիլաքէնց—58
(3) Թարվիղեցիք և Դաշտերն—136	(15) Զէքէնց—50
(4) Թօփչէնց տասնակ—5	(16) Քուշերն և Դավուաբադ—75
(5) Մուշեղէնց—29	(17) Բաբայ Փանոսէնց—44
(6) Տէր Անանէնց—24	(18) Թաղվալէնց—34
(7) Զախաթունէնց—34	(19) Բաղրամէնց—65
(8) Խօջայ Նաղարէնց—70	(20) Ղարադանէնց—103
(9) Աւադ Դանէնց—59	(21) Փիրմսէնց—80
(10) Աղիղջանէնց—49	(22) Ղոշղարէնց—70
(11) Իսրայիլէնց—73	(23) Թօփչէնց—46
(12) Միրմանէնց—45	(24) Չարսուն—135:

Ընդամենը 1667 տղամարդ կամ ընտանիք:

Տասնակների թիվը որոշելու համար այս ցանկից առանձնացնենք 1, 2, 3 և 16 համարանիշները, որոնք Նոր Զուղայի մեջ չէին մտնում, այլ, ինչպես նշվել է, առանձին բնակավայրեր էին համարվում՝ ունենալով գյուղական համայնքի իրենց վարչութունները: Ցանկից հանելով այդ միավորները, դարձյալ ստացվում է նույն 20 թաղ-տասնակների

⁵⁴ Պետք չէ՝ անտեսել և այն հնարավորությունը, որ այդ թվանշաններով ցույց է տրվում ոչ թե արական բնակչության, այլ տվյալ թաղում գոյություն ունեցող ընտանիքների կամ տների քանակը:

թվարկումը: Տասնականների այս 20 անուններից 16-ը 1735 թ. ցանկի հետ ճշտորեն համընկնում են⁵⁵: Այսպես, նույնական են առաջին և երկրորդ ցանկերի հառելյալ համարանիշ միավորները. 3—21, 4—13, 5—19, 6—9, 7—12, 8—15, 9—11, 10—17, 11—4 (կամ էլ 23), 12—7, 13—22, 14—18, 15—10, 16—6, 17—5 և 18—20:

Նոր Զուղայի թաղ-տասնականների քանակը որոշելուց և 1735 թ. ու 1770-ական թվականների անունների հետ ծանոթանալուց հետո, կրկին անդրադառնալով 1671 թ. ռուսական իշխանություններին Նոր Զուղայի համայնքի մեծամեծների կողմից ներկայացրած փաստաթղթի ստորագրություններին, դժվար չէ ալլես հանգել այն եզրակացության, որ Նոր Զուղայի քաղանքարից և ուստարաշուց բացի այդ փաստաթուղթն իրենց ստորագրություններով ու կնիքներով հաստատող անձինք հենց Նոր Զուղայի 20 թաղապետները կամ տասնակավաղներն են եղել:

1671 թ. մինչև 1735 թ. անցել էր 64 տարի, որի ընթացքում շատ փոփոխություններ էին տեղի ունեցել Նոր Զուղայի տնտեսական կյանքում: Աֆղանների ավերիչ արշավանքների և դաժան տիրապետության տարիներին մեծահարուստ շատ ընտանիքներ էին լքել իրենց հայրենի քաղաքը և բնակություն հաստատել Հնդկաստանի, Իրաքի, Թուսաստանի և Եվրոպայի նշանավոր կենտրոններում: Դրանց մեջ, ամենայն հավանականությամբ, եղել են նաև տասնակավագի պաշտոն գրաված անձինք: Նախորդների փոխարեն հրապարակ էին իջել, դիրք գրավել ու միջոցներ կու-

⁵⁵ 1735 թ. ցանկում մի շարք անուններ բերված են «եանց» վերջավորությամբ, բոլորը դարձրել ենք միօրինակ՝ «էնց», Նոր Զուղայի բարբառին համապատասխան ու հարադատ (օրինակ, Միրմանեանց—Միրմանէնց): Զորս գեպրերում կան փոքր տարբերություններ, որոնք կարող են բացատրվել ինչպես զրչագրական վրիպումով, այնպես էլ տարիների ընթացքում կրած ձևափոխությամբ: Դրանք են Աազհանց—Աազդանէնց (6—9), Փանոսեանց—Քարայ Փանոսէնց (10—17), Աղիչանեանց—Աղիզանէնց (15—10), Ղարաջանեանց—Ղարադանէնց (18—20):

առակել ուրիշ գերդաստաններ, համապատասխանաբար իրենց համար տեղ ապահովելով քաղաքի խնքավարութեան մարմիններում: Չնայած այս փոփոխութեաններին 1671 և 1735 թթ. ցանկերի համեմատութեանը ևս երեւան է բերում անունների որոշակի ընդհանրութեաններ: Այսպէս, 1671 թ. փաստաթուղթը ստորագրողներից երրորդը Աղափիրի Ջախաթունենցն է և Նոր Զուղայի տասնակավագներից մեկը: Այն «Ջախաթունէնց» տասնակ է կոչվել նաև հետագայում՝ XVIII դ. ընթացքում, վկայակոչված լինելով և՛ վերոհիշյալ և ցանկի (12-րդ տող) և՛ Բ ցանկի (7-րդ տող) մեջ: Մարգար Շահրիմանէնցը ստորագրողներից չորրորդն է: Այդ նշանավոր գերդաստանի գլխավոր ճյուղի ներկայացուցիչները XVIII դ. 30-ական թվականներին արդեն գտնվում էին Նոր Զուղայից դուրս, սակայն հայրենի քաղաքում, ամենայն հավանականութեամբ, բնակվում էին նույն գերդաստանի ճյուղերից մեկի անդամները՝ Բաղրամէնց ազգանունով: «Բաղրամէնց» տասնակը հիշատակված է Ա (5-րդ տող) և Բ (19-րդ տող) ցանկերում: Փաստաթղթի ստորագրողներից մեկի՝ Սաֆար Թովիշէնցի անունով է կոչվել նույն տասնակը և հետագայում: 1671 թ. տասնակավագ է եղել Դերաբէնց գերդաստանից սերված խոջա Զաքարը: Հայտնի է, որ այդ գերդաստանի մի ճյուղը կոչվել է Միրմանյան: Միրմանէնց անունով տասնակի հանդիպում ենք նաև XVIII դ. վերոհիշյալ ցանկերում (Ա—7 և Բ—12): Մինաս Փանոսէնցի կամ նրա հոր՝ Փանոսի, անունով տասնակը նույն այդ անունով գոյատեւել է հաջորդ դարում (Ա—10 և Բ—17): Այդտեղ, հավանաբար, բնակվել և տասնակավագի պաշտոն են զբաղել խոջա Մինասի շառավիղները, որոնց մի ճյուղը հետագայում մեծ դեր է կատարել Նոր Զուղայում, ճանաչված լինելով խոջա-Մինասէնց, ինչպէս նաև էմնիադէնց անուններով:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Նոր Զուղայի համայնքի անունից ռուսական պետական մարմինների հետ բանակցութեաններ վարելու ուղարկված Գրիգոր Լուսիկովի

(Նուսիկենցի) լիազորությունները հաստատել են քալանթարի և ուստաբաշու հետ միասին Նոր Զուղայի 20 թաղամասերի կամ տասնակների այդ օրերի ավագները:

Հանգելով այս կարևոր հետևությունը, անհրաժեշտ է մեկ անգամ ևս շեշտել այն հանգամանքը, որ հայ-ուստական տնտեսական, հետագայում նաև մշակութային ու քաղաքական կապերի սերտացման համար մեծ նշանակություն ունեցող 1667 թ. պայմանագիրը և հետագայի բոլոր համաձայնագրերը (որոնցով ճշգրտվում էին այդ նշանավոր փաստաթղթի տարրեր կիսերը) կյանքի էին կոչվում Նոր Զուղայի հայկական համայնքի ինքնավար մարմինների ղեկավարների՝ քալանթարի, ուստաբաշու ու տասնակավագների նախաձեռնությամբ: Եվ այս եզրակացությամբ մերժվում է Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության մասին շրջան առած և ճանաչում գտած այն տեսակետը, որի համաձայն XVII դ. 60-ական թվականներին արդեն Նոր Զուղայում գոյություն է ունեցել եվրոպական երկրների Արևելահնդկական կոմպանիաների օրինակով ստեղծված առևտրական մի հզոր կազմակերպություն, որն իրավունք է ունեցել իր անունից պայմանագրեր կնքելու տարբեր երկրների պետական մարմինների հետ և այլն: Նոր Զուղայի հայկական համայնքի ինքնավար մարմինների ղեկավարները՝ քալանթարը, ուստաբաշին ու քաղապետներն էին, որ համայնքի անունից հարաբերությունների մեջ էին մտնում և՛ Իսանի պետական առաջնորդների, և՛ այլ երկրների պետական մարմինների հետ, ստանձնում որոշ պարտավորություններ, համաձայնություններ կայացնում, ստորագրում պայմանագրեր և այլն:

* *

1673 թ. փետրվարի 7-ին Գրիգոր Նուսիկովը ներկայացնում է Ռուսաստանի Դեսպանական վարչատուն⁵⁶ և երդ-

⁵⁶ Դեսպանական վարչատուն էր կոչվում Ռուսաստանի պետական կենտրոնական այն հաստատությունը, որ վարում էր հարաբերությունները:

վելով հայերեն ավետարանի վրա, Նոր Զուղայի համայնքի անունից պարտավորվում՝ այսուհետև հրաժարվել Թուրքիայի վրայով եվրոպական երկրների հետ առևտուր անելուց և Իրանի ողջ մետաքսը Ռուսաստան ներմուծել ու Ռուսաստանի վրայով միայն արտահանել եվրոպական երկրներ: Հասուկ նշվում է և այն հանգամանքը, որ հայերն իրենք, ինչպես և Իրանի մյուս վաճառականները, այլևս չպետք է մետաքս վաճառեն եվրոպալից Իրան ժամանող օտարազգի վաճառականներին և իրենք պետք է միայն մետաքսի ողջ արտադրանքն Իրանից դուրս բերեն Ռուսաստանյան ճանապարհով⁵⁷:

Հարց է ծագում, թե ինչպես Զուղահայ համայնքը կարող էր պարտավորեցնել ոչ միայն իր վաճառականներին մետաքսի առևտրի հին ճանապարհներից հրաժարվել, այլ նաև արգելել օտարերկրացիների մուտքն Իրան՝ նույն այդ հումքի ձեռքբերման նպատակով: Այս հարցի պատասխանը կհեշտանա, եթե վերհիշենք թե ինչպիսի վիթխարի ուժ էին ներկայացնում վենետիկի ու Ջենովայի առևտրական համայնքները հեռավոր երկրներում ստեղծած իրենց առևտրական ֆակտորիաներում, ինչպես էին նրանք պարտադրում իրենց ազդեցության ոլորտի մեջ մտնող բոլոր վաճառականներին խստորեն հետևելու մշակած տնտեսական քաղաքականությանը: Խոսելով վենետիկցիների ու Ջենովացիների Ալեքսանդրիայի ու Կոստանդնուպոլսի նավահանգիստներում ձեռք բերած տնտեսական դիրքի մասին, Ֆ. Էնգելսը գրել է. «Նրանք պաշտպանված էին մրցակիցներից ու կլիենտներից, վաճառում էին փոխադարձ համաձայնությունամբ սահմանված գներով, նրանց ապրանքները որոշակի որակ ունեին՝ երաշխավորված հառարակական վերահսկողությամբ, իսկ հաճախ էլ հատուկ դրոշմանշումով, նրանք միասնաբար որոշում էին այն գները, որ տեղացիներն

օտարերկրյա պետությունների հետ Ստեղծվել է 1549 թ. գոյատևելով մինչև 1718 թ., ևրդ ստեղծվեց արտաքին գործերի գերատեսչություն:

⁵⁷ *Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», т. 1, с. 114.*

ստիպւած էին վճարել նրանց ապրանքների համար և այլն... Վա՛յ նրան, ով ավելի էժան կվաճառի կամ ավելի թանկ կըզնի պայմանավորւած գներից: Բոյկոտը, որին նա ենթարկւում էր, այն ժամանակվա պայմաններում նշանակում էր անխուսափելի սնանկացում, չխոսելով արդեն մեղավորի վրա ընկերութեան դրած ուղղակի տուգանքների մասին»⁵⁸:

Այսպիսի կազմակերպչական հզոր մեխանիզմ ունեւնաւ նոր Զուղայի առևտրական համայնքը, ուստի ջուղահայ խոջայական կապիտալը, իրոք, ի վիճակի էր կատարելու իր ստանձնած պարտավորութիւնը:

Հայտնի է, որ Գիւլանում արտադրվող ողջ մետաքսը որոշակի գնով ձեռք բերելու իրավունքը մեկընդմիջաւ իրենց էին վերապահել Խրանի գահակալները: Գիւլանի մետաքս արտադրողները պաշտավոր էին իրենց ողջ արտադրանքը, առանց մնացորդի, հանձնել շահի պաշտոնյաներին և առաքել Սպահան կամ էլ շահի կողմից մատնացուցց արվող վայրը (մեծ մասամբ Թավրիզ): Շահ Աբբասի ժամանակներից ի վեր վերոհիշյալ ձեռով հավաքվող մետաքսի ողջ հումքի ձեռքբերման մեկնաշնորհը գտնվում էր ջուղահայերի ձեռքին, որոնք օժտված էին առանձնաշնորհյալ վաճառականների իրավունքներով⁵⁹:

Ըստ այդմ, ջուղահայ խոջաները, համապատասխան պայմանների առկայութեամբ, իրականացնում էին իրենց ստանձնած պարտավորութիւնները՝ դեպի Ռուսաստան ուղղելով ոչ միայն անմիջապէս իրենց ենթակա վաճառականների քարավանները, այլև օգտվելով իրենց գրաված հրա-

⁵⁸ Գ. Էնգելս, *Լրացումներ «Կապիտալ» երրորդ հատրի, Մարքս, «Կապիտալ», հ. III, մաս II, էջ 441:*

⁵⁹ *Տե՛ս* Дневник осады Испагани афганцами, веденный Петром дн Саргис Гиланенц, в 1722 и 1723 годах ... перевод и объяснения К. Патканова, СПб., 1870, с. XV—XVI; В. А. Байбуртян, *Հշվ. աշխ.*, էջ 46; *Voyages de Pietro della Vallée, Gentilhomme Romain, dans la Turgule, l'Egypte, la Palestine, la Perse, les Indes Orientales, et autres lieux. Nouvelle édition, tome IV, A Rouen, 1755, p. 417.*

մանատարական դիրքերից, Արևելյան Հայաստանի և Անգլիկոսական մյուս առևտրական կենտրոնների հայ վաճառականներին առաջնորդելով դեպի շահութաբեր այդ բնագավառը: Դրան նպաստեցին նաև 1665 թ. Քուրքիայի և Վենետիկի միջև բորբոքված պատերազմական գործողությունները Միջերկրական ծովում, միջադպային ապրանքափոխանակության այդ ուղու վտանգավորությունը, ինչպես նաև պարբերաբար խցանումը և, ընդհանրապես, անօգտագործելի դառնալու մեծ վտանգը⁶⁰: Հայ խոջայական կապիտալի հեռատես ներկայացուցիչներն այս բանակցություններով ապահովում էին իրենց անխափան առևտրի համար մեծ հեռանկարներ բացող այդ նոր ճանապարհը: Սակայն, նրանք չէին թաքցնում, որ Ռուսաստանի ճանապարհը միակ ճանապարհ դարձնելու համար անհրաժեշտ են գրավականներ շահութաբերության մասին: Գր. Լուսիկովը երդման արարողության ժամանակ, վերոհիշյալ պարտավորությունները ստանձնելիս, անհրաժեշտ համարեց շեշտել, որ պայմանագրի կետերի անխափան կատարումն, ի վերջո, պայմանավորված է նբանով, որ հայ վաճառականները վնաս չկրեն, այլ՝ շահեն, կատարելով պայմանագրի նախատեսումները⁶¹:

Նոր Զուղայի հայկական համայնքի ղեկավար մարմնի՝ քալանթարի և տասնակավագների, գործունեության կարեւորագույն բնագավառներից մեկն էլ, ինչպես արդեն նըշ-

⁶⁰ См. и. Г. Куканова, *и. 24. 1717*, էջ 76:

⁶¹ 1717 թ., երբ ռուս նշանավոր դիվանագետ Ա. Պ. Վուլինսկին զբոնելով էր Իրանում և բանակցություններ վարում մեծ վեզիրի հետ, հարց է բարձրացվում այն մասին, որ հայ վաճառականները լիովին չեն կատարում Իրանի ողջ մետաքսը Ռուսաստանի վրայով արտահանելու իրենց ստանձնած պարտավորությունը: Էէթեմադ-ուղ-Գովլեն պատասխանում է, որ Տհալերին այդ բանը պարտադրելու որևէ հնար չկա, երբ նրանք համոզվեն «որ դա շահութաբեր է իրենց համար, այդպես էլ կվարվեն, ա-

վել է, համայնքի անդամների միջև ծագած բոլոր այն վեճերի ու տարաձայնությունների քննարկումն էր, որոնք վերաբերում էին տնտեսական՝ գործունեության ոլորտներին: Հայաքաղաքի ղեկավար մարմինը՝ քալանթարի գլխավորությամբ, պարբերաբար ժողովներ էր գումարում քննարկելու դատական տարբեր հայցեր, պատժելու վանցանք գործած որևէ վաճառականի, պարտադրելու ժամկետանց իր պարտքը չմոծած որևէ քաղաքացու մարելու այն որոշակի ժամանակամիջոցում և այլն: «Վէճ կամ անհամաձայնություն յուզեալ ի վաճառականս ի վերայ առարկայից տուրևառութեան կամ հաշուոյ, խաղաղութեամբ աւարտեալ լինէր վճռագրութեամբ քալանթարի և վաճառականաց ժողովոյ», — գրել է այդ մասին Նոր Զուղայի լավատեղյակ պատմագիրը, ավելացնելով, որ «առարկայն վէճի ըստ ամենայն պատշաճաւոր հանգամանացն գրաւոր յայտարարութեամբ մատուցեալ լինէր ի քննութիւն վաճառականաց ժողովոյ, ուրանօր յետ հարկաւոր քննութեանց և վերահասութեանց գրէին զվէճիս ի վերայ նույն յայտարարական թղթոյ ըստ այս ձևոյ. «սովդագարի դաստուրն այս է...», և թէ մեք վասն այսր գործոյ՝ այսպէս գիտեմք»⁶²: Ի հայտարարություն իր այս ներկացություն, նա ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ արձանագրություններ, որոնք այսօր էլ պահվում են Նոր Զուղայում:

Նոր Զուղայի վաճառականաց ժողովի դատական գործունեության մասին արժեքավոր տվյալներ կան նաև եվրոպացի ճանապարհորդների ու կաթոլիկ քարոզիչների գրքավածքներում⁶³:

ռանց հարկադրանքի»: В. П. Лисцов Персидский поход Петра I, 1722—1723, М., 1951, с. 57, տե՛ս նաև «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 114.

⁶² Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 183:

⁶³ Տե՛ս Thomas Herbert, Travels in Persia, Abridged and ed. by sir W. Foster, London, 1928, p. 121. John Garstwell, նշվ. աշխ., էջ 77—78. В. А. Байбуртян, նշվ. աշխ., էջ 19:

Ջուղահայ ողջ համայնքի շահերը շոշափող կարևոր հարցերի լուծման համար, ըստ անհրաժեշտության, հրավիրվել են նաև ընդհանուր ժողովներ, որին մասնակցել են ինչպես բուն Նոր Ջուղայի, այնպես էլ նրա մերձակայքում գտնվող և որպես արվարձան ճանաչվող հայկական բնակավայրերի բոլոր ընտանիքների ավագ ներկայացուցիչները:

XVIII դ. 40-ական թվականներին Ջուղայի բնակչությանը զգալի մասը, հատկապես մեծահարուստ գերդաստանները, հեռացել էին իրենց հայրենի քաղաքից, որը թշվառության դուռն էր հասել իրանի տնտեսական ծանր կացության և քաղաքական անկայուն վիճակի հետևանքով: Լքվել ու անմարդաբնակ էին դարձել շատ տներ, ամառակ էին մնացել այգիներ ու պարտեզներ: 1768 թ. գումարված ընդհանուր ժողովում, որին մասնակցում էին Նոր Ջուղայի տասնակների և ինքնուրույն արվարձանների բոլոր բնակիչները, կնքվում է մի համաձայնագիր, որի մեջ ասված է. «Հայլ (իմա՛ ալթմ) հաղիր ևլանք մենք Ջուղայու, Հարեվանաց (իմա՛ Երևան արվարձանի), Թարվիդու, Քօշեր և Ղարադէլի քօլ մեծ ու փոքր ըռայաթքս, համմասլահաթի (իմա՛ համախոհությանը) դաշնագիրս շինեցինք»,—այնուհետև թվարկվում են այն միջոցառումները, որոնք մշակվել էին հայաքաղաքի հետագա քայքայումը կանխելու, լքված տներն ու այգիները շենացնելու և մշակելու մտահոգություններ⁶⁴:

Համայնքի անդամների միջև տարբեր առիթներով վեճեր էին ծագում նաև հայրենի քաղաքից դուրս բոլոր այն վայրերում, որտեղ առևտրական գործունեություն էին ծավալում ջուղացիքի վաճառականները: Ջուղացիքիների այդ փոքրիկ համայնքներում նույնպես, ըստ անհրաժեշտության, գումարվում էին համայնքի անդամների ժողովներ, որոնցում քննարկվում և հարթվում էին ծագած վեճերն ու անհամաձայնությունները: Այդ տիպի ժողովների մասին տրվյալներ կան Հովհաննես Տեր-Դավթյանի Տիրեթյան տարի-

⁶⁴ Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 313—314:

ների գրանցումներում, Հարություն Լազարյանի հաշվեմաս-
յանում և բազմաթիվ այլ աղբյուրներում: Պահպանվել է,
օրինակ, 1695 թ. ապրիլի 15-ին Սմատերգամում կայացած
դատաստանական մի նիստի արձանագրությունը, ըստ որի,
Շահրիման դի Մուրադի տանը հավաքվել են երեք-աչվա-
ճառականներ ու քննարկել՝ Ալեքսան Պողոսյանի և Մատ-
թեոս Հովհաննիսյանի միջև ծագած վեճի հանգամանքները:
Հուլանդացի նոտար Թիքսերանդեթի կազմած արձանագրու-
թյան համաձայն, վիճող կողմերը բոլորի ներկայությամբ
հայտարարել են, որ իրենց միջև ծագած վեճը հարթված է
վերոհիշյալ հայ վաճառականների թեկադրած հղանակով:
«Այս ձևի հայտարարությունը,—նշված է նոտարական ար-
ձանագրության մեջ,—հայերի համար հավասար է եղել
ծանր երգման»⁶⁵:

Նոր Զուղայի առևտրական կապիտալի բոլոր ներկայա-
ցուցիչները, գիտակցելով միմյանց զորավիգ լինելու անհրա-
ժեշտությունը, աշխարհատարած իրենց գործունեության հա-
ջողության համար սերտորեն համագործակցում էին միմ-
յանց հետ, հանդես գալիս որպես վկա և իրենց ստորագրու-
թյուններով հաստատում տարբեր գործարքների մասին գըր-
վող փաստաթղթերը, հանձն էին առնում որպես լիազոր-
ներկայացուցիչ դրամ ստանալ կամ հանձնել ուրիշների և
այլն: Նրանց ստորագրություններով հաստատված գրու-
թյունները և՛ Նոր Զուղայում, և՛ նրա հետ տնտեսապես
կապված կենտրոններում հաշվի էին առնվում որպես իրա-
վական ուժ ունեցող փաստաթղթեր⁶⁶:

Նոր Զուղայի ինքնավար մարմինների հետ միասին հա-
մայնքի ղեկավարման գործում նշանակալից դեր է կատա-

⁶⁵ Դր. Մեսրոպ Ժ. Վ. Դ. Դեբգորյան, Նոր նյութեր և դիտողություններ
հրատարակիչ Վանանդեզվոց մասին, Վիեննա, 1969:

⁶⁶ Պահպանվել են այս տիպի տասնյակ փաստաթղթեր: Հատկապես ար-
ժեքավոր են Ռիտանական գրադարանի № 1047 ձեռագրի 18 և 268 հա-
մարակիր փաստաթղթերը և Հ. Տեր-Հովհանյանցի հրատարակած փա-
ստաթղթերից մի քանիսը, տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա,
էջ 371:

րեւ հայոց եկեղեցին՝ Զուղայի թեմի առաջնորդի գլխավորութեամբ, որը միաժամանակ հանդիսանում էր Ամենափրկիչ վանքի վանահայրը։ Զուղայի եպիսկոպոսները, փաստորեն, կարողացել էին հայ եկեղեցու նվիրապետութեան կազմում ապահովել իրենց համար գրեթե այնպիսի ինքնուրույն վիճակ իրանի սահմաններում և նորջուղացիների կողմից ստեղծված հայկական գաղթօջախներում, ինչպիսիք ձեռք էին բերել Կոստանդնուպոլսի պատրիարքները՝ Օսմանյան կայսրութեան տակ գտնվող շերկրամասերում։ Բացի նոր Զուղայից, նրա մերձակայքում գտնվող 40 հայկական գյուղերից և իրանի մյուս քաղաքներից նոր Զուղայի առաջնորդների հոգևոր իշխանութեան տակ էին գտնվում Բասրայի, Սուրաբի, Մադրասի և Կալկաթայի ավագերեցները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ենթակայութեան տակ գտնվող ավելի փոքր գաղթավայրերի քահանաներ։ Օրինակ, Սուրաբի ավագերեցին էին ենթակա Բոմբեյի, Զհանաբադի, Օմրանգաբադի, Հեյդարաբադի քահանաները, Մադրասինը՝ իշխում էր Մուշիբանդարի, Նակիաթանայի, Բաթավիայի (Ջակարտա) և Փէգուի (Ռանգուն) հայկական եկեղեցիների վրա, իսկ Կալկաթայինը՝ Ջիշրայի, Սեիդաբադի և Դաքայի վրա և այլն⁶⁷։

Նոր Զուղայում կային բաղձաթիվ եկեղեցիներ, որոնցից մի քանիսը կառուցված լինելով խոշոր թաղամասերում, իրենց շուրջն էին համալսմբել մի քանի տասնակներ, որոնք իրենց ձեռքն էին առել համայնքի կրթութեան ու առողջապահութեան գործի ղեկավարութունը և զգալի դեր էին կատարում նաև տասնակների ներքին կյանքին վերաբերող հարցերը տնօրինելիս։

67 Տե՛ս 2. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 392—393։ Այս տեղեկությունները վերաբերում են 1793 թ.։ Դրանից առաջ, հատկապես XVIII դ. առաջին հիսնամյակում, ինչպես և դրանից հետո մինչև XIX դ. կեսերը Հնդկաստանի, Հնդկաչինի, Ինդոնեզիայի այլ կենտրոններում ևս, հայկական կայուն բնակչության կուտակմանը զուգընթաց կառուցվել են հայկական մի շարք այլ եկեղեցիներ, որոնք բոլորն էլ ենթակա են եղել նոր Զուղայի առաջնորդին։

Այդպիսիներից էր, օրինակ, Սուրբ Ստեփանոսի մեծ և կեղեցին, որը 1739 թ. ունեւ ութ քահանա: Աւագեւեցն էր Տեր Ստեփանոսը, քահանաներից Խաչատուրը ժամանակակից հիշատակարանում կոչված է. «գայրոց զաստիարակ և ուսուցիչ մանկունց», իսկ մեկ ուրիշը՝ «այր գիտնական և ճարտար ի բժշկութեան»⁶⁸:

Տեղեկութիւն կա և այն մասին, որ հաստատուպես XVIII դ. առաջին հիսնամյակում Ամենափրկիչ վանքն իր հովանու տակ էր առել նաև Հնդկաստանի Քոչին քաղաքը՝ Մալաբարի քրիստոնյաների կենտրոնատեղին, ուր ուղարկում էր իր միաբաններից մի քանիսին: 1748 թ. դրված մի հիշատակաբանի մեջ ասված է, որ «ի հնդկաց երկիրն առ ժողովուրդն ասորոց (այսինքն Մալաբարի քրիստոնյաների մոտ, որոնք նեստորականներ էին), ի քաղաքն որ ասի Քօչին» այդ ժամանակ գտնվում էին Ամենափրկչի միաբաններից չորսը⁶⁹: Բազմաթիւ տեղեկութիւններ կան այն մասին, որ հայերն այդ վայրերում կայուն հենակետեր են ունեցել ու մի շարք եկեղեցիներ և այլ շինութիւններ են կառուցել շատ ավելի վաղ ժամանակներում⁷⁰:

Ամուսնական և ընտանեկան իրավունքին, ինչպես և ժառանգական իրավունքին վերաբերող բոլոր վեճերն ու դատական խնդիրները գտնվում էին եկեղեցու իրավասութեան ներքո: Հոգևոր դասի ներկայացուցիչներն էին հաստատում կտակներն ու տարբեր տիպի լիազորագրերը, որոնց ձախ լուսանցքի վերին մասում դրվում էին երկու հոգևոր պաշտօնյաների ստորագրութիւններն ու կնիքները, անհրաժեշտ բացատրութիւններով, օրինակ.

⁶⁸ Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 478:

⁶⁹ Նույն աւղում, էջ 480:

⁷⁰ Տե՛ս Թորգոմ Գուշակյան, Հնդկահայք, տպագրութիւններ և տեղեկութիւններ, Երուսաղեմ, 1941, էջ 43—45: Ռ. Կյուպենկյան, Ջակոմէ Աբունա հայ եպիսկոպոսը Մալաբարում, Հայկ. ՍՍՀ ԳԱ հասարակական գիտութիւնների գիտական-ինֆորմացիայի սեկտոր, Научно-информационный бюллетень, серия III, № 2 (6), 1973:

Ես Աստվածատուր վարդապետս Խաչիկին հղրարովն մօրհնցի, վերջ.

Սոյնպէս և ես Յակոբ վարդապետս մօրհնցի, վերջ⁷¹ և այլն:

Սովորական դարձած այս բանաձևով, որն ավարտվում է «վերջ» բառով, հոգևոր դասի ներկայացուցիչները շեշտել են այս կամ այն անձի լիազորութեամբ իրենց ստորագրած տվյալ փաստաթղթի (մեծ մասամբ կտակների) անառարկելի և հաստատուն լինելու պարագան: Հոգևոր անձանց այդ ստորագրություններից հետո միայն, մեծ մասամբ փաստաթղթի ստորին մասում, գրվել են մյուս վկաների՝ աշխարհական անձանց ստորագրությունները:

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում որոշակի տեղեկություն չկա այն մասին, թե հոգևոր դասի ներկայացուցիչը մասնակցել է արդյո՞ք քաղանթարի նախագահութեամբ գումարովող ժողովներին: Սակայն, համայնքի կյանքի կարևորագույն հարցերի քննարկման ժամանակ թեմի հոգևոր առաջնորդի կամ նրա ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է եղել:

Այսպիսով, Նոր Զուղայի և, ընդհանրապես, միջնադարյան հայկական քաղաքների տնտեսական կյանքի ղեկավարությունը կենտրոնացված էր առևտրական բուրժուազիայի և հոգևորականության ձեռքին: Առևտրական այդ դոստակարդը, սակայն, միատարր զանգված չէր, այլ բաղկացած էր առնվազն երեք դասերից, որոնց դիմորդ պատկերը տրված է Հ. Հ. Սկրտչերի «Արամեան լեզուին դանձ» բովանդակալից աշխատության մեջ, տպագրված Ամստերդամում՝ 1711 թ.: Այստեղ ընդարձակ տեղ է տրված հորինովի դեմքերի՝ եվրոպացի Ֆրանչիսկայի և հայ վաճառական Սաֆարի հարցազրույցին, որի միջոցով հեղինակը շարադրել է իր խոր գիտելիքները հայ վաճառականների գործունեության մասին: Եվրոպացու «Ձեր վաճառականութեան առու-

⁷¹ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 121, 119, № 1048, էջ 566:

ծախսն ինձ ասա» հարցումին Սաֆարի տված պատասխանից պարզվում է երեք տարբեր դասերի առկայությունը հայ առևտրական բուրժուազիայի կազմում⁷²:

Առաջին դասին են պատկանել մեծածախ վաճառականները, որոնք իրենց «տանն նստած քիչ ապրանք դուրսնդարներ իու ծախսեն»⁷³: Այս կարգի վաճառականներից մեկի՝ նշանավոր Անտոն Զելեպու, մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդել Առաքել Դավրիժեցին. «կարի ընչաւետ և փաբթամ» այս վաճառականը, որի հոշակը տարածված է եղել «ի հեռաւոր աշխարհս», այնպիսի անբավ դրամական միջոցների տեր է եղել, որ «միանգամայն ինքն... վաղվաղակի գինը» վճարելով, դնել է Պարսկաստանից քարավաններով և եվրոպական երկրներից նավերով Զմյուռնիա հասցվող ամրանքների մեծ մասը, հետագայում դրանք վերավաճառելու համար⁷⁴: Այս դասի վաճառականներն էին, որ Զուղայում և Իրանի տիրապետության տակ գտնվող երկրամասերում ճանաչված էին խոջա պատվանունով: Երկրորդ դասին են պատկանել այն վաճառականները, որոնք «երկրէն դուրս շէն գալման, դուրանումն նստած այլեայլ ամեն երկրի ճոթ կու ծախսեն»⁷⁵: Շահ-Աբբաս Բ-ի 1649 թ. մի հրովարտակից պարզվում է, որ Նոր Զուղայի այս դասի ամենաազդեցիկ վաճառականները խանութներ են ունեցել Սպահանի Նախըջըհան կոչվող քարվանսարայում⁷⁶: Նշանավոր են եղել նաև Նոյ Զուղայի զարկերակի՝ խոջա Նազարի խիավան կոչվող պողոտայի վրա գտնվող խանութները, որոնց մասին ջուղայեցի անվանի աշուղ Բաղիր-Օղլին հորինել է այսպիսի տողեր.

⁷² Զ. Զ. Սկրդեր, Արամեան լեզուին դանձ, Ամստերդամ, 1711, էջ 342; Schroederus J., Thesaurus linguae Armeniacae, Amsterdam, 1711.

⁷³ Զ. Զ. Սկրդեր, նշվ. աշխ., էջ 342:

⁷⁴ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցու», Վաղարշապատ, 1896, էջ 338—339:

⁷⁵ Զ. Զ. Սկրդեր, նշվ. աշխ., էջ 342:

⁷⁶ Զ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 171:

Ռաստ այ խէրէվան (ուղղագիծ է պողոտան),
 Երկու տէղ մեյդան.
 Դուքանն փաքիզ (մաքուր) այ բաղարն Զուղու,
 Դուքանն փաքիզ այ, մարդիկ սաֆաթով
 (բարեշնորհությամբ),
 Աղանին նստոտած ոսկի սահաթով⁷⁷:

Ըստ Սկրոդերի, Երրորդ դասի մեջ են մտել շրջիկ վաճառականները, նրանք, ովքեր «Հնդուստան, Արաբստան, Հոռոմաստան, Ֆրանկստան և այլ ուրիշ երկիր խրիզ կուբերին», «էստոնց մօտ,—շարունակում է նա,—սովէն բարաթ ապրանք կ'ենի՝ ջալահիր, մարգարիտ, շուխա, շիթ, ապրշմեհէն, տան զիննաթ, ձեռագործ և այլ մանր-մունր ապրանք»⁷⁸: Հայ տոնեցողական կապիտալի աշխարհատարած տնտեսական կապերն իրականություն էին դառնում հիմնականում շրջիկ այս վաճառականների ջանքերով: Նրանց հիմնական դանդաղածը, վարկավորվելով վերոհիշյալ դասերին պատկանող խոջաների և աղաների կողմից, քարավաններ էր կազմում և Իրանից մեկնում օտար երկրների տնտեսական կենտրոնները, վաճառելով այնտեղ տարված ապրանքը ու վերադառնում հայրենիք՝ բերելով այդ երկրների արտադրանքը:

Քարավանների կազմակերպման ձևերի ու ամիսներ տևող ճանապարհորդությունների ժամանակ ջուղահաջերի կենցաղի մասին կարևոր տեղեկություններ կան Հ. Սկրոդերի և Կլրոսյական այլ հեղինակների մօտ: Նվրոպացու այն հարցումին, թե «Ձեր վաճառականքն ինչպե՞ս ճանապարհ կանեն այնքան ապրանք էն ձեր մեծ և լայնատարած երկրումն՝ դէպ ի Հնդկաստան, Ռումէլի, Արաբստան և այլ աշխարհ, շուն որ ձեր երկրումն ծով և նավահանգիստ չկայ» հայ վաճառականը պատասխանում է. «Խիստ հեշտ և սաֆաչով (զվարթ սրտով), զարա երբ որ շատվոր են և շատ ապրանք կայ՝ կարավան կու դառնան և ունեն իւրեանց

⁷⁷ Նույն տեղում, էջ 172:

⁷⁸ Հ. Հ. Սկրոդեր, նշվ. աշխ., էջ 342:

քհարվանքաշին, ղաւուշն, թֆանգչին: Ամէն փառաթովն: (պարագաներով) ապրանքն, ուղտերն, ձի կամ ջորի կու- բառնան, և իւրեանք ձիաւորք ինչպէս մին մեծ օրդու (բա- նակ) կու գնան, ու ամէնքն քհարվանքաշու հրամանաւն: աստ կամ անդ իջեանեն. ունեն իւրեանց հետ ամէն թուրու- (տեսակ) թռչակ և զախիրայ (ուտեկեղեն): Ինչտեղ որ կու- գին՝ վրան և շաղիր կու տան, և իւրեանց պէտքն ու կարիքն լիովի կատարեն՝ յետոյ իւրեանց ճանապարհն յառաջ գնան»⁷⁹:

XVIII դ. ճանապարհորդներ Տուրքֆօրն ու Տավերնիկն լրացնում են այս նկարագրությունը հետեւյալ մանրամաս- նություններով. ասում են, որ հայ վաճառականները ճամ- փորդելիս իրենց հետ վերցնում էին անկողին, զանազան ամանեղեն, ուտելիք (պաքսիմատ, ապուխտ, յուղ, ալյուր, գինի, օղի, շոր միրգ և այլն) և այնքան սակավաթիւ էին, որ հաճախ ետ էին բերում ուտեկեղենի ավելցուկը: Իրենց հետ ուռկան էին ունենում և պատահած գետերում ձուկ որ- սալով՝ լրացնում սննդամթերքը: «Այս հայերը,—գրում է Տուրքֆօրը,—ինչպես իրենց, այնպես էլ Զուղայի վաճա- րականների համար աշխատելիս, անխոնջ են ուղեւորություն- ների ժամանակ և արհամարհում են եղանակների խստու- թյունները: Շատերն ենք տեսել, նույնիսկ ամենահարուստ- ներին, որ ոտքով անցնում էին գետերով, մինչև պարանո- ցը խրված ջրի մեջ, փրկելու համար իրենց և բարեկամների հակերը...: Այս աղնիվ մարդիկ երբեք չեն փոխում իրենց վարվելակերպը, միշտ նույնն են, խուլս են տալիս աղմկա- խուլջ օտարականներից և հարգում նրանց, ովքեր խաղաղ են. սիրով պատսպարում և կերակրում են նրանց...: Նրբ լուր են ստանում որեէ քարավան անցնելու մասին, դիմով և խմիչքներով մեկ-երկու օրվա ճանապարհ ընդառաջ են գնում իրենց հայրենակիցներին» և այլն⁸⁰: Այլ աղբյուրների

⁷⁹ Նույն տեղում, էջ 341:

⁸⁰ Դր. Հովն. Արքիմեան, Նորջուլայեցի հայերուն առևտուրը ժն. դա- րուն, № 1—4, «Անահիտ», Փարիզ, 1908, էջ 34:

առվյաղներով նրանք ղրկված էին լինում սառը դեմքով ու հրադեմով: Պահպանվել են ապացույցներ նրանց հրթուղիների վրա հաստատված մի քանի կայուն հանգրվանների մասին, ուր իջեանել են կամ էլ՝ գլիշերել ու պատսպարվել կիզիչ արևից: Այդպիսիք են հոլել, օրինակ, Հալեպի հյուրատան ջուղաչեցիների դամառնի միջոցներով կառուցված սենյակները, որոնցից շատերի պատերին պահպանվել են արձանադրություններ երբ և ում կողմից կառուցված լինելու մասին: Այս առումով կարևոր են նաև հյուսիսային Սիրիայում՝ Նիրատի աջափնյա անապատային մասի բարձունքներից մեկի ստորոտում գտնվող փոքր-ինչ ընդարձակված բնական խուռների, որոնց պատերին մի քանի տարի առաջ հայտնաբերվեցին ջուղաչեցի վաճառականների կողմից փորագրված բազմաթիվ արձանադրություններ, այդտեղ իջեանած անձանց անուն-հայրանուններով: Կենտրոնական արձանադրությունը կարգացվում է այսպես. «Աստուած Զուղեցոյ բան հաստ(ատ) պահէ», մյուս արձանադրությունները, որ փորագրված են, մեծ մասամբ, 1628 թ. (նաև 1654 և 1674 թթ.) պարունակում են այդ վայրում իջեանած ջուղաչեցի վաճառականներից մի քանիսի անունները (Տահիր, Պիտրոսի որդի Գրիգոր, Ակոբշահ, Թասալիի որդիներ Ավետիք և Գասպար, Աղաղարի որդի Ծառուր և այլն)⁸¹:

Զուղաչեցիների հրթուղիներից մեկն էլ անցել է նշանավոր Ակն քաղաքի վրայով: Գր. Դաբանաղյան պատմում է, որ մեծ պահքի օրերին «մի դունդ» ջուղաչեցիներ իջեանել են Ակնա աներից մեկում և հաշվի չառնելով հաշվական հին սովորույթները՝ լուծել են պահքը «ձիթակերութեամբ և անառակ արբեցութեամբ»: «Թաթիրաց ձայնիւր կաքաւելով», այսինքն աշխարհիկ հրգ ու պարով քեֆ անելով, նրանք թերահավատություն և սերմանել իրենց շրջապատում: Պատմիչը հայտնում է նաև այդ քարավանի ղեկավարի (քարվանրաշու) անունը՝ Տիտար, կոչելով նրան «վա-

⁸¹ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են այս արձանադրությունների լուսանկարները:

րազի խոզ մի վայրենի» և տեղեկացնում է, որ նրանք արհամարհել են իր հղած «անիծից գիրը», հեռացել են Ակնից՝ չփոխելով իրենց կենցաղավարությունը⁸²:

Պատմական գրականություն մեջ բավարար տեղեկություններ կան այն մասին, թե ինչ երկրներ ու նշանավոր տնտեսական կենտրոններ են այցելել ջուղայեցի վաճառականները և տեական կամ ժամանակավոր ինչ կայաններ ստեղծել նրանցում: Չնայած դրան, անհրաժեշտություն է առաջանում այստեղ ևս անդրադառնալ այդ խնդրին:

Խոսելով իրենց կողմից հրատարակության պատրաստվող «Համատարած աշխարհացոյցի» օգտակարության մասին, Թովմա և Ղուկաս Վանանդեցիները շեշտում են հատկապես նրա կարևոր նշանակությունը հայ վաճառականության համար. «Բայց եւս քան զեւս,—գրում են նրանք 1696 թ.,— առաւելապէս պիտանանայ վաճառականաց՝ մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ ասիական և արեւելեան ազգաց, այսու գոնեա անուամբ փառաւորք և հնարագետք երեւին, զի յամենայն ազգաց ընդունելիք և յոչ սակաւոց սիրելիք. ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեւեկութիւն ունելով՝ զամենայն երկիր առ ուրն հարելով յաճախեն»⁸³:

«Ընդ ամենայն աշխարհ» տարողունակ, բայց որոշակիությունից զուրկ արտահայտության փոխարեն, Դր. Դաբանազցին թվարկում է այն հիմնական երկրները, ուր լինում էին ջուղայեցիները՝ անտեր ու կարոտով թողնելով իրենց կանանց ու երեխաներին, ազահույթյան ախտով բռնված, մորեխի նման ցիրուցան տարածվելով «ընդ ամենայն երեսս երկրի»,—«ի Հնդկս ներքինս», և յՆթովպիա, և յՆգրիպոոս, և յամենայն աշխարհս Յուսեպաց, և ի Կոստանդինուպօլիսա, և յամենայն աշխարհն Թրակացւոց և Մոսկովաց և Վրկանաց, և ընդ ամենայն աշխարհն Թուրքաց և Քրդաց և Քաղդէացւոց և ամենայն Պարսկաստանաց, և արեւելայս»:

⁸² Դրիգոր Դաբանազցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 460—461:

⁸³ Ղուկաս Վանանդեցի, Բռնալի համատարածի աշխարացոյցին մերոց նորածնի, Ամստերդամ, 1696, էջ 2—3:

մինչև ի Զինն և Մատչինն, ի Թօնն և ի Թօնճան, և յԱնգալիան, և յամենայն աշխարհին Տաթարաց և Ափխազաց, մինչև ի ծագս աշխարհաց անծանօթից»⁸⁴։

Զուղահայ խոջայական կապիտալի աշխարհատարած կապերի հանգամանալից նկարագրությունը տրված է Կոստանդ Զուղայեցու «Աշխարհածողովում», որի ձեռագիր ընդօրինակությունների մեջ կան առանձին տեղանունների տարբերություններ ու գրության ոչ միատեսակ ձևեր, սակայն նույնն է ցանկն իր ամբողջությամբ։

Պարսկաստանում և Աեֆյան Իրանի քաղաքական սղդեցության տակ գտնվող ու ջուղահայերի գործունեության ասպարեզ հանդիսացող քաղաքներից աչտեղ հիշատակված են Սպահանն իր արվարձաններով, ալուհեռե Մաշադը, Թավրիզը, Գիլանը և Մազանդարանը, Գասկառը, Քեսման, Ռեշտը, Լալեջանը, Գանջան (Գանձակ), Ղարաբաղը, Շիրվանը, Շամախին։ Միջինասիական երկրամասերից և Աֆղանստանի ու Հյուսիսային Հնդկաստանի կենտրոններից՝ Բալխ ի Բուխարան (կոչված նաև էօղսեկստան), Ղանդահարը, Ղազինն, Փիշավարը, Քարուլը, Քաշմիրը և այլն։ Արաբական երկրներից ու կենտրոններից՝ Արաբստանը, Բասրան, Բաղդադը, Մոսուլը, Հալեպը, ապա Հաբեշտանը, որպես առանձին երկիր։ Թուրքական քաղաքներից՝ Կոստանդնուպոլիսը, Բուրսան, Ատրանան, Իզմիրը (Ջուլուռնիա), Թոխաթը, Արզրումը։ Եվրոպական կենտրոններից՝ Մեսինան, Ալիկոռնան (Լիվոռնո), Վենետիկը, Ջենովան, Մարսիլը, Ամստերդամը, Դանցիգը՝ որպես խոշոր կենտրոններ և Մոսկովը, լեհ ու մաջարը (Հունգարիա), Ալամանը (Գերմանիա), Ֆռանկստան (Ֆրանսիա), Ընկլիթեռը (Անգլիան), Սպանիան, «հնկի դունիայի», այսինքն նորահայտ Ամերիկյան մայրցամաքի հետ միասին՝ որպես առանձին երկրներ։

Կոստանդ Զուղայեցին շատ ավելի հանգամանորեն է թվարկել ջուղահայերի այցելած Հնդկաստանի, Հնդկաչինի,

⁸⁴ ԴՐ. Դաւաճաղցի, նշվ. աշխ., էջ 457—458։

Ինդոնեզիայի և հեռավոր արևելյան այլ երկրների ու կղզիների նշանավոր կենտրոնները⁸⁵։

Այս ցանկը շատ մեծ ընդգրկում ունի և շնայած իր մեջ ներառում է Ասիայի, Եվրոպայի ու Աֆրիկայի տնտեսական բազմաթիվ նշանավոր կենտրոններ, լրացման կարիք է դգում։ Ցանկում չեն հիշատակված մասնավորապես այն երկրամասերն իրենց կենտրոններով, որոնք դուրս լինելով իրանահայ առևտրական կապիտալի ազդեցության շրջանակներից, զգալի հետաքրքրություն էին ներկայացնում հայ առևտրական կապիտալի այլ հաստիքների, հատկապես Վրաստանի, Ղրիմի ու Լեհաստանի հայ վաճառականների համար։ Հաշվի պետք է առնել և այն հանդամանքը, որ ցանկի մեջ հիշատակվել են բազմամարդ հայկական բնակչություն և կազմակերպված հայկական գաղթօջախ ունեցող կենտրոնների հետ միասին նաև այնպիսի վայրեր, ուր մի քանի հայ ընտանիքներ էին միայն բնակություն հաստատել, չունենալով կայուն գաղթօջախի համար անհրաժեշտ հաստատություններ՝ եկեղեցի, հանգրվանատուն իր պահեստներով և այլն։

Առաջին կարգի հայկական խոշոր առևտրական հենակետերից էին, օրինակ, Ատրպատականում՝ Թավրիզը, Հընդկաստանում՝ Ազրան։ Թավրիզի մասին Ռաֆայել դյու Մանն ասում է. «Այստեղ կուտակվում են համարյա բոլոր այն ապրանքները, որոնք վաճառվում են Պարսկաստանում։ Առևտրականները այս քաղաք են ժամանում անցնելու հա-

⁸⁵ «Որ յարեւելից գնամք ի յարեւմտ՝ կալցուք առաջ Մլթան, Լահուռ, Սարհնդն, Ջահանապատ, Աբադարապատ, Խուռջայ և Հնդուան, Բանկալայ, Բիար, Փաթանաց, Բնարիս, Մօլ, Ղաղիփուռ, Ջալափուռ, Շահզադիփուռ, Խէրարադ, Դարեարադ, Դովլաթարադ, Սրինջ, Բերամփուռ, Սուրաթ, Գուլբարաթ, Օվրանկարադ, Շադառն, Հեյդարարադ, Մուշիքանդաբ, Փէզու, Հաւայ (որ է Փէկուայ թագաւորին յիայի թախտն), Բութանդ, Խաթայ և Խութայ, Ջիրպատ, Քօշին, Սէնան, Մալաղայ, Ջաքարթայ, որ ոմանք Բաթալիայ ասեն, Թոնատի, Ամրուռն, Մուքասար, Թիմուռն, Սլհօռն, Մանիլայ, Շարինով»։ Մատենադարան, ձեռ. №5994, էջ 3ա—3բ։ ՏԵ՛ս Զ. Տեր-Նովիանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 159—160։

մար Գիլան, Շամախի, Գանձակ, այն հրեք քաղաքները, որտեղ պարսկական մետաքս էր արտադրվում: Զուղայի հայ վաճառականները ունեն այստեղ ֆակտորիաներ և խանութներ Զմյուռնիայից ու Հալեպից եկող քարավանների համար, որոնք բերում են Պարսկաստան լոնդոնյան, ֆրանսիական, վենետիկյան գործվածքներ, մարջան, դեղին համպար, վենետիկյան հայելիներ, պողպատ և այլ արտադրատեսակներ մահուղից և ուրիշ կտորներից, անձնապիտո առարկաներ, սրոնք, ինչպես բոլորին հայտնի է, մեծ հաջողություն ունեն Պարսկաստանում»⁸⁶:

Տարբեր աղբյուրներից հայտնի է, որ Ագրայում ևս հայկական գաղութը բաղմամարդ ու կաղմակերպված է եղել դեռևս XVII դ. կեսերից: 1652 թ. այստեղ կառուցվել է հայկական եկեղեցի: Համայնքի կյանքում մեծ դեր է կատարել հայկական քարավանատունը, որն, ըստ հիշողական ուղեգիրների, հայերի հավաքատեղին էր և համայնքի անդամներին հետաքրքրող հարցերի քննարկման ու տնտեսական: գործարքների կնքման պաշտոնական վայրը⁸⁷:

Ի հակակշիռ հայկական խոշոր այս գաղթավայրերի ծանոթանանք հրկու ուրիշ վայրերի հետ, որոնցում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները հրեք էլ մեծաքանակ չեն հղել ու կաշուր դիրք չեն գրավել: Տարբեր աղբյուրներից դիտենք, որ Կադիքսը (հայերը գրում են Կալիս) ու Սևիլիան էին հայերի կողմից ամենից շատ այցելվող իսպանական քաղաքները: Զաքարիա Ագուլեցին Կադիքսում է հղել 1671 թ. հունվարին⁸⁸: Այդ թվականից մեկ տարի առաջ ջուղայեցի Շաքարի որդիներ Դավթի, Հակոբի ու Պողոսի զրամական միջոցներով Կադիքսի Սանտա Մա-

⁸⁶ Estat de la Perse en 1660 par le P. Raphael du Mans Supérieur de la Mission des Capucins d' Ispahan, publié avec notes et Appendice, par Ch. Schefer, Paris, 1890, p. 332. *Հ. Գ. Կյրահոսար* չեղ. աշխ., էջ 72:

⁸⁷ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 448:

⁸⁸ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 55:

րիա եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթարկվել, ու հայերն իրավունք են ստացել այդտեղ իրենց աղոթքի անկյունն ունենալու: Այդ մասին պահպանվել են հայերեն ու լատիներեն արձանագրություններ, ինչպես մարմարե մի ջրավազանի, այնպես էլ 10 հախճապակյա զեղեցիկ սալիկների վրա: Շաքարի ուղի Դավիթը լատիներեն արձանագրության մեջ կոչվում է DAVLD ZVCAR: Հայտնի է, որ 1685 թ. Կադիքսի հայկական զաղութում ընդամենը մի քանի հայ ընտանիք է ապրել, որոնց եղբայրությունը՝ կոչված «Հիսուս Նազարեթ», միայն 12 անդամից է բաղկացած եղել: Պակասելով հետագա տասնամյակներին, 1726 թ. հետո այստեղ հայերի գոյության մասին այլևս որևէ տեղեկություն չի պահպանվել⁸⁹: Հեղկաստանի Փաթնա քաղաքը, ինչպես տեսանք, նույնպես հիշատակված է վերոհիշյալ ցանկում: Հովհաննես Զուղայեցու հաշվեմատյանում տեղեկություններ կան Փաթնայում հաստատված մի քանի հայերի մասին, դիտենք նաև, որ XVII դ. վերջերին այնտեղ է ապրել նաև մի հայ քահանա, ուստի Փաթնայում եղել է հայկական եկեղեցի: Բայց հայերն այդ ժամանակ Փաթնայում չեն ունեցել իրենց հանգրվանը կամ ապրանքների պահպանման համար անհրաժեշտ որևէ շինություն: Հովհաննես Զուղայեցու տվյալներով Փաթնայում բնակվող վարպետ Պետրոսը «մին օղայ (բնակարան—Շ. Խ.) էր քրէ բռնէլ, որ ջումիաթ գալող գնացող վէր ին գալման»⁹⁰:

Միայն երկարատև ու հանգամանալից ուսումնասիրություններից հետո հնարավոր կլինի պարզել, թե իրական ի՞նչ նշանակություն են ունեցել հայ առևտրական կապիտալի գործունեության համար աշխարհով մեկ սփռված վերոհիշյալ առևտրական կենտրոններից յուրաքանչյուրը: Սակայն, արդեն հայտնի տվյալները հնարավորություն են տալիս առանց տարակույսի հայտարարելու, որ նրանց

⁸⁹ Sê'u J. M. Dos Santos Simões. Carreaux Céramiques Hollandais au Portugal et en Espagne, Martinus Nijhoff, la Haye, 1959, p. 104—108, planches XXVIII a, XXIX a-g.

⁹⁰ «Հովհաննես Զուղայեցու հաշվետուարը», էջ 249:

գործունեության համար բացառիկ նշանակություն են ունեցել Հնդկաստանում՝ հատկապես Սուրաթը, Մադրասը, Ագրան ու Կալկաթան, Իրաքում՝ Բասրան ու Բաղդադը, Սիրիայում՝ Հալեպն ու Դամասկոսը, Թուրքիայում՝ Թոխաթը, Զմյուռնիան, Կոստանդնուպոլիսը, Ռուսաստանում՝ Աստրախանն ու Մոսկվան, Իտալիայում՝ Վենետիկը և Լիվոռնոն, Հոլանդիայում՝ Ամստերդամը:

2. Առևտրական ընկերությունները հայ խոջայական կապիտալի շրջանակներում

«Լիակատար»⁹¹, այսինքն ազգակցական առևտրական միությունից առաջացած ընկերությունների սաղմերը գոյություն են ունեցել Միջագետքում արդեն մ.թ.ա. VI դ. (Նորբաբելոնական ժամանակաշրջանում): Մուռաշու և Էգիբի գործարար տների մասին պահպանված սեպագիր աղյուսակների քննությունից մասնագետները հանգել են այն եզրակացության, որ առևտրական այդ հնագույն կազմակերպությունների մեջ ընդգրկված են եղել ամենամերձավոր ազգականները, և նրանք կարևոր դեր են կատարել ինչպես միջազգային ապրանքափոխանակության բնագավառում, այնպես էլ երկրի ներքին կյանքում⁹²: Համանման տեղեկություններ պահպանվել են նաև Նգիպտոսից և հելլենիստական արևելքի տարբեր երկրներից: Սակայն, միավորված կապիտալի ավելի մեծ չափերով ու գործունեության ավելի ընդարձակ շառավիղներով առավել նշանակալից են եղել հռոմեական առևտրական ընկերությունները⁹³: Այդպիսի

⁹¹ А. К. Живелегов, Торговля на Западе в средние века, СПб., 1904, с. 130; Дж. Луццато, Экономическая история Италии (Античность и средние века), М., 1954, с. 372.

⁹² См. И. Б. Янковская, Клинописные тексты из Кюль-Тепе в собраниях СССР, М., 1968, с. 35, 100—102. М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, с. 222—223.

⁹³ См. Г. М. Тушина, Из истории Средиземноморских торговых объединений (Античность и средние века), «Страны Средиземноморья в эпоху феодализма», вып. 2, Сб. статей, Горький, 1975, с. 10.

կաղմակերպություններ, հավանաբար, գոյություն են ունեցել նաև Հայաստանում: Քննարկելով Կարին (Էրզրում) քաղաքից Հյուսիսային Հայաստան ներգաղթած մեծատուն վաճառական Ումեկի, նրա գերդաստանի մյուս անդամների, ինչպես նաև Տիգրան Հոնեհյի, Սահմադինի և XIII դ. ալ նշանավոր վաշխառու-առևտրականների գործունեության մասին առկա նյութերը, Աշ. Հովհաննիսյանը հայտնել է այն տեսակետը, որ նրանք ևս միավորված են եղել առևտրական ընկերությունների մեջ⁹⁴:

Դարավոր նախապատմություն ունեցող առևտրական աշխարհի ընկերությունները կաղմակերպչորեն XIII—XIV դդ. կատարելագործվեցին և տնտեսական մեծ ուժ դարձան մանուֆակտուրային արդյունաբերության ու միջազգային ապրանքափոխանակության խոշորագույն կենտրոններ դարձած իտալական նշանավոր քաղաքներում՝ Վենետիկում, Ֆլորենցիայում և Ջենովայում: Քիչ հետո նմանատիպ ընկերություններ ստեղծվեցին նաև տնտեսական բոլոր զարգացման ընթացքի մեջ մտած նվրոպական այլ երկրներում՝ Հարավային Ֆրանսիայում, Հոլանդիայում, Գերմանիայում և ուրիշ վայրերում: Այս ընկերությունների կաղմակերպչական ձևերի, անդամների մեկը մյուսի նկատմամբ ունեցած պարտավորությունների ու գործունեության եղանակների մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ⁹⁵:

⁹⁴ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք առաջին, էջ 219: Ա. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմա-քննական լույսի տակ, Երևան, 1955, էջ 21—22: Այդ մասին ավելի որոշակի վկայություններ կան XVII դ. հայկական աղբյուրներում, մասնավորապես Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» մեջ, Զաքարիա Քաթանցու «Պատմության» էջերում և այլն: Տե՛ս, օրինակ, Հակոբ Վ. Քոսյան, Հայր Ի Զմյուռնիայ և շրջակայս, Վիեննա, 1899, էջ 43, Վ. Մ. Մառտիրոսյան, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կաթլիսիայում (XVIII դ. երկրորդ կես), «Երանոս», 1974, № 11, էջ 65—72 և այլն:

⁹⁵ Տե՛ս А. К. Живелегов, Средневековые города в Западной Европе, СПб., 1902, с. 160. В. И. Рутенбург, Очерк из истории ран-

Այդ ընկերությունները առանց արմատական փոփոխությունների, փոխանցվել են մեկ սերնդից մյուսը, մեկ ժողովրդից մի ուրիշ ժողովրդի, մեկ երկրից մի այլ երկիր⁹⁶:

Հայկական առևտրական ընկերությունների մասին պահպանված նյութերի հիման վրա կարելի է եղրակացնել, որ դրանք ևս հանդես գալով «լիակատար» կոշվող կոմպանիայի հատկանիշներով, ղգալի ղարգացում են ապրել XVII—XVIII դարերի ընթացքում, հիմնական իրենց գծերով նմանվելով արևմտա-եվրոպական վերը հիշատակված ընկերություններին: Որքան մեղ հայտնի է, առաջին մանրամասն տեղեկությունը հայկական առևտրական մի ընկերության մասին գրանցված է XVII դ. պատմագիր Զաքարիա Քանաքեռցու մոտ: Անդրադառնալով Կարբի գյուղաքաղաքին, որը Նրեանի խանության բարգավաճ առևտրական կենտրոններից մեկն էր դարձել, Զաքարիան հատուկ ենթադրուի է նվիրում այդտեղ ստեղծված առևտրական խոշոր մի ընկերության տընտեսական լայնարձակ գործունեությանը: Նրանց պատմությունն սկսվում է XVII դ. սկզբներին ասպարեղ իջած վաճառական Մուրադխանից, որը մահացել է Բուրսա քաղաքում: Հոր մահվանից հետո ընկերության ղեկավարությունն ստանձնել է երեք որդիներից ավագը՝ Դովլաթ-բեկը, որը «զտուն իւր լցոյց ամենայն բարութեամբ, բաղմացոյց զանասունս, զայգիս և զջրաղացս, և զպիտոյս ամանաց և այլ գոյքն»⁹⁷: Սա մահացել է Գանձակում, միջնակ եղբայրը՝ Զմյուռնիայում, կրտսերը՝ Դիլանում: Այս փաստն ինքնին վկայում է, որ կարբեցի եղբայրները ընդգրկված էին հում մետաքսի առևտրի մեջ և շարունակ աչցելում էին այդ կարևոր հումքի արտադրության վայրերն ու սպառման շուկա-

него капитализма в Италии (Флорентийские компании XIV в.), М.—Л., 1951, с. 31—48. Дж. Луццато, *Изд. азбу.*, с. 379. Л. А. Котельникова, Некоторые особенности социальной природы итальянских попованов в XIV—XV вв., В сб.: «Социальная природа средневекового бюргерства XIII—XIV вв.», М., 1979, с. 144.

⁹⁶ Տե՛ս Դ. Մ. Կուսնա, *Изд. азбу.*, էջ 21:

⁹⁷ «Զաքարիա սարկաւացի Պատմագրութիւն», հ. Երկրորդ, էջ 131:

ներք: Վերոհիշյալ եղբայրներն ունեցել են 10 որդիներ: Ընկերության ղեկավարությունն, ըստ ավանդական կարգի, անցել է Դովլաթ բեկի ավագ որդու՝ Այվազի ձեռքը, որին հնազանդորեն ենթարկվել են գերդաստանի բոլոր անդամները՝ 30-ից ավելի տղամարդ, կին ու երեխաներ: Այվազի հրահանգով ընկերության անդամները շարունակ ճանապարհորդել են Մերձավոր Արևելքի նշանավոր առևտրական կենտրոններում: Պատմիչն այդ մասին գրում է. «յեղբարց իւրոց մի մի առաքէր ի վաճառականութիւն ոմն՝ յաշխարհն Պարսից, ոմն Յունաց (այսինքն՝ Թուրքիա—Շ. Խ.) ի գնել և վաճառել»: Այվազինց կոչվող առևտրական այս ընկերությունը միասնական ջանքերով հսկայական հարստություն է դիզում, ձեռք է բերում մեծաքանակ շարժական ու անշարժ կալվածքներ, իր հռչակը տարածելով հեռավոր երկրներում⁹⁸:

Սկզբնաղբյուրներում կարևոր տեղեկություններ և առանձին ակնարկներ կան հայկական միջնադարյան առևտրական մի շարք այլ ընկերությունների մասին ևս (օրինակ, բուրսացի Անտոն Զեւեպի⁹⁹, հալեպցի խոջա Պետիկի¹⁰⁰, Թիֆլիսեցի Շահվերդու ու Դասպարի և բաղմաթիվ ուրիշների)¹⁰¹: Դրանց համախմբումով կարելի է հանգել այն եզրակացության, որ արդեն XVII դարի կեսերին պատմական Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում ու քաղաքատիպ վայրերում (Երևան, Ագուլիս, Յղնա, Շոռթ, Վան, Բաղևշ, Կարին, Երզնկա և այլն), ինչպես և Անդրկովկասի, Իրանի ու Թուրքիայի հայաբնակ տնտեսական կենտրոններում (Թիֆլիս, Շամախի, Համադան, Բասրա, Հալեպ, Թոխաթ, Զմյուռնիա, Տրապիզոն և այլն) գոյություն են ունեցել առևտրական համանման ընկերություններ: Սակայն, այդ ընկերություն-

⁹⁸ Նույն տեղում, էջ 132:

⁹⁹ Տե՛ս Առաֆեյ Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896., էջ 338—339:

¹⁰⁰ Տե՛ս Ա. Սյուրմեյան, Պատմություն Հալեպի Հայոց, Կ. Գ. Փարիզ, 1950, էջ 288—289:

¹⁰¹ Տե՛ս «Ջաբարիա Ապուլեցու օրագրությունը», էջ 72—73:

ների կազմակերպչական սկզբունքների, գործունեության
հղանակների և սրանց հետ առնչվող հարցերի պարզա-
բանման համար ամենից առատ տեղեկություններ պահ-
պանվել են Նոր Զուղայի պատմությանը վերաբերող սկզբը-
նաղբյուրներում: Դրանց հանգամանալից ուսումնասիրու-
թյամբ հնարավոր է վերականգնել ջուղահայ նշանավոր խո-
ջայական մի շարք գերդաստանների գործունեության պատ-
կերն ու պատմությունը XVII—XVIII դարերի ընթացքում:

Մեր նպատակն է հետազոտել միայն երեք նշանավոր
գերդաստանների պատմությունը՝ առաջնությունը տալով
Շահրիմանյանների խոշոր առևտրական տանը, որը հրա-
պարակ է իջել Նոր Զուղայի պատմության հենց սկզբնա-
վորման շրջանում: Երկրորդը՝ Խոջա-Մինասենց գերդաս-
տանն է, որ 1667 թ. արդեն Նոր Զուղայի կյանքում իշխող
գիրքեր էր գրավել: Երրորդը՝ Լազարյաններն են, որ նշանա-
կալից դեր սկսեցին կատարել միայն XVIII դ. առաջին հիս-
նամյակում, բացառիկ գիրքի հասնելով դարի 50-ական թվա-
կաններին, երբ վերջնականապես դուրս եկան իրենց հայ-
րենի քաղաքից և մշտական բնակություն հաստատեցին
Ռուսաստանում:

Խոշոր այս ընտանիքների գործունեության հետ ծանո-
թանալուց հետո հնարավոր է, ամփոփելով ստացված տեղե-
կանքները, ավելի հստակ պատկերացում կազմել հայկական
առևտրական ընկերությունների կազմակերպչական սկզբ-
բունքների ու գործունեության հղանակների մասին:

ա) Շահրիմանենց առևտրական ընկերությունը

Զուղահայ Շահրիմանենց ընտանիքի առևտրական գոր-
ծունեության մասին առաջին տեղեկությունները վերաբե-
րում են Նոր Զուղա հայաքաղաքի հիմնադրման ժամանակ-
ներին: Ըստ այդ տեղեկությունների, համանուն գերդաստա-
նի ավագ Մուրադը, հավանաբար շարունակելով ավանդա-
կան կապերը, առևտրական հարաբերությունների մեջ է մը-
տել Միջերկրականի ծովափնյա խալախական քաղաքներին
առևտրական տների հետ, իսկ նրա որդիները, ավելի ըն-

դարձակելով այդ կապերը և 1640-ական թվականներին կաթոլիկութուն ընդունելով, դառնում են Նոր Զուղայի հայ կաթոլիկ համայնքի պարագլուխները։ Մուրադի որդիներ Նազարն ու Շահրիմանը այդ տարիներին 720 հազար դուկատի հասնող խոշոր ավանդ ունեին Վենետիկի տարբեր քանկերում¹⁰²։ Նազարի մասին այլ տեղեկություններ չեն պահպանվել։ Տոհմը շարունակվել է Շահրիմանի գծով, որն ունեցել է Զաքար ու Սարհադ անունով որդիներ։ Այս վերջինս վայելելով Իրանի մեծ վեզիրի հովանավորությունը՝ ընդարձակել է իրենց առևտրական ընկերության գործունեության աշխարհագրական սահմաններն ու նպաստել հայրենի քաղաքի արհեստագործության զարգացմանը¹⁰³։ Սարհադը մահացել է 1667 թ. առաջ, թողնելով Օվսան անունով դուստր՝ անվանի վաճառական Նազար Խալդարենցի կինը և հինգ որդիներ՝ Մարգար, Զաքար, Միքայել, Մուրադ և Գասպար անուններով։ Սրանք շատ ավելի են ընդարձակել իրենց առևտրական ընկերության տնտեսական կապերը, կաշուն հենակետեր ստեղծելով Իտալիայում, Ավստրո-Հունդարիայում, Հոլանդիայում, Ռուսաստանում, Թուրքիայում, Իրաքում, Հնդկաստանում և Հնդկաչինում։ 1696 թ. Ինովկենտիոս ԺԲ պապը Շահրիմանյաններին շնորհել է Հռոմի քաղաքացու կոչում, որով նրանք ազատ առևտրի իրավունք են ստացել Հռոմում և Անքոնայում։ Քիչ անց՝ 1699 թ. Ավստրիայի կայսր Լեոպոլդ Ա-ի հատուկ հրովարտակով նրանց տրվել է նաև հունգարական կոմսի տիտղոս։ Շահրիմանենց գերդաստանի անդամները, ինչպես և նրանց հետագա ժառանգները, դասակից են համարվել Ավստրիայի ազնվական ընտանիքներին։ Հաստատվել է նաև նրանց տոհմական զինանշանը¹⁰⁴։

Սարհադի որդիների ու նրանց նշանավոր ժառանգների մասին առկա տվյալների ամփոփումով կփորձենք ներկա-

¹⁰² Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 111։

¹⁰³ Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 25.

¹⁰⁴ Տե՛ս Մ. Ուղուրյան, Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա և Լիւիսնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 211։

յացնել այդ գերդաստանի գործունեության հիմնական պատ-
կերը XVII դ. կեսերից մինչև XVIII դ. կեսերը:

XVII դ. 60—70-ական թվականներին Շահրիմանյան-
ների առևտրական տան ղեկավար է եղել Մարգարը¹⁰⁵։
Պահպանվել է նրա կտակը՝ շարադրված 1700 թ. օգոստոսի
10-ին Նոր Զուղայում։ Ըստ այդ փաստաթղթի Մարգարը և
նրա Մուրել (Միքայել) ու Մուրադ եղբայրները բաժանել են
միմյանց միջև իրենց պապ Շահրիմանի և պապեղբոր Նա-
ղարի այն դրամագլուխը (720 հազար դուկատ կորինթ), որ
նրանք տասնամյակներ առաջ պահ էին դրել Վենետիկի
դրամատներում։ Մարգարն ստացել է այդ դրամի մեծ մա-
սը (325 հազար դուկատ), որ տարեկան 4,5 կամ 4,75 տո-
կոսով պահ է դրել Վենետիկի 6 տարբեր բանկերում, տա-
րեկան շահը (15 հազար դուկատ կամ շուրջ 1000 թուման)
կտակելով իր դստերին և աղջիկ թոռանը ու նրանց հե-
տագա ժառանգներին¹⁰⁶։ Մարգարի որդիները՝ Մանվելն ու
Աստվածատուրը, բնակություն են հաստատել Իտալիայում
և հայտնի են դարձել էմանուէլ ու Դիոդատո եվրոպակա-
նացված անուններով։ Ըստ «մեկ հին հիշատակագրին ա-
վանդության», նրանք Իրանից դուրս են հանել մոտ 2 մի-
լիոն դուկատ (120 հազար թումանից ավելի)¹⁰⁷։ Նրանց որ-
դիները մշտապես բնակություն են հաստատել Վենետիկում,
Լիվոռնոյում, Ամստերդամում, Մադրասում և այլ վայրե-
րում։ Աստվածատուրի որդիներից մեկը՝ Զաքարիան (1709—
1784), հոգևոր կոչում է ընդունել ու որպես բեղմնավոր գրող
պատվավոր տեղ գրավել իտալական գրականության մեջ¹⁰⁸։

¹⁰⁵ Նրա ստորագրությունը դրված է 1671 թ. վերը թնարկված պաշ-
տոնական գրության տակ *Տե՛ս* „Армяно-русские отношения в XVII
веке“, т. I, с. 91.

¹⁰⁶ *Տե՛ս* Հ. Տեր-Նովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 110—115։

¹⁰⁷ Մ. Ոսկուրյան, նշվ. աշխ., էջ 207։

¹⁰⁸ *Տե՛ս* D. Maxwell White, Zaccaria Serlman 1709—1784 and
the viaggi di Enrico Wanton, Manchester, 1961. Ծ. Նազարյան, Վե-
նետաճայոց և գրող Զաքարիա Շահրիմանյանի մասին («Բաղմավեպ»,
1976, № 1—2)։

Ավելի արգասավոր է եղել Զաքար Շահրիմանյանը: Նրա ջանքերով ջուղահայ առևտրական կապիտալը մեծ չափերով ընդարձակեց իր վաղեմի կապերը Ռուսաստանի հետ: 1660 թ. նա մի քանի գործակատարների ընկերությամբ ժամանեց Մոսկվա և Ալեքսեյ Միխայլովիչ ցարին մատուցեց նշանավոր ադամանդակուռ դահլիճ և այլ արժեքավոր ապրանքներ: Զաքարն էր նաև, որ Ռուսաստանի մայրաքաղաք առաքեց նորջուղացի մի շարք արվեստագետների, այդ թվում նաև տաղանդավոր Բոգդան Սալթանովին: Զաքարի ժառանգներից հայտնի են Բարադամը, Սաֆարը, Առաքելն ու նրանց հետագա սերունդները, որոնց մեծագույն մասը XVIII դ. 40-ական թվականներին, ջուղահայ մյուս նշանավոր առևտրականների հետ միասին, լքել են տնտեսական ճգնաժամ ապրող Իրանի մայրաքաղաքն ու բնակություն հաստատել Բասրայում, Կալկաթայում, Զիլրայում և այլ վայրերում: Զաքարի ժառանգներից ամենից նշանավոր դեմքը եղել է Բարադամ (գրվում է նաև Բադրամ) որդին: Նոր Զուղայի տասնակներից մեկը XVIII դ. 30—70-ական թվականների փաստաթղթերում կոչվում է «Բադրամենց տասնակ», հավանաբար հենց նրա անունով:

Սարհադի Գասպար որդու մասին քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ 1686 թ. նրա միջոցներով («արդեամբ և գոյիւք պարոն Գասպարին») Վենետիկում սկսում է գործել մի նոր հայկական տպարան, որը «Խորհրդատետր սրբազան պատարագի» գրքի հիշատակարանում կոչված է «նորակերտ տպարան Ճուղացիցի խօճայ Սարհատենց տանն Շահրիմանեան»¹⁰⁹: Ըստ այդմ, Շահրիմանյանները բարենպաստ պայմաններ գտնելով, իրենց կապիտալը ներդնում էին նաև արդյունաբերական ձեռնարկությունների մեջ:

Ուշագրության արժանի է և այն փաստը, որ Շահրիմանյանների նախաձեռնությամբ ու միջոցներով Վենետիկին պատկանող տարածություններում արմատավորվում ու

¹⁰⁹ Մ. Փեշիշյան, Յուդակ ձեռագրաց Զմմաթի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 549:

բարգավաճում է բրնձի մշակութունը՝ դառնալով գյուղատնտեսության շահութաբեր ճյուղերից մեկը¹¹⁰։ Այս Գասպարի ժառանգներից են Ջուան-Ստեփանն ու Բադիլիոն, որոնք ապրել են Վենետիկում, առևտրական կապեր հաստատելով նաև Ռուսաստանի և Գերմանիայի հետ։ 1744 թ. Ջուան-Ստեփանի հրահանգով Մոսկվայի և Պետերբուրգի վրայով Իրանից Համբուրգ են առաքվել թանկագին քարեր և այլ ապրանքներ¹¹¹։ Մեծ հավանականությամբ, նրանց եղբայրն է եղել նաև Սարհադ Շահրիմանյանը (հայտնի են նրա Հարություն ու Լեոն որդիների և Ստեփան թոռան անունները)։ Սարհադի ընտանիքը շարունակել է բնակվել Նոր Զուղայում, նրա անդամները, սակայն, ջուղայեցի մյուս վաճառականների պես հաճախ ճամփորդել են տարբեր երկրներում։ Վերոհիշյալ Հարությունն, օրինակ, եղել է Մոսկվայում, Ամստերդամում և այլ վայրերում։ XVIII դ. 40-ական թվականներին Հարությունն էր գլխավորում Շահրիմանյան առևտրական ընկերության գործերն Իրանում։ 1745 թ. Նադիր շահի հրամանով ջուղայեցիներից դանձվեց 60500 նադիրի դրամ, ընդ որում Շահրիմանյաններից՝ 5000 նադիրի։ Համապատասխան փաստաթղթերում նշված է, որ վճարումը կատարել են «խոջաջ Յարութիւն և եղբարք», այսինքն նրանց ընկերությունը։ Մեկ տարի անց, Նադիր շահի հրամանով, սպահանցի հայ և օտարազգի 7 այլ վաճառականների հետ միասին նահատակվել է նաև այս խոջա Հարությունը¹¹²։

Սարհադի Մուրադ որդու գործունեության մասին տեղեկություններն աղքատիկ են։ Ունեցել է երկու որդի՝ Նազար ու Շահրիման։ Նրանք հանվանե հիշատակված են Լեոպոլդ Ա կայսեր հրովարտակում։

Շահրիման Շահրիմանյանը, ճիշտ այն օրերին, երբ Ավստրիայի կայսրը նրանց ընտանիքին կոմսության տիտ-

¹¹⁰ ՏՆ՝Ս Մ. Ուլուրյան, նշվ. աշխ., էջ 207։

¹¹¹ ՏՆ՝Ս «Հարություն Լադարյանի նամականի», էջ 23բ—24ա։

¹¹² ՏՆ՝Ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 250—251։

դոս շնորհեց, գտնվում էր Վիեննայում, թերևս նա էր այդ գործի հիմնական կազմակերպիչը¹¹³։

Սարհադի Միքայել որդու մասին ևս քիչ տվյալներ են պահպանվել։ 1700 թ. նա իր Մարգար (եվրոպական աղբյուրներում՝ Մարկոս) կոչված եղբոր հետ միասին գտնվելիս է եղել Նոր Զուղայում և որպես դրամապարտ պատասխանատվության կանչվել Ֆիլիպ դի Զադլիի կողմից։ Բախտախնդիր այս ջուղայեցին, որ ամուսնացած էր ֆրանսիացի նշանավոր վաճառական և ուղեգիր Տավերնիեի վարմուհու հետ, ձեռքի տակ ուներ աղբու փաստաթղթեր այն մասին, որ հանգուցյալ Տավերնիեն տարիներ առաջ Շահրիմանյանների ընկերությանը շահով պահ է տվել 10000 թուման։ Սպահանում հաստատված կաթոլիկ քարոզիչների մի քանի նամակներից հայտնի է դառնում, որ Մարգար ու Միքայել Շահրիմանյանները այդ գումարը վճարելուց խուսափելու համար, նույնիսկ, հավատուրաց են եղել, բայց չեն ազատվել այդ պահանջից։

Միքայելի որդիներից գիտենք միայն կոմս Դավթին, որը 1716 թ. գտնվում էր Լիվոռնոյում։ Միքայելը ունեցել է նաև Զիբեթ ու Աննա-Մարիա անունով դուստրեր, որոնք հիշատակված են 1740-ական թվականներին Նոր Զուղայում գրված փաստաթղթերում։

Վերը հիշատակված անուններով չի սպառվում Շահրիմանյանների մեծ տոհմը։ Տեղիկություններ կան նաև ներառյալ մի շարք այլ ազգականների մասին, որոնք նույնպես գործել են մինչև XVIII դ. կեսերը, բայց հայտնի չէ, թե ինչ գծով են առնչվում Շահրիմանյանների տոհմածառին։ Դրանցից առավել նշանավոր են Ֆրանցի որդի Իգնատ Շահրիմանյանը և նրա որդի Զաքարը¹¹⁴։ Իգնատ Շահրի-

¹¹³ Պահպանվել է նրա մի նամակը, գրված Վիեննայում ջուղահայ բարրառուի Ղ. Ալիշան, Սիսական, էջ 461։

¹¹⁴ Կաթոլիկ հայերի մեջ սովորություն է եղել զավակներին երկու անուն տալը։ Շահրիմանյան Գասպարի որդիներից մեկի անունը, ինչպես նշվեց, Զուան-Ստեփան է եղել, Միքայելի դուստրերից մեկը՝ Աննա-Մարիա։ Նկատի ունենալով այդ հանդամանքը, կարելի է ենթադրել, որ

մանյանը 1717 թ. Մոսկվայում հիմնել է մետաքսագործական առաջին ձեռնարկությունը, որը հետագայում անցնելով ձեռքից ձեռք, դարձել է լազարյանների սեփականությունը¹¹⁵։ Նա է հիմնադրել նաև Մոսկվայի շրջանի Բոգորոդսկի գավառի Ֆրյանովո գյուղի մետաքսի գործարանը, որը համարվել է XVIII դ. ուսական ֆաբրիկաների մեջ «լավագույններից մեկը»¹¹⁶։ Այդ ձեռնարկությունն անխափան աշխատել է երկար տարիներ¹¹⁷։

1720 թ. Հնդկաչինի Մալակայի թերակղզու համանուն քաղաքում, հոլանդացիների տիրապետության տակ, ապրել է մի այլ Շահրիմանյան՝ տիր Զաքարի որդի Հովհաննեսը, գրասեր մի անձնավորություն, որն ընդօրինակել է ձեռագիր մի ժողովածու¹¹⁸։

ուրիշ Շահրիմանյաններ ևս ունեցել են երկուական (հայկական ու եվրոպական) անուններ, այսպիսով չի բացառված, որ վերոհիշյալ Ֆրանցը (Իգնատի հայրը) մեկն է մեզ արդեն ծանոթ Շահրիմանյաններից։ Հնարավոր է, օրինակ, որ Մուրադի որդի Նադարն է միաժամանակ Ֆրանց կոչվել, ուստի Իգնատը Մուրադի թոռն է։ Կարող է, սակայն, Շահրիմանյանների այս ճյուղը սերված լինել Սարհադ Շահրիմանյանի Զաքար կղերից, որի ժառանգների մասին ոչինչ չգիտենք։

¹¹⁵ Տե՛ս E. H. Индова, О российских мануфактурах второй половины XVIII в., «Историческая география России XII—XX вв.», М., 1975, с. 256.

¹¹⁶ Տե՛ս «Старая Москва», Статьи по истории Москвы в XVII—XIX вв., Сб. первый (Московские шелковые фабрики первой половины XVIII в.), М., 1929, с. 131.

Իգնատի որդի Զաքարը «Московские ведомости» պարբերականի 1758 թ. № 48-ում հրապարակած մի հայտարարությամբ ծանուցել է, որ ինքը շուտով Մոսկվայից փոխադրվելու է Պետերբուրգ, մշտական բնակություն։ Նույն այդ թվականին նա Աղադար լազարյանին է վաճառել Մոսկվայում գանվող իր տունն ու կից հողամասը։ Տե՛ս А. П. Базиянц, Правла интересное легенд, М., 1975, с. 10.

¹¹⁷ 1726 թ. Իգնատ Ֆրանցը Աստրախանում գնել ու Ֆրյանովո է ուղարկել 27 փուխ հում մետաքս։ Տե՛ս А. И. Юхт, Торговые связи Астрахани в 20-х годах XVIII в., «Историческая география России XII—XX вв.», М., 1975, с. 183.

¹¹⁸ Տե՛ս Ն. Պոլարցյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, Երուսաղեմ, 1972, էջ 336։

XVIII դ. 40-ական թվականներին Նոր Զուղայում էին գտնվում Շահրիմանյան Գրիգորի որդի աղա Ավետի զավակները՝ Հովհաննան ու Հովհաննեսը։ Վերջինիս ստորագրությունն է դրված այն կարևոր գրություն տակ, որով Նոր Զուղայի մեծամեծները Վենետիկում ու Ամստերդամում հաստատված հայրենակիցներին ծանուցում էին իրենց ապրանքներով բեռնավորված «Սանտա Կատարինա» նավի անգլիացիների կողմից բռնագրավվելը¹¹⁹։ Կան այլ Շահրիմանյաններ ևս, որոնց ազգակցական կապը տոհմի հայտնի անդամների հետ առայժմ դժվար է որոշել։

Այսպիսով, XVII դ. երկրորդ հիսնամյակից սկսած, Շահրիմանյան տոհմի վաճառականներից շատերը դուրս են գալիս իրենց բնօրրանից ու բնակություն հաստատում բոլոր այն կենտրոններում, որոնց հետ առևտրական սերտ կապեր էին ստեղծել։ Այդ արտագաղթն ավելի մեծ ծավալ է ընդունում Նաղիր շահի տիրապետության վերջին տարիներին, ելք գերդաստանի անդամների մեծագույն մասն արդեն լքել էր Նոր Զուղան ու հաստատվել Ամստերդամում, Լիվոռնոյում, Վենետիկում, Վիեննայում, Մոսկվայում, Բասրայում, Մադրասում, Բոմբեյում, Կալկաթայում, Մալակայում և այլ վայրերում։ Բնականաբար, երկար ապրելով հայրենիքից դուրս, նրանցից շատերը խնամիական կապեր էին հաստատում իրենց նոր միջավայրի իշխող դասի ներկայացուցիչների հետ, փնտրում ու գտնում էին գործունեության այլ բնագավառներ և այլն¹²⁰։ Ըստ այդմ էլ,

¹¹⁹ Բրիտանական գրադարան, Lansdowne № 1047, № 1048. A Catalogue of the Armenian manuscripts in the British Museum, by F. C. Conybeare, p. 352—353, Ս. Տեր-Պրիգորյան, Հայկական հին ձեռագիրներ Լոնդոնի Բրիտանական թանգարանում, էջ 5—7։

¹²⁰ Հայտնի է, որ Մարգարի որդի Աստվածատուրը, որն Իտալիայում հայտնի էր Դիոդատո անունով, ամուսնացել է ազնվազարմ Ելիզաբեթ Տորենթինիի հետ, իսկ Զուան-Ստեփանը՝ Լուկիեցիա Մալատեստայի հետ։ Հասկանալի է, որ սրանց որդիները՝ Լորենցիոն, Ռոբերտոն, Բագիլիոն, Դոմինիկոն և մյուսները այլևս հոգևոր կապեր չեն ունեցել Նոր Զուղայի հետ։

առևտրական հզոր այդ գերդաստանը մասնատվում էր առանձին հատվածների, յուրաքանչյուրը հանդես գալով որպես ինքնուրույն տնտեսական միավոր: Սակայն, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, գերդաստանի միասնության գաղափարը դեռևս իսպառ մոռացված չէր, առանձնացած ընտանիքները դեռևս ունեին տնտեսական ընդհանուր շահեր, ողջ տոհմին պատկանող անշարժ կալվածքներ և այլն: XVIII դ. 40-ական թվականներից մի շարք փաստաթղթերի մեջ հանդիպում ենք «Շէրիմանէնց աղաներ», «Շէրիմանէնց ընկերություն» և նման այլ արտահայտությունների, որոնցով ցույց է տրվում նրանց ընդհանրության գաղափարը¹²¹:

Այս առումով հետաքրքրական են նաև Եղիա Կարնեցու 1726 թ. հաղորդած տեղեկությունները Շահրիմանյանների Թավրիզում ունեցած բաղնիքի և այն բռնագրավումից ազատելու համար դործադրված ջանքերի մասին: Պարզվում է, որ ոմանք լուր են տարածել Մանվել Շահրիմանյանի մահվան մասին: Այդ կապակցությամբ Եղիան գրում է. «Գիտեմք, որ Մանուէլն չէ մեռել, լինի թէ Մանուէլն մեռաւ, մինակ նրան խօյ չէ [բաղնիքն], ԺԱ (11) ռասաթ է»¹²²—այսինքն բաղնիքը պատկանում է ոչ թէ Մանվելին, այլ Շահրիմանյան գերդաստանի բոլոր ղեկավար անդամներին: XVIII դ. 40-ական թվականներին այդ միասնությունն ավելի է խախտված եղել: Հ. Լազարյանի 1744 թ. մի նամակից տեղեկանում ենք, որ Վենետիկում բնակվող Զուան-Ստեփանը (Գասպարի որդին) և Ամստերդամում հաստատված Սև Առաքելը (Մանվելի որդին) լավ հարաբերությունների մեջ չեն գտնվում («Վանատիկէն Զուան սլարոն Ըստեփանն աղէն պարոն Առաքելին հետ սէր չեն»), դրա պատճառով Ստեփանը Ամստերդամ է ուղարկել ուրիշ մարդկանց՝ իր առևտրական գործերը տնօրինելու նպատակով¹²³:

XVIII դ. վերջին տասնամյակներից սկսվում է Շահրի-

¹²¹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 119:

¹²² «Եղիա Կարնեցու Դիվանը», էջ 217:

¹²³ Տե՛ս «Հարություն Լազարյանի նամականի», էջ 110ա:

մանյանների վայրէջքը: Իրանում նրանց հետքերը չեն նկատվում, Հնդկաստանում բնակվողները առաջատար դժի վրա չեն գտնվում: Լիվոռնոյում, Վենետիկում, Վիեննայում այդ ժամանակ դեռևս կային կարևոր դիրք գրավող անհատներ, որոնց մեծագույն մասը XIX դ. կեսերին կորցրել էր իր ինքնուրույնությունը և ազգային դիմապատկերը: 1788 թ., օրինակ, Լիվոռնոյում ապրում էր Շահրիմանյան ազգանվամբ 11 տղամարդ, իսկ մեկ դար հետո չէր մնացել և ոչ մեկը: Վենետիկում մնացած սակավաթիվ անձինք կամ սնանկացել կամ էլ հեռացել էին կյանքից առանց ժառանգի¹²⁴:

Նոր Զուղայի մեծահարուստ այս գերդաստանի պատմության ու տոհմաբանության հետ համառոտակի ծանոթանալուց հետո, անդրադառնալով նրանց ամենածաղկուն շրջանի գործունեության կարևոր գրվագներին: Սպահանում եռանդուն գործունեություն ծավալած կարմելիայան կաթուղիկ միաբանության անդամները, որ Շահրիմանյանների հովանավորությունն էին վայելում, Եվրոպա ուղարկած իրենց նամակներում հաճախ են անդրադարձել նրանց լայնատարած գործունեությանը: Այդպիսի գրություններից մեկում ասված է, որ Շահրիմանյանները «Սպահանում ունեին 50 ծառա և 100 հոգի էին աշխատեցնում իրենց առևտրական հիմնարկի մեջ: Դրամ էին պահում արտասահմանում և 200 հազար. դուկատ (շուրջ 14 հազ. թուման—Շ. Խ.) էին փոխադրել Վենետիկ, որից 100 հազարը պետք է գործածվեր տեղում, իսկ մյուս մասը՝ Հոմում, սրբազան միաբանության համաձայնությամբ: Իրենց հարստությունը հասնում է 70 հազ. թումանի, այսինքն ավելի քան 1 մլն. դուկատ և արքունիքի մեջ մեծ պատիվ ունեն»¹²⁵:

¹²⁴ Տե՛ս Մ. Ուդուրյան, նշվ. աշխ., էջ 210: Ղ. Ալիշան, Սիսական, էջ 473:

¹²⁵ R. Gulbenkian, Philippe et Zagly, Marchand Arménien de Julfa et l'établissement du commerce Persan en Courlande en 1696. p. 366.

«Հարյուր հոգի էին զործածում իրենց առևտրական հիմնարկի մեջ», այսինքն ունեին այդքան մեծաքանակ գործակատարներ, որոնք նրանց դրամով կամ նրանցից ստացած վարկով առևտուր էին անում աշխարհի տարրեր ծայրերում: Վերն արգեն հիշատակված 1660 թ. ռուսերեն փաստաթղթում ասված էր, որ Սարհադ Շահրիմանյանի գործակատարները առևտրի նպատակով լինում են բոլոր երկրներում¹²⁶: Դրանցից մեկն էլ Մատթևոսի որդի Ստեփանն է եղել, որը թանկագին քարեր գնելու հանձնարարությամբ Սարհադի կողմից ուղարկվել է Հնդկաստան և այնտեղ ձեռք բերել ռուսական ցարին մատուցելու նպատակով պատրաստվող ադամանդակուռ գահի համար անհրաժեշտ թանկագին քարերի (ադամանդ, հակինթ) մեծ մասը: 1660 թ. այս Ստեփանը, Զաքար Շահրիմանյանի հետ միասին, զբաղվում էր Մոսկվայում և պատրաստվում էր Ռուսաստանում գնած ապրանքներով վերադառնալ Իրան, կրկին Ռուսաստան դալու մտադրությամբ: Շահրիմանյանների գործակատարներից էին նաև Գրիգոր Մատթևոսի որդի Լուսիկենցը և Ստեփան Մովսեսի որդի Ռամադանենցը, նշանավոր այն վաճառականները, որոնք կարևոր դեր կատարեցին 1667 թ. հայ-ռուսական պայմանագրի նախապատրաստման ու կնքման գործում¹²⁷:

Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանում պահվում է անթվական մի Ավետարան, որն ընդօրինակված է Շահրիմանյանների գործակատարներից մեկի՝ ոմն Հովհաննեսի հիշատակին: Զեռագրի հիշատակարանում ասված է, որ այդ գործակատարը խոջա Սարհադի կողմից առաքվել է Հնդկաստան, հաջող վերադառնալուց հետո Սարհադի որդիները՝ Զաքարն ու Մարգարը կրկին վարկավորել են նրան ավելի մեծ գրամագլխով («մայեն իվելացուցին»), որից հետո ևս երկու անգամ առևտրի է մեկնել, հաջողակ վերա-

¹²⁶ Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 25.

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 21, 44 և այլն:

դարձել («սափար արար մտքով, խելքով, խոնարով») և մահացել է XVII դ. վերջերին՝ մնալով անժառանգ¹²⁸:

XVIII դ. 40-ական թվականներին Շահրիմանյանների գործակալության շարքում աչքի էր ընկնում Գրիգորի որդի Խոջամալը, որը հաստատվելով Ամստերդամում, կարևոր դեր էր կատարում Ռուսաստանի վրայով Իրանից Շվեդիա, Հոլանդիա և Եվրոպական այլ երկրներ արևելյան ապրանքներ արտահանելու և Եվրոպական ապրանքներ Իրան առաքելու գործում: Հ. Լազարյանի նամակներում նա կոչված է «Շարիմանէնց սարքար», այսինքն նրանց ընկերության ամստերդամյան գրասենյակի ղեկավար պաշտոնյա¹²⁹:

Շահրիմանյանները սերտորեն համագործակցում էին ջուղահայ առևտրական կապիտալի այլ ներկայացուցիչների հետ, առաջնություն տալով իրենց դավանակից հայկաթուղի վաճառականներին: Դրանցից մեկն էր Գրիգոր Ամիրասաթէնցը¹³⁰, որ XVIII դ. 40-ական թվականներին հաստատվել էր Մոսկվայում: Առաքել Շահրիմանյանը Ամստերդամից Մոսկվա՝ Գրիգոր Ամիրասաթէնցին էր ուղարկում մեծ քանակությամբ զմրուխտ, լալ և այլ թանկագին քարեր, որոնք «լէվ գնով» վաճառվում էին նրա կողմից¹³¹:

Շահրիմանյանները գործակցում էին նաև Լազարյանների հետ (այդ մասին Լազարյաններին նվիրված հատվածում):

բ) Խոջա-Մինասենց առևտրական ընկերությունը

Հայկական առևտրական ընկերությունների շարքում Խոջա-Մինասենց ընկերությունը բացառիկ տեղ է զբաղում

¹²⁸ Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի, Վիեննա, հ. Ա, 1970, էջ 247—248:

¹²⁹ Տե՛ս «Հարություն Լազարյանի նամականի», էջ 172ա:

¹³⁰ Սրանց ընտանիքի հայրն է Եղել, հավանաբար, այն Ամիրասաթը, որը հիշատակված է 1625 թ. մի հիշատակարանում, որպես խոջա Մառթեոսի հայր՝ խոջա Եղնապարի և ուրիշների սլապ: Տե՛ս Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Խոթենորոգ, Երուսաղեմ, 1974, էջ 482—483:

¹³¹ Տե՛ս «Հարություն Լազարյանի նամականի», էջ 39ա:

այն առումով, որ նրա գործունեության մասին պահպանվել են առաջնակարգ նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ՝ կտակներ, պայմանագրեր, լիազորագրեր, պարտավորականներ ու այլ բնույթի բազմաթիվ փաստաթղթեր¹³²։ Հարուստ այդ նյութերի ու այլ աղբյուրների համադրումով հնարավորություն է ստեղծվում հանգամանորեն ուսումնասիրելու առևտրական այդ ընկերության գործունեության հետ առնչվող բազմաթիվ հարցեր։

Ընկերության հիմնադիրը եղել է Ստեփանոսի (գրվում է նաև Փանոս) որդի խոջա Մինասը, որի ստորագրությամբ հանդիպել ենք 1671 թ. ուսական պետական մարմիններին ներկայացված և վերը քննարկված փաստաթղթի տակ։ Ըստ այդմ, 1670-ական թվականներին Մինաս Փանոսենցը (այդպես է նրա ստորագրությունը) եղել է Նոր Զուղայի տասնակներից մեկի ավագն ու ամենաազդեցիկ խոջաներից մեկը։ Նրա հոր մասին որևէ բան չգիտենք։ Հ. Տեր-Հովհանյանցը ենթադրել է, որ սրանք Նոր Զուղայում շատ հայտնի ու ճշուղալիորված խալդարենց նշանավոր տոհմին են պատկանում, սակայն, որևէ հիմք չկա ի նպաստ այդ կարծիքի¹³³։

¹³² Դա րաջատրվում է այն հանգամանքով, որ 1746 թ. անգլիացի ադմիրալ Դրիֆինը Հնդկական օվկիանոսում բռնազրավել էր իսպանական մի ընկերության պատկանող, բայց էլիազ խոջա-Մինասենցի որդի Մինասի կողմից վարձակալած «Սանտա Կատարինա» նավը (այդ մասին խոսվել է վերը)։ Վնասից հատուցում ստանալու համար հայերն անգլիական պետության դեմ դատ էին բացել ու ներկայացրել համապատասխան փաստաթղթեր իրենց գործունեության մասին, որոնք բարեբախտաբար պահպանվել են ու այժմ պահվում են Բրիտանական գրադարանում։ Այդ փաստաթղթերի մեծագույն մասը, ինչպես և սպասելի էր, վերաբերում է վերոհիշյալ խոջա Մինասին և խոջա-Մինասենց առևտրական ընկերությանը։

¹³³ Հ. Տեր-Հովհանյանցը այս ընտանիքի նշանավոր անդամներից մեկի մասին բառացի գրել է. «Աղայ էմիրազ խոջա Մինասեան ի խալդարենց տոհմէ», Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 256—257։ 1753 թ. Բասրայում հաստատված ու խոջա Մինասի ընտանիքին պատ-

Խոջա Մինասը ժամանակակիցներին հայտնի է եղել «ջհուտ Մինաս» մականունով, իր ժլատ ու զծուծ բնավորության պատճառով¹³⁴։ Մահացել է Նոր Զուղայում 1702 թ.։ Մահվանից 2 տարի առաջ՝ 1700 թ. հունիսի 8-ին շարադրել է իր կտակը, որում մանրամասն տեղեկություններ կան իր ընտանեկան պարագաների մասին։ Դրանք լրացվում են նաև այլ աղբյուրներով, որոնցից ամենակարևորը՝ Մինասի Սեթաղա որդու պատվերով ընդօրինակված Ավետարանի հիշատակարանն է¹³⁵։ Ըստ այդ տվյալների, Խոջա Մինասն ամուսնացած է եղել Լերկու անգամ (կանանց անուններն են Գուլսանում և Խալաֆ)։ Ունեցել է 5 որդի՝ Քանան, Սեթաղա, Սարֆրազ, Էլիազ, Էմնիազ և 4 դուստր՝ Նանաջան, Զարիֆխան, Զիրի, Անձլու։ Ավագ որդին Քանանն է (ղբրվում է նաև Քահնան), որը հավանաբար ծնվել է առաջին կնոջից և մահացել 1697 թ. Լրիտասարդ տարիքում՝ թողնելով Թարխան, Սարհադ և Ավետիս անունով որդիներ։ Խոջա Մինասի կտակի մեջ Քանանի մասին ասված է, որ նա «իմ տանս էր, և իմ մօտս էր, և իմ ամէն առտուրս և

կանող 3 վաճառականներ՝ Պետրոս, Պողոս և Սեթաղա անուններով, մի շատ կարևոր նամակ են գրել Նոր Զուղայում գտնվող իրենց մորը, որի մեջ գրված է նաև «Խալդարենց երեք օջաղների» մասին, պարզ հասկացնելով, որ իրենք որևէ առնչություն չունեն նրանց հետ։ Այդ նամակին կանգրագրանք ուրիշ աղբյուրով։

¹³⁴ Այս տվյալը հաղորդել է Ղ. Ալիշանը, ձեռքի տակ ունենալով մեղ անհայտ մի աղբյուր։ Նա գրել է. «Անուանի էին առ սորօք ճոխութեամբ ի նոր Զուղա և Զհուտ Մինաս կոչեցեալ ոմն, որ շինեաց Լրիս պարանս հոյակասս», Ղ. Ալիշան, Հայ-Վենետ կամ յաղբնչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ—Դ և ԺԵ—Զ դարս, Վենետիկ, 1896, էջ 473։ Այս Մինասին նույնացնում ենք Մինաս Փանոսեցի հետ, նկատի ունենալով, նախ, որ XVII դ. վերջերին Նոր Զուղայում չկար այդ անունով շատ հարուստ մի այլ վաճառական, և ասպա նրա կտակից ու այլ աղբյուրներից տեղյակ լինելով, որ նա իր ժառանգներին իրօք թողնում էր 3 առանձին տներ։

¹³⁵ Զեռագիրը պահվում է Նոր Զուղայում։ Մանրամասն նկարագրված է Լ. Մինասյանի կողմից, Լ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանաց թանգարանի, հ. Բ, Վիեննա, 1972, էջ 59։

զինչ որ ունեի՝ թամամին իւր ձեռումն էր»¹³⁶։ Հետագայում, սակայն, հոր համար պարզ է դարձել, որ ավագ որդին ազնիւ չի եղել իրենց առևտրական ընկերութեան գործերը տնօրինելիս։ «Ես նորա առևտրին հասապն տեսել չեմ,— գրել է հայրն իր կտակում։— Ապա երբ որ իմ տանէս ջով-վեցաւ, լսեցի և տեսի, թէ եօթն Ռ (հազար) թուման ուներ։ Էն եօթն Ռ թումանին ԳՌ (3000) թումանն ես իմ կամաւս եմ տվել, իւրն հալալ լինի, և աւելին իմ կամաւն չէ»¹³⁷։

Այսպիսով, կտակը գրվելուց տարիներ առաջ Քանանը պաշտոնապէս առանձնացած է եղել հորից ու մյուս եղբայրներից և գործել ինքնուրույն, մաս չկազմելով խոջա-Մինասենց ընկերութեան¹³⁸։

Խոջա Մինասը կտակով 500 թուման հատկացնում է իր հիմնադրած աղքատանոցին՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար և 100 թուման՝ բարեգործական այլ նպատակներին։ Մնացած կապիտալը բաժանում է 36 մասի, հետևյալ համամասնութեամբ. 8-ական մաս իր 4 որդիներին (յուրաքանչյուրին 3000-ական թուման) և մեկական մաս իր 4 դուստրերին (յուրաքանչյուրին 375-ական թուման)։ Ըստ այդմ, պարզվում է, որ մինչև իր Քանան որդու բա-

¹³⁶ Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 144—145.

¹³⁷ Նույն տեղում։

¹³⁸ Այդպիսի բաժանումները, առանձնացումները պարտադիր կարգով պաշտոնական ձևակերպում պետք է ստանային, որպեսզի ինչպես բաժանվող անձնավորությունը, այնպես էլ նրա ազգականները հետագայում ազատ համարվեն մեկը մյուսի նկատմամբ օրենքի առաջ ունեցած պարտավորություններից։ Այս առումով արժեքավոր է 1707 թ. Թիֆլիսում կազմված ու քաղաքի հայ մելիքի, տանուտերի (մամասախիսի) և հեղինակավոր մի շարք անձանց կողմից հաստատված բաժանադիրը։ Ըստ այդ փաստաթղթի Բաստամի որդի Ստեփանը բաժանվել է իր Աղան, Գասպար և Բաղդասար եղբայրներից, որից հետո ապրել անջատ, առևտուր արել ինքնուրույն։ Բաժանագրի մեջ ասված է, որ այսուհետև, ինչպես վերոհիշյալ 3 եղբայրները, այնպես էլ Ստեփանը չունեն որևէ պարտավորություն միմյանց նկատմամբ, պատասխանատու չեն կողմերից յուրաքանչյուրին ուրիշների կողմից ներկայացվելիք որևէ պահանջումների։ Տե՛ս «Армяно-русские отношения в XVIII веке», т. III, с. 217—218.

ժանվելը այս խոջան ունեցել է 21 հաղար թումանից ա-
վելի կապիտալ և իր որդիներին ժառանգություն է թողել
առնվազն 12 հաղար թուման: Ահա այս դրամագլխով, ա-
ռանց որևէ միջադեպի, շուրջ շորս տասնամյակ շարունա-
կել է իր գոյությունը հոջա-Մինասենց առևտրական ընկերու-
թյունը, որի մեջ հավասար իրավունքներով ընդգրկված են
եղել նրա որդիները՝ Սեթաղան, Սարֆրազը, էլիազն ու
էմնիազը, իրենց զավակների հետ միասին:

Ըստ ընդունված կարգի, որի համաձայն «փոքրն պար-
տական այ յամիշայ մեծին յնազանդ լինի» (այս արտա-
հայտությունը վերցված է Սեթաղայի որդի Գրիգորի կտա-
վից), հոջա-Մինասենց առևտրական ընկերության ղեկա-
վարությունը նախ, մինչև իր մահը, ստանձնում է ավագ
եղբայր Սեթաղան (1702—1715 թթ.), նրան հաջորդում է
Սարֆրազը (1715—1728 թթ.), որից հետո կրտսեր եղ-
բայրը՝ էմնիազը մինչև իր եղբրական մահը, որը տեղի
ունեցավ 1746 թ. նադիր շահի հրամանով:

1739 թ. ժողով է գումարվում, ուր քննարկվում է ըն-
կերության մոտ 40 տարվա գործունեությունը: հոջա Մի-
նասի որդիներից ժողովին մասնակցում էր միայն էմնիազը,
իսկ մահացած եղբայրներին փոխարինում էին իրենց որ-
դիները. Սեթաղային՝ ավագ որդի Գրիգորը, հանդես գալով
նաև իր Ստեփան եղբոր անունից, Սարֆրազին՝ Աղամալը,
լինելով Մինաս ու Գրիգոր եղբայրների ներկայացուցիչը,
իսկ էլիազին՝ Մատուրը, սլաշտպանելով իր և Մինաս եղ-
բոր շահերը:

Այսպիսով, հավաքվել էին Նոր Զուղայի մեծահարուստ
առևտրական ընկերության ավագ ներկայացուցիչները,
պարզելու իրենց գործերի վիճակը, շահն ու վնասը, յուրա-
քանչյուր ընտանիքի դրամական պարտավորությունները ըն-
կերության նկատմամբ և այլն: «Քուլի օմատ-ռաֆտին թա-
մամ վերայհասու ելանք, տեսինք և կտրեցինք»,—գրված
է ժողովի արձանագրության մեջ, որը կազմվել է 1739 թ.
հուլիսի 13-ին ու հասել մեզ վավերացված ու ստույգ մի

պատճենով: Վերջում հատուկ նշում կա, որ բնագիրը ստորագրված ու կնքված է եղել ընկերության վերոհիշյալ 4 ավագ անդամների կողմից, իսկ որպես վկա. հանդես են եկել Աստվածատուր ու Հակոբ վարդապետները, նոր Զուղայի քալանթար Ամիրջանը և 5 ուրիշ վկաներ¹³⁹: Նկատի ունենալով այս եղակի համաձայնագրի մեծ կարևորությունը առևտրական ընկերությունների կառուցվածքը պարզելու, նրանց մեջ ընդգրկված ազգակից ընտանիքների պատականություններն ու իրավունքները լուսաբանելու առումով, անհրաժեշտ ենք համարում ավելի հանգամանորեն ներկայացնել նրա բովանդակությունը¹⁴⁰:

Համաձայնագրի առաջին մասը հատկացված է ընկերության մեջ ընդգրկված 4 ազգակից ընտանիքների զբաղեցրած բնակարաններին: Ասված է, որ մինչև 1703 թ. նրանք բոլորն ապրել են միասին՝ իրենց հայրենական տան մեջ. «Ա. տեղ նստել ին, ա. տեղ խալջ արարել»¹⁴¹: Դրանից հետո Սեթաղան ու էլիազը փոխադրվել են ավագ եղբոր համար կառուցված տունը, սակայն 1707 թ. էլիազը բաժանվել է Սեթաղայից, կրկին միացել մյուս եղբայրներին՝ հայրենական ապարանքում: Սարֆրադի մահից հետո (1728 թ.) նրա ընտանիքի անդամները փոխադրվել են ու բնակություն հաստատել խոշա Մինասենց պատկանող հորորդ տանը: 1739 թ. ժողովում որոշվում է, որ այսուհետև ամեն ընտանիք իր կողմից բնակեցված տան լիակատար տերը պետք է լինի, և ընկերության ընդհանուր միջոցներից զբաղական հատկացումներ կարող են արվել այս կամ այն ընտանիքին միայն այն դեպքում, երբ նրանց զբաղեցրած տներից որևէ մեկը վթարի ենթարկվի

¹³⁹ Դրանք են՝ Մնացականի որդի տեր Հովսեփը, Սարգսի որդի Գասպարը, Ավետաղայի որդի Նաղարը, Ստեփանի որդի Սաֆարը և Նիկողոսի որդի Սարգիսը:

¹⁴⁰ Համաձայնագիրը պահվում է Բրիտանական զրադարանի փաստաթղթերի մեջ (№ 1047, էջ 312): Շարադրանքի ընթացքում քաղվածքների կատարելիս ավելորդ ենք համարել ամեն անգամ մատնացույց անել նույն աղբյուրը:

(«էստի հետ,—գրված է համաձայնադրում,—համէնքս մեր տներին մեկիքն այ տեր անք, որ տներին ջահթտան էլ մն զմնու խետ հախ, թալապ, դավայ կամ գօֆագու շունեմք»):

Հաշվապահական մատյանների մանրակրկիտ քննություն կատարելով ժողովականները պարզում են, որ 1703—1739 թթ. ժամանակամիջոցում ընկերության ընդհանուր ֆոնդից իրենց ընտանիքների պետքերի համար էմհիազը վերցրել է, ուստի պարտք է ֆոնդին՝ 150 թուման, Գրիգորն ու Ստեփանոսը (Սեթաղալի որդիները)՝ 450 թուման, Աղամալը, Մինասն ու Գրիգորը (Սարֆրաղի որդիները)՝ 970 թուման, իսկ Մատուրն ու Մինասը (էլիազի որդիները)՝ 300 թուման: Որոշվում է վերադարձնել այդ գումարները պարտապան ընտանիքների սեփական միջոցներից: Այդպես էլ արվում է, համապատասխան գրանցում կատարելով համաձայնագրի մեջ («էս թարեղումս համենքս մեր և մեր ախբերաց պարտականութիւնն մեր սամէն կամ դատմունքէն կամ էրս-միրէսէն (կնոջ օժիտից—Շ. Խ.) լցեցինք և տվինք փունթն, որ բարաբարվիցանք, որպէս սարքարի դաֆտարումն (այսինքն՝ ընկերության գլխավոր հաշվեմատյանի մեջ—Շ. Խ.) գրվեց» և այլն: Այնուհետև նորից շեշտվում է այն հանգամանքը, որ պարտքերը մարելուց հետո «Դ. (4) ախբերս (խոջա Մինասինց 4 ընտանիքների ավագ ներկայացուցիչները—Շ. Խ.) բարաբար սամի տէր անք», այսինքն՝ բաժնետերեր ենք համահավասար դրամադլխի՝ 3000-ական թումանի:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում համաձայնագրի հետևյալ հատվածը. «Ապայ մեք կամ մեր ախբէրքն և որդիքն, որ թարեղումս սաֆարում ան, թէ սարքրին ընկերացել, թէ օտարի, և Գրիգորս և Աղամալս, որ էլ սարքրի ընկեր անք, յամէն մարթ իւր ընկերութեանն սամ շախին տէր այ»: Սարքար բաղմիմաստ բառը, որ նշանակում է գործերի վարիչ, վերակացու, վարչություն և այլն, տվյալ դեպքում գործածված է առևտրական ընկերության —կոմպանիա իմաստով: Այսպիսով, պարզվում է, որ Խոջա-Մինասինց ընկերության անդամներից երկուսը (Գրի-

գորն ու Աղամալը) արդեն անդամ են եղել ուրիշ ընկերությունների (Համաձայնագիրն այդպիսի իրավունքի տեր է համարում գերդաստանի բոլոր անդամներին, նաև նրանց, ովքեր տվյալ ժամանակ առևտուր են անելիս եղել ուրիշ երկրներում): Հետագայում կտեսնենք, որ միաժամանակ տարբեր ընկերությունների մեջ կապիտալ ներդնելու իրավունքից օգտվել են սեփական կապիտալ ունեցող բոլոր վաճառականները:

Արժեքավոր է նաև համաձայնագրի վերջին պարբերություններից մեկը, որ վերաբերում է տարեկան շահից օգտվելու շափին: Միավորված շորս ազդակից ընտանիքներից յուրաքանչյուրն իրավունք ունի ընկերության տարեկան շահույթից «խալջող» (ապրուստի համար անհրաժեշտ դումար) ստանալ միայն 50 թուման (բոլորը միասին՝ 200 թուման): «Ով իվէլ ուղենայ իւր դատմունքէն կամ միւրէսից վեռու՝ խալջի»,—գրված է համաձայնագրում: Եվ, ընդհակառակը, այն ընտանիքը, որը 50 թումանից պակաս կծախսի, իրավասու է ըստ իր հաշեցողության օգտագործելու խնայած այդ գումարը. «ով պակաս վեռու՝ խալջի, իվէլին վեռու՝ մուղաթի տայ կամ սօվդագարութիւն առի»:

Համաձայնագրի այս նախատեսումներն այն նպատակն ունեն, որ ընկերության հիմնադրամը անձեռնմխելի մնա և տարեցտարի ավելանալով՝ հնարավորություն տա ընկերության անդամներին ավելի ընդարձակելու առևտրավաշխառուական իրենց գործունեության ծավալն ու շրջանակները:

Քննարկվող համաձայնագիրը պարունակում է շատ ուրիշ արժեքավոր տվյալներ ևս: Այժմ ծանոթանանք այդ կարևորագույն փաստաթուղթը ստորագրողներից մեկի՝ Սեթաղայի որդի Գրիգորի կտակին, որն իր հերթին շափազանց կարևոր տեղեկություններ է հաղորդում ազդակիցներին միավորող խոշոր ընկերությունների բաղկացուցիչ օղակների ինքնուրույն տնտեսական գործունեության հանգամանքների մասին: Վերն արդեն նշվեց Խոջա-Մինասենց ընկերության գլխավոր անդամներից երկուսի՝ Գրիգորի ու Աղամալի, միա-

ժամանակ այլ ընկերություն մեջ ընդգրկված լինելու մասին: Գրիգորի 1737 թ. հուլիսի 18-ին Մադրասում շարադրված կտակը բացառիկ արժեք ունի այդպիսի մի ընկերության ստեղծման հանգամանքներն ու բնույթը պարզաբանելու առումով¹⁴¹: Կոտակում ասված է, որ իր ողջ ունեցվածքը Գրիգորը ժառանգում է իր որդիներին՝ Միքայելին, Պետրոսին, Պողոսին, Հովհաննեսին, ինչպես նաև իր հորեղբորորդիներից Մինասին (էլիադի որդուն), որի անշահախնդիր ծառայությունները շատ բարձր է գնահատել¹⁴²: Գրիգորը պատվիրում է իր ժառանգներին միավորել իրենց ստացած կապիտալը, «հայրենիք» ու «մայրենիք» ունեցվածքը, սեփական «դատմունքը» (այսինքն՝ յուրաքանչյուրի վաստակած դրամական միջոցները) և ստեղծել մի նոր ընկերություն՝ «փունթ» (ֆոնդ), ու միատեղ և միասնաբար վարել այդ ընկերության գործերը՝ «պատիկն մեծին հնազանդ կալով»: Ուշադրության արժանի են կտակի հետևյալ առոգները. «Ողջն էլ բերեք իմ քօլ փունթին մէջն, ի սէրն աստուծոյ, ողջըտ էլ միատեղ, սիրով, առանց իմ-քոյ, մին տան կէք, և ինչ որ կայ՝ մին տեղ բանացանէք... Յեփ աստուծով էսպէս ելաք, աստուծոյ ողորմութիւնըն միշտ ձեզ յերայ դնի: Եւ որ մին ախպերտ սափարում լինի, պարտական էի, որ էնտուր կընկան և խիզանայ ամենայն դնե խաթիրն պախէք, որ մարդն էլ սափարում լսի՝ ուրախանայ, որ յեփ էսպէս ելալ, աստուծով ձեր միջին սէրն կիվեւանայ»: Սահմանված է նաև 25 տարվա ժամկետ, մինչ որի լրանալը որդիները զուրկ են լինելու «ջովիկիւ» իրավունքից, իսկ այնուհետև, եթե որեւէ մեկը ցանկանա առանձնանալ, ապա ամբողջ ունեցվածքը պետք է բաժանվի 5 հավասար մասի («սամ»-ի), յուրաքանչյուրը տնօրինելով իր բաժնին:

Խոշոր առևտրական ընկերությունների կազմակերպչական ձևերի ըստ ամենայնի ուսումնասիրության, մաս-

¹⁴¹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 212 (217):

¹⁴² Կտակի մեջ կարդում ենք կտակագրի տողերն ուղղված իր կնոջը՝ Հանային. «Աղա Մինասն չուն ինձ որդութիւն արար, ես էլ նորա որդի չինեցի, իմ խաթէր հմար՝ դու էլ քոյ մեծ որդու պէս ընդունես...»:

նավորապես ընկերության կրտսեր անդամների գործակա-
կերպի, իրավունքների ու պարտականությունների, նրանց
ընտանիքների տնտեսական վիճակի հետ առնչվող կարևոր
մի շարք հարցերի քննության համար մեծ արժեք են ներ-
կայացնում հոջա-Մինասենց գերդաստանի նշանավոր ան-
դամներից մեկի՝ էլիազի որդի Մինասի մասին պահպան-
ված 3 այն փաստաթղթերը, որոնք կազմված են 1744 թ.
փետրվարի 18-ին և 19-ին: Դրանցից առաջինը Մինասի
կողմից ստորագրված մի համաձայնագիր է, որի բովան-
դակությունը հետևյալն է. հոջա-Մինասենց ընկերության
ավագ անդամները՝ էմինազը, Գրիգորը, Աղամալն ու Ծա-
տուրը, երկարատև ճամփորդություն կատարելու համար վար-
կավորում են Մինասին, յուրաքանչյուրը՝ 275 թումանով:
Ծատուրի հատկացրած դրամի կապակցությամբ ասված է,
որ այն «միջոն է» է, այսինքն պատկանում է և՛ Ծատուրին,
և՛ վարկառու Մինասին (Ծատուրի եղբորը): Այդ 1100
(4×275) թուման կապիտալին Մինասն ավելացնում է 100
թուման իր անձնական միջոցներից, իսկ Գրիգորը «ամա-
նաթ» է տալիս 300 թուման¹⁴³: Այսպիսով, գոյանում է
1500 թուման, որով Մինասը նոր Զուղալից դուրս գալով
մեկնում է Հնդկաստան՝ առևտուր անելու: Համաձայնա-
գրի պայմանն այն է, որ Մինասը պետք է ստանա իր վաս-
տակած շահի $\frac{1}{3}$ -ը, իսկ ընկերության մյուս անդամները,
իրենց մութածի համամասնությամբ՝ $\frac{2}{3}$ -ը (Ծատուրի բա-
ժինը, բնականաբար, կիսվելու էր նրա ու Մինասի միջև)¹⁴⁴:

Երկրորդ փաստաթուղթը, ստորագրված նույն օրը,
օրինական սկզբունքով կազմված մի «վեքիլագիր» (լիա-
զորագիր) է, որով նույն Մինասը հոջա-Մինասենց մայր
ընկերության ավագ անդամներին (բացի իր եղբայր Ծա-

¹⁴³ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 100:

¹⁴⁴ 1748 թ. մի փաստաթղթում նշված է, որ Սեթաղալի որդի Գրի-
գորի «ամանաթ» տված այս 300 թումանից 100 թումանը Գրիգորը նվի-
րել է Մինասին: Գրիգորի որդի Պետրոսը այս փաստաթղթով վկայում է,
որ իր հանգուցյալ հայրն, իրոք, պատվիրել է այդ գումարը նվիրել Մի-
նասին, ասելով, որ «սահիբ Մինասն ինձ շատ ղուլուղ և որդութիւն աչ-
արարէլ», Բրիտանական գրադարան, № 1047, էջ 214:

տուրից) լիակատար լիազորություն է տալիս իր բացակայության ընթացքում, իր հետ առնչվող նման կարգի դրամական գործարքներ կատարելու. «տալիքն տան, առնելիքն չինք առուն և խսեպանին կտրեն, գիր տան, գիր չինք առուն... վերոյ իմ վաքնոց արարածն, տեսածն, գիր տվածն, հինք առածն, ինձ դաբուլ այ և կրկին ընդունելի, որպէս թէ ես գնեմ արարել, տվէլ և հինք առէլ»¹⁴⁵:

Վերջին փաստաթուղթը Մինասի կտակն է: Պարզվում է, որ նա ունեցել է մեկ որդի՝ էլիազ անունով, և երկու դուստր: Նրանց հարսանեկան ծախսերը կատարելու համար Մինասը կտակում է 50-ական թուման: Զավակ ունենալուց հետո ստանալու էին իրենց օժիտի «միրէս» կոչվող բաժինը. դարձյալ 50-ական թուման: Իր մնացյալ կապիտալը Մինասը ժառանգել է էլիազ որդուն: Նախատեսված էր նաև այն հանգամանքը, որ որդին կարող է կյանքից հեռանալ առանց ժառանգի և այդ դեպքում Մինասի կինը՝ Նանաջանը, պետք է առկա դրամագլխից ստանար 500 թուման¹⁴⁶, մայրը՝ Մադլենը, 50 թուման, 75 թուման էլ պետք է հատկացվեր Մինասի թաղումը պատշաճ ձևով կատարելու և բարեգործական նպատակների: Այդ բոլորից հետո կապիտալի մնացած մասն անցնելու էր Մինասի հղբայր աղա Մատուրին:

Պահպանված այս վավերագրերը տիպական են հայ առևտրական ընկերությունների համար ընդհանրապես: Մեծ հավանականությամբ, բոլոր հայ վաճառականներն էլ հրկառատե արկածալից ու վտանգավոր ճամփորդություններ կատարելու նախօրյակին պարտավորված են եղել կազմել իրենց կտակը և հպմապատասխան մի լիազորագիր, որով ընկերության մյուս անդամներն իրավունք են ստացել հայրենի երկրում տնօրինելու մեկնողի հետ առնչված դրամա-

¹⁴⁵ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 303 (317):

¹⁴⁶ Այս նախաջանը նշանավոր խոջա Փանոս Քալանթարի դուստրն է, որը 1688 թ. Սուրաթում, իր հայրենակիցների անունից առևտրական պայմանագիր է կնքում անգլիական Արևելա-հնդկական ընկերության հետ: Seth Mesrobian J. Armenians in India from the earliest times to the present day, Calcutta, 1937, էջ 243—244:

կան ամեն կարգի գործարքները: Առավել մեծ արժեք է ներկայացնում ճամփորդության գնացող ընկերության անդամին վարկավորելու հղանակը բացահայտող վերոհիշյալ փաստաթուղթը: Առաջին հայացքից այն շատ նման է երկկողմանի կոմենդային: Այստեղ ևս մի ոմն վաճառական վարկ է ստանում, առևտրական գործերով մի այլ երկիր մեկնելու համար: Սակայն, տվյալ դեպքում վարկատուները ոչ միայն վարկառուի մերձավոր ազգականներն են ու միևնույն առևտրական ընկերության անդամները, այլև վարկ ստացած կապիտալի մեջ ևս վարկառուն ունի իր ղգալի բաժինը՝ բուն դրամագլխի $\frac{1}{8}$ -րդ մասը: Բացի այդ, վարկառուն (Մինասը), ինչպես տեսանք, խոջա-Մինասինց գերդաստանի մայր ընկերության 4 ավագ անդամներից մեկի՝ Սեթաղայի որդի Գրիգորի, ստեղծած փոքր (ընտանեկան) ընկերության լիիրավ անդամներից մեկն էր: Մի խոսքով, վարկառուն տվյալ դեպքում անբակտելիորեն կապված էր ընկերության հետ և որպես նրա բաղկացուցիչ օղակ, ըստ ամենայնի, շահագրքոված էր ընկերության գործերի հաջող ընթացքով:

Քննարկվող վավերագրերի նշանակությունը չի սպառվում խոջա-Մինասինց ընկերության ներքին հարաբերությունների մասին տվյալներով: Այն, կարելի է ասել, վերաբերում է ընդհանրապես բոլոր առևտրական ընկերությունների ու նրանց մեջ ընդգրկված վաճառականների փոխհարաբերություններին, բացահայտում է վարկավորման ու շահույթի մասնատրման հղանակներն ընկերության ներսում:

Բրիտանական գրադարանի փաստաթղթերի մեջ կան բազմաթիվ այլ նյութեր ևս, որոնցում տարբեր առիթներով հիշատակվում է խոջա-Մինասինց գերդաստանի ամենագործունյա անդամներից մեկը՝ վերոհիշյալ խոջա Մինասը 1747—1748 թթ. նա բաղմիցս հիշատակվում է որպես նավատեր. «Աղայ Մինասի նավն աստուծոյ ողբումածութեամբ նախայ 16-ումն (1747 թ. հուլիսի 4-ին) սլամաթ արեկ Պասրայ»¹⁴⁷,—գրված է մի նամակում, իսկ մեկ ուրիշում՝

¹⁴⁷ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 183ր:

որ պարոն Մինասի նաւով ուղարկել են «Բանդարի ճոթանք»¹⁴⁸ և այլն: Նա խոջա-Մինասենց ընկերության անունից կներում է համաձայնագրեր ուրիշ վաճառականների հետ: Շատ արժեքավոր են հատկապես այն տեղեկութւոնները, որոնց համաձայն այս Մինասը, խոջա-Մինասենց գերդաստանի հետ այդքան սերտորեն կապված լինելով հանդերձ, ինքն անձամբ ևս ծավալել է ինքնուրույն գործունեութւոն՝ ոչ միայն վարկավորելով իրենից տնտեսապես կախված գործակատարների, այլև վարկ վերցնելով ուրիշ առևտրականներից: 1746 թ. մի կարևոր փաստաթղթի մեջ այդ կապակցությամբ ասված է. «Մինասն խօջայ Մուրեկէնց մուղարբայ ընկեր այ, և իւրն էլ հատուկ էնալմալ փող և ընկեր կամ սովդագարութիւն ունի»¹⁴⁹:

Այսպիսով, այս բոլոր տվյալները գալիս են վկայելու, որ էլիսպի որդի Մինասը XVIII դ. 40-ական թվականներին Նոր Զուղայում ու հարևան երկրներում գործող ամենանշանավոր և գործունյա վաճառականներից մեկն է եղել:

Ընկերության հիմնադիր խոջա Մինասը, որն իր 1700 թ. կտակով որդիներից յուրաքանչյուրին ժառանգել էր 3000-ական թուման, աղջիկներին՝ 375-ական թուման, բարեգործական նպատակների և իր թաղման կազմակերպման համար հատկացրել էր 600 թումանից ավելի և այլն: Եվ ահա, նշանավոր խոջա Մինասի ոչ պակաս նշանավոր համանուն թուր, որի կտակը գրված է պապի կտակից 44 տարի հետո, իր աղջիկներին ժառանգութւոն էր թողնում ընդամենը 100-ական թուման, իր թաղման ու բարեգործական նպատակների համար՝ 100 թուման, իսկ որդուն՝ հազիվ 600 թուման: Այսպիսով, կրտսեր Մինասը մոտ 5 անգամ պակաս կապիտալի տեր էր, եթե հաշվի չառնենք դրամի կուրսի այն

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 138:

¹⁴⁹ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 182: «Մուղարբայ» է կոչվել ուրիշի վարկով աշխատող վաճառականին հասանելի վարձատրութւոնը, ավելի ճիշտ՝ նրա շահած դրամազլխի իրեն հասանելի բաժինը:

հսկայական անկումը, որ տեղի էր ունեցել այդ շորս տասնամյակների ընթացքում:

Նադիր-շահի թագավորության վերջին տարիներին, ինչպես վառ գույներով նկարագրել է ռուս ռեզիդենտ Վ. Բրատիշչևը, հարկահավաքների չափից ավելի պահանջների հետևանքով Սպահանը, այդ թվում և Նոր Զուղան, գրեթե իսպառ դատարկվել էր. «Ստացված տվյալների համաձայն Սպահանում համարյա թե բոլոր կրպակներում և բարավանատներում դատարկություն է, առևտրով չեն զբաղվում և... նրա մեծությունը (Նադիր շահը) ձգտում է այն բանին, որ Սպահանի անունն անգամ չմնա»¹⁵⁰:

Քիչ թե շատ տնտեսական կշիռ ունեցող վաճառականները փորձում էին Նոր Զուղայից դուրս բերել իրենց կապիտալները: Նույն ճանապարհին էին նաև հոջա-Մինասենց առևտրական ընկերության անդամները, հատկապես 1746 թ. հետո, երբ Նադիր-շահի հրամանով նահատակվեց ընկերության ղեկավար խոջա էմնիազը: Նրանք, իրենց մյուս հայրենակիցների նման, ցրվում ու բնակություն են հաստատում գրեթե բոլոր այն վայրերում, ուր կայուն հենակետեր ունեին նորջուղայեցիները: Հիմնականում օգտվելով Բքիտանական գրադարանում պահվող փաստաթղթերից, կարելի է ասել, որ հոջա-Մինասենց էմնիազի որդի Հարությունը հաստատված է եղել Բասրայում և ղեկավար դեր կատարել տեղի հայկական գաղութի կյանքում: Որոշ ժամանակ Բասրայում էր նաև Հարությունի եղբայրը՝ Մելիքնազը (որի որդին XVIII դ. 90-ական թվականներին հաստատվել էր Սուրաթում)¹⁵¹, իսկ Հովհաննես եղբայրը՝ Բենգալիայում: Սեթաղայի որդի Գրիգորի ժառանգները դործունեության բնագավառ են ընտրել Բասրան ու Մադրասը: Էլիազի որդիներից Մատուրին հանդիսավում ենք Սուրաթում,

¹⁵⁰ М. Р. Арунова, К. З. Ашрафян. Государство Надир-шаха Ашрафа (Очерки общественных отношений в Иране 30—40-х годов XVIIIв.) М., 1958, с. 237.

¹⁵¹ Տե՛ս Մ. Քեշիշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմամուրի վանքի Մատենադարանին, էջ 356:

իսկ մեզ ծանոթ Մինասին՝ Սուրաթում, Կալկաթայում, Սեի-
դաբադում, Բասրայում և այլ վայրերում (ըստ երևույթին,
Մինասն ամենից լայն գործունեություն ծավալած վաճառա-
կաններից մեկն է եղել)։ Ծառուրի Հովհաննես եղբայրը
նույնպես հիշատակված է Սեիդաբադում, Զենին՝ Բասրայում,
իսկ Մինասի որդի էլիազը՝ Ֆրանսիական արևելա-հնդկական
ընկերության կենտրոն Պոնդիշերի քաղաքում։ Սարֆրազի
որդի Մինասը 1746 թ. գտնվում էր Կալկաթայում, իսկ սրա
Գրիգոր եղբայրը՝ ռուսական միջավայրում հայտնի միլիո-
նատեր-ազնվական Գրիգորի Սաֆրասը կամ Շաֆրասովը,
թանկագին քարերի մեծ առևտուր էր անում Ռուսաստանում։
Սրա նախաձեռնությամբ են Ռուսաստան բերվում և, ի վեր-
ջո, ռուսական արքունիքի սևիականություն դառնում իրենց
խոշորությամբ ու գեղեցկությամբ արքունի գանձատան մեջ
առաջին տեղը գրաված երկու նշանավոր ադամանդները, ո-
րոնցից մեկը հայտնի է գրաֆ Գ. Օռլովի անվամբ¹⁵²։

Պահպանվել է Խոջա-Մինասենց Գրիգորի որդիների՝
Պետրոսի, Պողոսի և Սեթաղայի շատ կարևոր մի նամակը,
շարադրված 1753 թ. նոյեմբերի 26-ին Բասրայում և ու-
ղարկված Նոր Զուղայում գտնվող իրենց մորը՝ Աննա-խա-
նումին։ Նա բաղմիցս դիմել է իր տարագիր որդիներին և
հորգորել նրանց վերադառնալ տուն՝ շեն պահելու հայրե-
նական օջախը։ Ի պատասխան մորը, որդիները պարզա-
բանում են, որ իրանում շահավետ գործով զբաղվելու որևէ
հեռանկար այլևս չի մնացել. «էլ էտ երկիրն մեզ համար
խէր չի առում»—գրում են նրանք, ապա թվարկում Նոր
Զուղայի շեն տարիներին այնտեղ բարգավաճած նշանավոր
գերդաստանների անուններն ու նշում, որ այժմ նրանցից
և ոչ մեկը չի գոյատևել։ Նվ եթե նրանք, շատ ավելի դո-
րավոր տնտեսական միջոցների տիր այդ գերդաստանները,
բարենպաստ ժամանակներում չեն կարողացել տոկալ ու

¹⁵² Այս ադամանդի Իրանից Ռուսաստան բերվելու մասին պատմական-
գրականության մեջ կան անհիմն շանաղան հայտարարություններ։ Զջմա-
բիտ պատմությունը տե՛ս А. П. Базилев, նշվ. աշխ.։

դիմանալ, ապա իրենք, որ նրանց հետ չեն կարող անգամ համեմատվել, ինչպես կարող են դիմանալ այդպիսի ծանր, «խարապ ու անհանգիստ» պայմաններում¹⁵³:

Եվ այսպես, XVIII դ. կեսերին, Նոր Զուղայի առևտրական կապիտալի մյուս ներկայացուցիչների հետքերով, իրենց հայրենի քաղաքից դուրս գալով մշտական բնակություն են հաստատել Հնդկաստանի նշանավոր տնտեսական կենտրոններում, Իրաքում և Ռուսաստանում՝ նաև Խոջա-Մինասենց առևտրական մայր ընկերության անդամները: 1743—1747 թթ. մի շարք փաստաթղթերում տվյալներ կան ընկերության գոյություն ու գործունեության մասին¹⁵⁴, բայց կա նաև մի վկայություն (դարձյալ 1747 թ.)՝ ընկերության մեջ ընդգրկված ազգականների միջև տնտեսական համագործակցության բացակայությունը շեշտող¹⁵⁵: Կարելի է ենթադրել, որ հայրենիքից դուրս գալուց հետո էլ առևտրական

¹⁵³ Նամակի շատ կարևոր մի հատված մեջ ենք բերում բառացիորեն. «Ողջիտ զայիր (հայտնի) այ, որ էլ էտ երկիրն մեզ համար խեր չի առում, ինչ եղաւ խաղարէնց երեք օջաղն, Շարիմանէնց, Զախաթունէնց, Բրդղէնց, Զամալէնց, Գէրաբէնց, Դառամանկաց, Քամալէնց, խօջայ Պողոտէնց, խոջա Շարֆրաղէնց, Ֆռանգսիղէնց, Աղա Դաւութունց, խօջայ Նիկողոսէնց, Զիբ Մուքելէնց, Աղա Բարէնց, Փարսաղանէնց, Մեծ Շահէնց և այլ միւս օջաղանի, որ ձեր հրամանքն, ես առաւել պատուելի մայրս լէվ աւ խբար, մինն մնացել չի Մենք խօ նանցան նօքարն չենք դառման էնպէս ավատ և մարթարօլ և հաստատ թաղաւորութեան ժամանակումն, որ նանքան փշացան, մինք մին շորս-հինգ տուն՝ էս խարապ և անհանգիստ ժամանակումն ինչպե՞ս պիտի ապրենք, նանի ջան», Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 297:

¹⁵⁴ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 92, 94, 109, 292: Այս փաստաթղթերում Խոջա-Մինասենց ընկերության տարբեր անդամներ հիշատակվում են առում իրենց շտաբարի փողեր»-ի, այսինքն ընկերությանը պատկանող կապիտալի մասին:

¹⁵⁵ 1747 թ. աշնանը Նոր Զուղայում կազմվում և գիտակ անձանց կողմից ստորագրվում է մի փաստաթուղթ ի հաստատություն այն իրողության, որ պետական հարկը հավաքելիս պարոն Աղամալը (խոջա Մինասենց Սարֆրազի որդին) լինելով Նոր Զուղայում, վճարել է իրենց տների հարկը, սակայն հրաժարվել է վճարել «ողորմած հոգի էմնիաղէնց սամն», Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 271:

այդ մեծ ընկերությունը որոշ ժամանակ շարունակել է իր գործունեությունը, իսկ թե ե՞րբ է լուծարվի ենթարկվել վերջնականապես՝ հայտնի չէ։

Նոր Զուղայի քիչ թիվ շատ նշանավոր բուրգ առևտրական ընկերությունների նման, Խոջա-Մինասենց ընկերությունը ևս ծավալել է տնտեսական լայնատարած գործունեություն տարբեր երկրներում, ոչ միայն իր բազմաթիվ անդամների, այլև՝ իր կողմից վարկավորվող վաճառականների ու գործակատարների միջոցով։ Դրանցից քչերի անուններն են հայտնի։ Ժամանակով առաջինը՝ Վանջալի անունով մի վաճառական է, 1710 թ. Ալեքսանդր կաթողիկոսը խոջա Մինասի որդի Սարֆրազին մի նամակ է գրել, ծանուցելով, որ էջմիածին է եկել վերոհիշյալ Վանջալին և շուտով վերադառնալու է նոր Զուղա՝ 12 տարիների իր աշխատանքի հաշվետվությունը ներկայացնելու համար։ Ըստ այդմ, նա վարկ է վերցրած եղել խոջա Մինասենց գերդաստանից դեռևս 1698 թ., երբ գործի գլուխ էր նշանավոր խոջա Մինասը։ Կաթողիկոսը խնդրում է ընկերության ավագ անդամներին՝ Սեթաղային ու Սարֆրազին, «արդար գատաստանալ» փակել նրա հաշիվը, քանի որ «տասներկու տարի է ի տանէ դուրս է և դարբրութեան մեջ, պիտի որ դորա աշխատանքն ապահատ չառնէր»¹⁵⁶։

Մեղ հայտնի երկրորդ գործակատարն է ոմն Աղաղար, որը 1702 թ. ընկերությունից ստացել է 680 թուման կապիտալ, շահի 25% -ը որպես աշխատավարձ իրեն պահելու պայմանով։ Նա եղել է նախ Նրուսաղեմում, ապա՝ Վենետիկում, Ամստերդամում, վերջում հաստատվելով Մոսկվայում, ուր իրեն է միացել Մերկուլ անունով որդին։ Համաձայնագիրը կնքվուց 14 տարի հետո վերոհիշյալ հայրն ու որդին խուսափում են Խոջա-Մինասենց ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունները կատարելուց։ Ընկերության ղեկավարները լիազորում են Ռուսաստանում գտնվող իրենց մի այլ գործակատարի՝ Շահենի որդի Դրի-

¹⁵⁶ 2. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 150։

դորին, համապատասխան սլահանջ ներկայացնել ռուսական պետական մարմիններին, Աղաղարից ու Մեբկուլից իբրենց կապիտալը, 14 տարիների շահի հետ միասին գանձելու մասին: Այս գործին առնչվող փաստաթղթերից պարզվում է, որ 1716—1717 թթ. վերահիշյալ Շահնիսի որդի Գրիգորից բացի, Մոսկվայում եղել են խոջա-Մինասենց ընկերության կողմից վարկավորված ուրիշ վաճառականներ ևս:

Հաջող գործունեություն է ծավալել մեկ ուրիշ գործակատար ևս՝ Ստեփանոս Հայրապետյանը: 1719 թ. հուլիսի 2-ին նա խոջա-Մինասենց ընկերությունից ստացել է 6 հաղար ռուբլի վարկ, շահի 27,5% -ի տերը լինելու պայմանով: Սլահանում ապրանքների գնելով նախ մեկնել է Կարին (Էրզրում), որտեղ որոշ ապրանքներ վաճառելուց և ուրիշ ապրանքներ գնելուց հետո ուղևորվել է Լիվոռնո, այնուհետև վերադարձել՝ Զմյուռնիա, այդտեղից Բաղդադ, ի վերջո՝ 1725 թ. ապրիլի 28-ին ժամանել է Սուրաթ, որտեղ էլ 5 տարի մնալուց հետո, 1730 թ. փետրվարի 23-ին հաշվետու է եղել ընկերության ղեկավարներին, նրանց տրամադրության տակ գնելով ստացված վարկը և վեցամյա թափառումների ընթացքում վաստակած զրամագլխի աղաներին: Հասանելի բաժինը՝ ընդամենը 36804 ռուբլի¹⁵⁷:

Ընկերության գործակատարների մասին մեզ հայտնի վերջին փաստաթուղթը կազմված է 1742 թ. Բենգալիայի Սեիդաբադ քաղաքում: Էլիազի որդի Մինասն ու էմնիազի որդի Մելիքնազը Սեիդաբադում 510 թուման վարկ են տալիս Տեր Ղազարի որդի Սեթին: Ընդ որում, վարկատվության մասին փաստաթուղթը խոջա Մինասենց գերդաստա-

¹⁵⁷ Տե՛ս 2. Տեր-Հովնանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 161: Ստ. Հայրապետյանի ստացած և իր ազաներին մատուցած զրամական միավորն այստեղ թուման է կոչվում, վաստակյամբ կարելի է ասել, անուշադրության սխալի հետևանքով: Դժվար է պատկերացնել, որ սրե՛կ առևտրական ընկերություն իր ողջ զրամագլխի կեսը (12 հազ. թումանից 6 հազ. թումանը) կարող էր գնել սրե՛կ գործակատարի տրամադրության տակ: Վերջնահաշիվը կատարված է Սուրաթում, ուստի, մեծ հավանականությամբ, զրամի միավորը հնդկական ռուբլին է:

նի այս երկու կրտսեր ներկայացուցիչները ստորագրում են ոչ թե իրենց անունից, այլ հանգես են գալիս բրախս ընկերութեան ավագ անդամների՝ Մինասի որդի էմնիադէ, Սեթադայի որդի Գրիգորի, Սարգիսի որդի Աղամալի և էլիսի որդի Աստվածատուրի (Ծատուրի) կողմից լիազորված անձինք: Ըստ այդ համաձայնագրի, վերոհիշյալ աղաներից յուրաքանչյուրը Սեթի տրամադրութեան տակ է դնում 127,5 թուման (ընդամենը 510 թուման) կապիտալ: Սեթն իր կողմից ավելացնում է 40 թուման «էնալմալ», աղաներն իրենց հերթին առելիս են 80 թուման «էնալմալ», որից հետո գրամապուխը դառնում է 630 թուման: «Ինչ տէր աստուածն շախ պարզեի,—Սեթի անունից գրված է համաձայնագրի մեջ,—երեք սամ առեմք, երկու սամ շախն...վերոյ սահիր աղինայ լինի և մին սամ շախն...ինձ՝ Սեթիս լինի»¹⁵⁸:

Այս տվյալները շատ ազբառիկ են խոշա Մինասենց առևտրական տան հետ շաղկապված գործակատարների բանակը պարզելու և շրջապայությունների աշխարհագրական սահմանները որոշելու առումով, բայց բավարար են հանգելու այն եզրակացութեան, որ, իրող, եղել են մեծ թվով գործակատարներ՝ ցրված տարբեր աշխարհամասերում:

Առևտրական այս մեծ ընկերութեան անդամները գալիս շախով պահպանել են նաև բանկային գործարքներով ու վաշխառութեամբ: Բրիտանական գրադարանում պահվող մի քանի տասնյակ փաստաթղթեր վկայում են այդ մասին: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես այն օրինակները, որոնց համաձայն ընկերութեան անդամները փոխանցային մուրհակով խոշոր գումարներ են տրամադրում նոր Զուղայում բնակվող մի խումբ կանանց (Մաբիամ տիկինին, Անամին, Մերբանին և մյուսներին), Հրեդկաստանի տարբեր քաղաքներում գտնվող նրանց հարազատներից (ամուսիններից կամ որդիներից) այդ գումարներն ասանալու պայմանով: Նկատվում է, որ XVIII դ. 40-ական

¹⁵⁸ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 288 (296):

թվականների վերջերին խոջա-Մինասենք ծրագրված կերպով տասնամյակների ընթացքում կուտակած իրենց կապիտալների մեծ մասը փորձում էին դուրս բերել Իրանից և փոխադրել Հնդկաստան ու Իբար, այսինքն այնպիսի երկրներ, ուր կային շահավետ գործունեության համար բարենպաստ քաղաքական ու տնտեսական պայմաններ:

«) Աղազարյանների (կազարյանների) առևտրական ընկերությունը

Նրբ կազարյան եղբայրները Ռուսաստանում բարձր դիրք էին գրավել, ռուսական պետական մարմիններին ներկայացրեցին վրաց Թևյմուրազ թագավորի և հայոց կաթողիկոսի կողմից հաստատված մի վկայագիր այն մասին, որ իրենք, իբր սերված են «ի տոհմէ թագաւորացն Հայոց» և որ իրենց հեռավոր նախնիները եղել են «տիրապետողք միոյ մասին Հայաստանի» և այլն: Այստեղ տրված է նաև տոհմի մի աղբատիկ տոհմածառ՝ մի քանի նախնիների անունների հիշատակովյամբ, առանց թվականների ու լրացուցիչ տվյալների: Ըստ դրա, տոհմի նահապետ է ճանաչված կազար անունով մեկը, որը կոչված է «Պարսկաստանի փողերանոցի առաջին կառավարիչ և գահապետ»¹⁵⁹, ճշտորեն նմանվելով բոլոր նորաթուխ ազնվական ընտանիքների «տոհմաբանությունը»¹⁶⁰, այս վկայագիրը դուրկ է պատմական օրեւ հիմ-

¹⁵⁹ С. Глинка, Обзорение истории армянского народа..., ч. II, М., 1833, с. 246—248, Մ. Մսերեանց, Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց կազարեան տոհմի, մ. 2-րդ, Մոսկվա, 1856, էջ 1—2:

¹⁶⁰ Այդպես էին կազմված նաև Շահրիմանյանների, Միրման-Գևրաթ (Գևրաթեյնց) ընտանիքի և բազմաթիվ ուրիշ գերպատանների առասպելական պատմությունները: Այդ բնույթի «փաստաթղթերի» հիման վրա է, որ ավսարիական, լեհական և այլ երկրների վեհապետները ազնվականի կոչումներ էին շնորհում ինչպես հայ, այնպես էլ օտարազգի, առևտրավաճառական դասի այն ներկայացուցիչներին, որոնց հաջողվում էր դրամի ուժով կալվածքներ ձեռք բերել ու տեղ գրավել: Նաև այդ երկրների կառավարչական մարմիններում:

քից: Բայց դա արգելք չի հանդիսացել, որ 1774 թ. մայիսի 20-ի հրովարտվող Եկատերինա 2-րդ կայսրուհին նրանց շնորհի: ռուսական ավելականի կոչում, իսկ 1786 թ. Ավստրիայի կայսր Հովսեփ 2-րդից էլ նրանք ստացել են բարոնություն¹⁶¹:

Լադարյան գերդաստանի պատմությունը գիտական հիմքերի վրա դնելու առումով լուրջ առաջընթաց քայլ է կատարել Հ. Տեր-Հովհանյանցը: Օգտագործելով մի շարք ձեռագրական հիշատակարաններ և նոր Զուղայի հիկեղեցիների որմերին փորագրված արձանագրություններ, նա ներկայացրել է հետևյալ տոհմածառը՝ Ղազար (տոհմի նահապետ), խոջա Մանուկ (նախորդի որդին, 1605 թ. հաստատվել է Սպահանի Շամսարադ թաղամասում, 1656 թ. փոխադրվել է նոր Զուղայի Դաշտ թաղամասը), Եղնազար կամ Աղազար (նախորդի որդին, 1623 թ. կառուցել է նոր Զուղայի կուսանալի անապատը, 1659 թ. նպաստել Դաշտ թաղամասի հիկեղեցու կառուցմանը: Ունեցել է երկու կին: Որդիների անուններն են՝ Նազարեթ, Վալիդե, Սաֆար և Մանուկ), Նազարեթ (նախորդի որդին), Աղազար (Նազարեթի որդին, որը փոխադրվել է Ռուսաստան) և այլն¹⁶²:

Մանոթանալով Հ. Տեր-Հովհանյանցի մեջ բերած տրվյալներին, ինչպես և դրանց ավելացնելով ձեռագրական մի քանի այլ տեղեկություններ, հանդում ենք այն կորակացության, որ այս տոհմածառը շատ խոցելի է իր միջին եղնազար-Աղազար մասում: Այստեղ միավորված են երկու տարբեր անձնավորություններ, որոնք ապրել են մեկը մյուսից առնվազն 30—40 տարի հետո և ունեցել տարբեր ճակատագրեր: Լադարյանների հետ իրապես առնչվում է ոչ թե խոջա Եղնազարը (կոչված նաև Եղիազար), որը 1623 թ. դրամական միջոցներ է տրամադրել Ս. Կատարինի կուսանալի անապատի հիկեղեցու, ինչպես և տնտեսական ու

¹⁶¹ Տե՛ս Մ. Մսերեանց, նշվ. աշխ., էջ 3—9:

¹⁶² Տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 94—97, հ. Բ, էջ 280—281:

խցերի կառուցման նպատակին, այլ Աղաղար կոչվածը: Աղաղարի հայրը՝ Մանուկը, Նախիջևանից Սպահան բռնված և Շամսաբադ թաղամասում բնակեցված հայերից է, որ 1656 թ. սլարսից կառավարութեան պահանջով, բոլորի հետ միասին, փոխադրվել է Նոր Զուլա ու բնակություն: Հաստատել Դաշտ թաղամասում: Այդ ժամանակ արդեն Աղաղարը ճանաչված անձնավորություն է. եղել: Դաշտում հաստատվելուց հետո՝ 1659 թ. նա միջոցներ է տրամադել եկեղեցի կառուցելու համար: Մեր կարծիքով հենց հիննախիջևանցի Մանուկի որդի այս Աղաղարն է նախ Աղաղարյան, իսկ հետագայում կաղարյան կոչված գերբաստանի անվանադիր նահապետը¹⁶³: Այդ հաստատվում է նաև Հարություն կաղարյանի Ելիզավետա Պետրովնա կախութուն 1761 թ. ներկայացրած մի խնդրագրի տվյալներով, որտեղ նա իրեն կոչում է «Հարություն որդի Նաղարեթի Աղաղարյան»¹⁶⁴: կաղարյանների մասին առկա սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս հանդամանորեն անդրադառնալու վերջիսիս դարձունեությանն ու ընտանեկան պարագաներին: Ըստ երևույթին, նա ունեցել է Մանուկ, Սաֆար և Նաղարեթ անուններով որդիներ: Նշանավոր է եղել Նաղարեթը, որը XVIII դ. սկզբներին իր Աղաղար, Մանուկ և Հարություն որդիների հետ միասին ստեղծել է առևտրական մի նոր ընկերություն, որին վիճակված էր հսկայական գերկատարել նախ Իրանի, ապա (դարի 50-ական թվականին-

¹⁶³ Ղրիմահայության գաղթի և Դոնի գետաբերանի մերձակայքում բնակություն հաստատելու պատմությունն ուսումնասիրած պատմաբաններին զբաղեցրել է այն հարցը, թե ինչու 1779 թ. նրանց կողմից հիմնադրված Բաղաբը, որ ծրագրված էր կոչել Ալեքսանդրուրդ, ի վերջո, Պետրուրդում նպատակահարմար գտան Նախիջևան (հետագայում՝ Նոր Նախիջևան) կոչել: Տարրեր կարծիքներ կան այդ մասին: Տե՛ս Վ. Բ. Բալխուղաբյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861), Երևան, 1967, էջ 73—74: Թվում է, թե անվան ընտրության գործում ղրիավոր զերը կատարել է Հովհաննես կաղարյանը, մեծ հավանականությամբ, իրենց գերգաստանի բնորոշների անվանը գերադասություն տալով:

¹⁶⁴ Տե՛ս «Армяно-русские отношения в XVIII веке», т. III, с.336.

րից) Ռուսաստանի տնտեսական կյանքում: Մինչև իր մահը Նազարեթը ղեկավարել է ընկերության գործերը: Հարությունը Լազարյանի 1744—1745 թթ. Մոսկվայից գրած 100-ից ավելի նամակներից 9-ը հասցեագրված են իր «էրքան ու դովլաթ սահիպ աղա» հորը՝ Նազարեթին: Տարբեր հարցերի կապակցությամբ որդին հրահանգներ է սպասում հորից, երբեմն նաև առանձին առաջարկներ անում՝ իրենց գործերի հետագա ընթացքի մասին, միշտ նկատի ունենալով, որ վճռական խոսքը պատկանում է հորը¹⁶⁵: Հիշատակելի է նաև Հարությունի հաշվեմատյանի գրանցումներից մեկը՝ երկու տարբեր անձնավորությունների 350 թուման վարկ տալու մասին: Ասված է, որ նրանցից ստացված է համապատասխան ստացագիր, «մեր սահիպ խօր և 3 ախբօր անման», ինչպես և սպասելի էր, վարկատու ընկերության անդամներից նախ հիշատակված է եղել Նազարեթի, ապա միայն նրա երեք որդիների անունները¹⁶⁶: Նազարեթի մահվանից հետո նրա տեղը գրավել է ավագ որդին՝ Աղաղարը: 1745 թ. Նազիր շահի հրամանով նորջուղայեցիներից բռնադանձեցին խոշոր մի գումար (60500 նադիրի): Ամենից ավելի տուժեցին 10 մեծահարուստ խոշաներ, որոնց շարքում հիշատակված են Աղաղար անունով երկուսը: Առաջին Աղաղարից դանձվել է 5000 նադիրի (այնքան, ինչքան է Շահրիմանյաններից), իսկ մյուսից՝ 1500 նադիրի (վեց ուրիշ խոշաներից դանձածի չափով)¹⁶⁷: Դրանցից մե-

¹⁶⁵ Իր նամակներից մեկում, օրինակ, նա դժգոհություն է հայտնում իր չափից ավելի ծանրաբեռնվածության համար: Նշելով, որ իրենց գործերը Գիլանում զլխավորելու համար երեք հոգին՝ Մանուկ հղբայրը, Սեթի որդի Նազարեթն ու պարոն Փանոսը, շատ են, նա առաջարկում է վերջին երկուսից որևէ մեկին ուղարկել Մոսկվա իր գործը թեթևացնելու համար: Մեկ այլ նամակով էլ առաջարկում է վերոհիշյալ Սեթին ու Փանոսին պահել Ռեշտում, Մանուկին հետ կանչել տուն՝ Նոր Զուղա, իսկ Աղաղարին ուղարկել Ռուսաստան: Մատենադարան, ձև. № 6240, էջ 110ա, 126ա—126բ:

¹⁶⁶ «Հարություն Լազարյանի հաշվեմատյան», էջ 14:

¹⁶⁷ Տե՛ս Լ. Տեր-Նովիկանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 250—251:

կը, անտարակույս, եղել է Նաղարեթի ուղի Սղաղարը և, մեծ հավանականությամբ, հենց առաջինը: Այս մեկի ստորագրութեանը՝ «Նաղարեթի որդի Սղաղար» ձևով, հանդիպում ենք Նոր Զուղայի մեծամեծերի կողմից 1747 թ. շարադրված և Հնդկաստանում գտնվող անվանի վաճառական Հովակիմին հասցեագրված այն գրութեան տակ, որով ծանուցվում էր Նաղիր-շահի մահվանից հետո ստեղծված փոքր-ինչ նպաստավոր կացութեան մասին¹⁶⁸: Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ XVIII դ. 40-ական թվականներին կաղարյաններն արդեն դարձել էին Նոր Զուղայի ամենաազդեցիկ ու մեծահարուստ ընտանիքներից մեկը:

Սղաղարը ծնված պետք է լինի մոտավորապես XVIII դ. սկզբներին: Ունեցել է չորս որդի՝ Հովհաննես (1735—1801), Մինաս (1737—1809), Խաչատուր (1741—1774) և Հովակիմ (1743—1826) անուններով: Կաղարյանների առևտրական ընկերությունը ընդարձակ կապեր է ունեցել Թուրքիայի, Հնդկաստանի և Ռուսաստանի հետ, զբաղված լինելով հիմնականում թանկագին քարերի առևտրով: Հայտնի է, օրինակ, որ 1744 թ. Սպահանում Սղաղարը 147 թումանով գնել է 13,75 կտրատանոց մի ադամանդ¹⁶⁹, իսկ 1747 թ. Բասրա է սղարկել մի կապոց դմրուխտ, որի կեսը սլատկանի է իրեն¹⁷⁰:

Առևտրական մյուս ընկերությունների նման, կաղարյանները, նույնպես, կատարել են բանկային զանազան գործարքներ, զբաղվել վաշխառությամբ: Պահպանվել է Սուլթանումի որդի Շահամիրի մի պարտավորագիր այն մասին, որ ինքը կամ իր հայր Սուլթանումը Նաղարեթի օրդի Սղաղարին վճարելու է իր մոր՝ Անամի վերցրած 6808 ոսկի պարտքը¹⁷¹:

¹⁶⁸ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1048, էջ 528:

¹⁶⁹ Տե՛ս «Հարություն կաղարյանի հաշվմատյան», էջ 47:

¹⁷⁰ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1048, էջ 183բ:

¹⁷¹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 164:

Ձեռներեց ու հաջողակ վաճառական է եղել նաև Մանուկ Լազարյանը: 1740 թ. նա գտնվել է Գիլանում և մեծապես նպաստել Ռուսաստանի՝ Իրանի հետ ունեցած տնտեսական կապերի ամրապնդման գործին: Հատկապես սերտ կապեր է ունեցել ռուս ռեզիդենտ Վ. Ֆ. Բրատիշչևի հետ¹⁷²:

1741 թ. Լազարյան եղբայրները, միավորված լինելով իրենց հոր գլխավորությամբ գործող առևտրական ընկերության մեջ, ի մի են բերել իրենց սեփական կապիտալները («էնալմալ» դրամը) և ստեղծել մի նոր ֆոնդ: Այդ մասին Հարությունի հաշվեմատյանում գրված է. «Ողորմութեամբն և աջողութեամբն աստուծոյ մեք՝ Նազարէթի որդիք Յարութիւն, Աղաղար, Մանուկս, մեր աստուծոյ պարգևած անալմալ փողերին մեր կամօվն միավորեցինք՝ փունթ վեր եկինք, որ ի միասին փունթով բանի կանք. որ ևս Յարութիւնս ինձ անալմալ մէջ բերի վեցհարուր ախտանասուն թուման, ևս Աղաղարս անալմալ մէջ բերի մին հազար թուման և Մանուկս էլ մէջ բերի իննհարուր թուման, որ Յ դաֆայ մեր անալմալ փողերին ջամն ելավ երկու հազար հինգհարուր ախտանասուն թուման նիաբայ նատրէ սքայ փող...»¹⁷³: Ըստ դրա էլ, Աղաղարը միավորված կապիտալի 39%-ի տերն է լինում, Մանուկը՝ 35%-ի, իսկ Հարությունը՝ 26%-ի:

Ըստ գոյություն ունեցող կարգի, ֆոնդ ստեղծած եղբայրները համապատասխան հաշվեմատյաններ են պահել, ուր գրանցել են այդ հիմնադրամի հետ առնչվող առևտրական ու վաշխառուական բոլոր գործարքների մասին հաշվապահական տվյալներ: Մեզ հասած մատյանը Հարությունի կաղմած հաշվեմատյանն է, բայց նրա մեջ կան արժեքավոր գրանցումներ, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու նաև մյուս եղբայրների գործունեության որոշ կողմերին: Հատկապես ուշադրության արժանի են այն բաղմաթիվ գրանցումները, որոնք ծանուցում են որևէ առևտրական գործարքից ստացված շահի կամ դնվող ապրան-

¹⁷² Տե՛ս «Հարություն Լազարյանի նամականի», էջ 126ա—126բ:

¹⁷³ «Հարություն Լազարյանի հաշվեմատյան», էջ 6:

քի ամբողջ քանակի՝ հրեք բաժին («սամ») լինելու փաստը։
Ընդ որում, այդ հրեք բաժնից հրեկուսը, ըստ պրանցումների,
պատկանելիս է հղիլ ֆոնդի անդամներին (ներանց մու-
ծած դրամագլխի համամասնությամբ), իսկ մեկ բաժինը՝
հյւրայրներից միայն Մանուկին («մի սամն Մանուկ աղին
այ»)՝¹⁷⁴ Սա նշանակում է, որ հյւրայրներից չորաքանչյուրը,
տվյալ դեպքում Մանուկը, բացի՝ Հաղարյանների ընկերու-
թյան լիիրավ անդամը և Հաղարյան հյւրայրների ստեղծած
ֆոնդի կապիտալի 35% -ի տերը լինելուց, ունեցել է նաև
սեփական դրամագլուխ (առնվազն 1250 թուման), որով
ինքնուրույն առևտուր է արել։ Կարելի է ենթադրել, որ այդ-
պիսի դրամագլուխ ունեցել են նաև մյուս հյւրայրները։

Հաշվեմատյանը միաժամանակ հարուստ մի շտամա-
րան է, որը հնարավորություն է տալիս պարզելու, թե
XVIII դ. 40—50-ական թվականներին Հաղարյանները Ի-
րանից ինչ էին արտահանում Ռուսաստան և հւլրոպական
երկրներ և ինչ՝ ներմուծում։

Իրանից արտահանվող ապրանքների շարքում կարևոր
տեղ էին գրավում թանկագին բարերը՝ ադամանդ, մարգարիտ,
հակինթ (հատկապես կարմիր), լալ, մարջան, զմրուխտ և
այլն։ Մետաքսի հումքը նույնպես կարևոր տեղ էր բռնում
արտահանման մեջ։ 1741—1759 թթ. ընթացքում, ըստ հաշ-
վեմատյանի տվյալների, Հաղարյաններն արտահանել են
մոտ 10 տ մետաքսի հումք, ինչպես նաև տարբեր տեսակի
մետաքսյա և բամբակյա զործվածքներ (թափա, շիթ,
կտավ), գորգեր, արեկեյան համեմունք (դարչին, հիլ, մե-
խակ), ծխախոտ և այլն։ Իսկ Ռուսաստանից Իրան են ներ-
մուծել հիմնականում թանկարժեք մորթիդեն, Հոլանդիա-
յից՝ մահուդ, ժանյակ, լեղակ, վառ կարմիր ներկ (կար-
մին), ժամացույցներ, ակնոց, հացիկի և այլ կենցաղային,
մանր արդյունաբերական ապրանքներ (մկրատ, դանակ,
մասնոց, ասեղ և այլն)։

Հաղարյանների մասին պահպանված սկզբնաղբյուր-
ները թույլ են տալիս նաև ավելի մանրամասն անդրադառ-

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 24, 30, 31, 47 և այլն։

նալու ինչպես խոջայական տարբեր գերդաստանների միջև դոյություն ունեցող տնտեսական կապերին, օտարերկրյա առևտրական կապիտալի ներկայացուցիչների դեմ միացյալ ուժերով հանդես գալու անհրաժեշտության կոնկրետ ղրք-սկորումներին, այնպես էլ ներքին մրցակցության, իրար դեմ խարդավանքներ նյութելու, մեկը մյուսի հաշվին շահվելու փաստերին: Հնարավորություն է ստեղծվում միաժամանակ պարզելու, թե ջուլայեցի ի՞նչ նշանավոր գերդաստանների հետ են նրանք առնչվել իրենց գործունեության ընթացքում, ովքե՞ր են եղել նրանց հիմնական գործընկերներն ու մեծաքանակ գործակատարների մի մասը: Պարզվում է, որ Հարություն Շահրիմանյանը նոր Զուլայից Մոսկվա՝ Հարություն կաղարյանին, գրել է մի քանի նամակ և խնդրել տեղի կանգնել այն ապրանքներին, որ Եվրոպայում գտնվող իրենց պաշտոնակատարները Շվեդիա—Պետերբուրգ—Մոսկվա—Աստրախան ճանապարհով Իրան կամ էլ հսկառակ ճանապարհով՝ Իրանից Եվրոպա են առաքում: Նազարեթն իր հերթին պատվիրում է որդուն՝ կատարել այդ հանձնարարությունները: Ի պատասխան հոր հրահանգի, որդին գրում է Հարություն Շահրիմանյանին, որ ինքն իր պարտականությունն է համարում սիրով կատարելու այդ ծառայությունը, սակայն հրաժարվում է նրանց հետ պայմանագրային կապի մեջ մտնելուց կամ էլ աշխատավարձ («հաստատել») ստանալուց¹⁷⁵: Նման հանձնարարություններ Հարությունը ստանում է նաև Վենետիկում գտնվող Ստեփան Շահրիմանյանից: «Աղայ Ըստեփանն,— գրված է Հարությունի նամակներից մեկում,— 3 գրով բանդիս ըլթմաղ այ գրում, որ ուրէնց սարքարի կոնթե (այսինքն՝ իրենց ընկերության—կոմպանիայի կողմից) ապրիշում կամ ինչ իքմին որ գոյ՝ սարանջամն տամ, ուրէնց օրդնուն խասացանիմ»¹⁷⁶: Այս դիմումների կապակցությամբ նա հայտնում է իր համաձայնությունը՝ հնարավորին չափով

¹⁷⁵ Տե՛ս «Հարություն կաղարյանի նամականի», էջ 66բ, 101բ, 119բ, 120ա

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 59ա—59բ

օգտակար լինելու Շահրիմանյաններին, նշելով, որ «սպարտականութիւն ունեւոր միմեանց խէրիաթին հետեւել», ակնարկելով նաև իրենց միջև ազգակցական ինչ-որ կապի մասին¹⁷⁷:

Հարությունը, բնականաբար, հոր և եղբայրների հանձնարարութեամբ և համաձայնութեամբ ծառայութեանն է կատարել նաև Խոջա-Մինասինց առևտրական ընկերության անդամների համար, որոնք XVIII դ. 40-ական թվականներին Խոջա Մինասի էմնիազ որդու անունով կոչվում էին նաև էմնիազեներ: Մի կապակցութեամբ նա գրում է, որ «սպարտն էմնիազենց մին զանայ արմազն, մին դօստ մեծամարդի ձեռնով տարանք դագհուն (Ելիզավետա Պետրովնան—Շ. Խ.) տեսավ. քարեղէնն ողջ չինք առէց. դներն էլ թասֆիլ գրեցի՝ տվի. մնացել այ մինչև ի հօրս դադավորին քշտին այ թամամ ալմազանին» և այլն¹⁷⁸: Մեկ ուրիշ տեղ էլ հայտնում է, որ «ազայ սպարտն էմնիազենց մարգարիթն... ծախել ի քնաղ Բարաթինցիուն, որ Աշտարխանայ վիսպուբըռնաթն է»¹⁷⁹:

Լազարյաններն առևտրական սերտ կապերի մեջ են եղել նաև ոմն սպարտն Սուլթանումի և սպարտն Մարտիրոսի հետ: Նամակներից մեկում Հարությունը, հատկապես նշելով աշն դժվարութեանները, ինչպես նաև նյութական վնասները, որ ինքը կրում է ուրիշների ապրանքների վաճառքը Մոսկովայում կաղմակերպելիս, հայտնում է, որ այսուհետև կատա-

¹⁷⁷ «Հարություն Լազարյանի նամականի», էջ 101ր: Մեկ այլ նամակում, ուղղված Պետերբուրգում գտնվող իրենց գործընկեր Ղուկասին, նույն հարցի մասին Հարությունը գրում է. «Ըլղայ վեր ան կացել (խոսքը Շահրիմանյան սպարտների մասին է—Շ. Խ.) բանդիս (այսինքն՝ Հարությունին—Շ. Խ.) գրում ան. վասն Քրիստոսի սէրն՝ մերն շարմն սպախի մեր աղրկած ապրիշումին ֆիրքն առես՝ զնայ Պետրոսը և Ֆոանկասանայ ինչ ապրանք որ գոյ՝ սարանջամն տամ, ուղարկեմ մեր երկիրն՝ ուրէնց խասանի...» և այլն, տե՛ս նույն տեղում, էջ 50ա:

¹⁷⁸ «Հարություն Լազարյանի նամականի», էջ 26ր: Թագուհուն վաճառքի առաջարկված այդ աղամանդների մասին նամակների մեջ կան բաղմաթիվ այլ գրանցումներ: Ի վերջո, այդ վաճառքը չի կայանում, և աղամանդները Հարությունն ուղարկում է Ամստերդամ:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 31ր:

րելու է միայն վերոհիշյալ անձանց այդ կարգի հանձնարարությունները, իսկ մյուսներին կամ մերժելու է կամ էլ՝ «պրովժոն» պահանջելու (ըստ երեույթին «պրովիդիոն» բառի աղճատ դրությունն է, որ այս պարագայում նշանակում է աշխատավարձ)¹⁸⁰:

Ինչպես տարբեր խոջայական դերդաստանների անդամները Հարությունին էին դիմում, նրբ ապրանք էին արտահանում Մոսկվա կամ էլ Մոսկվայի վրայով Եվրոպա, այնպես էլ կաղարյաններն էին օգտվում Իրանից Եվրոպա ձգվող ծովային ու ցամաքային ճանապարհների բոլոր հանգուցակետերում՝ Ռեշտում, Դերբենտում, Աստրախանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Ամստերդամում և այլ կենտրոններում հաստատված հայ վաճառականների ծառայություններից: Ընդ որում, կաղարյաններին հաջողվել էր բոլոր այդ վայրերում իրենց ընկերության համար կայուն հեղինակետեր ստեղծել: XVIII դ. 40-ական թվականներին Ռեշտում գտնվում էին կաղարյանների հետ սերտորեն կապված Փանոսն ու Սեթի որդի Հարությունը, Դերբենտում՝ Էդգարը, Աստրախանում՝ Մուրադխանի որդի Հայրապետը, Պետերբուրգում՝ Ղուկասը, Ամստերդամում՝ Հովհան Խալվարյանը, Ապոլենց Հովհանի որդի Գրիգորը և ուրիշներ, որոնք տարբեր դիրքի ու կարողության աեր վաճառականներ էին¹⁸¹: Հովհան Խալվարյանը, օրինակ, ավելի հեղինակավոր դիրք ուներ հայ խոջայական միջավայրում, քան Իրենք՝ կաղարյանները. այդ է պատճառը, որ վերջիններիս, իթն նույնիսկ դայրացած էին լինում նրա արարքներից, քաշ-

¹⁸⁰ Հարությունը գրում է. «Եթէ ուրիշնոցն հեփ առեմ՝ պրովժոն կուղենմ, որպէս աստուծոյ ճանապարհումն ա՝ ճշմարտութեամպ բանն կառնեմ: Իմ աղայ (նամակը հասցեագրված է պարոն Սուլթանումին), հրամանոցտ էլ այ հայտնի, մեզ տարին մապլաղ մարաֆ խալջ է գնաման, ողջ էլ փող ալ. Դթէ գնամ հախսայի վեռում, խէջ կասեն ուր լայնդաթում բան չէ արարել, թէ չվեռունք՝ մեզ զարար գնի. էլ լէվն ին այ՝ մոնջ զարարվենք. ոչ թօմաթ լսենք», տե՛ս նույն տեղում, էջ 24ր:

¹⁸¹ Տե՛ս «Հարություն կաղարյանի հաշվեմատյան», էջ 44, 47, 54, 57, 63, 67, 90, 98 և այլն:

վում էին իրենց դժգոհությունը ուղղակի նրան հայտնելուց։ Ինքնուրույն ու ազդեցիկ վաճառական էր նաև Պետերբուրգում հաստատված խոջա Ղուկասը։ Մյուսները կաղարջանների կողմից վարկավորվող վաճառականներ էին, մեծամասնությամբ նրանց նախկին գործակատարները, որ հնազանդորեն կատարում էին կաղարջանների հրահանգները։ Աստրախանում գործող Հայրապետը, օրինակ, տարիքն առած ու փորձառու մի վաճառական է եղել։ 1743 թ. նոր Զուղայում Աղաղարը Հայրապետին և նրա Մեկբում ու Ավդոլմասի որդիներին վարկավորել է 560 թուման դրամագլխով¹⁸²։ Հայրապետը հրկար տարիներ կապված է եղել կաղարջան եղբայրների հետ՝ հանդիսանալով նրանց ընկերության լիազոր-ներկայացուցիչը Աստրախանում։ Չնայած նրա տարիքին ու ձեռք բերած հեղինակությանը, Հարությունը տարբեր առիթներով դժգոհություն է հայտնել նրանից։ Արդեն հիշատակել ենք այն նամակը, որով Հայրապետին դատողություն էր արվում առևտրական գաղտնիքներ պարունակող նամակներն ուրիշներին գրել տալու համար։ Մեկ այլ նամակով էլ Հարությունը դժգոհում է նրանից, որ նա, խորամուկ չլինելով Նվրոպայից ստացվող ապրանքների շուտ կամ ուշ Իրան առաքելու հետևանքների մեջ, ընկերությանը վնաս է հասցնում։ «Հրամանքտ,—գրում է Հարությունը 1744 թ. ապրիլի 28-ի իր նամակում,—էսպես մեր փունթի, Մանուկին ապրանքին հմար ջաֆայ քաշին ուղում չես, ինչ ապրանք տեղտ այ գոլման էլ Գիլանայ շախ-ղարարին ֆորումն չես, բառման աս՝ աղարկում մեր երկիրն. բախտու թալեղ, գնաց՝ ինչ կուղի դառնայ...»¹⁸³։

Իր գրությունների և հաշվեմատյանի մեջ Հարությունը վերոհիշյալ Հայրապետի, ինչպես նաև էդգարի ու հրկար տարիներ իրենց դրամագլխով առևտուր անող այլ գործակատարների մասին գրանցումներ կատարելիս հաճախակի գործածում է «մեր» դերանունը («մեր պարոն Հերապետն»,

¹⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 41։

¹⁸³ «Հարություն կաղարջանի նամականի», էջ 44ա—44բ։

«մեր էղգարն» և այլն), դրանով իսկ շեշտելով այդ մարդկանց սիրտ կապն իրենց ընտանիքի հետ¹⁸⁴։ Նույն այդ աղբյուրներում առատ տեղեկություններ կան ինչպես վերը հիշատակված վաճառականների, այնպես էլ բազմաթիվ այլ անձանց հետ կնքված պայմանագրերի մասին, որոնցում նաև հիշատակված է, թե որքան գրամագլուխ են նրանք ստացել Լադարյաններից և ինչ պայմաններով։ Տեղեկություններ կան, օրինակ, Սեթի որդի Հարությունի մասին, որը 1742 թ. Լադարյան եղբայրներից ստացել է 45 թուման վարկ, իր գրամագլխի հետ «բանեյնելու» համար։ Յոթ տարի հետո, երբ նրանք ընդհանուր հաշտաբալի են բերել իրենց հաշիվները, Հարությունից ստացել են 45 թումանը և այդ գումարի շահը՝ 33,3 թուման (333 ուսբլի)։ Ըստ այդմ, տրված գումարը տարեկան 10%-ից ավելի շահ է բերել¹⁸⁵։ Փանոսի հետ ընկերանալու մասին ևս կան արժեքավոր տվյալներ. նա 1741 թ. Ռեշտում Լադարյան եղբայրների ֆոնդից ստացել է 450 թուման վարկ, իր կողմից ավելացրել՝ 170 թուման և առևտրական գործունեություն ծավալել այդ գումարով¹⁸⁶։ Փանոսը բազմիցս հիշատակվում է Լադարյանների գրավորությունների մեջ որպես նրանց ֆոնդի հետ կապված ու նրանց բազմապիսի հանձնարարությունները կատարող վաճառական։

Այս նշանավոր գործընկերներից բացի, Լադարյանները մեծ ու փոքր գումարներով վարկավորել են բազմաթիվ (առնվազն երկու տասնյակ) այլ վաճառականների, որոնք առևտուր են արել ինչպես Իրանում, այնպես էլ Ռուսաստանում, Իրաքում, Հնդկաստանում, գուցե և այլ երկրներում։ Ստույգ տեղեկություններ կան նրանց հետ կապված հետևյալ վաճառականների մասին.

1. Ղազվինցի Մաթոսի որդի Ավետ, որին 1741 թ. Ռեշ-

¹⁸⁴ Տե՛ս «Հարություն Լադարյանի հաշվեմատյան», էջ 30, 41, 54, 57 և այլն։

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 68։

¹⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 6։

տում տվել են 45 թուման վարկ, իսկ հաջորդ տարի՝ 90 թուման¹⁸⁷։

2. Նաղարի որդի Դավիթ, որին 1742 թ. տվել են 350 թուման վարկ¹⁸⁸։

3. Վրացի կամ Վրաստանի հայ՝ Մամուկի որդի Դիմիտրի, որին 1745 թ. վարկավորել են 56, իսկ երկու տարի անց՝ 100 թումանով¹⁸⁹։

4. Անդրեասի որդի Մովսես, որին 1745 թ. վարկավորել են 180 թումանով¹⁹⁰։

5. Նոր Զուղայի Երեան թաղամասի բնակիչ Աստվածատուրի որդի Մարգար, որին 1753 թ. տրվել է 150 ռուբլի¹⁹¹։

6. Խասատառենց Ներսեսի որդի Բոգդանուշկային 1754 թ. տվել են 6000 ռուբլի¹⁹²։

7. Համադանցի Յավրիի որդի Եսայուն 1755 թ. վարկավորել են 7500 ռուբլով և այլն¹⁹³։

Այս ցանկը կարելի է եռապատկել՝ լրացնելով հաշվեմատչանի մեջ սուկա այլ տվյալներով։

Լաղարյանների առևտրական ընկերության ծառայության մեջ են գտնվել նաև բաղմամբով պաշտոնյաներ՝ գործակատարներ և նոքարներ (տղաներ)։ Սրանք վարձվել են, սովորաբար, որոշակի ժամանակաշրջանով (մեծ մասամբ՝ մեկ տարով) կամ էլ առևտրական բեռները մեկ վայրից մեկ ուրիշը տեղափոխելու ընթացքում ծառայություններ կատարելու համար։

XVIII դ. կեսերին Իրանի կենտրոնական իշխանության թուլացման հետ մեկտեղ, որի հետևանքով երկրում անիշխանությունն ու բռնություններն անասելի չափեր էին ընդունում, Նոր Զուղայի հայ խոջայական ընտանիքներն ի-

187 Տե՛ս նույն տեղում, էջ 7, 13։

188 Տե՛ս նույն տեղում, էջ 14։

189 Տե՛ս նույն տեղում, էջ 54։

190 Տե՛ս նույն տեղում, էջ 57։

191 Տե՛ս նույն տեղում, էջ 91։

192 Տե՛ս նույն տեղում, էջ 100։

193 Տե՛ս նույն տեղում, էջ 104։

րենց կուտակած կապիտալները փրկելու և երկրից դուրս բերելու նկք էին փնտրում¹⁹⁴։ Դրա հետևանքով սկսվում է ուժեղ արտահոսք. արտագաղթում էին բոլոր ուղղություններով։ Բազմաթիվ ընտանիքներ բնակություն էին հաստատում Իրաքում (Բասրայում), Հնդկաստանում, Իտալիայում և, մասնավորապես, Ռուսաստանում՝ նախ Աստրախանում, ապա նաև Մոսկվայում ու Պետերբուրգում։

Նոր Զուղան լրած ընտանիքներից էին նաև Լազարյանները։ Հարուժյունի հաշվեմատյանից պարզվում է, որ նա Իրանից Աստրախանի վրայով Մոսկվա էր ժամանել 1743 թ. և այնտեղ բնակվել մինչև 1758 թ. (այնուհետև փոխադրվել էր Պետերբուրգ)։

Ընկերության ղեկավար Նազարեթ Լազարյանը ևս 1744 թ. տեղափոխվեց Ռուսաստան, իր հետ տանելով իննամյա թոռանը՝ Աղազարի որդուն, հետագայում Ռուսաստանում մեծ դեր կատարած և «Ժամանակի խոշոր կապիտալիստը» դարձած Հովհաննեսին¹⁹⁵։ Նազարեթը, ինչպես արդեն նշվել է, մահացել է նույն այդ թվականին՝ Աստրախանում։ Աղազարի՝ Ռուսաստանում հաստատվելու ճշգրիտ տարեթիվը հայտնի չէ։ Ըստ Մ. Մսերյանցի, իր ընտանիքի մյուս անդամների հետ նա Ռուսաստան է փոխադրվել 1749 թ. կամ 1750 թ.¹⁹⁶, իսկ, ըստ հաշվեմատյանի, Մոսկվայում հաստատվել է 1755 թ. ուղան ամսի 20-ին (հին տոմարով փետրվարի 3-ին)¹⁹⁷։

Իրանից արտագաղթելով և Ռուսաստանի տնտեսական կենտրոններում հաստատվելով, Լազարյան առևտրական ընկերության անդամները ոչ միայն մեծ հաջողությամբ շարունակեցին իրենց առևտրական լայնարձակ գործունեու-

¹⁹⁴ Վ. Ա. Դիլյան, *նշվ. աշխ.*, էջ 23—24։

¹⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 163։ Մ. Գ. Любимиров Очерки по истории русской промышленности, М., 1947, с. 461. Т. А. Чернявская, К истории возникновения капиталов и горнозаводского хозяйства Лазаревых, «Исторические записки», № 105, М., с. 273—279.

¹⁹⁶ Տե՛ս Մ. Մսերյանց, *նշվ. աշխ.*, էջ 5։

¹⁹⁷ Տե՛ս «Հարուժյուն Լազարյանի հաշվեմատյան», էջ 114։

թյունը, այլև, օգտվելով տնտեսական զարգացման համար Ռուսաստանում առկա բարենպաստ պայմաններից, իրենց կապիտալը ներդրեցին արդյունաբերական տարբեր ճյուղերի մեջ: Մոսկվայից ոչ հեռու գտնվող Ֆրչանովո գյուղում կաղարջաններն ստեղծեցին Ռուսաստանի ամենաորակյալ մետաքսագործական ֆաբրիկան: «Վարձակալելով նովոուսոլյեի աղահանքերը, Բիլիմբաեոյի, Դոմրյանսկի և Օչերսկի պղնձաձուլական և երկաթագործական գործարանները, կաղարջան եղբայրները սկսեցին իրենց գործունեությունը որպես լեռնարդյունաբերողներ և ութ դրեցին Ուրալի հանածոներով հարուստ աշխարհը»¹⁹⁸:

Այսպիսով, կաղարջանների գերդաստանը թեակոխում է իր պատմությունը երկրորդ, ավելի արգասավոր ու հետաքրքրական փուլը, որը համեմատաբար լավ է ուսումնասիրված գիտական դրականության մեջ:

Ուսումնասիրելով նոր Զուլայի տնտեսական կյանքում կարևոր դեր կատարած երեք նշանավոր առևտրական ընկերությունների՝ Շահրիմանենց, Խոջա-Մինասենց և Աղաղարենց (կաղարջանների) տների գործունեության հիմնական դրվագները, նշենք, որ նրանք բոլորն էլ XVIII դ. 40-ական թվականներին տարբեր ճանապարհներ ընտրելով դուրս էին գալիս իրենց բնօրրանից ու բնակություն հաստատում տնտեսական ավելի նպաստավոր պայմաններ ունեցող երկրներում: Շահրիմանենց ընտանիքի անդամների մեծ մասը, ինչպես տեսանք, բնակություն հաստատեց հիմնականում Իտալիայում և Ավստրիայում, իսկ առանձին անհատներ՝ Հնդկաստանում և Ռուսաստանում: Խոջա-Մինասենց ցրվեցին հիմնականում հնդկական նշանավոր քաղաքներում՝ հատկապես Սուրաթում, իսկ կաղարջանները գերադասեցին Ռուսաստանը և զգալի դեր կատարեցին այդ երկրի տնտեսական զարգացման պատմության մեջ:

Նոր Զուլայի մյուս առևտրական ընկերություններին վերաբերող նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն

¹⁹⁸ Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 62:

կտա հետադաշտում վերականգնելու արտագաղթի և ուրիշ երկրներում բնակություն հաստատելու շատ ավելի հանգամանալից պատմությունը:

Նախորդ էջերում տարբեր առիթներով նշվել է, որ խոշոր առևտրական ընկերությունների շուրջ համախմբվել էին նրանց կողմից վարկավորվող բազմաթիվ գործակատարներ, ինչպես և գործակատարի վիճակից գուրս հկած, բայց նախկին իրենց աղաներից տնտեսական կապերը դեռևս չխզած՝ միջին կարողությունների տեր մի շարք վաճառականներ: Նրանցից շատերն ունեցել են իրենց ընտանիքն ու գործել են իրենց որդիների հետ միասին: Իսկ թի ինչպես են գործել նրանք, հնարավոր է իմանալ, օրինակ, Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանից: Ըստ այդ աղբյուրի, Բանդորի որդի Շահվելին և նրա Սարհադ ու խոջամալ որդիները, միասնաբար հանդես գալով, 1712 թ. Նոր Զուղայում 900 թուման վարկ են վերցրել խոջա Օհանի որդիներ Մուրադից ու Հակոբջանից և խոջա Մարգարի որդի Հովհաննեսից: Պայմանը հետևյալն էր. այդ գումարով նրանք պետք է ապրանքներ գնեին Իրանում և անդրկովկասյան երկրներում, մեկնեին Ռուսաստան, ապա Հոլանդիա, Էվրոպական ու ուսական ապրանքներով վերադառնային Իրան և այդպես շրջանառության մեջ դնելով ստացված կապիտալը, ի վերջո պետք է վերագարծնեին իրենց աղաներին վարկ ստացած դրամադրիսի հետ միասին 675 թումանի շահը (այսինքն՝ շահի 75%-ը): Մնացած 225 թումանի շահը (շահի 25%-ը) ստանալու էին Բանդորյան ընտանիքի անդամները, հետևյալ համամասնությամբ. հորը՝ Շահվելուն, 150 թումանի շահը, ավագ որդի Սարհադին՝ 60 թումանի շահը, կրտսեր որդի խոջամալին՝ 15 թումանի շահը: Այստեղից, հորը բաժին էր ընկնելու աշխատավարձի 66,6%-ը, ավագ որդուն՝ 26,6%-ը, կրտսերին՝ միայն 6,6%-ը¹⁹⁹:

¹⁹⁹ ՏԵՍ Շ. Լ. Խաչիկյան, Շահվելու որդի Սարհադի Հաշվեմատյանը որպես հայ-ուսական տնտեսական կապերի սկզբնաղբյուր, «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 99:

Պարզ է. որ առևտրական ընկերությունների նմանությամբ էին կազմակերպվում նաև սեփական կապիտալ շուկանցում, ուրիշներից վարկավորվող ընտանիքները: Երկրորդ կարևոր հետևությունը կապված է ընտանիքի անդամների միջև աշխատավարձի բաշխման համամասնությամբ: Գործի գլուխ կանգնած անձը՝ սովյալ գեղքում Բանդորի որդի Շահվելին, իրեն է վերապահում շահի $\frac{2}{3}$ -ը, ավագ որդուն՝ իր ստացածի $\frac{1}{4}$ -ը, իսկ կրտսերին՝ մոտ $\frac{1}{10}$ -ը: Կարելի է ենթադրել, որ մոտավորապես նույն կամ նման չափանիշներով էր բաշխվում շահույթը նաև խոշոր առևտրական ընկերությունների մեջ ընդգրկված ազգակից անդամների՝ ղեկավարի, ավագ ու կրտսեր ընկերակիցների միջև:

Շահիմանենց, Խոջա-Մինասենց և Աղազարենց առևտրական ընկերությունների ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է հետևյալին.

1. Հայկական առևտրական ընկերությունները XVII—XVIII դարերում, որպես կանոն, կազմված էին լինում ամենամերձավոր ազգականներից (հայր-որդիներ, եղբայրներ-եղբորորդիներ և այլն):

2. Ղեկավարությունն իրագործում էր գերղաստանի ավագը: Ընկերությունը կոչվում էր կամ գերղաստանի հեղինակավոր նահապետի անվան հիման վրա ստեղծված ու կայունացած ազգանունով (օրինակ՝ Շահիմանենց, Շահիսասենց, Լուսիկենց և բաղմաթիվ այլ ազգանունները) կամ էլ սովյալ ժամանակ ընկերությունը ղեկավարող անձի անունով (Խոջա-Մինասենց ընկերություն, օրինակ, XVIII դ. 40-ական թվականներին հայտնի էր նաև էմինաղենց անունով):

3. Խոշոր առևտրական ընկերությունների շուրջ համախմբվում էին նրանցից կախում ունեցող ու նրանց գործունեության շրջանակների մեջ ներգրավված, ավելի նվազ տնտեսական կարողություն ունեցող մի շարք մանր ընկերություններ:

4. Ընկերության անդամներից յուրաքանչյուրը մասնակցում էր ընկերության գործունեությանը, կատարելով

դեկավարի (դեկավարութեան) կողմից իրեն հանձնարար-
ված աշխատանքը և լիակատար պատասխանատվութիւն
կրելով բոլոր անդամների գործունեութեան համար:

5. Ընկերութեան ստեղծվում էր սովորաբար երկարա-
տև ժամաճաղկամիջոցում կատարվելիք բազմաթիւ ու տա-
րատեսակ գործարքների համար: Ժամկետը լրանալուց հե-
տո, կամ, ըստ անհրաժեշտութեան որեւէ հարմար ժամանակ
մանրակրկիտ քննութիւն կատարելով, ընդհանուր հայտա-
րարի էին բերվում տարիների գործունեութեան արդշունքնե-
րը: Այնուհետեւ, ըստ անդամների որոշման, կամ ընկերու-
թիւնը շարունակում էր իր հետագա գոյութիւնը (կրելով,
կրբեմն, պահապան փոփոխութիւններ), կամ էլ լուծարքի
էր ենթարկվում:

6. Ընկերութեան անդամներն իբրավունք ունեին իրենց
վաստաւած գումարները՝ «էնալմալ» գրամագլուխը, ինչ-
պէս նաեւ իրենց կանանց օժիտի մի մասն օգտագործել
ըստ իրենց հայեցողութեան՝ ընկերութեան ուրիշ անդամ-
ների հետ միասին մի նոր ֆոնդ կամ օտար անձանց հետ
մի նոր ընկերութիւն ստեղծելով:

7. Ընկերութեան անդամների նյութական շահերը
պաշտպանվում էին ինչպէս ընկերութեան ղեկավարութեան,
այնպէս էլ քաղաքներէ: Ինքնավար վարչական մարմինների
ու պետական իշխանութիւնների կողմից:

Մերձավոր ազգականներին միավորող «լիակատար ըն-
կերութիւնները» Արևելեան Հայաստանի, Անդրկովկասի և
Իրանի տնտեսական կենտրոններում գոյութիւն ունեցող
հայկական միակ առևտրական կազմակերպութիւնները չէին:
Նրանց կողքին լայն գործունեութիւն էին ծավալում նաեւ
միմյանց հետ ազգակցական որեւէ կապ չունեցող վաճա-
ռականների տարաբնույթ՝ երկարատև և կարճաժամկետ,
առևտրական ընկերութիւնները:

Դրանց գոյութեան մասին որոշակի տեղեկութիւններ
կան մանավանդ XVII—XVIII դարերի ընթացքում գրված
թվաբանական դասագրքերում, մասնավորապէս Կոստանդ

Ջուդայեցու «Աշխարհաժողովի» թվաբանական խնդիրները բաժնում: Այդպիսի խնդիրներն էին, օրինակ, հետևյալները. «... էին Գ. ընկեր. առաջինն ունէր ԴՃԿԵ (465) մառչիլ, երկրորդն ԳՃՂԶ (396) մառչիլ, երրորդն ՃԾԲ (152) մառչիլ: Բանացուցին, էճԶԴ (784) մառչիլ շախ արարին. յամենու ընթացի շախն դուս հանէ...», այնուհետև բացատրվում են թվաբանական այն գործողությունները, որոնք կատարելով պետք է պարզվեր յուրաքանչյուրին հասանելիք շահի չափը²⁰⁰: Մյուս խնդրում գրված է. «Դարձեալ և էին Գ հոգի ընկեր. ԵՃԺԸ (518) մառչիլ դատեցին, բերին կիսեցին. մինն հասավ ՃԴ (104) մառչիլ, և երկրորդին հասաւ ՃՀԳ (173) մառչիլ, որ էս ՃՀԳ մառչլայ տրոջն խբար ամ, որ սարմաչէն ԴՃԺէ (417) մառչիլ աչ. և էն Բ. հոգուն սարմաչէն խբար շեմ, եթե ուղենաս հիմանաս այսպես արա...» և այլն²⁰¹:

Կան նաև խնդիրներ, որոնցից պարզ է դառնում, որ նման բնկերություններ երկարատև չեն եղել, կյանքի են կոչվել որևէ վայրում որոշակի մի ապրանք գնելու կամ ավելի մեծաքանակ գնումներ կատարելու նպատակով: Այս առումով ուշադրության արժանի է հետևյալ խնդիրը. «էին Գ. ընկեր և ունէին՝ առաջին ԴՃՀԳ (373) մառչիլ կէս՝ է (7) ամիս ԺԴ (14) օր բանի եկաց. երկրորդն ԲՃՀԳ (273) մառչիլ Ա. (1) թըլթ՝ Զ (6) ամիս ԺԱ. (11) օր բանի եկաց և երրորդն ՃՂէ (197) մառչիլ Ա. (1) ըռուպ Դ (4) ամիս Զ (6) օր բանի եկաց, որ քուլին շահ արարին ԴՃԶ (406) մառչիլ: Յամէնու ընթացի շախն հանէ...»²⁰²: Այսպիսով, այստեղ հիշատակված բնկերության 3 անդամները առևտրական ինչ-որ գործարքների համար միավորել են իրենց ձեռքի տակ հղած կապիտալը ոչ միայն կաբն ժամանակով, այլև տարբեր ժամանակներով. մեկը՝ 4, մյուսը՝ 6, երրորդը՝ 7 ամիս ու մի քանի օր: Ուստի, նրանք ըստ անհրաժեշտության.

²⁰⁰ Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 86ր:

²⁰¹ Նույն տեղում, էջ 89ա:

²⁰² Նույն տեղում, էջ 88ա:

դուրս են եկել կարճաժամկետ այդ ընկերության կազմից, ես ստանալով իրենց մուծած գումարը:

Պահպանվել են մի քանի կարեւոր վկայություններ այն մասին, որ կարճաժամկետ այդպիսի ընկերություններ կյանքի էին կոչվում հատկապես այն ժամանակ, երբ հնարավորություն էր ստեղծվում ձեռք բերելու շատ թանկարժեք որևէ ապրանք, մեծ մասամբ, հաղվագյուտ գեղեցկության ու որակի թանկարժեք քարեր: Այդ մասին Հարություն կաղարյանի հաշվեմատյանում կան արժեքավոր ավյալներ.

1. 1730 թ. Սպահանում նաղարեթ կաղարյանը Աստվածատուր Սալընջենցի հետ ընկերովի գնել է $8^{13}/_{16}$ կարատանոց մի ադամանդ²⁰³:

2. 1745 թ. ընկերացել են կաղարյան և ղբայրներն ու Հովհան Խաղարենցը $10^{5}/_{8}$ կարատանոց մի ադամանդ գնելու համար²⁰⁴:

3. 1744 թ. Սպահանում 147 թումանով վաճառվող $13^{3}/_{4}$ կարատանոց մի կանաչավուն ադամանդ գնելու համար ընկերություն են կազմել հինգ վաճառականներ: Աղաղար կաղարյանը հանդես գալով նաև իր եղբայրների՝ Հարությունի և Մանուկի անունից, հատկացրել է 95 թուման, ոմն աղա Հովհաննեսը (հավանաբար Շահրիմանյան ընտանիքից)՝ 40 թուման և Հովհան Խաղարենցը՝ 12 թուման²⁰⁵: Այս գեղեցիկ քարը 1743 թ. նաղարեթը բերել է Աստրախան և 5730 ռուբլով (573 թումանով) վաճառել 1741—1745 թթ. Աստրախանի նահանգապետի պալատին վարող նշանավոր ռուս պատմաբան Վ. Ն. Տառիշչեին²⁰⁶: Բնականաբար մուծած գումարի համապատասխան էլ կողմերից յուրաքանչյուրը ստացել է վերոհիշյալ 5730 ռուբլու իրեն հասանելի բաժինը:

Եղել են բացառիկ դեպքեր, երբ շատ թանկարժեք որևէ ապրանք գնել կարողանալու համար ստիպված են եղել ժամանակավոր ընկերության մեջ միավորվելու այլազգի մեծահարուստ վաճառականների: Ողբերգական վախճան ունե-

²⁰³ Տե՛ս «Հարություն կաղարյանի հաշվեմատյան», էջ 3:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

²⁰⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 109:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 47:

ցող աշգրիսի մի ընկերութիւն կազմւած է եղել Սպահանում՝ 1746 թ., թանկարժեք քարերով զարդարւած ձիու ոսկեհեռ մի ասպազեն զնկելու համար։ Առեւտրական այդ գործողութիւնը կատարելու համար ի մի են եկել Սպահանում բնակվող բոլոր ազգերի վաճառականներից երկուական ներկայացուցիչներ՝ 2 պարսիկ, 2 հնդիկ, 2 հրեա, 2 հայ, որոնցից մեկը էմնիալ խոջա-Մինասենցը, իսկ մյուսը՝ Հարութիւն Շահրիմանյանը (թերևս հանդես գալով հայկական համայնքի լուսավորչական ու կաթողիկ հատվածների անունից)։ Այդ մասին ավանդվող պատմութիւնը, պունադարձվելով ու բերնից բերան անցնելով, վիպական կերպարանք է ստացել։ Այն է, Նադիր-շահը տեղեկանալով փառավոր այդ ասպազենի մասին, իր մոտ է կանչել վերոհիշյալ 8 վաճառականներին ու հարցրել, թե ո՞ւր է այն ասպազենը որ դուք մատուցելու երինձ։ Երբ բռնակալի պահանջով բերվել ու նրան է հանձնվել այդ գանձը, նա հրամայել է վաճառականներին գլխատել՝ այն թաքցնելու և իր պահանջով միայն իրեն մատուցելու համար։ Խոջա էմնիալը սպանվել է, իսկ Հարութիւն Շահրիմանյանին հաջողվել է մի կերպ իր գլուխն ազատել²⁰⁷։

Կան դեպքեր, երբ որևէ ապրանք գնելու համար միավորվել են տասնյակ դրամատերեր։ Այդ կապակցութեամբ, որոշ շափաղանցումով, տեղեկութիւն է հաղորդել Նզիա Կարնեցին։ 1718 թ. հուլիսի 27-ին Ռավրիզից դրած իր մի նամակում նա Շամախիում գտնվող Շահանին գիմում է աշակես. «Ապրանքնիտ դաֆտարն ուղել ես. ինչպէ՞ս դաֆտար անեմ, Ծ (50) մարթով մի ապրանք կառնուք ևս ինչպէ՞ս կարեմ ձեր հսապն դաֆտար անել, ձեր հսապն կըտրել»²⁰⁸։

Այսպիսով, հայ առեւտրական բուրժուազիան լայնորեն օգտվում էր դրամատերերի միավորման բազմազան այն ձևերից, որոնք, անցած լինելով դարավոր ուղի՝ տարածված էին նաև Հայաստանում և հարևան երկրներում։

²⁰⁷ ՏՄ՝ Լ. Տեր-Հովհաննիսյանց, *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 256—257։

²⁰⁸ «Նզիա Կարնեցու Դիվանը», էջ 33։

3. Կոմենդայի տարառեսակները

Նվրոպական երկրներում դրամատերերի միավորումները կազմակերպչական տարբեր ձևեր էին ընդունում՝ պայմանավորված տարբեր նախադրյալներով, այն է՝ կապված էին ծովային թև ցամաքային առևտրի հետ, վերաբերում էին միայն առևտրի բնագավառին թե իբևեց մեջ էին ներառում նաև արտադրության ոլորտը։ Կարևոր նշանակություն էր ստանում նաև միավորվող կողմերի տնտեսական ու իրավական վիճակը և այլն։ Ծովային առևտրի մեջ ընդգրկված առափնյա խոշոր քաղաքներում առավել տարածված էին կոմենդա կոչվող միավորումները. «Կոմենդայի հայտնվելը, — գրում է Զ. Լուցցատտոն, — ծագում է զգալիորեն ամելի վաղ ժամանակաշրջանում, բայց հատկապես XIII դարից այն վերածվում է առավել հարմար միջոցի, որը հնարավորություն է ընձևում բազմաթիվ մարդկանց, անկախ իրենց սոցիալական դրությունից, ստանալու ծովային առևտրից գոյացող փափագելի շահույթի մի մասը, չբաժանելով ծովային ճամփորդությունների զժվարություններն ու վտանգները»²⁰⁹։

Հայկական լեռնաշխարհը ծովային երկիր չի եղել, սակայն զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հայկական նշանավոր առևտրաարհեստագործական կենտրոններից շատերը, սերտորեն շաղկապելով իբևեց դործունեությանը փոխանակային առևտրի հետ, ընդարձակում էին իրենց միջազգային կապերը՝ լայնորեն օգտվելով նաև ծովային բանուկ ճանապարհներից։ Կասպից, Սև ու Միջերկրական ծովերով հայ վաճառականները տնտեսական կապեր էին ստեղծել եվրոպական մի շարք երկրների հետ, իսկ Աստրախանում, Ղրիմում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում հաստատված հայ վաճառականները հմտորեն զուգակցում էին կարավանային ճանապարհներով կատարվող առևտուրը ծովային առևտրի հետ։ Այս առումով շատ ավելի մեծ հաջողությունների հասավ Նոր Զուղայի հայ առևտրական կապի-

²⁰⁹ Дж. Луццатто, *նշվ. աշխ.*, էջ 369։

տալը: Նկատի ունենալով այս հանգամանքը, առանց փառ-
տերի: էլ կարելի էր կարծիք հայտնել այն մասին, որ հայ
վաճառականները լայնորեն օգտվել են նաև կոմենդայի տար-
բեր ձևերից: Բարեբախտաբար, պահպանվել են բազմաթիվ
նյութեր այս ենթադրությունը հաստատելու համար: Նախ,
հնարավորության չափով ամփոփենք այդ նյութերը:

Ջուղահայ առևտրական ընկերությունները առևտրավաշ-
խառռական գործունեությունը ծավալում էին իրենց կողմից
վարկավորվող բազմաթիվ գործակատարների միջոցով: Հայ-
կական աղբյուրներում վարկատու վաճառականը (անկախ
այն բանից, դրամ էր տալիս որպես վարկ թե որոշակի
արժեքով ապրանք) կոչվում էր աղա, իսկ վարկառուն՝ ըն-
կեր. «այսպիսիացս աշխարհաբարիս տուօղ դրամոցն կոչի
աղայ, իսկ առնօղն՝ ընկեր»,—գրված է Աստրախանի հայոց
դատաստանագրքում²¹⁰: Որեւէ մեկին վարկ տալուց առաջ
աղաներն, անշուշտ, ծանոթանում էին նրա անցյալին, առև-
տուր անելու նրա ընդունակություններին ու կենցաղավարու-
թյանը. «Անփորձ մարդոյ փող և ամանաթ մի տալ. եթե դու
ըստուգիւ գիտենաս թէ լէվ ըխտիբարի մարդ այ, ա.բ.դ. հո-
գի էլ հարց ու փորձ արայ, ապոյ թէ հայ փող տուր, հայ
ամանաթ՝ թամասըլօվ և վկայիւ»,—խորհուրդ է տալիս
Կոստանը Ջուղայեցին²¹¹: Այս խորհուրդն հետևում էին բո-
լորը: Զաքարիա Ագուլեցին հայտնում է, որ իր հայրենակից
վաճառական Աստվածապովը, հաշվի առնելով երիտասարդ
Զաքարիայի ուշիմությունն ու ազնիվ վերաբերմունքը այդ
վաճառականի գործակատարներից մեկի նկատմամբ, խոս-
տանում է «մայալ» (հիմնադրամ) տալ նրան, այսինքն՝ վար-
կավորել: Սակայն, դժգուհ է իր խոստումը, հրե տեղեկա-
նում է Զաքարիայի հղբայր Սիմեոնի անպարկեշտ քայլի
մասին (որը Թավրիզում հարբած վիճակում խաբվում է
ոմանց կողմից ու կորցնում իրեն տրված գումարները)։
«Այս պատճառէս,—գրում է Զաքարիան,—Աստուածապովըն

²¹⁰ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 130:

²¹¹ Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 26ր:

էլ ինձ Զաքարիա մայա չէ տալ, թե՛ տանի ախպօրն նման կու տայ խանի, բէկի, կու կորէ»²¹²:

Բժախնդիր քննությունից հետո մեծաշարուտ վաճառականները վարկավորում էին ինքնուրույն կապիտալ շուկանցով անձանց, համապատասխան համաձայնագիր կնքելով նրանց հետ՝ երկու և ավելի վկաների ներկայութեամբ ու հաստատումով: Այսպես վարկավորված անձինք պարտավորվում էին առևտրական երկարամյա իրենց շրջագայությունից վերադառնալուց հետո աղային անձնել վարկ ստացած դրամագլուխն ու շահույթի մեծ մասը: Կալվառնդյակ ժամանակակիցներից մեկն անդրադառնալով այդ վաճառականներին, գրել է. «Որեւէ բարերարի շնորհիվ, որի դրամը շրջանառութեան մեջ են դնում, դուրս են գալիս վաճառականութեան ասպարեզ, իսկ վերադառնալուց հետո շահույթի մեկ քառորդը նրանց սեփականութեանն է դառնում»²¹³: Աստրախանի հայոց դատաստանագիրքը աշխատավարձի մասին այլ տվյալ է հաղորդում, ըստ որի. «Յորժամ որ տայ ի դրամ ումեք, դի աշխատեցէ, ղզլուի դրամին և երից մասանց երկու մասն ի ստացեալ արդեանց և շահաւետութեանցն հասցէ ինքեան և երրորդ մասն աշխատողին», — այսինքն շահույթի ոչ թե 25, այլ $33\frac{1}{3}\%$ -ը²¹⁴:

Ուսումնասիրելով այդ կարգի ընկերությունների մասին մեզ հասած փաստաթղթերը հանդում ենք այն եզրակացութեան, որ երկու աղբյուրներն էլ հավաստի են՝ աշխատավարձը տատանվել է շահույթի 25— $33\frac{1}{3}\%$ -ի միջև: Շահույթի 25%-ը ստանալու պայմանով էր, որ 1682 թ. տեր Դավթի որդի Հովհաննեսը համաձայնագիր ստորագրեց Գերարի որդիներ խոջա Զաքարի և Բմպրումաղայի հետ²¹⁵: Նույնն էր պայմանը նաև Բանդորի որդի Շահվիլու և նրա աղաների միջև: Շահվիլին 1712 թ. Նոր Զուղայում ստացել էր 900 թուման, որպես աշխատավարձ 225 թումանի շա-

²¹² «Զաքարիա Ազուկեցու օրագրութիւնը», էջ 160—161:

²¹³ John Fryer, A New Account of East India and Persia, 1672—1681, vol II, Wiesbaden, 1967, p. 249:

²¹⁴ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 130:

²¹⁵ Տե՛ս «Հովհաննես Զուղայեցու հաշվետումարը», էջ 69:

հր ստանալու պայմանով (շահույթի 25%)²¹⁶։ Այս պայմանագրից ընդամենը երկու տարի հետո, նույն Նոր Զուղայում կնքված մի այլ պայմանագրով (կնքված խոջա Գրիգորի որդի պարոն Սաւփանի և Աղաջանի որդի Սիմեոնի միջև), վարկ ստացող վաճառականը որպէս աշխատավարձ ստանալու էր շահույթի 29%-ը (ստացած 630 թումանից 180 թումանի շահը)²¹⁷։ 1725 թ. Սուրաթում խոջա-Մինասենց առևտրական ընկերությունը 6000 ռուբլի վարկ էր տվել իր գործակատարներից մեկին՝ շահի 27,5%-ը նրան թողնելու պայմանով²¹⁸։

Որպէս աշխատավարձ շահի մեկ երրորդի ($33\frac{1}{3}\%$) մասնատրման մասին կան մի քանի փաստաթղթեր։ Այդ պայմանով 1736 թ. Զինուկաթան (Մադրաս) քաղաքում խոջամալի որդի Հովհաննեսը 210 թուման է տվել Նաղարեթի որդի Հովհաննեսին²¹⁹, 1740 թ. Բասրայում, երկու տարրեր վարկատուներից 330 թուման դրամ է ստացել Մուքելի որդի Հովսեփը²²⁰, իսկ 1747 թ. Աստրախանում Լադարյանները 660 թումանի հոլանդական ասլրանք են տվել Անդրէասի որդի Մովսեսին (որպեսզի նա այդ ասլրանքը տանի Իրան՝ վաճառի և փոխարենը իրանական ասլրանքներ գնելով վերագտնաւ Աստրախան), ստացած շահի $33\frac{1}{3}\%$ -ը որպէս աշխատավարձ ստանալու նույն պայմանով²²¹։

Այն փաստերի համադրությամբ պարզվում է, որ ճիշտ տվյալներ են հաղորդել և Ֆրայերը, և Աստրախանի դատաստանագրքի հեղինակները։ Առաջինը, սակայն, նշել է աշխատավարձի նվազագույն չափը (25%), իսկ երկրորդ աղբյուրը՝ առավելագույնը ($33\frac{1}{3}\%$)։ Տեսանք նաև, որ ըստ պայմանավորվածության, աշխատավարձը կարող էր տատանվել նվազագույն և առավելագույն չափերի միջև։ Այդ

²¹⁶ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 99։

²¹⁷ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1048, էջ 157 (503)։

²¹⁸ Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 161։

²¹⁹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1048, էջ 249։

²²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 132։

²²¹ Տե՛ս «Հարություն Լադարյանի հաշվնամայանը», էջ 162։

մասին Աստրախանի դատաստանադրքում նշված է. «...կամ ալ կերպիւ՝ որպէս և պայմանադրեցեալ իցեն ի մէջ իւրէանց»²²², այսինքն արձանագրված է բանակցությունների ճանապարհով շահութի իրենց հասանելիք մասը որոշելու վարկատուի և վարկառուի իրավունքը:

Ըստ վերոհիշյալ փաստական տվյալների, վարկատուն կարող էր ստանալ շահի $66\frac{2}{3}$ —75%—ը, իսկ վարկառուն՝ համապատասխանաբար 25—33 $\frac{1}{3}$ %: Կային, արդյո՞ք, այդ չափը որոշելու օբյեկտիվ չափանիշներ: Անհրաժեշտ տվյալների բացակայության հետևանքով այդ հարցին որոշակի պատասխան տալ առայժմ հնարավոր չէ: Սակայն պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ վերոհիշյալ պայմաններով վարկավորվող անձինք բաժանվում էին երկու կատեգորիայի: Նրանցից ոմանք ստանում էին վարկ՝ վերցրած գումարը կամ վաճառքի տրվելիք ապրանքն, ըստ իրենց հաշվողության, տնօրինելու լիազատար ազատություն: «Այդպիսին,—ասված է նրանց մասին Աստրախանի դատաստանադրքում,—կարող է ի յամհնայն պատահմունս ըստ դատողութեան իւրում առնել զինչ և կամեսցէ»²²³, իսկ մյուս կատեգորիայի մեջ մտնողները, զրկված լինելով այդ արտոնությունից, պարտավոր էին քայլ առ քայլ հետևելու վարկատուի գրավոր կամ բանավոր հրահանգներին: Պահպանվել են այդպիսի մի քանի փաստաթղթեր, կոչված «օրդնագիր» կամ «խրատոյ զիր», որոնցից է, օրինակ, Հարություն Լազարյանի հրահանգը՝ տրված 1744 թ. Մոսկվայում, իրենց գործակատարներից Հունանին և Աբրահամին: Այս փաստաթղթում մանրամասն նշված է, թե այդ անձինք ինչ են պարտավոր անել 81 հակ բեռները Մոսկվայից Աստրախան հասցնելու համար (գետեր, կամուրջներ անցնելիս խիստ հետևել, որպեսզի բեռները չթրջվեն, Մաբատով հասնելուն պես բեռները փոխադրել քարաշեն պահեստներ, կանգնեցնել պահապան պահեստի դռանը, նաև բարձելիս անձամբ ստուգել նավը, որպեսզի ջուր բաց չթողնի, Վոլ-

²²² «Դատաստանադիրք Աստրախանի հայոց», էջ 130:

²²³ Նույն տեղում, էջ 133:

գայի վրա ավազակների հարձակման վտանգի դեպքում վարձել 15 զինվոր, իսկ հանգիստ ժամանակ՝ բավարարվել 12-ով և այլն): Հրահանգի վերջում ասված է. «Ձնի ճանապարհի ինչ որ դրում անք՝ էնպէս չառէք, որ դուք գիտէք, 2 խոփիտ էլ պոծանելիք չունեք, ամենայն բաների վերայ լէվ մուղիաթ կէք, որ ամենայն ժամ մեր կումպանու դօլվաթի խէրվէք»²²⁴: Բստ աչդ, կարելի է ենթադրել, որ աշխատավարձի չափը որոշելիս հաշվի էր առնվում նաև այդ հանգամանքը: Եթե տվյալ անձնավորությունը գործելու էր ստացած հրահանգների համաձայն, զուրկ լինելով ինքնուրույն որոշումների կայացնելու իրավունքից, վարձատրվելու էր, հավանաբար, նվազագույն չափով, իսկ ինքնուրույն ձեռնարկներով գործելու իրավունք ունեցողները՝ ստանալու էին առավելագույն վարձատրություն:

Վաբկառու վաճառականները, առանց խտրության, իրենց առևտրական շրջադասություններից վերադառնալիս, պարտավոր էին վարկատու ազաներին ներկայացնել հանգամանակից գրավոր հաշվետվություն՝ իրենց գործունեության բոլոր մանրամասների, այն է զնած ու վաճառած ապրանքների, նրանցից չուրաքանչյուրի վաճառքից ստացած շահի և այլնի մասին: Մեզ հասած առևտրական մատյանները հարուստ նյութ են պարունակում այդ կարգի հաշվետվությունների բնույթն ու նրանցում կիրառված հաշվապահության սկզբունքներն ուսումնասիրելու համար: Նըշենք նաև, որ խիստ պատիժներ էին սպասում բոլոր նրանց (ընդհուպ մինչև բանտարկություն, ծեծ), ովքեր ներկայանում էին վարկատուներին առանց պահանջվող ստույգ հաշվետվության²²⁵:

Հայկական միջավայրում մեծ չափերով կիրառվող վարկատվության այս եղանակը, իր բոլոր կողմերով, ճշգրտորեն համապատասխանում էր արևմտանվորոպական երկրներում լայն տարածում գտած և վերը հիշատակված վարկավորման այն եղանակին, որ միջնադարագիտության մեջ հայտնի է

²²⁴ «Հարություն Լադաբյանի նամականի», էջ 21ր:

²²⁵ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 133:

կոմենդա անունով: Այդ անունով հայտնի առևտրական ընկերության մեջ ընդգրկված երկու կողմերից առաջինը՝ դրամի կամ ապրանքի տերը կոչվում էր կոմենդատոր կամ «քնած գործակից»: Սա համապատասխան վարձատրությամբ (մեծ մասամբ ձեռք բերվելիք շահի որոշակի մասը վճարելու պայմանով) վարկավորում էր ինքնուրույն կապիտալ շունեցող վաճառականներին՝ տրակտորներին, լաբորանտներին: Գոյություն ունեին կոմենդայի երկու տարատեսակներ՝ մեկ-կողմյան և երկկողմյան: Մեկկողմյան կոմենդայի դեպքում «քնած գործակիցը» տվյալ պայմանագրով առևտրական գործունեության համար հատկացվող ողջ կապիտալի տերն էր. տրակտորը հանդես էր գալիս սոսկ որպես վարձկան, վաճառական²²⁶:

Այսպես, ուրեմն, կոմենդայի հենց այս տարատեսակին նման ընկերություններ էին հայկական վերոհիշյալ առևտրական ընկերությունները: Հայաստանում, սակայն, ավելի մեծ չափով տարածված էր կոմենդայի երկրորդ՝ երկկողմյան կողմով տարատեսակը, որի էական տարբերությունը մեկկողմյանի նկատմամբ այն էր, որ այս ընկերության մեջ մոտեցող կողմերից առաջինը (աղա, քնած գործակից) մոտեցում էր շրջանառության մեջ դրվող կապիտալի մեծ մասը (սովորաբար $\frac{2}{3}$ -ը), իսկ մյուս մասը մոտեցում էր աշխատող վաճառականն ինքը (ընկեր), որը շրջանառության մեջ դրվելիք կապիտալի մեկ մասի տերը լինելով, հանդես էր գալիս արդեն ավելի լայն իրավունքներով: Ջ. Լույցատույի տրվելաներով, երկկողմյան կոմենդայի դեպքում առևտրական տվյալ գործունեությունից գոյացած շահը կողմերի միջև բաժանվում էր հավասարապես՝ կես առ կես²²⁷: Աստրախա-

²²⁶ Կոմենդայի և նրա տարատեսակների մասին կան մեծ թվով ուսումնասիրություններ: Տե՛ս ԴՅ. Լյուցատո, նշվ. աշխ., էջ 367—370 (աշխատող բերված է իտալական կոմենդայի մասին առկա գրականության բիրտորոշման): Ա. Կ. ԴՅուսելեզով, նշվ. աշխ., էջ 130—133: Ա. Ա. Տա հուձե, Средневековый город и рынок в Илвеции XIII—XV вв., М., 1980, с. 174—180. Դ. Ա. Կուշինա, նշվ. աշխ., էջ 21—24 և այլն:

²²⁷ Տե՛ս ԴՅ. Լյուցատո, նշվ. աշխ., էջ 369:

նի դատաստանագրքում դրամատերերի այս ուրույն միավորումը դիտված է որպես նախորդից տարբեր ընկերություն, շեշտված է նրա մեջ ընդգրկված գործող անդամի ավելի լայն իրավունքների ունենալը: Ասված է, մասնավորապես, որ ի տարբերություն մեկկողմյա ընկերության, որի համաձայնագիրը գրվում էր մեկ օրինակից և պահվում էր կապիտալի տիրոջ մոտ, երկկողմյա ընկերության համաձայնագիրը պետք է կազմվի երկու օրինակից, բոլից մեկը տրվելու է գործող անձին²²⁸:

Երկկողմյան կոմենդայի մասին հայկական սկզբնաղբյուրներում առկա նյութերը հնարավորություն են բնձեռում բացահայտելու որոշ առանձնահատկություններ, որոնք, ըստ երևույթին, հատուկ են եղել հայկական միջավայրին: Կոմենդայի այդ ձևի մասին մեր ձեռքի տակ առկա ամենից օրինակելի տվյալը պահպանվել է 1731 թ.-ից, գրված Ռեշտում: Համաձայնագիրը ստորագրել է մեկ կողմից ումն Հաջի Իբրահիմ, որը հանդես է եկել որպես «քնած կողմ» և մուծել մի մեծ գումար՝ 900 թուման, իսկ մյուս կողմից Լազարյանների առևտրական տան անդամ՝ Մանուկ աղա Աղազարյանը, որն իր «անալմալ»²²⁹ միջոցներից ներդրել է 300 թուման և հանդես եկել որպես գործող կողմ: Ըստ պայմանավորվածության, շահը պետք է կիսվեր «բարաբար»²³⁰:

Այժմ ծանոթանանք «օրինակելի» այս ձևից տարբերվող մի քանի համաձայնագրերի: Դրանց տարբերության հիմնական հատկանիշն այն է, որ գործող կողմը որպես «էնալմալ» մուծում է ոչ թե կապիտալի $\frac{1}{3}$ -ը և համապատասխանաբար

²²⁸ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 133:

²²⁹ Այս բառը գրվում է հավասարապես «անալմալ» և «էնալմալ» ձևերով: Պարսկերեն բառ է, որ նշանակում է «բուն գումար», սակայն հայկական աղբյուրներում գործածված է «տվյալ անձին պատկանող, նրա կողմից վատարկած դրամ» իմաստով: Աստրախանի դատաստանագրքի հեղինակները թարգմանել են «յատուկ ինչ», իսկ մի փաստաթղթի մեջ «յատուկ դատմունք» բառերով: Բրիտանական գրադարան, № 1047, էջ 121:

²³⁰ Տե՛ս «Հարություն Լազարյանի հաշվեմատյան», էջ 7:

շահույթի կեսը ստանալու իրավունք ձեռք բերում, այլ մասնակցում է ընկերության կապիտալի գոյացմանը, տարբեր համամասնությամբ մուծումներ կատարելով: Ըստ այդմ էլ, խիստ տարբերվում է շահույթից իրեն մասնատրվող բաժինը, տատանվելով $33\frac{1}{3}$ —50% -ի միջև:

Այսպես, 1742 թ. Սևիդաբադում Ղազարի որդի Սեթը իս-
չա-Մինասենց ընկերությունից 510 թումանի կապիտալ է
ստանում, բացի այդ, աղաները նրա տրամադրության տակ
են դնում նաև 80 թուման «ամանաթ» (շահով տրված
դրամ): Սեթն իր կողմից մուծում է 40 թուման «էնալմալ»,
այսինքն գոյացված կապիտալի 6,3%-ը միայն: Աշխա-
տավարձը մահմանվում է շահույթի $\frac{1}{3}$ -ի չափով, այսինքն
այնքան, որքան ստանում էին մեկկողմյան կոմենդայի
գործող անձանցից շատերը: Համաձայնագրի վերջում աս-
ված է, որ այն կազմված է 2 օրինակից²³¹:

1740 թ. Բենգալիայում (հայկական աղբյուրներում
գրվում է Բանկալա) ընկերություն են կազմում Պեսարոսի
որդի Գրիգորը, ու 6900 Մադրասի ռուփի կապիտալ է
հանձնում գործող անձ Գրումի որդի Հովհաննեսին, որ-
պեսզի վերջինս, ինչպես ինքն է գրում «աստուծով տանհմ,
թուջարաթ և սովդապարութիւն առնմ»: Այս Հովհաննեսը
«էնալմալ» է մեջ բերում 300 ռուփի, այսինքն գոյացած
կապիտալի ընդամենը 4,2%-ը, սակայն շահույթի 38%-ը
աշխատավարձ ստանալու պայմանով: Համաձայնագրի վեր-
ջում ասված է, որ «ընկերայգիրս Բ. գրեցի մին մաղբուն,
որ մինն իմ աղայ սահիր Գրիգորն ձեռն դրէց՝ տվէց ինձ
Յօվանէսիս, և միւսն ևս՝ Յօվանէսս ձէռն դրի. տվի սահիր
Գրիգորին» (համաձայնագիրը ստորագրել են 4 վկաներ)²³²:

1744 թ. Սևիդաբադում Մուքեղի որդի Սեթաղան Գաս-
պարի որդի Մարկոսին վարկավորում է 6800 ռուփի կա-
պիտալով, Մարկոսը մուծում է 1500 ռուփի «էնալմալ», աշ-
խատավարձը մահմանվում է շահույթի 38,5%-ի չափով²³³:

²³¹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 288 (296):

²³² Բրիտանական գրադարան, № 1048, էջ 78 (408):

²³³ Տե՛ս նույն տեղում, էջ 152 (502), 170 (511):

1741 թ. Մադրասում Ոսկանի որդի Պեսրոսը 7500 ռուֆի վարկ և 1200 ռուֆի «ամանաթ» է տալիս Գրիգորի որդի Հովհաննեսին, իսկ վերջինս «էնալմալ» է մուծում 1000 ռուֆի, այսինքն՝ կապիտալի 13%-ը, շահի 40%-ը որպես աշխատավարձ ստանալու պայմանով²³⁴:

1736 թ. Կալկաթայում Սիմեոնի որդի Հովհաննեսը 300 թուման (6000 Մադրասի ռուֆի) դրամագլուխ է դնում Հարությունի որդի Սարհադի տրամագրության տակ, վերջինս այդ գումարին ավելացնում է 70 թուման (1400 ռուֆի) «էնալմալ», այսինքն ողջ կապիտալի 19%-ը, իսկ աշխատավարձը որոշվում է շահույթի 40%-ի չափով²³⁵:

1712 թ. Եղիա Կարենցին 5 թուման 1100 դիան դրամ է տալիս ոմն Մովսեսի, որն ունեցել է 1 թուման 8900 դիան սեփական դրամ («էնալմալ»), այսինքն գոյացած գումարի 27%-ը: Ըստ պայմանի. «ինչ որ դատում լինի՝ կէսն ինձ, կէսն նրան», այսինքն շահույթի 50%-ը²³⁶:

Այս տվյալներն ամփոփել ենք հետևյալ աղյուսակում (Աղյուսակ № 1):

Աղյուսակի տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, նախ, որ հաստատուն և խստագույնս պահպանվող սակագին գոյություն չի ունեցել երկկողմյա կոմենդայի մեջ քնդգրկված գործող կողմի աշխատավարձը սահմանելու համար, ուստի նրա չափը որոշելիս կողմերի միջև տարվող «բանակցությունները» որոշակի դեր են կատարել: Այդ է պատճառը, հավանաբար, որ Գրումի որդի Հովհաննեսն, օրինակ, շրջանառության մեջ դրվելիք կապիտալի միայն 4,2%-ը մուծած լինելով, շահույթի 38%-ի չափով աշխատավարձ ստանալու պայման է կապել այն դեպքում, երբ 6,3% «էնալմալ» մուծած Ղադարի որդի Սեթը՝ բավարարվել է շահույթի 33¹/₃-ով և այլն:

Աղյուսակի տվյալները բերում են այն համոզման, որ»

²³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 572:

²³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 478:

²³⁶ Տե՛ս «Եղիա Կարենցու Դիվանը», էջ 314:

[illegible]

այնուամենայնիվ, որոշ կապ է եղել «էնալմալի» և աշխատավարձի շափերի միջև: Մինչև 10% «էնալմալ» մուծողները (վերոհիշյալ օրինակը վանց առնելով) բավարարվել են շահույթի $\frac{1}{3}$ -ով: 13—19%-ի շափով «էնալմալ» մուծողների աշխատավարձը բարձրացել է մինչև շահույթի 40%-ը, իսկ ավելի խոշոր՝ 25% կամ 27% «էնալմալ» մուծածները, իրավունք են ստացել շահույթն աղայի հետ կիսելու «բարաբար»:

Հաջորդ կարևոր եզրակացությունն այն է, որ երկկողմյա կոմենդայի մեջ ընդգրկված գործող անձինք, իրենց տնտեսական դիրքով ու սոցիալական գոյավիճակով զգալի շափով աարբերվել են մեկկողմյա կոմենդայի գործող անձերից: Այս վերջիններս, որպես կանոն, սեփական կապիտալ շունեցող գործակատարներ են եղել այն դեպքում, երբ երկկողմյա կոմենդայի մեջ գործող անձի հանդամանքով հանդես են եկել նաև մեծահարուստ վաճառականներ (օրինակ, Մանուֆ Աղաղարյանը, Մինաս Խոջա-Մինասինյը), որոնք վարկ էին վերցնում ոչ թե առաջինների նման ապրուստի միջոցներ հայթայթելու, այլ առևտրաֆինանսական իրենց գործունեությանն ավելի մեծ թափ հաղորդելու նպատակով: Նրանցից ոմանք, միաժամանակ, ընկերանում էին մի քանի դրամատիկների հետ, իրենք ևս՝ հանդես գալով վարկատուի դերով²³⁷:

Պահպանված մի քանի վավերագրեր հնարավորություն են տալիս, նույնիսկ, մոտավոր հաշվումներով պարզելու թե նյութական ինչ միջոցների տեր են եղել երկկողմյան կոմենդայի գործունյա անդամներից շարքայինները, նրանք, ովքեր մեծ շափով աարբերվելով խոջայական ամենափարթամ գերդաստանների ներկայացուցիչներից, միջին տեղ էին գրավում

²³⁷ Այդպիսի բազմաթիվ վաճառականներից էր, օրինակ, Խոջա-Մինասինյ գերդաստանի նշանավոր անդամ և իր պապի անունը ժառանգած էմեհադի որդի Մինասը: Բրիտանական գրադարանի փաստաթղթերից մեկում նրա մասին ասված է. «Մինասն խօջայ Մուֆլինց մուղարբայ ընկեր այ, և իւրն էլ հատուկ էնալմալ փող և ընկեր կամ սովդապարութիւն ունի»: Բրիտանական գրադարան, № 1047, էջ 182:

հայ վաճառականության հիերարխիայի մեջ: Դրանցից է օրինակ, Շահրիմանյանների գործակատարներից Մանվելի որդի խաչիկը, որի կտակը, կազմված Աղարիայի 128 թ. դամա ամսի 27-ին, հասել է մեզ: Այդ օրերին նա նոր էր վերադարձել առևտրական ճամփորդությունից՝ ծանր առողջական վիճակում: Իր կտակով խաչիկը իրեն «վեբիլ» (լիազորված անձ, կտակակատար) է կարգում խոջա Մուքելի որդի պարոն Հարությունին, պատվիրելով նրան՝ «ինչ ինձ խեղ բերել ամ՝ ծախի, առնելիքս առնի, ինչ փող որ մնայ՝ ուր քշտին պախի, մինչի բարով իմ եղբայր պարոն Օվայդէմն գոյ»: Հովակիմը պետք է իրենց հայր Մանվելի Շահրիմանյան աղաների: հետ ունեցած ընկերության հաշիվները հանգամանորեն պարզեր և իրենց հասանելիք շահն ու էնալմալ գումարները ստանալով, իրեն՝ խաչիկին, հասանելիք բաժինը նրա աշխատանքով վաստակածի հետ միասին տնօրինի հետևյալ կերպ. կատարեր իր թաղման ծախսերը, 20-ական թուման նվիրի Ամենափրկիչ վանքին ու էջմիածնին, 55 թուման՝ նոր Զուղայի մյուս եկեղեցիներին, 10 թուման՝ ողորմություն աղքատներին: Ուրեմն, 105 թումանից ավելի հատկացվում էր բարեգործական նպատակների: Մնացած գումարները պետք է բաժանվեին երկու մասի. մեկ մասը խաչիկի մորը՝ Քաթրինին, իսկ մյուսը՝ եղբայր Հովակիմին²³⁸:

Ծանոթ լինելով այս կարգի այլ կտակների, կարելի է պնդել, որ մորն ու եղբորը հասանելիք բաժինը շատ ավելի է եղել, քան խաչիկը նախատեսել է իր հոգու կարիքների բավարարման համար²³⁹: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ Շահրիմանյանների գործընկեր Մանվելի որդի խաչիկն իր կտակը, ըստ որոշ տվյալների, գրել է ոչ ծեր հասակում: Նա կտակը կազմելիս ունեցել է կուտակած առնվազն 300 թուման կապիտալ:

²³⁸ Պահպանվել են սույն կտակի 3 ընդօրինակություններ: Բրիտանական զբաղարան, № 1047, էջ 121, 148, № 1048, էջ 517:

²³⁹ Պահպանվել է նաև խաչիկի մայր Քաթրինի կտակը: Բրիտանական զբաղարան, № 1047, էջ 119, 140, № 1048, էջ 518:

Ուսումնասիրելով վենեսուելյան կոմենդայի («կոլեգան-
ցա») մեջ ընդգրկված կողմերի սոցիալ-տնտեսական գոյա-
վիճակի և փոխհարաբերությունների հարցերը, որոշ ուսում-
նասիրողներ հանգել են այն հետևություն, որ «քնած գոր-
ծակիցները» հղել են կապիտալիստներ, իսկ նրանց գործըն-
կերները («լաբորանտներ», «տրակտատորներ»)՝ շահագործ-
վող գործավարներ: Զ. Լուցցատոյի կարծիքով, սակայն, այդ-
պիսի տարբերակման համար որևէ հիմք չկա: Ըստ նրա, «լա-
բորանտներ», «տրակտատորներ» կոչվածները միաժամանակ
հանդես են եկել որպես «քնած գործակիցներ» ուրիշների
նկատմամբ, հետևաբար և այդ կարգի բոլոր դեպքերում
գործ ունենք ոչ թե աշխատանքի ու կապիտալի միջև առկա
հարաբերության, այլ «կապիտալիստների» (իմա դրամա-
տիկների — Շ. Խ.) միմյանց նկատմամբ ունեցած փոխհա-
րաբերությունների²⁴⁰: Իսկ թե ինչպես է հղել կողմերի վի-
ճակը հայկական այդ կաղմակերպություններում, կարելի է
իմանալ որոշակիորեն զատելով միմյանցից կոմենդայի վե-
րը քննարկված երկու՝ մեկկողմյան և երկկողմյան տար-
բերակները:

Մեկկողմյան վարկատվության գործող անձը, ըստ Աստ-
րախանի դատաստանագրքի, պարտավոր էր վարկատուի
առաջին իսկ պահանջով, ուր էլ որ գտնվեր, անմիջապես
ներկայանալ աղային և հաշիվ տալ իր գործունեության մա-

²⁴⁰ Տե՛ս Н. П. Соколов, Дж. Луццато. Очерки экономичес-
кой истории Венеции, Падуя, 1954. Jino Luzzato. Studi di storia
economica veneziana, Padova, 1954, XI, p. 310. «Средние века», X,
1957, с. 249.

Զ. Լուցցատոն համոզիչ կերպով ցույց է տվել, որ ոչ մի հիմք նման
սահմանափակման համար չկա՝ «լաբորանտները», «տրակտատորները»
միաժամանակ հանդես են գալիս որպես «քնած գործակից» մյուսների
նկատմամբ, և, հետևաբար, այդպիսի դեպքերում մենք գործ ունենք ոչ
թե աշխատանքի և կապիտալի միջև հարաբերությունների, այլ «կապի-
տալիստների» (առևտրական կապիտալի տերերի) միմյանց նկատմամբ
հղած փոխհարաբերությունների հետ: Дж. Луццато, նշվ. աշխ., էջ
104—105:

սին²⁴¹։ Այս հանգամանքը արձանագրվել է նաև համաձայնադրի մեջ։ 1736 թ. Մադրասում կնքված մի համաձայնագրի մեջ, օրինակ, վարկառու նաղարի որդի Հովհաննեսը իր այդ պարտավորության մասին գրել է հետևյալը. «Նւ այս շարթն էլ արարի, որ իմ աղայ պարոն խոջամալի որդի Յովանէսն ինչ վախտ կամ հոր տեղ որ կամենայ՝ իմ սարմայէն յինք առու, ես Յովանէսըս իմ սարմայէն, իւր սամաստուծոյ պարգևած շախտվն և խսէպտվն բի օզր տամ իմ աղին կամ իւր վաքլին»²⁴²։

Դատաստանագրքի կետերից մեկ ուրիշը արգելք է սահմանում վարկառու գործընկերոջը առանց աղայի (դատաստանագրքում «տէր» բառն է կիրառված) գիտության մեկ ուրիշի հետ գործ բռնելու²⁴³։ Աղաները խստորեն հետևել են ու պատասխանատվության ենթարկել այս կարգը խախտողներին։ Այս մասին պարզ վկայություն կա 1747 թ. հուլիսի 21-ին Բասրայում գրված և Սուրաթ ուղարկված մի նամակի մեջ, որը փաստորեն ընդարձակ մի հաշվետվություն-բացատրագիր է։ Նամակագիրը՝ Մկրտիչ Մնացական Իզնատիօսը, դիմելով իր աղա պարոն Սարգսին, երկար ու բարակ բացատրություններ է տալիս, թե ինչու ինքն առանց նրա գիտության դիմել է Սպահանի պարոններից մեկ ուրիշի ու նրանից ևս վարկ խնդրել։ «Շատ անարգանք իր հրայմայել առ բանդիս»,— գրում է նա, և իր այդ քայլը բացատրելով տնտեսական անմխիթար կացության մեջ, հավաստիացնում է, որ մինչև իր կյանքի վախճանը մնալու է իր աղայի հովանու տակ և այլն²⁴⁴։

Աստրախանի դատաստանագրքում կետեր կան նաև այն մասին, որ վարկ ստացած գործընկերները իրավունք չունեն առանց աղաների գիտության դրամ կամ ապրանք ուղարկել իրենց ընտանիքների անդամներին, առևտրական շրջագայությունից հայրենիք վերադառնալիս, առաջին հերթին, պետք է

²⁴¹ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 133։

²⁴² Բրիտանական գրադարան, № 1047, էջ 249։

²⁴³ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 133։

²⁴⁴ Բրիտանական գրադարան, № 1048, էջ 184ա։

մտնեն աղայի տուն և այնտեղ բացեն իրենց հետ բերած ապրանքների բեռները և այլն, և այլն²⁴⁵։ Իրավատնտեսական այս վիճակը հստակությամբ արտացոլված են նույն ժամանակաշրջանում գրված մի շարք վավերագրերի մեջ։ XVII դ. 70-ական թվականներին Նոր Զուղայում քարողչական գործունեություն էր ծավալել Հոռոմում ուսում ստացած հայ-կաթոլիկ վարդապետ Բարսեղ Արղրումցին։ Նրա քայքայիչ գործունեությունը խափանելու նպատակով Նոր Զուղայի առաջնորդ Դավիթ արքեպիսկոպոսը, 1679 թ. մայիսի 10-ի իր կոնդակով դիմում է Զուղայի վաճառականությանը, բացահայտում վերոհիշյալ քարողչի թշնամական արարքները և խստորեն պատվիրում՝ որևէ հարարություն մեջ չմտնել նրա հետ. «ով ոք նոցա (Բարսեղի ու կաթոլիկների—Շ. Խ.) հետ այլ խօսի, կամ առևտուր առնէ, կամ քսոն տայ, կամ օդէն թողու, կամ ինքն նոցա օդէն գնայ նվուխալ եղիցի և կապեալ»,—գրում է նա։ Միաժամանակ արքեպիսկոպոսը հարկ է համարում զգուշացնել ղանցառուներին, որ իր հրահանգներին՝ շենթարկվողների նկատմամբ խիստ միջոցների է դիմելու. «Տեղս այնպէս առնեմք զնոցա,—շարունակում է նա,—որ մէկ դէկանի է՛տարար շուննայ, և իւրեանց աղային ասեմք, ապրանքն ձեռացն առնուլ տամք»²⁴⁶։

Այսպիսով, սլարդ է դառնում, որ աղաներն իրավունք են ունեցել ցանկացած պահին հետ պահանջելու իրենցից կախման մեջ գտնվող վաճառականներին հանձնած կապիտալն ու ապրանքը։ Մի վկայություն ևս այդ կապակցությամբ. Վանջալի անունով մի վաճառական, վարկավորված լինելով Խոջա-Մինասենց առևտրական ընկերությունից, «տասներկու տարի շարունակ ի տանէ դուրս և ի դարիպու-

²⁴⁵ Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 133—134, «Վասն վաճառականութեան կարգաց» ենթագլխի 12—16-րդ կետերը։

²⁴⁶ Propagande fide Archive. Congressi Arment, vol III, p. 196. Կոնգալի լուսանկարը պահվում է Մատենադարանին նվիրած Հ. Գյուրտյանի լուսանկար պատճենների հավաքածուի մեջ։

թիւան մեջ» Թափառելուց հետո, 1710 թ. վերջերին պատ-
 րաստվել է Նոր Զուղա վերադառնալ և իր պարոններին
 հաշվատու լինել: Սակայն, մինչ այդ նա այցելում է էջմիա-
 ծին ու խնդրում Աղեքսանդր կաթողիկոսին հատուկ գրու-
 թյամբ դիմել Սեթաղա և Սաֆրաղ խոշա-Մինասյաններին,
 որպիսովի սրանք «խղճմտանքով», առանց «նեղութիւն հա-
 սացանելու», «արդար դատաստանով» փակեն իր հետ ու-
 նեցած հաշիւները²⁴⁷:

Պահպանվել է կաթողիկոսի այդ նամակը (գրված
 1710 թ. դեկտեմբերի 6-ին), որից հետևում է, թի ինչպիսի
 ահ ու սարսափով էին համակված լինում ուրիշի վարկով
 առևտրի ասպարեզ մտած վաճառականները՝ իրենց աղանե-
 րին ներկայանալու նախօրեին: Այս փաստերի լույսի տակ
 միանգամայն հասկանալի է դառնում թի ինչու Մկրտիչ
 Մնացական Իգնատիոսը վերը հիշատակված նամակում իր
 աղայի առջև իրեն՝ նրա ծառա ու պարտական է համա-
 րում²⁴⁸ կամ էլ Տեր Դավթի որդի Հովհաննեսը հեռավոր Տի-
 բեթում իր հաշվեմատյանը կարգավորելով ինչու է հիշում
 իր աղային ու գրում, որ «ողջ ուրն ենք ծառայ, դոր օր կուզէ՝
 կու խըսէպէ» կամ էլ աղաչում Հիսուսին խղճալ իրեն և աղա-
 ների մոտ պարզերես հանել²⁴⁹:

Ծանոթանալով այս բոլոր փաստերին, դժվար չէ հան-
 դել այն եզրակացության, որ մեկկողմյա կոմենդայի մեջ
 ընդգրկված վարկառու վաճառականները փաստորեն վարձ-
 կան գործավարներ են եղել ու շահագործվել վարկատուի
 հանգամանքով հանդես եկող «քնած գործընկերների» կող-
 մից: Սակայն, դա չի խանգարել, որ նրանցից ոմանք մի
 քանի հաջողակ առևտրական շրջագայություններից հետո,
 կարողանային կուտակել շոշափելի կապիտալ ինքնուրույն
 գործ սկսելու կամ երկկողմյա կոմենդայի մեջ ընդգրկվելու
 համար: Եղել են, իհարկե, այնպիսիները, որոնք քայլ առ

²⁴⁷ Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 150:

²⁴⁸ Տե՛ս Բրիտանական դրադարան, № 1048, էջ 134ա:

²⁴⁹ «Հովհաննես Զուղայեցու հաշվատմարը», էջ 20:

քայլ ընդարձակելով առևտրավաշխառուական իրենց գործունեության շրջանակները, դարձել են մեծահարուստ վաճառականներ՝ իրենց համար տեղ ապահովելով խոշապական դասի բարձրագույն ուղորտներում: Զաքարիա Ազուլեցին, օրինակ, 1647 թ. առևտրի ասպարեզ էր մտել ունենալով միայն 150 մառչիլ արժողության մեկ հակ մետաքս, սակայն, շնայած հսկայական կորուստների, իր հայրենի քաղաքի ունեոր վաճառականներից մեկն էր դարձել: Նա տեղեկություններ է հաղորդում իր հայրենակից խոջա Ավագի մասին, որը որք մեծանալով և «բնաւ ունչինչ» շունենալով, կարողացել էր XVII դ. 60-ական թվականներին մոտ 3000 թուման կապիտալ դիզել²⁵⁰: Ըստ այդմ, բոլորովին էլ անհավատալի չէ Մկրտիչ Իգնատիոսի հաղորդած տվյալն այն մասին, որ բազմաթիվ վարկ ստացած գործընկերներ «ուրէնց աղինոց սարմայիցն ելէլի փողեր ան խասացուցել»²⁵¹:

Այսպիսով, ուսումնասիրելով երկկողմյան կոմենդայի մեջ ընդգրկված գործող անձանց իրավատնտեսական հարաբերությունները, տեսանք, որ նրանք մեծ չափով տարբերվելով նախորդներից, հանդես էին գալիս «քնած գործակցի» կողքին որպես հավասար իրավունքների, իսկ հաճախ նաև ոչ պակաս տնտեսական միջոցների տեր վաճառականներ: Երկկողմյա կոմենդաների գործող անձինք, ինչպես տեսանք, երբեմն մասնակցում էին ընկերության հիմնադրմանը՝ մուծելով պահանջվող կապիտալի նվազագույն մի մասը միայն՝ 4—6%: Պետք է ենթադրել, որ այդ գումարը նշանակություն էր ստանում ոչ այնքան նախաաւսվող գործառնության ծավալն ընդարձակելու առումով, որքան ցուցանիշ էր այն բանի, որ տվյալ գործընկերը իրավական իր վիճակով տարբերվում էր արդեն մեկկողմյան կոմենդայի երկրորդ դեմքից ու հանդես էր գալիս որպես հիմնական կապիտալ տրամադրող կողմին համահավասար,

²⁵⁰ Տե՛ս «Զաքարիա Ազուլեցու օրագրությունը», էջ 85:

²⁵¹ Բրիտանական զրադարան, № 1048, էջ 184ա:

իրավական նույն մականորդակի վրա գտնվող անձնավորութ-
յուն:

4. Դրամական ավանդներ

Շրջանառության մեջ դրած իրենց կապիտալներն ավե-
լացնելու համար ջուղահայ խոշոր կոմպանիաները նաև ա-
վանդներ էին ընդունում, ինչպես իրենց անդամներից, այն-
պես էլ կոմպանիայի հետ անմիջական առնչություն չունե-
ցող անձանցից, որոնք որոշակի տոկոս ստանալու համար
նրանց էին հանձնում իրենց ունեցած և առևտրավաշխա-
ռուական շրջանառության մեջ շրջված կապիտալները (հիմ-
նականում ոչ մեծ գումարներ): Այդ ավանդները մեր աղբ-
յուրներում կոչվում են «ամանաթ»:

Հարություն կազարյանի 1755. թ. Մոսկվայում ռուզ-
լամայի մի գրանցումից իմանում ենք, օրինակ, որ կա-
զարյանների գործակատարներից Բեգումը, հրե Սպահանից
ուղևորվել է Ռուսաստան, նրա քույրը՝ Զարիբխանը 50 թու-
ման «ամանաթ» է տվել եղբորը, որպեսզի նա Մոսկվայում
հանձնի Հարությունին՝ շրջանառության մեջ դնելու համար²⁵²:

Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի միաբաններից Դևորգ
վարդապետը 1744 թ. Մադրասում երկու տարբեր վաճառա-
կանների՝ տևր Գրիգորի որդի Հակոբին ու Զաքարի որդի Ա-
վետիքին, «ամանաթ» է հանձնում մեկին 60 մադրասի հուն,
մյուսին՝ 40, տալով լիակատար իրավունք այդ կապիտալը
ցանկացած վայրում ու ձևով գործի մեջ դնելու համար («ինչ
տեղ ևս սովորագարութիւն առնմ կամ ինչ տեղ խէրիաթ տես-
նեմ՝ բանացանեմ»²⁵³ կամ «որպէս ևս խնրիաթ տեսնեմ ջու-
քամում բանացանեմ»²⁵⁴): «Ամանաթ» ստացողները, ինչ-
պես նշված է վերոհիշյալ երկու համաձայնագրերի մեջ էլ,
իրենց անպատասախանատու են համարում հնարավոր պա-

²⁵² Տե՛ս «Հարություն կազարյանի հաշվմատյան», էջ 246:

²⁵³ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 261 (267), (273):

²⁵⁴ Նույն տեղում, էջ 264 (277):

տահարները ու կորստի դեպքում («ծովի և ցամաքի ջուրամն ինձանէ անգիտելի այ և անջուաթ»,—գրված է առաջին համաձայնագրում: «Տէր աստուած ջուրամն ոչ տայ, ամենայն կոշմանէ ինձանէ անգիտելի այ»,—ասված է մյուս համաձայնագրում): Այսպիսով, «ամանաթ» տվողները ակնկալելով որոշակի համամասնությունը (իրենց տված կապիտալի շափով) շահվել տվյալ վաճառականի կամ տվյալ կոմպանիայի հաջող գործունեությունից, նկատի էին առնում նաև կորստի կամ վնասի պարագան:

«Ամանաթ» կոշվող մոծումների մեծ թվով օրինակներ կան երկկողմյան կոմենդայի բազմաթիվ համաձայնագրերի մեջ: Բերենք միայն մեկ օրինակ. Ոսկանի որդի Պետրոսը 1741 թ. Մադրասում Գրիգորի որդի Հովհաննեսին տալիս է 7500 ռուբլի «սարմայա» (վարկ), բացի դրանից նաև 1200 ռուբլի «ամանաթ»²⁵⁵: Տվյալ դեպքում վարկատուն և «ամանաթատուն» նույն անձնավորություններն են, և եթե համաձայնագրի մեջ առանձին-առանձին նշված են վարկ տրվող կապիտալի երկու բաղկացուցիչ մասերը՝ «սարմայա»-ն և «ամանաթ»-ը, ապա պետք է հղրակացնել, որ դրանց միջև հղել է էական տարբերություն: Մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ վարկ տրված բուն կապիտալը («սարմայա») հաջող առևտրի դեպքում մեծ շահ էր բերելու և՛ վարկատունին, և՛ վարկառուին: Մարգարի որդի խոջա Հովսեփի կտակի մեջ (կազմված 1696 թ.) կան տվյալներ այն մասին, որ մեծահարուստ այդ վաճառականը 1666—1696 թթ. Հնդկաստանում և Իրանում ծովային ու ցամաքային առևտուր անելով միջին հաշվով տարեկան 60%-ի շահ է ունեցել²⁵⁶: Ըստ այդմ, Ոսկանի որդի Պետրոսը Գրիգորի որդի

²⁵⁵ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1048, էջ 78 (408):

²⁵⁶ Տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 180—183, 186: Շահվելու որդի Սարհաղը 1712—1718 թթ. Իրանից Ռուսաստան տարած ապրանքներից շահվել է. մետաքսի վաճառքից մոտ 60%, խնկի վաճառքից՝ 50%, թանկագին քարերի վաճառքից՝ 120% և այլն: Շ. Լ. Խաչիկյան, Շահվելու որդի Սարհաղի հաշվմատյանը որպես հայ-ռուսական տնտեսական կապերի սկզբնաղբյուր, էջ 106—107:

Հովհաննեսին 7500 ռուբլի վարկ տալով, նույնպես, կարող էր ակնկալել մեծ շահ, որ պայմանավորված էր բաղմամբիվ հանգամանքներով (վարկառու վաճառականի հմտությանը և ճարպկությանը, այս կամ այն ապրանքի տվյալ տարվա շուկայական դներով, ծովային ու ցամաքային ճամփորդության հաջողակությանը և այլն: «Ամանաթ» տրված 1200 ռուբլի շահը, սակայն, առնչված չի հղել առևտրից ակընկալվող շահի հետ, այլ ըստ երևույթին, տրվել է տարեկան որոշակի շահ ստանալու պայմանով, ճիշտ այնպես, ինչպես շահույթ էին բերում տարբեր մեծահարուստ անձանց մոտ «մուղաթի» դրված՝ շահով տրված կապիտալները:

«Մուղաթի» մասին ևս մեր աղբյուրներում կան ուշադրության արժանի բաղմամբիվ հիշատակություններ: Մարգար Շահրիմանյանի 1700 թ. օգոստոսի 10-ին Նոր Զուղայում կաղմված կտակից պարզվում է, որ նա Վենետիկի տարբեր դրամատներում տարեկան 4,5% կամ 4,75% շահ ստանալու պայմանով պահ է դրել խոշոր գումարներ՝ ընդամենը՝ 332 հազար դոկատ, որից տարեկան ստացվել է 15.055 դոկատ շահ²⁵⁷:

Բանկային այդպիսի գործարքներ, իհարկե, ոչ այդքան մեծ չափերով, կատարվում էին նաև Նոր Զուղայում: Այդ մասին կան մի շարք վկայություններ: Այսպես, օրինակ, Փանոսի որդի խոջա Մինասի (խոջա-Մինասենց կոմսանիայի հիմնադրի) 1700 թ. հունիսի 8-ին կաղմված կտակում հատուկ կետ կա այն մասին, որ իր որդիները պարտավոր էին ավարտել իր կողմից հիմնադրված հոգետան (աղքատանոցի) կառուցման աշխատանքները: Այդտեղ պատասպարվողների ապրուստի միջոցները հայթայթելու համար մեծահարուստ այս խոջան կուտակում է 50 թուման դրամ, պայմանով որ այդ կապիտալը Նոր Զուղայի առաջնորդի և երկու «աստվածասեր քեդխուղաների» խորհուրդներով (մասլահաթովն) սխուր է շահով տրվի հար-

²⁵⁷ Տե՛ս Լ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 110—111:

մար մի տեղ, որպեսզի «տարէց տարի շահն առնուն և հոգևտան նստողացն նաֆաղա տան»²⁵⁸,

Խոջա-Մինասինց զերդաստանի անդամների 1739 թ. համաձայնագրի մեջ ասված է, որ խոջա Մինասի շորս որդիների ժառանգներին միավորող կոմպանիայի լիիրավ անդամ շորս ընտանիքներից յուրաքանչյուրն ամեն տարի իրավունք ունի կոմպանիայի շահույթներից ստանալու և ծախսելու ընդամենը 50 թուման: Պակաս ծախսողն իրեն հասանելիք դրամի մնացած մասն իրավասու է օգտագործելու, ըստ իր հայեցողության. «մուդաթի տայ կամ սովդագարութիւն առի»²⁵⁹: Ըստ այդմ, դրամը «մուդաթի» տալը կամ շահով որևէ կոմպանիայի կամ անհատ որևէ վաճառականի տարեցտարի, ըստ անհրաժեշտության, տոկոս ստանալու պայմանով հանձնելը սովորական երևույթ է եղել ջուղահայ միջավայրում: Որևէ առևտրական ընկերության որոշակի տոկոս շահ ստանալու պայմանով դրամագլխի «մուդաթի» տալու կամ «ամանաթ» տալու միջև մեծ տարբերություն չի եղել: Նրկու դեպքում էլ դրամ տվողը ակնկալում է որոշակի շահ. «ամանաթի» դեպքում իմանալով նախօրոք, որ իր դրամն ընդունող վաճառականը այն շրջանառության մեջ է գնելու, ուստի, մեծ հավանականությամբ, շահվելու է²⁶⁰: Սակայն, չի բացառված և այն հանգամանքը, որ փոխառու վաճառականը կարող է և զժբախտ պատահարի հանդիպել ու կորցնել իր ունեցածը կամ վնասով դուրս գալ: «Մուդաթի» տրվող դրամի տիրոջ համար, սակայն, նշանակություն չի ունեցել այն հանգամանքը, թե դրամ ստացողն ինչպես է տնօրինելու այն: Ամեն տարի,

²⁵⁸ Նույն տեղում, էջ 144—145:

²⁵⁹ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 298 (312):

²⁶⁰ Նշենք, որ «ամանաթ» տերմինը կիրառվել է նաև այլ իմաստով. «Երբ որևէ մեկն իր ապրանքը մեկ ուրիշի ձեռքով առարի մի այլ վայր վաճառելու, նրա փոխարեն այլ ապրանք գնելու ու հետ ուղարկելու համար, այդպիսիներին աշխարհարար լիզվով կոչում են ամանաթբար»,—ասված է Աստրախանի հայոց Դատաստանազրքում, էջ 130:

անկախ իր զործունեության տեսակից ու արդյունքից, նա պարտավոր է եղել հանձնել դրամի տիրոջը կամ նրա կողմից լիազորված անձին՝ սահմանված տոկոսը: Թե որքան է կադմել այդ տոկոսը նոր Զուլայում՝ հայտնի չէ: Փոխանցային պարտամուրհակի կիրառության հարցերին նվիրված էջերում կտեսնենք, որ փոխատվության ամենատարածված տոկոսը եղել է տարեկան 6% կամ 9%: Կարելի է ենթադրել, որ նույնն է եղել նաև շահով տրված կապիտալի տոկոսը:

5. Վարձկան մշակեր և չարչիներ

Հայ վաճառականները լայնորեն օգտվում էին նաև վարձկան մշակների ծառայությունից: Նրանց պարտականությունն էր հսկել բեռների ապահով տեղափոխությունը, դիշերները պահակություն անել, կերակուր պատրաստել ու կատարել իրենց աղաների ամեն կարգի ու բաղմաղան կարգադրությունները: Հայտնի է, որ Շահրիմանյանների կոմպանիայի տարբեր օղակներում աշխատում էին 50 ծառաներ²⁶¹: Մեծ թվով ծառաներ ունեին նաև մյուս նշանավոր խոջայական գերդաստանները: Դրանց մասին հիշատակություններ կան ռուսական արխիվներում սլահպանված այն փաստաթղթերի մեջ, որոնք վերաբերում են հայ վաճառականների ժամանման կամ երկրից դուրս գալու փաստերին: Նրանք հայկական աղբյուրներում, մեծ մասամբ, կոչվում են աղա կամ նոքար, իսկ վերոհիշյալ պաշտոնական փաստաթղթերի մեջ հիշատակված են որպես кашевар կամ челядник: 1675 թ. մի վավերագրում, օրինակ, նշված է, որ Իրանից Մոսկվա են ժամանել ջուղայեցի 8 վաճառականներ «և նրանց հետ 7 հոգի կաշեվար»²⁶², իսկ 1707 թ.

²⁶¹ *Sté u R. Gulbenkian. Philippe et Zagly, Marchand Arménien de Julfa et l'établissement du commerce Persan en Courlande en 1696, p. 366.*

²⁶² «Армяно-русские отношения в XVII веке», т. I, с. 117.

վաճակապետներից մեկում՝ որ ժամանել են «...ջուղայեցիներ, հայկական ընկերության անդամներ Արիշան Արաբետովը, Հարություն Տարասովը 12 ընկերներով... և 20 նոքարների»²⁶³։

Այստեղ և տասնյակ նման այլ փաստաթղթերում «հայկական ընկերության անդամները (կոմսականչլիկները)» ինքնուրույն կապիտալով առևտուր անող վաճառականներն են, «ընկերներ» կոչվածները՝ նրանց կողմից վարկավորված անձինք, իսկ նոքարները («չեկյադնիկները» կամ «կաշնվարները»)՝ նրանց վարձկան ծառաները։

Գոյություն են ունեցել ծառաների վարձակալման տարբեր պայմաններ. վարձվում էին կամ որևէ առևտրական ճամփորդության ողջ ընթացքում ծառայելու կամ որևէ մի որոշակի հանձնարարություն կատարելու կամ էլ որոշակի մի ժամանակահատվածում (սովորաբար 1 տարի ժամանակով), ամեն տեսակի ծառայություններ կատարելու համար։ Աղայի ու նոքարի միջև երբեմն նաև դրավոր համաձայնագրեր էին կնքվում, որոնց մեջ մեկ առ մեկ նշվում էին նոքարի պարտականություններն ու պահանջվող վարքագծի կետերը, որոնցից են, օրինակ, վարձակալի բոլոր հրամանների անթերի կատարումը, շատելը, ոգելից խմիչք չգործածելը, չծխելը, «բերանն, ձեռն, ոտն յիստակ» պահելը, տան գաղտնիքը դուրս չհանելը, վարձակալողի կողմից սիրվածը սիրելն ու ատելին ատելը, բարեկամի ու թշնամու մասին լուր տալը և այլն²⁶⁴։ Աշխատավարձը տրվում էր կամ դրամով կամ էլ դրամով և «խորակ-փուշակով» (ուտելիք-հագնելիքով), հրբեմն նաև դրամով ու միայն հագնելիքով, կամ դրամով ու միայն ուտելիքով։ Օրինակ, Մոսկվայի հայ քահանա տեր Ավագը մեկ տարի ժամանակով նոքար էր վարձել թավրի-

²⁶³ «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, с. 15, 28 և այլն։

²⁶⁴ Պահպանվել են 1716—18 թթ. Մոսկվայում կնքված ալդայի 3 համաձայնագրեր՝ տեր Ավագի ու նրա կողմից վարձված նոքարների միջև։ Տե՛ս «Սեդիա Կարնեցու Դիվանը», էջ 322-325։

զեցի նազարի որդի Գրիգորին, տարեկան 2,4 ռուբլի աշխատավարձով և հագուստ տալու պայմանով²⁶⁵:

Տեր Դավթի որդի Հովհաննեսը 1686 թ. Ագրայում, երբ պատրաստվում էր Տիրեթ մեկնելու, վարձել էր երկու նոքար (ինքն ավելի շատ «տղա» է անվանում) տեղի Պետրոսի որդի Պողոսին, տարեկան 50 ռուբլի աշխատավարձով և «խորակ-փուշակով» և Ղալմազ Պետրոսին՝ 40 ռուբլի աշխատավարձով, «խորակ-փուշակով»²⁶⁶:

Հարություն Լաղարյանի նամակներէ մեջ ևս բովանդակալից տեղեկություններ կան նոքարների մասին. հիշատակված են Կիրակոսը, Գրիգորը, Մկրտումը, Նուրին, Հովսեփը, Աբրահամը, Անդրեն, վրաստանցի մի հայ քահանայի որդի և ուրիշներ: Պարզվում է, որ վարձկան այդ ծառաները իրավունք չեն ունեցել դրամ պահելու, իսկ առևտրական որևէ գործարք անձամբ կատարելը նրանց իսպառարկելված է եղել: Վերոհիշյալ տեղի Պետրոսի որդի Պողոսն ունեցել է 12 ռուբլի դրամ: Վարձվելով նոքար, նա այդ դրամն Ագրայում հանձնել է իր աղա Հովհաննեսին, որն էլ նրա անունով գնել է համապատասխան ապրանք՝ Տիրեթում վաճառելու համար: Տիրեթում Հովհաննեսն այդ երիտասարդին վռնդել է ծառայությունից, վերադարձնելով ոչ թե նրա դրամով գնած ապրանքը, որ կարող էր վաճառվել կրկնակի արժեքով, այլ Ագրայում նրանից ստացած 12 ռուբլին²⁶⁷: Հարություն Լաղարյանն իր եղբորը՝ Մանուկին, դրած նամակներից մեկում ասում է, որ իրենց ծառաներից Հովսեփին Ամստերդամում գտնվող պարոն Առաքելին թաքուն նամակներ է գրել ու խնդրել իր համար պարտքով ապրանք ուղարկել, սակայն, ինչպես և սպասելի էր, պարոն Առաքելը պատասխան նամակում հարցում է արել, թե «էտ գրէրն քոյ աղին ասմունքով աս գրում, թե՞ քոյ գլխու վեր կալման գրում» հասկացնելով, որ ոչ միայն աղայի գիտությամբ պետք է այդ կարգի դիմում կատարվի, այլև՝ աղան,

²⁶⁵ նույն տեղում:

²⁶⁶ «Հովհաննես Զուղայեցու հաշվետվարը», էջ 134—135:

²⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

և ոչ թե նոքարը պետք է լինի դիմողը²⁶⁸։ Կիրակոս ու Գրիգոր «տղաները», ըստ երևույթին, իրենց դրամը հանձնած են եղել հենց Հարությունին։ Հաշվեմատյանում վերջինիս 1747 թ. դրանցումների մեջ կա տեղեկություն այն մասին, որ նրանց պատկանող դրամով գնած որոշ ապրանքներ Հովհան աղան Ամատերգամից ուղարկել է Պետերբուրգ և այլն²⁶⁹։ Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Հարությունը նաև Աբրահամ նոքարի մասին։ Պարզվում է, որ նա ընտանիք է ունեցել Նոր Զուղայում, երկար ժամանակ Մոսկվայում ծառայել է Գրիգոր Ամիրասաթենցի մոտ, բայց դուրս է եկել նրա ծառայությունից, քանի որ վերջինս փորձել է նրան դարձնել կաթոլիկ դավանանքի։ Հարությունը հայտնում է, որ ինքը Գր. Ամիրասաթենցից ստացել է 30 թուման «տօնլուղը»՝ Աբրահամին հասանելիք աշխատավարձը, և Մոսկվայից դուրս եկող կարավանով նրան ուղարկում է Աստրախան²⁷⁰։ Թե ինչպիսի իրավադուրկ վիճակի մեջ են եղել այդ ծառաները, երևում է Հարությունի մի այլ նամակից։ Հովսեփ անունով «տղայի» մասին մասնավորապես պրաված է. «որչափ սիրով խրատում ամ՝ շախ շե առամ, յնի թաքում (իմա թաղում—ծեծում) ամ, խօյ իրես այ կանկրման»²⁷¹։

Կան նաև որոշ տեղեկություններ մեծահարուստ խոջաների ունեցած արծաթագին ծառաների մասին։ Այսպես, օրինակ, խոջա Պողոս Վելիջանյանի կտակի մեջ ասված է, որ նա իր որդիներին՝ անասունների, երիվարների, ջորիների, ուղտերի, ոչխարների, վարելահողերի, այգիների, տների հետ միասին ծառանգություն է թողնում նաև վեց արծաթագին ծառաներ²⁷²։ Այդ մասին հիշատակություններ կան նաև ուրիշ կտակների մեջ։

268 Տե՛ս «Հարություն Լաղարյանի նամականի», էջ 77բ։

269 Տե՛ս «Հարություն Լաղարյանի հաշվեմատյան», էջ 166, 184։

270 Տե՛ս «Հարություն Լաղարյանի նամականի», էջ 25ա։

271 Նույն տեղում, էջ 77բ։

272 Տե՛ս Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 132։

Ջուղահայ առևտրական կապիտալն ուժեղ էր արտաքին շուկաներում ունեցած իր կապերով, միջազգային ապրանքափոխանակության մեջ ձեռք բերած իր ամուրդիրքով։ Կոմենդայի վերոհիշյալ տարատեսակներով ջուղայեցի խոջաների կողմից վարկավորվող վաճառականները, ինչպես տեսանք, շրջում էին աշխարհի համարյա բոլոր առևտրական կենտրոններում՝ իրենց մասնակցությունը բերելով միջազգային առևտրին։ Սակայն դա չի նշանակում, որ հայ առևտրական կապիտալը արհամարհել է իրանի, Անդրկովկասի ու Թուրքիայի ներքին շուկաները և անտարբեր մնացել այդ բնագավառից ստացվող շահի նկատմամբ։ Մերձավոր արևելքի ներքին շուկաներում ևս հայ առևտրական բուրժուազիան ունեցել է իր գործընկերը, որ հայտնի է հզել շարչի անունով։ Չարչի կոչված շրջիկ փերիզակաները, երկու-երեք անձերից բաղկացած փոքրիկ խմբեր կազմելով, խոշոր վաճառականներից ապառիկով ստանում էին մեծ մասամբ, կենցաղային անհրաժեշտ առարկաներ (էժանագին կտորեղեն, ոչ թանկարժեք վարդարանք, հայելիներ, մկրատ, ասեղ և այլն) և «բարձեալ ի վերայ թիկանցն»՝ թափառում խոշոր առևտրական կենտրոններից հեռու գտնվող ներքին գավառներում։ Գր. Դարանաղեցին պատմում է, որ ջուղայեցի այդ շարչիները «իբրև զբաղեալ և սովեալ շունք» շրջել են ամենուրեք, կրել են մեծ զրկանքներ, կողոպտվել հաճախ, բայց սովացել են՝ հուսալով փոքրինչ դրամ կուտակելով, ավելի պատվավոր տեղ գրավել առևտրի բնագավառում²⁷³։

Խնչ պայմանով են շարչիներն սպառիկ ապրանք ստացել իրենց աղաներից։ Այդ հարցին պատասխանելու համար բավարար չափով փաստեր չկան։ Սակայն, այդ մասին օգտակար տվյալ կա Բրիտանական գրադարանում պահվող փաստաթղթերից մեկում։ Սաֆարի որդի Անտոնը 1731 թ. Կալկաթայում Աբրահամի որդի Կարապետից ստացել է մեկ հակ (100 զգեստացու) չափիա (ոչ թանկարժեք կտորի մի տե-

²⁷³ Տե՛ս Դրիգոր Դարանաղեցի, նշվ. աշխ., էջ 456—472։

սակ)՝ պարտավորվելով տանել այն Զդա (Սաուդյան Արաբիա) կամ Մուխա (Եմեն) վաճառելու։ Գործարքի պայմանը համաձայնագրում ձևակերպված է հետևյալ ձևով. «Յի Ճ (100)-ին խինկ հաղսայի վեռում.. մնացեալ փողն... բերեմ Կալկաթայ, խասացանեմ վերոյ Կարապետին»²⁷⁴։ Այստեղ արձի «հախսայի» այս շափն, ըստ երևույթին, ընդունված է եղել արդեն նման կարգի հանձնարարություններ կատարողների, ուստի նաև շարչիներին տրվելիք վարձատրության շափ²⁷⁵։ Հետաքրքրական է նաև այն, որ «հախսայի» ստանալու պայմանով որևէ հանձնարարություն կատարելն անպատվաբեր է համարվել քիչ թե շատ բարվոք վիճակ ունեցող վաճառականի համար²⁷⁶։

²⁷⁴ Բրիտանական գրադարան, № 1048, էջ 73 (404) և 77 (407)։

²⁷⁵ Տե՛ս նույն տեղում, № 1047, էջ 119։

²⁷⁶ Տե՛ս «Հարություն լաղարյանի նամականի», էջ 24ր։

ՎԱՐԿԱ-ՎԱՇՆԱՌՈՒԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԽՈՋԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

1. Վաշխառուական վարկ

Վաշխառուական կապիտալի պատմական դերի մասին Մարքսը գրել է. «Վաշխառուական կապիտալը իր երկվորյակի, վաճառականական կապիտալի հետ միասին պատկանում է կապիտալի անդրջրհեղեղյան ձևերին, որոնք վաղուց հետևեց նախորդում են արտադրության կապիտալիստական հղանակին և պատահում են ամենատարբեր տնտեսական-հասարակական ֆորմացիաներում»¹:

Հայաստանում ևս վաշխառուական կապիտալը հայտնի է վաղ ժամանակներից: Վաշխառուական տարբեր դործարքների մասին արժեքավոր նյութեր կան «Կանոնագիրք Հայոց»-ի տարբեր կանոնամբերում², միջնադարյան քարոզգրքերի ու մեկնողական աղբյուրների մեջ: «Վասն փոխոց և վաշխոց» խորագրով իր ճառում VII դ. հայ մատենագիր Հովհան Մայրավանեցին, մասնավորապես, գրել է. «Ընդդեմ պատուիրանացն աստուծոյ զարծաթս իւրեանց ի վաշխու տան, և տոկոսեօք անդէն պահանջն, և անականածելի ուտն զմարմինս տնանկաց, և ըմպն զարին նոցա անողորմ»³: Տիպիկ վաշխառու է եղել, օրինակ միջնադար-

¹ Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 135—136:

² Տե՛ս Կանոնագիրք Հայոց Ա, աշխատասիրությամբ Վաղգն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 39, 87, 128, 229, 452:

³ Տե՛ս Յովհաննու Մանգակունույ Հայոց հայրապետի ճառք, երկ-

Յան Հայաստանի մայրաքաղաք Անիի մեծատուն վաճառական Տիգրան Հոնենցը 1215 թ. իր հայրենի քաղաքում կառուցած եկեղեցու պատին փորագրած ընդարձակ արձանագրությանից պարզվում է, որ նա ձեռք է բերել բազմաթիվ կալվածքներ ոչ միայն դրանք գնելով իրենց նախկին տերերից, այլև բռնագրավելով անվճարունակ պարտապաններից, որոնք պարտքի դիմաց գրավ էին դնում նրա մոտ՝ իրենց տները, կրպակները, այգիները և այլ կալվածքներ⁴:

Հայոց եկեղեցին, որ կրոնական մի շարք սահմանադրումներով քրիստոնեության դոգմային հակասող, ուստի և ապօրինի է համարել վաշխով դրամ տալը, հաճույքով թրպես նվեր ստանում էր վաշխառության ճանապարհով ձեռք բերված բազմաթիվ կալվածքների: Վաշխառության դեմ նրա քարոզները ոչ միայն ապարդյուն էին անցնում, այլև հաճախ վաշխառությամբ էին զբաղվում հենց իրենք՝ հոգևորականները⁵:

Վաշխառությունը քողարկելու տարբեր ձևեր էին կիրառվում. ամենատարածվածն այն էր, որ որոշակի ժամկետ էր սահմանվում առանց որևէ տոկոսի պարտք ստացած դրամը վերադարձնելու համար, իսկ տոկոսները ըսկըսում էին կուտակվել այդ ժամկետը լրանալուց հետո միայն: Այն պատրանքն էր ստեղծվում, որ իբր պարտքը չի թրված վաշխ ստանալու նպատակով և որ պարտապանը հա-

րորդ տպագրություն, Վենետիկ, 1860, էջ 63—70: Ապացուցված է արդեն, որ Հովհ. Մանդակունուն վերագրված ճառերի հեղինակը Հովհ. Մայրավանեցին է:

⁴ *Տե՛ս* Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте города и раскопки на месте городища, Л.—М., 1934, с. 35. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954, с. 278—281.

⁵ Պահպանվել է 1741 թ. մի պարտամուրհակ, ըստ որի Վանջալիի դուստր Ազիզը նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ Ավետիս վարդապետից ստացել է 3 թուման դրամ, ամսական 150 դրան (այսինքն տարեկան 18%) շահով: *Տե՛ս* Բրիտանական գրադարան, № 1048, էջ 122 (458):

վելլյալ գումար է վճարում ոչ որպէս տոկոս, այլ որպէս տու-
գանք՝ որոշյալ ժամկետը խախտելու համար: Եւ եթէ վաղ
ժամանակներում անտոկոս սլարտքի համար սահմանվում
էին համեմատաբար երկար ժամկետներ (մինչև մեկ տարի
և այլն), ապա XVII—XVIII դարերում այդ ժամկետը շա-
րունակ նվազելով դառնալու էր մեկ-երկու ամիս կամ իս-
պառ՝ վերանում: Նշենք նաև, որ դրան զուգընթաց մեծ
չափով կիրառվում էին արդեն նաև առանց որևէ ժամկետի
կազմվող պարտամուրհակները:

Հայ ազատագրական պայքարի նշանավոր գաղափա-
րախոսներից Սուլթանումի որդի Շահամիրջանն, օրինակ,
իր գործունեության առաջին շրջանում բազմիցս կանգնած է
եղել պարտք վերցնելու անհրաժեշտության առջև, 1747 թ.
մարտի 10-ին Նոր Զուղայի բնակիչ Մուքելի դուստր Զի-
բեթից (էլիզաբեթ) նա ստացել է 7,5 թուման դրամ եր-
կու ամսից հետո վերադարձնելու պայմանով: Պարտամուր-
հակում սահմանված է ամսական 100 դիան, այսինքն
տարեկան 12% «մուդաթ»՝ շահ, այդ ժամկետը լրանալուց
հետո միայն⁶: Անկասկած, այս դեպքում դրամ տվողն ու
ստացողը նախապես գիտեին, որ երկու ամսվա ընթացքում
չի փակվելու հաշիվը, և վաշխառուն, անպատճառ, հո է
ստանալու իր տված գումարը՝ որոշակի հավելումով: Իսկ
մի այլ պարտամուրհակում, որը կազմվել է Մոսկվայում
1716 թ. մայիսի 4-ին, ասված է, որ երեանցի Հակոբջանի
որդի տեր Ավագն ու իր Շահրիման որդին ջուղայեցի Մը-
կըրտումի որդի Հովհաննանից ստացել են 260 թուման դրամ
(94,9 կգ բարձրորակ արծաթի համարժեք) «ներքոյ զրեալ
թարեղէն ինչ որ յանց կենայ ամէն մի թումանին մի ամ-
սէն ութսուն դիան շահ», այսինքն՝ հենց պարտամուրհակը
գրվելու օրից սկսած, առանց որևէ ժամկետի⁷:

Վաշխառությունը քողարկելու մյուս եղանակներից մե-

⁶ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 244 (250):

⁷ «Նդիա Կարնեցու Դիվանը», էջ 327: Նշենք, որ 1 թումանը համար-
ժեք էր 365գ 90—92 հարգի արծաթի:

14-րն էլ, որ տարածված է եղել ինչպես Հայաստանում, այն-
 պես էլ ամենուրեք, արտահայտվել է պարտամուրհակում
 ստացված գումարի շափը պայմանավորված տոկոսի հա-
 վելումով արձանագրվելով: Հարուժյուն կազարյանի հաշվե-
 մատյանի մեջ կան բաղմաթիվ վկայություններ այն մասին,
 որ կազարյան հղբայրները (հատկապես Մանուկը 1742 թ.
 Ռեշտում) այս կամ այն անձնավորությանը տվել են ո-
 րոշակի քանակությամբ դրամ՝ շահի հավելումով այն ստա-
 նալու պայմանով. «խօսմցի հաջի Մուրադին այ տվել (Մա-
 նուկ կազարյանը) Ծ (50) թուման, որ շահովն Ծ է (57) թու-
 ման մանեթ տայ», «նաշխարար Յովանէսին Լ է (37) թու-
 ման այ տվել, որ շախովն Խ (40) [թուման] էՆ (7000) դիան
 մանեթ տայ», «Աթամի որդի Նուրէ Ժ է (17) թուման այ տվել,
 որ շախովն Ժ Ը (18) [թուման] էՆ (7000) դիան տայ» և
 այլն⁸: Այդ պարտամուրհակները մեզ չեն հասել, բայց շա-
 րադրանքից այն տպավորությունն է ստացվում, որ փաստա-
 թղթի մեջ գրված է եղել միայն սլարտապանի կողմից վճար-
 վելիք գումարը (ստացված պարտքը՝ շահի հետ հաշված):

Մեզ հասել են մի շարք պարտամուրհակներ, որոնցում
 նշված է սլարտապանի ստացած գումարը և նրա սլարտա-
 վորությունը, այն որոշակի ժամանակից հետո նույն շափով
 վաշխառուին հո դարձնելու մասին: Դրանցից է, օրինակ
 հետևյալը. «Ես՝ Յակոբի որդի Մուրատըս սլարտ Լմ մա-
 րում նազարի կողակից Օվունէ տասն թուման, որ կէսըն լի-
 նի Ծ(5) թուման: Ներքոյ թարեղէն երկու տարի վաղայ՝
 Յընդուտան կամ ինչ տեղ որ սաֆարում լինեմ, սանատս
 ով որ բերի մապլաղս անպատճառ տամ բի ուղը: Դրեցաւ
 Ըսպահան, թիվն ԱՃԻԲ (1737), թիրայ ԺԲ (սեպտեմբերի
 28-ին): Սաֆարի որդի Աստվածատուրս վկայ հմ»⁹:

Մեծապես սխալված կլինենք, եթե անշահախնդիր փո-
 խառվություն համարենք այս փաստաթղթի (և սրան նման-
 վող բաղմաթիվ ուրիշների) մեջ արձանագրված գործարքը:
 Անկասկած, այս դեպքում ևս, վարկատուն որոշակի շահ է

⁸ «Հարուժյուն կազարյանի հաշվեմատյան», էջ 10:

⁹ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 22 (357):

ունեցել և, ամենայն հավանականությամբ, այդ շահը պարտամուրհակում նշված է փոխ տված գումարը տոկոսի հավելումով գրանցելու ճանապարհով: Ըստ այդմ, տվյալ դեպքում պարտապանը պարտատերից ստացել է ոչ թե 10 թուման, ինչպես նշված է պարտամուրհակի մեջ, այլ այդ գումարի մի մասը միայն¹⁰:

Պարտք տրված գումարը շահի հավելումով արձանագրվելու տարածվածության մասին բազմաթիվ վկայություններ կան նաև միջնադարյան թվաբանական դասագրքերում: Կոստանդ Ջուղայեցու մոտ հանդիպում ենք, օրինակ, այսպիսի խնդիրների. 1) «Ա. մարդ աւաք կամ կանպի էր տվել» գրել էր թէ ճ-ին Ժ. ամ տվել, որ շախ-մայեայ ԵՃԼ. մառչիլ աջ», 2) «Ա. մարդ ԼԵ. մառչիլ ունէր կանպի հտ, որ շախ-մայեայ գրեցին ԲՃԳ. մառչիլ հիմանաս թէ ճ-ին քանօվն աջ աջսպէս արայ...», 3) «Դարձեալ Ռ. կամ ԲՌ. մառչիլ կամ ըռուփի, որչափ որ իցէ, շախ-մայեայ մին տեղ խողած աջ. ուղենաս շախն մայիցն ջոկես...» և այլն¹¹:

Գոյություն է ունեցել պարտամուրհակների շարադրման որոշակի ձև: Որպես կանոն, այն շարագրվել է պարտապանի անունից՝ նշվում է հոր անունը, իր անունը, հաճախ նաև ծննդավայրի մասին տեղեկություն, որին հաջորդում են «պարտ եմ» կամ «չինք առի» բառերը, որոնցից հետո պարտատիրոջ հայրանուն-անունը, ապա պարտք տրված ամբողջ գումարի և նրա կեսի չափը (հնարավոր ղեղժումների առաջն առնելու նպատակով): Դրան հետևում է պարտքի վճարման պայմանի և տոկոսի մասին հատվածը, իսկ վերջում՝ փաստաթղթի ստեղծման վայրի անվանումը և տարեթիվը: Վկաների գոյությունը դիտվել է որպես անհրաժեշտ պայման: Ընդ որում, մեծ մասամբ, երկու անձինք են ստորագրել, սակայն կան պարտամուրհակներ հաստատված ինչպես մեկ, այնպես էլ երեք և ավելի վկաների ստորագրությամբ ու կնիքներով: Մի շարք պարտամուրհակների

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 21: «Եղիա Կարնեցու Դիվանը», էջ 320, 321 և այլն:

¹¹ Մատենադարան, ձև. № 10704, էջ 125ա, 126ա, 146ա և այլն: 154

մեջ սահմանված է պարտքի մարման ժամկետը (մեկ հայտ-
նի օրինակներում կան մեկ ամսից սկսած մինչև հինգ տարի
ժամկետներ), բայց կան նաև բազմաթիվ դեպքեր, երբ
պարտքի ստացման ժամանակի որոշումը վերապահված է
վաշխառուին. «Յեփ որ ուզի՝ ուր հասաբովն տամ», «երբ որ
ուզէ շահն ու մաշէն հասապովն տամ», «երբ ուզէ՝ տամ»,—
այսպիսի ձևակերպումների հանդիպում ենք մի շարք պար-
տամուրհակների մեջ¹²:

Վկաների առկայությունը սովորաբար համարվել է փոխ
տալու բավարար նախապայման: Սակայն, շատ են դեպ-
քեր, երբ պարտք տվողը հաշվի առնելով դրամ խնդրողի
տնտեսական ոչ բարվոք վիճակը և այլ հանգամանքներ, չի
բավարարվել վկաների ստորագրությամբ և պահանջել է ա-
վելի հիմնավոր գրավականներ՝ որեւէ գրավ (մեծ մասամբ
անշարժ կալվածքներ), կամ վկաներից որեւէ մեկի կողմից
հավաստիացում՝ փոխառուի կողմից պարտավորությունը չկա-
տարհիլու դեպքում, պարտքն իրենց վրա վերցնելու մասին:
1729 թ. Նոր Զուղայում կազմված մի պարտամուրհակի հա-
մաձայն, որը հաստատվել է նույնիսկ 6 վկաների ստորա-
գրությամբ ու կնիքներով, Հակոբջանի որդի ոմն Ավետ, որն
ըստ երևույթին, կամ նոր էր ոտք դնում առևտրի ասպարեզ
կամ էլ անվստահելի էր համարվում իր շրջապատում, 20
թուման պարտք է վերցրել Վանջալի դուստր Աղիզից և
նրա մոտ գրավ է դրել իր «հայրենիք տունն և ուր կպած
չոք դուքանովն»: Պայմանը հետևյալն է. պարտքի 15 թու-
մանի դիմաց Ավետը վճարելու է ամիսը 1% շահ («Ֆի թու-
մանին ամսէն ԱՃ (100) դիան մուդաթ տամ»), իսկ մնա-
ցած 5 թումանի դիմաց պարտատերը գանձելու է գրավ
դրված 4 խանութների վարձը («խինկ թումանին շախն չոք
դուքանին քրէն լինի»)¹³: Տարիներ անց, 1741 թ. վերո-
հիշյալ Վանջալի դուստր Աղիզն է պարտք վերցնելու համար
դիմում Ամենափրկիչ վանքի առաջնորդ Ավետիս վարդա-

¹² Բրիտանական գրադարան, № 1047, էջ 21, 25, 32 և այլն:

¹³ Նույն տեղում, № 1048, էջ 122, 138:

պետին, ստանում է նրանից 3 թուման, նրա մոտ գրավ դնելով իրենց տան կից գտնվող և 30 թումանով գնված այգու կալվածագիրը¹⁴։

Իսկ ինչ վերաբերում է վկայի կողմից վճարման պատասխանատվությանը ստանձնելուն, ապա այն երևում է հետևյալ փաստերից։ 1746 թ. Ղուկասի որդի Ծատուրը պարտք է վերցնում էմնիազի որդի Հարությունից։ Այդ պարտավորագրի տակ որպես վկաներ ստորագրել են երկու հոգևորականներ և երկու վաճառականներ։ Ընդ որում, հոգևորական վկաներից Գևորգ վարդապետը, մեկ անգամ արդեն ստորագրած ու կնքած լինելով, վերջում գրում է հետևյալը. «Բարաթիս մապլադին Գէորգ վարդապետս զամին կացի, որ տէր մի արասցէ, նկալ կամ մանդարով յետ գոյ, ես վճարեմ սովդագար հասաբի»¹⁵։ 1747 թ. Զաքարի որդի տեր Հովհանը պարտք է վերցնում Թամազի որդի Հովհանջանից։ Պարտավորագրի վերջում գտնում ենք վկաներից մեկի հետևյալ գրությունը. «Եթէ տէր Ոհանն վերոյ մապլազն սարվադին քարսադին առի ոչ, ես Ոհաննէս դի Գրիգորս տամ»¹⁶։

Այժմ անդրադառնանք վաշխի տոկոսադրույքին։ Միջին դարերում որոշակի տոկոսադրույք գոյություն չի ունեցել։ Դերմանիայում, օրինակ, այն տատանվել է 21—43,3%-ի միջև, սակայն, երբեմն գանձել են նաև 100% և ավելի։ XIII—XIV դարերում Իտալիայում տոկոսի միջին չափանիշը համարվել է 7—8%-ը, բայց քիչ չեն եղել նաև 12%, նույնիսկ 15%-ով փոխտվություններ¹⁷։ XVII—XVIII դարերում եվրոպական մի շարք երկրներում օրինադրական հատուկ ակտերով սահմանվել է տոկոսի թուլատրելի դրույքը՝ 5—6%, ավելին դիտվել է որպես վաշխառություն ու պատժվել է¹⁸։ Նույն այս ժամանակաշրջանում, Ռուսաստան-

¹⁴ ՏԵ՝ս նույն տեղում, № 1047, էջ 116։

¹⁵ Նույն տեղում, էջ 63։

¹⁶ Նույն տեղում, էջ 157։

¹⁷ ՏԵ՝ս Др. Пугачо, նշվ. աշխ., էջ 429։

¹⁸ ՏԵ՝ս Адолбф Бэр, նշվ. աշխ., էջ 68—69։

նում փոխ էր տրվում գումարի 12—15 և, նույնիսկ, 20%-ի չափով վաշխ ստանալու պայմանով, սակայն 1754 թ. հունիսի 23-ի հրովարտակով օրինական է համարվում 6%-ը¹⁹։

Հայաստանի և հարևան երկրների տոկոսադրույքի մասին ուսումնասիրություններ բոլորովին չեն կատարված։ Մեր աղբյուրների մեջ կան արժեքավոր նյութեր նաև այս հարցի պարզաբանման համար։ Աստրախանի հայոց Դատաստանագրքի մեջ այդ մասին կա հատուկ կետ. «Եթէ ով որ ումեք տացէ զդրամ և ասցէ ի նմանէ սանադ յորում գրեցեալ իցէ զտոկոսին առաւել քանզ հարիւրին ամսէն կէս (այսինքն՝ տարեկան 6%—Շ. Խ.), այնպիսի սանադն եղիցի անհաստատ և պարտականն ազատ է վճարելոյ»²⁰։ 6%-ի այդ սահմանումը բխում է, սակայն, 1754 թ. «Վաշխառուներին պատժելու մասին» վերոհիշյալ հրամանագրից, ուստի չի արտացոլում փաստացի վիճակը։ 6% շահով տրված մի շարք պարտամուրհակներ, իրոք, պահպանվել են, բայց նրանք, մեծ մասամբ, կազմված են Ռուսաստանի հետ կապված հայ վաճառականների միջավայրում։ Անհամեմատ ավելի մեծ թիվ են կազմում այն պարտամուրհակները, որոնցում նախատեսված է մոփսը 0,75% կամ տարեկան 9% շահ։ Տոկոսի այդ չափը օրինական էր համարվում Հնդկաստա-

¹⁹ Տե՛ս Շ. Ս. С. Я. Боровой, Кредит и банки России, М., 1958, с. 18, 45. Այստեղ կարգում ենք. «1649 թ. օրենսդիրը արգելեց տոկոսային փոխառությունները... Այդ արգելքը շուներ գործնական մեծ նշանակություն, թեև դժվարեցնում էր վաշխառուների գործունեությունը» (էջ 18). «1754 թ. հունիսի 23-ին հրապարակված «Վաշխառուներին պատժելու մասին» հրամանագիրը հաստատում էր որպես օրենքով թույլատրելի սահմանային տոկոսադրույք 6%-ը (այսպես կոչված, «հրամանագրային տոկոս»)՝ ... 10 տարի անց (1764 թ.) փոխառության համար 6%-ից ավելի վերցնելու արգելումը կրկնվեց և հաստատվեց հատուկ մանիֆեստով։ Մանիֆեստը հայտարարում էր վաշխառուներին, որոնք շարունակում էին վերցնել 6-ից բարձր մինչև 20 և ավելի տոկոս, «հատուկ հանցագործներ» (էջ 45)։ Տե՛ս նաև П. П. Мельгунов, Очерки по истории русской торговли IX—XVIII вв., М., 1905, с. 263.

²⁰ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 49։

Շուտ²¹ և տարածված էր ինչպես այն վաճառականների շրջանում, որոնք առևտուր էին անում այդ երկրում, այնպես էլ իրանում, իրաքում և ուրիշ երկրներում²²:

Առկա նյութի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ միջնադարյան գիշատիչ վաշխառության ավանդույթները չէին հաղթահարված հայ առևտրական կապիտալի գործունեության շրջանակներում և քիչ չէին դեպքերը, երբ պարտք էր տրվում շատ ծանր պայմաններով՝ տարեկան 9,6% -ից մինչև 28,6%:

Խմբավորելով բազմաթիվ պարտամուրհակները, կուենենանք հետևյալ պատկերը.

Ամսական 0,8 կամ տարեկան 9,6 տոկոսով մի պարտամուրհակի մասին նշվեց վերը²³:

Ամսական 0,85՝ տարեկան 10,25%.

1684 թ. Սուրաթում Խանումադենց Հովհաննեսի որդի Մըկըրաումից այդ պայմանով (այսինքն «Ռ. (1000)-ին ամսէն Բ|| (8,5)»% -ով) 1600 ռուբլի է վերցրել Հովհաննես Զուղայեցին²⁴:

Ամսական 1. տարեկան 12%.

Այս պայմանով պարտամուրհակները բազմաթիվ են: 1745թ. չուղայեցի Ժուռիկենց Գասպարի որդի Հովհաննեսից 10 թուման պարտք են վերցրել համադանցի Գրիգորի որդի Մուքելը և նշանավոր քաղաքական գործիչ Հովսեփ Էմինը: Պարտամուրհակում գրված է. «Ներքոյ գրեալ թարեղէն (այ-

²¹ Կոստանդ Զուղայեցու «Աշխարհածողովի» մեջ այդ մասին գրված է. «Հընդուստան փող տաս շախով, որ մուղաթի կառն, բարբաստ ալ, որ ամսէն 8 (100)-ին 9 (3) փալ (այսինքն $\frac{3}{4}$ կամ 0,75%) շախ կառն»: Կոստանդ Զուղայեցի, նշվ. աշխ., էջ 139ր:

²² Հովհ. Զուղայեցին իր հաշվեմատյանում հայտնում է, որ 1685 թ. մայիսի 5-ին Նազարեթից 770 ռուբլի է փոխ առել, պայմանով, որ տուկոսը կուտակվի պարտամուրհակը ստորագրելու օրից, ամիսը 0,75%-ով (ՏՆ՝ս «Հովհաննես Զուղայեցու հաշվետվումարը», էջ 94):

²³ ՏՆ՝ս «Նղիա Կարնեցու Դիվանը», էջ 327:

²⁴ ՏՆ՝ս «Հովհաննես Զուղայեցու հաշվետվումարը», էջ 94, 100:

սինքն 1745 թ. դեկտեմբերի 6-ից) ինչ անց կէնայ ամիսն ֆի թումանին ԱՃ (100) դիան մուդաթօվն տանք»²⁵:

Ամիսը 1,5, տարեկան 18%.

Նշիա Կարնեցին իր հաշվեմատյանի մեջ ունի այսպիսի մի գրանցում. «Ջուղայեցի պարոն Գրիգորիցն առի Ժն (15) թուման պանաթօվ, ամսէն մինն ՃԾ (150) դիան շահօվն, երբ ուղէ՝ տամ»²⁶:

Ամսական 2, տարեկան 24%.

Այս պայմանով 1717 թ. Շամախիում Բանդորի որդի Շահ-վելուց 20 թուման պարտք է վերցրել օշականցի Աբգարի որդի Մարտիրոսը: Պարտամուրհակում գրված է. «Ներքոյ գրեալ թարեղէն ինչ որ հանց կենայ, ամէն մին թումանին մին ամսէն երկու հարիւր դիան շախ տամ, և ինչ վախտ որ ուղի վերոյ մապլաղն՝ շախ և մահայ, ըռեշտայ ապսոփ տամ, ուղր չբերեմ»²⁷:

Ըստ երևույթին, ամսական 2%-ով պարտք տալը շատ տարածված է եղել և պաշտոնապես օրինական համարվել իրանում: Աֆղան էմիր Մահմուդը, որ 1722 թ. գրավել էր իրանի մայրաքաղաքը և հսկայական գումարներ կորզելով նոր Ջուղայի վաճառականներից, մեծ հարված էր հասցրել նրանց առևտրական գործունեությանը, ինքը հանգես էր դալիս ջուղայեցիների վարկառուի դերում: Ի լուր բոլորի, հայտարարելով, որ «ով ցանկանում է զբաղվել առևտրով, թող պա և դրամ ստանա»: Նա 2—20 թուման էր տվել

²⁵ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 126: Նույն այս պայմանով («ամսին մի մուդաթ»-ով) 1686 թ. դեպի Տիրեթ ճանապարհորդելիս, նեպալում տեղական մի վաշխառուից պարտք է վերցրել Հովհ. Ջուղայեցին (Հաշվեմատյան, էջ 89): Հետաքրքրական էն նաև 1699—1705 թթ. պարտամուրհակները, ըստ որոնց Կոմանդորի կողակից Նազլուխանը՝ 5 նվադոն, նույն՝ «թումանին ամսէն Ճ. (100) դիան» շահով, փոքր գումարներ է վերցրել Ոսկանի կողակից Մալախբից: Բրիտանական գրադարան, № 1047, էջ 49:

²⁶ «Նշիա Կարնեցու Դիվանը», էջ 321:

²⁷ Նույն տեղում, էջ 329:

400 շուղայեցիներ, ամեն մի թումանից ամսական 200 դրան կամ տարեկան 24% շահ ստանալու պայմանով²⁸,

Ամիսը մոտ 2,1, տարեկան 25%.

Այդ մասին ունենք մեկ վկայություն: Պետրոսի որդի Պողոս անունով մի վաճառական 1743 թ. Գասպարի որդի Գասպարից ստանում է 12,5 թուման. «տարին ճ (100)-ին ին (25)» շահով²⁹:

Ամիսը շուրջ 2,3, տարին շուրջ 28,6%³⁰.

1749 թ. Աղաղար Լաղարյանը նոր Զուղայում Խուժիկինց Շատուրի որդի Սիմոնին 1,5 թուման պարտք էր տվել: 1758 թ., ձեռքի տակ ունենալով պարտամուրհակը, Հարություն Լաղարյանը ետ է ստանում այդ գումարը, որը տարիների ընթացքում կուտակված տոկոսների հետ միասին, դարձել էր արդեն 58 ուրվի: Այս գումարից 15 ուրվին (1,5 թումանը) բուն պարտքն էր, ուստի տոկոսներն էին՝ մնացած 43 ուրվին: Պարզ է, որ 10 տարիների ընթացքում այդքան տոկոս կարող էր բարդվել, եթե պարտքը տրված լիներ ամսական մոտ 2,3 կամ տարեկան 28,6%-ով³¹:

Ամփոփելով քննության արդյունքները պետք է կրկին նշել, որ վաշխառության ավանդույթները փոխառության քնագավառում՝ դեռևս հաղթահարված չէին: Պարզ պարտամուրհակը դեռևս ամբողջովին դուրս չէր մղել ասպարիզից վաղ միջնադարից ժառանգված դրամական փոխառության գիշատիչ ձևը³²: Այդ էր պատճառը, որ սովորական էին համարվում տարեկան 12, 18, 24, նույնիսկ, 28 տոկոսով փոխառությունները: Սակայն միաժամանակ,

²⁸ *Տե՛ս* Дневник осады Исагани афганцами, веденный Петром дн Саргис Гиланенц, в 1722 и 1723 годах, с. 33.

²⁹ Բրիտանական զրադարան, № 1047, էջ 65:

³⁰ Տոկոսի այս կոտորակները շատ էլ ստույգ համարվել չեն կարող, քանի որ հայտնի չէ թե վճարումը պարտքը ստանալուց ճիշտ 10 տարի հետո է կատարվել, թե՞ 10 տարուց մի քանի ամիս առաջ կամ հետո:

³¹ *Տե՛ս* «Հարություն Լաղարյանի հաշվնամայան», էջ 109:

³² *Տե՛ս* Н. И. Персесов, Торговое право, посмертное издание, исправленное и дополненное А. Г. Гусаковым, М., 1896, с. 22 и сл.

ակնառու է և այն հանդամանքը, որ շատ ավելի մեծարանակ էին տարեկան 6—9%-ով տրվող վարկերը, որոնք նոր ժամանակների և տնտեսական ավելի զարգացած հարսբերությունների ցուցանիշ էին: Առկա նյութերը հնարավորություն են տալիս հավանական մի պատասխան տալու այն հարցին, թե ինչ դեպքերում էին ցածր տոկոսով բավարարվում կամ, ավելի ճիշտ, ում էին ցածր տոկոսով վարկ տալիս և, ընդհանրապես, որ դեպքում էին այն բարձրացնում մաքսիմումի: Հարցերի այս խմբի պատասխանը կտրվի վարկի ավելի զարգացած ձևերի ու կապիտալի մեկ երկրից մեկ ուրիշ երկիր փոխադրելու հայեական միջավայրում կիրառվող եղանակների հետ ծանոթանալուց հետո:

2. Ծովային վարկ

Եվրոպական երկրներում կապիտալի միավորման տարածված ձևերից մեկն էր նաև վարկի այն տարատեսակը, որը կիրառվելով հիմնականում նավահանգստային քաղաքներում ու առնչված լինելով ծովային առևտրի հետ, կոչվում էր ծովային վարկ: Այդ վարկի բուն էությունը կայանում է նրանում, որ ծովային ճամփորդություն ձեռնարկող վաճառականը տեղում մնացող վաճառական-վաշխառուից վերցնում էր որոշակի գումար՝ ապրանքներ գնելու նպատակով և ժամանման վայրում (գարձյալ նավահանգստային որևէ քաղաք) կամ այնտեղից մեկնումի վայրը վերադառնալուց հետո՝ պայմանավորված հավելումով վճարելու պայմանով:

Վարկի այս տարատեսակի տոկոսները շատ բարձր էին լինում, երբեմն հասնելով մինչև 50%-ի, որովհետև վարկատուն բաժանում էր վարկառուի հետ նավարկության ընթացքում հնարավոր կորուստների վտանգը՝ նավարկության ծովահենների հարձակման և պատերազմական զործողությունների հետևանքով: Սակայն, առևտրական գործառնությունների ողջ պատասխանատվությունն ընկնում էր միայն վարկառուի վրա: Իր հետ տարվող ու բերվող ապ-

րանքների վաճառքից ստացված ողջ շահը (իհարկև, ստացած վարկն իր տոկոսներով վճարելուց հետո) ամբողջովին մնում էր վարկառուի ձեռքում և նա ազատ էր վարկատուին որևէ ձևով հաշվետու լինելու պարտավորությունից:

Հայկական աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ «ծովային վարկը», նույնպես, շատ տարածված էր հայ վաճառականների միջավայրում: Ըստ որում, «հք գուշի ավաք» է կոչվել վարկատվության այն տարբերակը, երբ վարկ ստացող վաճառականը պարտավորվել է իր հաշիվները փակել վարկատուի կամ նրա կողմից լիազորված անձի հետ այն վայրում, ուր ուղևորվում էր իր ապրանքներով բեռնավորված նավը, իսկ «դօ գուշի ավաք»-ի դեպքում՝ երբ նկատի էր առնվում հրկուս երթուղի. սովյալ նավահանգստային քաղաքից ծովով մեկ ուրիշ նավահանգստային քաղաք ուղևորվելը և այնտեղից մեկնակետ վայրը վերադառնալը: Մեզ են հասել վարկատվության այս երկու տարբերակներով կնքված մի շարք համաձայնագրերի ամբողջական բնագրեր կամ էլ նրանց մասին հիմնական տեղեկություններ պարունակող գրանցումներ: Ավելի շատ են «հք գուշի ավաք» կոչվածները, որոնք վերաբերում են Սուրաթ—Սպահան, Սուրաթ—Բասրա, Կալկաթա—Բասրա, Զիշրա—Բասրա, Կալկաթա—Սուրաթ և այլ երթուղիների, ժամանակագրական առումով վերաբերելով XVII դ. 80-ական թվականներից մինչև XVIII դ. 40-ական թվականները: Ծանոթանա՞նք այդ բնույթի ամբողջական փաստաթղթերից մեկին.

«Ես Մաղաբէ որդի Աղամալս, Կալկաթայ, հք գուշի ավաք վեուի ողորմած հոգի Շաֆուալի որդի սահիպ աղա Մինասէն՝ շախ և մայայ, ցամն աչ ԳՌԸՃԻԸ (3828) ոուփի, որ կէսն լինի ԱՌԹՃԺԴ (1914) արկաթի: Տէր աստուածն ջութամ ոչ տայ, ջութամն ինկիղի էքս-պարտիսան նավին և իմ բառցած ապրանքին վերայ, որ աստուծով նալն Կալկաթու լանկարգայէն լանկար վեուու, նալն նալմալ սլամաթ գնաց: Սուրաթին լանկար գահումն լանկար գծի, ջութամն վեր կայ. յետ ջութամն վեր կալէն ԻՒ (21) օր վադայ, սարվադին վե-

քոյ մապլադն՝ ԳՌԸՃԻԸ (3828) ուսփին Սուրաթի սան հալ սքայ, ողորմած հոգի էլիադի որդի պարոն Աստուածատուրն տայ վերոյ մասկուր սահիպ աղայ Մինասին օրդնի, էլ մասկուր պարոն Աստուածատուրին իւրն, և սահիպ Գրիգոր աղէ որդի պարոն Պողոսին: Եթէ վաղիցն յետ և յառէջ տայ, ֆի Ճ (100)-ին ամսէն Գ (3) փայօլն մուդաթ հասալ լինի: Տէր աստուածն վարար ոչ տայ, վարար վայմնին ապրանքայտրոջն այ, փողայտրոջն չի: Ալայքագիրս Բ. գրեցի՝ մին մապրուն, որ մնօլն որ տայ՝ միւսն բաթիլ լինի: Վերոյ մապլադին կէսն մասկուր սահիպ աղայ Մինասին մօր կոնթէ այ, կէսն իւրէնց սարքարի կոնթէ այ: Գրվեցաւ թիվն փոքր ՃԻԸ (1741) համիւբայ ԺԵ-ումն, վերջ:

Վերոյ գրեալն ինձ՝ Մաղաքէ որդի Աղամալիս ղաբուլ այ» (ալմուհետե զրված են երեք վիաների ստորագրություններ)³³:

Այսպիս ուրեմն, վարկատու կողմը խոջա-Մինասինց նշանաւոր գերգաստանի անդամներից է՝ Սարֆրադի որդի Մինասը, որը հանդես է եկել իրենց կոմպանիայի և իր մօր անունից (հայտնում է, որ վարկի կեսը պատկանում է իրենց կոմպանիային, մյուս կեսը՝ իր մօրը): Այստեղ (և ամենուրեք) հիշատակված է այն նաւի անունը, որի վրա բարձվում է վարկառուի Կալկաթայից Սուրաթ տարվող ապրանքը: Նշվում է, թե նաւի՝ Սուրաթի նավահանգստում, խարխսի նտեղուց քանի օր հետո պետք է կատարվի ստացված վարկի վճարումը: Ժամկետն այստեղ և մյուս դեպքերում՝ 21 օր է սահմանված: Հաստիկ նշված է նաև, թե վարկառու կողմն ինչ տույժ է վճարելու կամ ինչ շաւիով է շահվելու՝ վարկն իր տոկոսներով ժամկետից ուշ կամ շուտ վճարելու դեպքում (ուշացման դեպքում սահմանված է ամիսը 0,75% տույժ): Ալմուհետե, նշված են այն մարդկանց անունները, որոնց պետք է վերադարձվի ստաց-

³³ Բրիտանական գրադարան, ձեռ. № 1047, էջ 297: Համանման բովանդակություն ունեն նաև Բրիտանական գրադարանի № 1048 ձեռագրի մեջ ամփոփված 45, 106, 124, 232 և այլ էջերի փաստաթղթերը:

ված գումարն իր տոկոսներով, տվյալ դեպքում՝ Խոջա-Մինասենց կոմսյանիայի Սուրաթում գտնվող գործակատարներ պարոն Աստվածատուրը կամ պարոն Պողոսը: Նըշենք նաև, որ այդ վճարումը կատարելու է ոչ թե փոխառու Աղամալը (ըստ երևույթին, Աղամալն անձամբ չի ուղեկցել իր ապրանքներին), այլ նրա ապրանքի վաճառքից գոյացած դրամի հաշվին էլիսովի որդի պարոն Աստվածատուրը՝ Խոջա-Մինասենց գերդաստանի մի այլ անդամ: Այստեղ և նման բոլոր փաստաթղթերի մեջ հատուկ նշվում է, որ առևտրական գործարքի անհաջողության ողջ պատասխանատվությունն ընկնում է վարկառուի վրա. «վարար վայմնին ասրանքայտրոջն այ, փողայտրոջն չի» բանաձևը, որին հանդիպում ենք այստեղ, կրկնվում է նաև մյուս փաստաթղթերում: Փաստաթղթի վերջում ասված է, որ այն կազմված է միմյանց ճիշտ համապատասխանող երկու օրինակներից և որ մեկի վրա վարկի վերադարձման մասին համապատասխան դրանցում լինելու դեպքում, մյուսն իր ուժը կորցնում է:

Այսպիսով, ինչպես տեսանք, առևտրավաշխառուական ամենատարբեր գործարքների մասին հայ առևտրականների միջավայրում ստեղծվող մյուս փաստաթղթերի նման, ծովային վարկի մասին այս պայմանագիրը ևս կազմված է կողմերի միջև կայացած համաձայնության բոլոր մանրամասնությունների հաշվառմամբ: Սակայն, չի նշված թերևս ամենակարևորը՝ վարկ տրված գումարի շահի տոկոսը: Ասված է, որ վարկառուն «շահ և մայայ» միասին հաշված պետք է վճարի 3828 ոստի: Իսկ թե այդ գումարի որ մասն է վարկը և որը՝ շահը, ոչ մի խոսք չկա ինչպես այստեղ, այնպես էլ (մեկ բացառությամբ) նմանատիպ մյուս փաստաթղթերի մեջ: Բարեբախտաբար, Հովհաննես Զուղայեցու հաշվեմատյանում ևս, ծովային վարկի մասին կան գրանցումներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավորություն է ստեղծվում պատասխանելու նաև այդ հարցերին:

1684 թ. ապրիլի 10-ին և 14-ին լինելով Սուրաթում, նա երկու տարբեր անձնավորություններից 1000-ական

ռուփի վարկ է վերցրել լրացուցիչ ապրանքներ գնելու համար, որոնք ուղարկել է Սպահան (մինչև Բենդեր-Աբբաս նավահանգիստը նավով, աֆուհետե ցամաքային ճանապարհով մինչև Սպահան) իր աղաների ու Բասրա՝ իր գործընկեր Հովհանի հասցեներով, հայտնում է, որ Սպահանում վարկատուի կողմից լիազորված անձն իր աղաներից ստանալու է 1000 ռուփի վարկը՝ 26% շահով, այսինքն «ասլին» և շախին ջամէն, միասին հաշված՝ 1260 ռուփի, իսկ Բասրայում մարվելիք վարկի շահը 20% լինելով, Հովհանը վճարելու է վարկատուի լիազոր-ներկայացուցչին՝ 1200 ռուփի: Այդպիսի մի վկայություն էլ պահպանվել է Բրիտանական գրադարանի հայերեն փաստաթղթերից մեկում, ուր չնայած «շահն ու մայն» նույնպես, նշված են միասնաբար, սակայն հիշատակություն կա, որ վարկը տրվում է 16% շահի պայմանով:

Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ Հնդկաստանից Իրան և Իրաք տարվելիք ապրանքներ գնելու նպատակով տրվող ծովային վարկի համար միջին հաշվով 20%-ի շահ է պահանջվել: Պետք է ենթադրել, որ շահի տոկոսն ավելացվել է ծովային ճանապարհի հրկարության ու վտանգավորության համեմատ:

Ծովային վաճառի տույժին այս փոփոխակի՝ «եք գուշի ավաքի», հետ սերտորեն առնչվում են նաև Եօլբուջի կոշվոդ (ճանապարհի պարտք) վարկատվության մասին Սարհադ Բանդորյանի և Հարություն Լաղարյանի հաշվեմատյանների մեջ առկա բաղմամբիվ փաստերը: Բնականաբար, դրանք առանց մանրամասնությունների չոր ու ցամաք գրանցումներ են, որ խոսում են այն մասին, թե այս կամ այն անձնավորությունը (վաճառականը) Ռեշտում, Շամախիում կամ էլ Նիզովոյ նավահանգստում ստացել է հաշվեմատյանի հեղինակներից կամ նրանց գործընկերներից այսֆան թուման, Աստրախանում ստացված գումարն իր տոկոսով վերադարձնելու պայմանով: Շամախիում կամ Նիզովոյում տրված գումարները, սակավ բացառությամբ, փոքրիկ գումարներ են, որ ճա-

նապարհորդելու նախօրյակին իրենց հետ տանելիք ապրանքների բեռներն արդեն կապած-սպտրաստած վաճառականները վերցրել են՝ ապրուստի իրենց հոգսերը լրացնելու համար: Այլ բովանդակություն ունեն Ռեշտում տրված գումարները: Այսպես, օրինակ, որպես փոխատու հանդես է դալիս Մանուկ լաղարյանը, որպես փոխառու՝ Ռեշտի ռուս կոնսուլ Սիմեոն Զախարովիչ Արապովը, իսկ որպես փոխավճար՝ Աստրախանի «գուբեռնցիի կանցալարը»: Կարելի է չկասկածել, որ հսկայական այդ գումարները ռուս կոնսուլը ստանում էր առևտրական խոշոր գործարքներ կատարելու նպատակով: Կարևոր այդ ավյալների մի մասն ամփոփել ենք ստորև տրվող աղյուսակում (աղյուսակ № 2):

Աղյուսակ 2

Երթուղի	Փոխ տրված գումարը (թումանով)	Ստացված գումարը (թումանով)	Շահույթը (թումանով)	Շահույթի չափը (% ով)	Շահույթի միջին մեծ- ծությունը (% ով)
Նիզովոյ-Աստրախան ³⁴	0,1800	0,2120	0,0320	17,7	21,6
	3,6000	4,3200	0,7200	20,0	
	0,2200	0,2800	0,0600	27,2	
Շամախի-Աստրախան ³⁵	0,5000	0,7000	0,2000	40,0	30,2
	0,2000	0,2500	0,0500	25,0	
	0,2495	0,3200	0,0705	28,2	
	5,0000	6,3750	1,3750	27,5	
Ռեշտ-Աստրախան ³⁶	576,9220	733,8000	156,8780	27,0	26
	36,0000	45,9000	9,9000	27,5	
	310,5000	400,0000	89,5000	29,0	
	354,0000	456,8500	102,8500	29,0	
	338,6000	396,1620	57,5620	17,0	

³⁴ Մատենադարան, ձեռ. № 6241, էջ 1ա, 2ա:

³⁵ Նույն տեղում: Եղիա Կարենցու մոտ կան 6 ավյալներ տարբեր չափերի «յուլյոռճի»-ների մասին, տրված Շամախիում, ստացված՝ Աստրախանում: Բոլոր դեպքերում էլ ստացված է 40% շահ: Տե՛ս «Եղիա Կարենցու Դիվանը», էջ 305, 315:

³⁶ Տե՛ս «Հարություն լաղարյանի հաշվնամատյանը», էջ 6, 7, 10, 14:

Այս երթուղու վերահիշյալ «եօլրոռջի»-ները տրված են ռուս կոնսուլ Սիմեոն Զաքարովիչ Արապովին, մոտ 26% միջին շահով:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ նույն երթուղիները մեջ նկատվում են տոկոսի չափի զգալի տարբերութիւններ: Այսպիսի դեպքերում միշտ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե տվյալ դեպքում ովքեր էին վարկատուն ու վարկառուն, ինչ հարաբերութիւններ ու փոխկապվածութեան մեջ էին միմյանց հետ, ջուղայեցիներ էին թե ուրիշ վայրերի հայ վաճառականներ, վերջապես հայ էին թե՛ ալլաղգի: Այս բոլոր հանգամանքները ինչ-որ չափով նշանակութիւն են ունեցել վարկի տոկոսը որոշելիս³⁷:

«Դօ գուշի ավաքի» մասին մեր ձեռքի տակ եղած վաւերագրերի ժամանակագրական սահմանները տատանվում են XVIII դ. 10—40-ական թվականների միջև: Դրանցում նշված ծովային ճանապարհների ուղեգներն են. Մադրասից Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլա ու վերադարձ³⁸, Չանդերնագորից Զդա ու վերադարձ³⁹, Մոսկվայից Աստրախան ու վերադարձ⁴⁰, Շամախուց Աստրախան ու վերադարձ⁴¹:

Պետք է հաշիվի առնել այն հանգամանքը, որ վերջին եր-

³⁷ «Եօլրուդի»-ների մասին կարևոր տվյալներ կան նաև Հարութիւն Լազարյանի Հաշվեմատյանի Փարդ 11-ի սկզբում: Այստեղ թվարկված են 1742 թ. 8 տարրեր անձանց Ռեշտում տրված և Աստրախանում ստանալիք վարկերի մասին: Շահն այստեղ տատանվում է 9—12%-ի միջև:

³⁸ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 62:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 126:

⁴⁰ Այս մասին առկա փաստաթուղթն ունի իր առանձնահատկութիւնը: Վարկատուն՝ Մոսկվայում հաստատված հայ քահանա Տեր Ավագը 1718 թ. ոմն պարոն Ռատակեսի ոչ թե վարկ է տրամադրել, այլ որոշակի քանակութեամբ ապրանքներ այն պայմանով, որ նա Աստրախան տանի նաև այդ ապրանքները, վերադառնա Մոսկվա և «դօ գուշի»-ի սկզբունքներով հաշիվը փակի իր հետ: Տե՛ս «Եղիա Կարնեցու Դիվանը», էջ 330:

⁴¹ Տե՛ս «Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը», Մատենադարան, ձևո. № 6241, էջ 38ա:

կու երթողիները, ինչպես նաև Սուրաթից Սպահան երթողին, տարբերվում են ծովային վարկի վերը թվաբերված մյուս երթողիներից, քանի որ այս դեպքում ծովային ուղիները զուգորդված են ցամաքային ճանապարհների հետ իրենց հատուկ դժվարություններով ու վտանգներով:

3. Փոխանցային մուրհակի (փոխանցագրի) կիրառությունը և նրա զարգացման մակարդակը

Արտաքին առևտրով զբաղվող վաճառականներին վարկավորելը, դրամի փոխադրումը մի վայրից մեկ ուրիշը, մի երկրից մեկ ուրիշ երկիր, միշտ էլ կապված է եղել մեծ դժվարությունների հետ: Կողոպտվելու վտանգը և այլ հանգամանքներ ստիպել են վաճառականներին կիրառել վարկավորման ու դրամի փոխադրման տարբեր հղանակներ, նոր պահանջներին համապատասխան կատարելագործելով դրանք: Միջնադարյան Իրանում և նրա հետ տնտեսապես կապված հարևան երկրներում, օրինակ, լաջն կիրառության մեջ է եղել «չեկը»: Վաճառականն ուրիշ վայր ճանապարհորդելիս իր դրամն ի պահ է տվել տվյալ վայրում գործող և ուրիշ վայրերի հետ կապված մի դրամափոխի և նրանից ստացել համապատասխան փաստաթուղթ՝ «չեկ»: Ժամանած վայրում «չեկը» ներկայացնելով վերոհիշյալ դրամափոխի հետ գործակցող անձնավորությանը, վաճառականը ետ է ստացել իրեն հասանելիք դրամը, իհարկե, համապատասխան վարձատրություն տալով փոխադրման այդ գործարքը կատարողներին:

Նշանավոր բանաստեղծ Նասիր-ի-խոսրովը (XI դ.), որ շրջել է նաև Հայաստանում ու տպավորություններ գրանցել հարավային Հայաստանի մի շարք քաղաքների մասին⁴², արևելյան երկրներում կատարվող մեծածախ առևտուրը նկա-

⁴² *Տե՛ս Насир-и-Хосров, Сафар-Наме, М.—П., 1933, с. 38—39.* Այստեղ հետաքրքրական տվյալներ կան Մարանդ, Խոյ, Բերկրի, Վան, Ոստան, Խլաթ, Բիթլիս, Արծն և այլ հայկական քաղաքների մասին:

բազրում է հետևյալ ձևով. օտար երկրից եկած վաճառականն իր բերած ապրանքը հանձնում է տվյալ քաղաքում բնակվող դրամափոխներից որևէ մեկին, ստանում է նրանից համապատասխան «չեկ» և դրանով անհրաժեշտ գնումներ կատարում: Այսպիսով, բոլոր գործարքները կատարվիս հնչուն դրամի փոխարեն գործածվում է միայն այդ «չեկը»⁴³:

Միջնադարյան Հնդկաստանում ևս գոյություն են ունեցել «քութհի» կոչվող մի շարք գործարար տներ, որոնք կատարել են վաշխառության, դրամափոխության ու դրամի փոխադրության ամենատարբեր ու բարդ գործարքներ⁴⁴: Ներանց ծառայությունից մեծապես օգտվել են նաև այդ երկրում հաստատված կամ առևտրական գործերով այնտեղ այցելած հայ վաճառականները: Բրիտանական գրադարանում պահվող հաշիբեն փաստաթղթերի մեջ կան մի քանի տասնյակ պարտամուհակներ, որոնց մեջ պարտատերի դերում հանդես են գալիս հնդիկ վաշխառուներ, իսկ պարտապանի դերում՝ հայ վաճառականներ: Դրանցից շատերի վրա (սովորաբար փաստաթղթի մյուս երեսին) պահպանվել են նաև տեղական լեզուներով գրանցումներ՝ պարտքը ստանալու և աշխի մասին: Հնդիկ վաշխառուների մասին բաղմաթիվ տվյալներ կան նաև Հովհաննես Զուղալեցու հաշվեմատյանում:

Կան որոշ փաստեր այն մասին, որ Հայաստանի քաղաքներում ևս տարածված են եղել դրամափոխության ու դրամափոխադրության միջնադարյան այդ ձևերը: XIV դ. Հայաստանում գործող կաթոլիկ քարոզիչ Բարթոլոմեոս Մարաղացու հայերեն լեզվով շարադրված քարոզգրքի մեջ,

⁴³ *ՏՃ՝* История стран зарубежной Азии в средние века, Отв. редакторы А. М. Голдобин, Д. И. Гольдберг, И. П. Петрушевский, М., 1970, с. 345.

⁴⁴ *ՏՃ՝* А. И. Чичеров, Экономическое развитие Индии перед английским завоеванием (ремесло и торговля в XVI—XVIII вв.), М., 1965, с. 149.

օրինակ, կա այսպիսի մի վկայություն. «Սովորութիւն է իմաստուն վաճառականաց, որ յորժամ երկնշին յաւաղակաց ի ճանապարհի, ոչ տանին զգանձս իւրեանց տան ի փոխ յայնպիսի վաճառական, որ ունի յաշխարհն իւրեանց տուն և բանձ, և առնուն ի նմանէ ձեռագիր, և երթան խաղաղութեամբ, և տանին ձեռագիր վաճառականին և առնուն զգանձս իւրեանց ի տանէ նորա»⁴⁵:

Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, մանավանդ աշխարհագրական նոր հայտնագործություններից հետո, երբ եվրոպական առևտրական կապիտալը նոր շուկաներ հայտնագործեց ու հնարավորություն ստացավ օվկիանոսային նորահայտ ճանապարհներով հաղորդակցվելու միջին ու հեռավոր արևելքի բազմաթիվ երկրների հետ՝ վարկավորման ու դրամափոխադրության բնագավառներում նկատվում են նոր-երևույթներ: Դրամական միջոցների և ազնիվ մետաղների անբավարար քանակի պայմաններում առևտրական վարկը դառնում է փոխանակության զարգացման էական գործոն⁴⁶: Առևտրական կամ վաճառականական վարկը հնարավորություն էր տալիս քնդարձակելու առևտրի ծավալը, մեծացնելու շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակը: Վարկ ստացած դրամով արհեստագործական նշանավոր կենտրոններից վաճառականները ձեռք էին բերում լրացուցիչ քանակությամբ ապրանքներ և այդ ճանապարհով քնդարձակում ապրանքափոխանակությունը, ինչպես մի երկրի սահմաններում, այնպես էլ տարբեր երկրների ու աշխարհամասերի միջև: Ըստ այդմ, առևտրական վարկի զարգացած տեսակներն ինչ-որ չափով խթանում էին ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը:

Ուշադրություն պետք է դարձնել նաև հետևյալ կարևոր

⁴⁵ Մատենադարան, ձեռ. № 2184, էջ 224ա: Նույնի աղավաղված մի տարբերակը տե՛ս II. Մ. Марр, Сборники притч Вардана, СПб., т. II, 1899, с. 284.

⁴⁶ См. А. Л. Хорошкевич, Кредит в русской внутренней и русско-ганзейской торговле XIV—XV веков, «История СССР», 1977, № 2, с. 125.

հանգամանքի վրա: Վաշխառուական կապիտալի անսահմանափակ տիրապետության ժամանակաշրջանում վարկ ստացած դրամը վարկառուներն օգտագործում էին միայն որպես պնման ու վճարման միջոց, իսկ որպես կապիտալ այդ դրամը հանդես էր գալիս միայն վարկատու-վաշխառուի ձեռքում: Որպես վարկառու, մեծ մասամբ, հանդես էին գալիս կամ նահակալներն ու իշխանները՝ պատերազմներ մղողներ և այլ նպատակներով, ֆեոդալական վերնախավին պատկանող անհատները՝ շուայլ կյանքի ու պերճանքի նոր առարկաներ ձեռք բերելու համար, կամ էլ թշվառության դռները շոքած արհեստավորներն ու գյուղացիները՝ ծանրաբեռնված իրենց րնտանիքի ամենաանհրաժեշտ կենսապայմանները հալթալթելու ծանր հոգսերով:

«Վարկային գործի զարգացումը կատարվում է որպես վաշխառության դեմ ուղղված հակադդեցություն»—գրել է Կ. Մարքսը⁴⁷: Իսկ հակադդող ուժերից առաջինը (ժամանակադրական առումով) առևտրական կապիտալիստներն էին, որ տնտեսական կյանքի մեջ սկսել էին հրամանատարական դիրքեր դրավել ու կենսական նոր ուժեր հավաքել կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանում: Նրանք արդեն գիմում էին վարկին շահույթ ստանալու նպատակով. վարկ ստացած դրամը սկսում է կապիտալի դեր կատարել ոչ միայն վարկատուի, այլև վարկառուի համար:

Հայ առևտրական բուրժուազիան, ինչպես իր զարգացման ներքին օրինաչափությունների մղումով, այնպես էլ եվրոպական ամենազարգացած հրկրների հետ տնտեսական մշտական ու սերտ հարաբերություններ ունենալու հետևանքով չէր կարող չկրել սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող նոր երևույթների բարերար ազդեցությունը: Կառչած մնալով դրամավարկային ժամանակավրեպ ու ավանդական ձևերին, նա անկարող կլինիր պահպանել իր դիրքերը միջազգային ասլրանքափոխանակության բնագավառում և հաջողությամբ մրցել Արևելք ներթափանցող արև-

⁴⁷ Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մաս II, էջ 142:

մըտա-եվրոպական առևտրական գիշատիչ կապիտալի հետ:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ հայ առևտրական կապիտալը XVII դ. և XVIII դ. առաջին հիսնամյակի ընթացքում, վաղ միջնադարից ժառանգած վարկադրամական հաբաբերությունները կարգավորող վաշխառուական սկզբունքներից իսպառ հրաժարված չլինելով, փոխանցային մուրհակի («տրատտա») հիմքի վրա կարողացել էր զարգացնել վարկատվության ու կապիտալի փոխադրման նոր ժամանակներին համաքայլ մի սիստեմ:

Փոխանցային մուրհակը լայն տարածում էր գտել հայ առևտրական կապիտալի գործունեության ողջ տարածքում՝ բաժանված լինելով երկու ինքնատիպ տարատեսակների: Առաջինը, որ շատ ավելի գործածական էր, հայտնի էր տարբեր անուններով: Նոր Զուգայում ամենից շատ օգտագործվում էին ավաֆ (մուրհակ), զմեի ավաֆ (երաշխավորված մուրհակ) կամ զմեի բի ջուֆամ ավաֆ (երաշխավորված առանց գրավի մուրհակ) տերմինները:

Աստրախանի և Հալաստանի տարբեր վայրերում մեծ մասամբ կիրառվում էր բաբար տերմինը, իսկ հնդկաստանյան փաստաթղթերում, մանավանդ հնդիկ լումայափոխների հետ ունեցած հաբաբերությունների ժամանակ հայ վաճառականներն օգտագործում էին հնդվի տերմինը⁴⁸:

Երկրորդ տեսակը կոչվում էր ջուֆամի ավաֆ (ապրանքով կամ գրավականով մուրհակ):

Աստրախանի դատաստանագրքում փոխանցային մուրհակի առաջին տարատեսակը բացատրված է այսպես (տեղիվում է աշխարհաբար թարգմանությամբ). «Բարաթ կամ բարաթագիր է կոչվում պարտավորության այն փաստաթուղթը, որով մի անձնավորություն (փոխառու) մեկ ուրիշից

⁴⁸ Հնդվի էին կոչվում դեռևս XIII դարից Հնդկաստանում կիրառվող գրամի փոխառվության ու փոխադրության գործարքները, որոնց օգնությամբ վաճառականները կատարում էին վարկային ապահով գործարքներ և անդամ հաշվարկներ: Տե՛ս Կ. Յ. Ашрафян. Феодализм в Индии: особенности и этапы развития, М., 1977, с. 128.

(փոխատուից) դրամ է փոխ վերցնում, որպեսզի մի այլ վայրում ինքը կամ իր փոխարեն մեկ ուրիշը (փոխավճարը) կատարի վճարումը փոխատուին կամ նրա կողմից լիա-
զորված անձնավորությունը (փոխապահանջին)»⁴⁹:

Մեզ հասած փոխանցային մուրհակների բաղմաթիվ օրինակները իրենց հիմնական կառուցվածքով նույնական են, բայց զգալի տարբերություններ ունեն մանրամասների մեջ: Ընդհանուր գաղափար տալու համար նրանց բովանդակության ու տարբերակների բնույթի մասին, հերթակա-
նորեն անդրադառնանք նրանց բաղկացուցիչ հատվածնե-
րին, բաղդատելով մի քանի տասնյակ փաստաթղթեր: Հա-
մեմատություն համար հիմք ենք ընդունել 1747 թ. մայի-
սին Ստվհանում շարադրված այն մուրհակը, որի մեջ որ-
պես փոխառու հանդես է գալիս հայ աղատապրական շարժ-
ման նշանավոր գործիչ Շահամիր Սուլթանումի Շահամիր-
յանը⁵⁰: Մուրհակներն, անխտիր, սկսվում են փոխառուի
հայրանվան ու անվան հիշատակումով, օրինակ «Սուլթա-
նումի որդի Շամիրս»⁵¹: Հաճախ որպես փոխառու հանդես
են գալիս երկու, երեք և ավելի անձնավորություններ: Նրբեմն

⁴⁹ «Դատաստանագիրք Աստուխանի հայոց», էջ 172:

⁵⁰ Պարսամուրհակը պահպանվել է ստորագրությամբ վկաներով հաս-
տատված պատճենով: Ստորև այն բերված է ամբողջությամբ. «Սուլթա-
նումի որդի Շամիրս, Ըսպահան, զմէի ավաթ վեռի ողորմածհոգի Մար-
գարի որդի պարոն Ավետէն, չամէն այ մին զղար ըռուփի, որ կէսն այ
նձ (500) ըռուփի: Բարաթս տվի, որ աստուծով ներքոյ թարեղէն խինդ
ամիս վաղայ, Մադրասումն, ողորմածհոգի Դավութխանի որդիք պարոն
Ռհանջան[ն], պարոն Մկրտումն մապլաղ ԱՌ (1000)-ին՝ արկաթ ըռուփի
տայ յիշիալ պարոն Ավետին կամ ուր օրդնուն: Եթե վաղիցն յետ և յառէջ
տան՝ Ֆի Աճ (100)-ին ամսէն երեք փայ ըռուփի մուղաթ հասապ լինի:
Բարաթս Բ գրեցի մին մազրուն, որ մնովն որ տայ՝ միւսին հուքմն
րաթիլ լինի: Բարաթիս մապլաղն թիվն ԱճԼԱ (1746)-էն քալթայ յինք
առած ուղամ խանելէ խալջին ջահտան այ: Դրեցալ թիվն փոքր ԱճԼԲ,
ադամ Ժն-ումն (1747, մայիսի 5):

Նազարէթի որդի Աղազարս վկայ էմ (կնիք)

Դիլանջէ որդի Ստեփանս վկայ էմ (կնիք)

Բրիտանական գրադարան, № 1047, էջ 177:

⁵¹ Նույն տեղում, էջ 57, 106, 177 և այլն:

հայրանուն-անունից բացի գրվում է նաև փոխառուի կամ փոխառուների ազգանունը, ծննդավայրի անվանումը, մականունը կամ ազգովյունը, օրինակ՝ «Խուսիկէնց Ծատուրի որդի պարոն Սիմեոն», «Խալդարէնց պարոն Յովան աղայ», «Նաշխարար Յովանէս», «Յրանկ Իվան Դանէլիւ»⁵²։ Նույն սկզբունքով են տրվում նաև փոխատուի (փոխատուների) և գործարքի հետ առնչվող մյուս անձանց հայրանուն-անունները։ Այնուհետև նշվում է փախառվության գործարքի վայրը։ Մեզ հասած փախառվութիւնների մեծ մասը գրված է Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձանում՝ Նոր Զուղայում։ Պահպանվել են նաև բազմաթիվ փոխանցադրեր գրված Բասրայում, Կալկաթայում, Սուրաբում, Շամախիում, Աստրախանում, Մոսկվայում և ուրիշ վայրերում։ Սրան հաջորդում է կատարվող գործարքի անվանումը՝ «զմէի ավար վեռի» կամ «զմէի բի ջուքամ ավար վեռի» և այլն, որից հետո նշվում է փոխատուի կամ պարտատիրոջ հայրանուն-անունը՝ մեծարանքի պատշաճ որակավորումներով։ «ողորմած հոգի Մարգարի որդի պարոն Ավետ» և այլն։ Բազմաթիվ դեպքերում որպես փոխատու հանդես են գալիս մի քանի անձինք, մեծ մասամբ առևտրական նույն ընկերության անդամներ կամ անասնապետ սերտ կապված վաճառականներ։ Այս տվյալին հաջորդում է փոխ ստացված գումարի չափի ու տեսակի (երբեմն նաև որակի) մասին տվյալը⁵³, ըստ որում որպես օրենք, միշտ ու ամենուրեք դրամի չափը նշվում է նախ ամբողջությամբ, ապա կես գումարով՝ ամեն կարգի թյու-

⁵² «Հարություն Լաղարյանի հաշվեմատյան», էջ 109, 61, 24; «Շահ-վելու որդի Սարհադի հաշվեմատյանը», Մատենագարան, ձև. № 6241, էջ 3ր, 6ա։

⁵³ Օրինակ, «Արկաթի ռուփի», «Մաղրասի սքայ ռուփի», «Մաղրասի ռանի հալ սքայ ռուփի», «Շահնադրի», «Երուփի նադրի երկուկես մսխալի», «Նադրի Բ ի մսխալանոց», թաղայ սքայ արասի», «աֆոնքի արասի», «Պասրու ըռալիջ թուման», «հուն», «զօլօթյա», «դուկատ», «տուկաթ կորէնթ», «մանէթ», «հօսպէկ», «դուլդի» և այլն։ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 49, 81, 82, 133, 145, 173, 185, 251 և այլն, նույն տեղում, № 1048, էջ 20, «Նդիա Կարնեցու Դիվանը», էջ 326 և այլն։

դիմացություններին խուսափելու և կեղծիքի փորձերը կանխելու համար:

Փոխանցային պարտամուրհակի հաջորդ ու կարևորագույն հատվածը պատասխանում է այն հարցին, թե գործարքը կատարելուց որքան ժամանակ հետո և որտեղ է փակվելու հաշիվը: Շահամիր Շահամիրյանի վերոհիշյալ մուրհակում ասված է, որ փոխ ստացված գումարը վերադարձվելու է «և հրքոյ թարեղէն խինգ ամիս վաղայ Մադրասումն»: Հինգ ամսվա այս պայմանը կրկնվում է Սպահանում կնքված գրեթե բոլոր մուրհակներում, որոնցում որպես վճարման վայր նշված են Բենդալիայի քաղաքները: Բասրայից Մադրաս փոխանցագրերի մեջ սահմանված է 61 օր կամ 3 ամիս ժամկետ⁵⁴, Սպահանից Բասրա, Նույնպես, 61 օր⁵⁵, Ամստերդամից Վենետիկ, ապա Բասրա՝ 7 ամիս⁵⁶, Մոսկվայից Ամստերդամ՝ 3,5 ամիս (105 օր)⁵⁷, Դաքայից Կալկաթա՝ 15 օր⁵⁸ և այլն:

Պարզ է, որ ժամկետը որոշելիս հաշվի է առնվել վայրի հեռավորությունը, ցամաքային ու ծովային ճանապարհների վիճակը, ճանապարհորդության հնարավոր միջոցները և այլն: Ժամկետի նշման վերոհիշյալ ձևը, սակայն, միակը չէ: Բաղմաթիվ մուրհակների մեջ, ճիշտ այնպես ինչպես ծովային վարկի պայմանագրերում ասված է, որ վճարումը կատարվելու է այսինչ նավի այսինչ նավահանգիստ հասնելուց կամ տվյալ մուրհակը փոխավճարին ներկայացվելուց 11 օր, 21 օր կամ էլ 31 օր հետո⁵⁹:

⁵⁴ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 49, 215, 275:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 251:

⁵⁷ Տե՛ս «Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը», էջ 3բ, 6ա, 6բ և այլն:

⁵⁸ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 116:

⁵⁹ «Բարաթիս տեսնելէն քրոանմին օր վաղայ», «որ գնայ Պասրայ, տեսնելէն յետ ԻԱ (21 օր) վաղայ»: Բրիտանական գրադարան, № 1047,

Ժամկետի մասին տվյալից հետո մուրհակի մեջ հիշատակվում են փոխավճարի (տրասատ) կամ փոխավճարների հայրանուն-անունները: Այնուհետև նշվում է վճարվելիք դու-մարը, արտահայտված տվյալ երկրում շրջանառության մեջ գտնվող դրամական միավորով: Դրամական տարբեր սիս-տեմների վուդահեռ մեծ թվով պրանցումները, որոնք հան-դիստում են այդ փաստաթղթերում, լայն հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տարբեր երկրներում թողարկ-վող դրամական միավորների փոխադարձ արժեքները, ուստի պրամագիտական կարևոր նշանակություն են ստանում:

Մուրհակի հաջորդ հատվածում տրվում են փոխապա-հանջի (ռեմիտենտ) կամ փոխապահանջների հայրանուն-ա-նունները: Շարունակությամբ նշվում է, որ նրա (նրանց) բա-ցակալության դեպքում դրամը վճարվելու է վերջիններիս կողմից լիազորված անձնավորությանը՝ «օրդնուն», որը

էջ 196, 276, 289: «Ջուրամն վեր կայ Ա (1) ամիս վաղայ», «չիտ ջու-րամ վեր կալէն ԻԱ (21) օր վաղայ», «չիտ ջուրամին վեր կալէն ԺԱ (11) օր վաղայ»: «Հովհաննես Ջուղայեցու հաշվետումարը», էջ 70, 90 և այլն:

Կան նաև փոխանցային մուրհակներ, որոնցում որևէ ժամկետ չի սահմանված (կոչվում է «րի վաղայ»), այդ պայմանով փոխ ստացող-ները պարտավորված են եղել սոկոսներ վճարել ոչ թե որոշակի ժամ-կետից հետո, այլ հենց անմիջապես՝ պարտամուրհակի գրանցման օրից սկսած: Այդ պայմանով 1746 թ. Նոր Ջուղայում երկու տարբեր փոխա-տուներից դրամ է ստացել Սաֆարի կողակից և Ստեփանոսի մայր Մա-րիամը: Մուրհակում գրված է. «Բարաթս տվի րի վաղայ, Մադրասումն... իմ...որդի պարոն Ստեփանն... խերուրին ամալն Գ(3) փայ մուղաթովն (այսինքն ամիսը 0,75%) բարաթս ինչ վախտ խասանէ՝ տայ»: Բրի-տանական գրադարան, № 1047, էջ 173, 176:

«Բի վաղայ» տրված այսպիսի պարտամուրհակները պարզ պարտա-մուրհակների տարատեսակներից են ու նրանցից տարբերվում են միայն նրանով, որ փոխառուն պարտավորվում է ոչ թե ինքն անձամբ վճարել ստացած գումարը, այլ այդ պարտավորությունը դնում է ուրիշ մի վայ-րում գտնվող իր հարազատի վրա:

ներկայացնելու է համապատասխան լիազորագիր («օրդնագիր»)⁶⁰:

Կան բազմաթիվ մուրհակներ, որոնցում վերոհիշյալ հատվածից հետո գրանցվում է այն դեպքը, որի հետևանքով փոխավճարը ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է վճարել մուրհակով նախատեսված գումարը: Խնչ էր արվելու նման դեպքում: Երբեմն, հենց մուրհակի մեջ գրվում էր, որ փոխառուն պարտավոր է այդպիսի դեպքում համապատասխան փոխհատուցումը ինքը կատարել⁶¹: Եվ եթե, նույնիսկ, այդպիսի կես դրանցված չէր լինում, նման իրադրության դեպքում վարվում էին ըստ դոյություն ունեցող կարգի. փոխապահանջը բավարարություն չստանալով, դիմում էր տվյալ վայրում գտնվող հայ վաճառականների, նրանց կողմից ստանում համապատասխան փաստաթուղթ՝ փոխավճարի հրաժարումը հաստատող, և այն ուղարկում Նոր Զուղա: Այդ փաստաթղթի ուժով փոխատուն, Նոր Զուղայի ինքնավար մարմինների կարգադրությամբ ստանում էր իրեն հասանելի գումարը (տոկոսով) փոխառուից կամ էլ նրա հարազատներից: Պահպանվել են այդպիսի մի քանի հաստատագրեր: 1744 թ. մի դրության մեջ, օրինակ, էմնիազի որդի Հովհաննեսն ասում է, որ իրեն ուղարկված 220 ռուբլու փոխանցագրով ինքը ներկայացել է Սեդաբազում գտնվող փոխավճար պարոն Պետրոսին, վերջինս սակայն ասել է, որ «տալման չեմ, մա[ն]լար արայ, հետ աղարկիր»: Ըստ այդմ, Հովհաննեսը դիմել է Սեդաբազի հայ ջումխաթին (վաճառականների համայնքին) ու խնդրել հաստատել այդ իրողությունը, որպեսզի «մա[ն]լարս գնայ Ըսպահան, հախ բը հախ դատն հասանի»: Փաստաթղթի ստորին մասում հրեք վաճառականներ վկայում են «ման զարի» իսկությունը: Վկաներից Կոմանդորի որդի Մատ-

⁶⁰ Աստրախանի դատաստանագրքում ասված է. «... Յանձնարարական գիր, որ աշխարհաբարիւ գոչեմք օրդնագիր. այրն այն նոյնով օրդնադրաւ կարիցէ պահանջել զգրամ բարաթին ի փոխառուէն»: «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», էջ 175:

⁶¹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 201, 193 և այլն:

թեոսն, օրինակ, գրում է այսպես. «Բարաթին փողն պարոն Պետրոսն ասաց իմ քշտին փող չկայ, տալման չեմ» և այլն⁶²:

Փոխանցագրերի հաջորդ հաստատվածում արձանագրվում է փոխատվության հիմնական պայմանը. վճարումն ուշացնելու դեպքում գանձվելիք տուգանքի չափը: Նախավերջին հաստատվածում ասվում է, որ տվյալ պարտավորակը գրվել է երկու օրինակից, որոնք չեն ստորբերվում միմյանցից. «Բարաթս Բ. գրեցի՝ մին մազբուն»: Դրանցից մեկը պահվել է փոխատուի մոտ, մյուսը՝ ուղարկվել փոխավճարին: Մեկ օրինակի վրա փոխապահանջի կողմից գումարի ստացման մասին համապատասխան պրանցում կատարելուց հետո, մուրհակի մյուս օրինակը կորցնում է իր իրավական ուժը («մնովն որ տայ՝ միւսն հուքմն բաթիլ լինի»):

Վերջին հաստատվածը նախատեսված էր տարեթվի ու ամսաթվի գրանցման համար: Զուգայեցիներն ու նրանց աղդեցության տակ գտնվող վայրերի վաճառականները, մեծ մասամբ, օգտագործում էին Ազաբխայի տոմարը, շտկայն հաճախ կիրառում էին նաև հայոց հին տոմարը, ինչպես նաև քրիստոնեական թվարկությունը: Ամենավերջում դրվում էին վկաների ստորագրություններն ու կնիքները. եր-

⁶² Բրիտանական գրադ., № 1047, էջ 43: Նման բովանդակություն ունեն նաև մյուս երկու վաճառականների՝ Սաֆարի որդի Հովսեփի և Խոջամալի որդի Մատուրի, վկայագրությունները: Այդպիսի մի ղեպը էլ առնչվում է Շահամիր Շահամիրյանի անվան հետ 1745 թ. նա 450 ոսփի պարոք էր վերցրել Սպահանում: Ըստ մուրհակի, վճարո՞վը Մադրասում կատարելու էին Դավութխանի որդիներ Հովհաննջանն ու Մկրտումը: Փոխապահանջ Ղազարի որդի Սեթը ներկայացել է սրանց ու պահանջել գումարը: Բայց նրանք չուղար ավին թի մենք պարոն Շահամիրն խնոքաթայ և տալիք չունեմք, տալման չենք»: Ըստ այդմ էլ, Սեթը խնդրում է Մադրասի այն վաճառականներին ովքեր տեղյակ են այդ մասին, համապատասխան զիր ստորագրել՝ Նոր Զուգա ուղարկելու համար: Ծրեք վկաներ հաստատում են այդ գրի ճշմարտությունը: Բրիտանական գրադարան, № 1047, էջ 296, նման բովանդակություն ունի նաև էջ 199-ի փաստաթուղթը:

քեմն նշվում է, որ վկայությունը կատարվել է փոխառուի «իզրարով», այսինքն կամքով, համաձայնությամբ: Օրինակ, «Ես Սիմոնի որդի աւեր Ռհանէսըս վերոյ Մատուրին եղրարովն գրեցի, վկայ եմ», «Ես Շուքուրի որդի Յօվանջանըս վերոյ Մատուրին եղրարովն վկայ եմ»⁶³: Ստորագրությանն առնելիս, որպէս կանոն, գրվում էր տվյալ վկայի կնիքը: Հոգեւորականների կնիքների վրա դրոշմված էին նրանց անունները, հոգեւոր աստիճանը, ինչպէս և կնիքի պատրաստման տարեթիւը. («Յի. Քի. ծոյ. Յակոբ վարդապետ, թվ. ՌՃԶ (1731)» կամ «Յի. ծոյ. Գեորգ վրդպտ. թվ. ՌՃՀԴ (1725)» և այլն), իսկ վաճառականների կնիքները, գրեթէ առանց բացատրության, պարունակում էին սիմվոլիկ զանազան նշաններ ու պատկերներ, բայց չունեին որեւէ պիր ու թվական:

Աւարտելով փոխանցային պարտամուրհակի հայկական տարբերակի քննությունը, որի ընթացքում հնարավորության չափով փորձեցինք պատասխանել գործարքը կատարող կողմերի պարտավորություններին ու փոխատվության պայմաններին առնչվող մի շարք հարցերի, կրկին անդրադառնանք տոկոսին⁶⁴:

Փոխանցային մուրհակի մեղ հասած օրինակների մեծամասնության մեջ ամսական 0,5, տարեկան 6% է սահմանված: Քիչ չեն, սակայն, ամսական 0,75, տարեկան 9% շահով տրված մուրհակները: Մի քանի փաստաթղթեր էլ կան, որոնցում տոկոսը հասնում է ամսական 1, տարեկան 12%-ի:

Վերջնական ու սպառիչ պատասխանել այն հարցին, թե որ դեպքում էր նվազագույն տոկոս սահմանվում և որ դեպքում՝ առավելագույն, առայժմ հնարավոր չէ, բայց որոշ պարզարանություններ կատարելու և նախնական եզրակացության հանդէս համար կան Հիմնաւոր կովաններ:

⁶³ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 63:

⁶⁴ Այս հարցերն ավելի մանրամասն քննարկված են «Փոխանցային մուրհակը հայ խոջայական միջավայրում» մեր հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 87—101):

Ամսական 0,5%-ով տրվող փոխանցային մուրհակների ճնշող մեծամասնության մեջ փոխատուի, փոխառուի, փոխավճարի ու փոխապահանջի դերով հանդես են գալիս տնտեսական իրենց գործունեությամբ միմյանց հետ սերտորեն շաղկապված, հաճախ միևնույն առևտրական ընկերության շուրջ համախմբված նույն աղաների գործակատարներ հանդիսացող վաճառականներ: Մուրհակների և համանման փաստաթղթերի մեջ, շնայած նրանք շարադրված են սահմանված շաբլոնով, տեղ են գտել այս ենթադրությունը հաստատող որոշ արտահայտություններ: Հարություն կադարյանի հաշվմատյանում, օրինակ, բազմիցս հիշատակություն կա այն մասին, որ Մաթոսի որդի Ավետը և Աստվածատուրի որդի Մարգարը Ամստերդամից ապրանք կամ դրամ են ուղարկել: Դրանց մասին խոսելիս Հարությունը շատ հաճախ գործածում է «մեր պարոն Ավետ», «մեր Մարգար» արտահայտությունը, ցանկանալով շեշտել այդ վաճառականների սերտ կապն իրենց ընկերության հետ⁶⁵:

Փոխանցային մուրհակներից մի քանիսի մեջ տվյալներ կան այն մասին, որ պարտքի վճարումը կատարվելու է «մեր սարքարի կոնթէ փողերէն» (այսինքն, մեր առևտրական ընկերությանը պատկանող դրամից)⁶⁶ կամ «մեր պարոն Յարութիւնին սարմային կոնթէ փողէն»⁶⁷: Մեկ ուրիշ տեղ ասված է, որ «ջութամի ավաք» է վերցվել «տէր Յովանիսի որդի Ղուպաղին սարմայիցն մեղ մոտ մնացած փողէն»⁶⁸ կամ նշված է, որ երեք նվազով ստացված 1769 թումանի պարտքը մարվելու է ոչ թե ընկերության հիմնադրամից, այլ ընկերության տնտեսներ Կրիգորին, Թարխանին ու շահանեսին հասանելի գումարներից⁶⁹ և այլն:

⁶⁵ «Հարություն կադարյանի հաշվմատյան», էջ 105, 106 և այլն:

⁶⁶ Բրիտանական դրադարան, № 1047, էջ 94, 109, 111:

⁶⁷ Նույն տեղում, էջ 100:

⁶⁸ Նույն տեղում, էջ 106:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 111:

Այս և նման ուրիշ փաստերի գումարով հանգում ենք այն հզորակացութեան, որ ամսական 0,5, տարեկան 6% շահ բերող պարզ ու փոխանցային մուրհակի միջոցով առևտրական կապիտալի ներկայացուցիչները վարկավորում էին միմյանց, լրացուցիչ հնարավորութիւններ ստեղծում իրենց այցելած երկրներից արտահանելու նպատակով ավելի մեծ քանակութեամբ ապրանք գնելու, արագացնում էին իրենց կապիտալների շրջանառութիւնը, դշուրին միջոց գտնում չահված դրամը նոր Զուլայում նստած իրենց ազաներին անկորուստ ու ապահով հասցնելու և այլն: Կարելի է այն հանգամանքը, որ այսօրվա փոխառու Վալը դառնում էր փոխառու, ինքը հայտնվելով երկվա փոխառուի վիճակում և այլն: Ըստ այդմ, ժամկետանց մուրհակների համար սահմանված տոկոսի նվազագույն շափանիշը ամսական 0,5 տարեկան 6%, կիրառվում էր գերադանցապես ջուղահայ վաճառականների միջև կատարվող գործարքներում:

Ինչպես արդեն նշվեց, շատ ավելի մեծ թիվ են կադմում այն փոխանցագրերը, որոնցում շահի շափը ամսական 0,75, տարեկան 9% է սահմանված: Շահամիր Շահամիրյանի մեղ արդեն ծանոթ մուրհակի մեջ (տրված նույն այդ տոկոսով) տվյալ կա ստացված դրամի օգտագործման նպատակի մասին. «Քալթայ լինք առած ռաղամ խա-նելէ խալչին ջահտան այ»,—գրված է այնտեղ, այսինքն՝ պաշտոնական ինչ-որ գրութեան կամ հրովարտակի ստացման համար անհրաժեշտ դրամը վճարելու նպատակով: 1732 թ. մի մուրհակի մեջ, որի փոխառուն Մարգարի դուստրը Ազիզն է, դրամի ստացման նպատակի մասին գրված է հետևյալը. «վերոյ մապլաղն հերանցտ սաան մա, ու խալչին ջահտան այ», այսինքն վերցված է այդ կնոջ հայրական տնից պահանջվող պետական հարկերը վճարելու համար⁷⁰: Այս առումով ավելի արժեքավոր է 12 ջուղայեցի-

⁷⁰ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 18:

ների (որոնց թվում և քալանթար Ավետի) կողմից հաստատված արձանագրությունը, որի մեջ մանրամասն տեղեկություններ կան Աղազարի կին Սարալուի կողմից 490 ոստիկի պարտք վերցնելու հրամայական անհրաժեշտության մասին: Արձանագրությունը տտրազրած անձինք, մեկը մյուսին հաստատելով ու լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով, ծանուցում են, որ պետական պաշտոնյաները, նույնիսկ, խոշտանգել են այդ կնոջը, պահանջելով նրանից Բենգալիայում գտնվող իր ամուսնու և որդու (Աղազարի ու Փանեասի) թագավորական հարկը⁷¹:

Նույն՝ ամսական 0,75, տարեկան 9%-ով տրվող մուրհակներում փոխառուի գերով ավելի հաճախ հանդես են գալիս կանայք, որոնք իրենց ընտանիքի առօրյա կարիքները հոգալու համար պարտք են վերցնում՝ վճարման պարտավորությունը փոխանցելով աշխարհի տարբեր ծայրերում առևտուր անող իրենց ամուսիններին: Թվարկենք մի քանի փոխանցագրեր ստորագրված ջուղահայ կանանց կամ նրանց հանձնարարականով՝ վաճառական ու հողեկորական վիճակների կողմից: 1746 թ. հունիսի 19-ին Մարութի կողակից Օվսանը 1160 ոստիկ է ստանում, պալմանով որ պարտքը 5 ամսից հետո մարելու էր Մադրասում գտնվող իր ամուսինը⁷²: 1746 թ. հուլիսի 8-ին տեր Հովհաննեսի կողակից Սաբրիխանը ստանում է 81 ոստիկ, պարտքը 5 ամսից հետո մարելու էր Սևիդաբադում գտնվող իր ամուսինը⁷³: 1747 թ.

⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 268: Այսպիսի գրությունն անհրաժեշտ է համարվել, հավանաբար, այն պատճառով, որ օտարության մեջ զբոնվող վաճառականների տանը մնացած կանայք իրավաբան չեն ունեցել առանց իրենց ամուսինների սեռական ու համաձայնության պարտք վերցնելու Զուլ-ճար 12 անձանց կողմից հաստատված այդ փաստաթուղթը օրինական ուժ է տվել այդ դրամը ստանալու համար կազմված փոխանցային մուրհակին, պարտադրելով Բենգալիայում առևտուր անող նաղարի որդի Աղազարին ու նրա Փանոս որդուն՝ առանց առարկության վճարելու հարկադրարար վերցված այդ պարտքը:

⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 17:

⁷³ Տե՛ս նույն տեղում:

Սուլթանումի կողակից Անամը (Շահամիր Շահամիրյանի մայրը) 3 նվագով 85.521 ռուբլի է ստանում տարբեր վաճառականներից. պալատը 5 ամսից հետո մարելու էր Բենգալիայում կամ «ուր և իցէ» գտնվող իր ամուսինը և այլն⁷⁴։ Այս կարգի փոխանցագրերի մասին մի շարք հիշատակություններ կան հաշվեմատյանների մեջ։ Այսպես, օրինակ, Հարություն կազարյանը 1750 թ. Մոսկվայում Հովհաննան Շահ-րիմանյանից ստացել է 75 թուման, պայմանով, որ այդ գումարը Գիլանում գտնվող Աղաղար կազարյանը ուղարկի Նոր Զուղա ու հասցնի Հովհաննանի ընտանիքին։ Հաշվեմատյանի նույն էջում գրված է նաև հետևյալը. «Շահ-րիմանէնց սլարեն Յարութին դի Սարհադէն Ը (8) (թուման) ԳՌ (3000) դիան յինք առու, որ (սլարեն Աղաղարն Գիլանայ) խառացանի պարոնին խիզանին»⁷⁵։ Այս երկու օրինակներում փոխանցման գործողությունը հակադարձ ուղղությամբ է կատարված։ Տվյալ դեպքում նորջուղայեցի խոջաներն ևն Մոսկվայում դրամ տալիս Հարություն կազարյանին (նա հանդես է գալիս փոխառուի դերում)։ Հարությունի ցուցումով Գիլանից Նոր Զուղա է փոխանցում նըշված գումարները նրա հղբայր Աղաղար կազարյանը։ Այսպես, գտնվող կազարյանների գործակիցներից մեկը՝ փոխավճարի դեր ստանձնելով, դրամը հանձնում է փոխապահանջներին (ռեմիտենտներին), այսինքն Շահ-րիմանէնց Հովհաննանի ու Հարությունի ընտանիքի անդամներին։

Պարզ է, ուրեմն, որ այսպիսի փոխանցային մուրհակներով ջուղահայ վաճառականները սուրն էին հասցնում իրենց վաստակի այն մասը, որն անհրաժեշտ էր իրենց ընտանիքի անդամների առօրյա ծախսերի, պետական հարկերի վճարման, օջախը շին պահելու համար։ Այլ խոսքով, այս դեպքում ևս դրամական գործարքի մեջ էին ստանում

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 38։ Այս կարգի փաստաթղթերից են նաև Բրիտանական գրադարանի № 1047 ձևագրի 33, 143, 145, 193, 211 էջերը։

⁷⁵ «Հարություն կազարյանի հաշվեմատյան», էջ 75։

անտեսական իրենց գործունեությունը՝ միմյանց հետ սերտորեն շաղկապված ջոկահայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, բայց ոչ թե առևտրական իրենց գործունեությունը վարդացնելու, այլ իրենց ընտանեկան հոգսերը լրացնելու համար:

Կան որոշ փաստեր հօգուտ այն ենթադրության, որ տարեկան 12 և ավելի տոկոս շահ բերող պարզ ու փոխանցային մուրհակների զորությունը գործարքի մեջ էին մտնում ջոկահայ վաճառականներն ու վաշխառուները, երբ գործ էին ունենում. ա) Ջուղայի համայնքի անդամ, բայց իրենց դասի մեջ շմտնող անհասաների կամ բ) ուրիշ վայրերի հայ վաճառականների, կամ էլ գ) օտարազգի պետական գործիչների, վաճառականների և պաշտոնյաների հետ: Ըստ որում, ամենաբարձր տոկոսով վարկավորվում էին օտարազգի վարկառուները⁷⁶:

⁷⁶ Բազմաթիվ տեղեկություններ կան հայ խոջաների կողմից օտարազգի պետական պաշտոնյաներին խոշոր գումարներով վարկավորելու մասին: Ընդ որում, այդ վերաբերում է ոչ միայն Իրանի ու Թուրքիայի ֆեոդալական վերնախավին, այլև Վրաստանի, Ռուսաստանի, Լեհաստանի և արևմտակրոնական որոշ երկրների խոշորագույն պետական գործիչներին, նույնիսկ, գահակալներին: Պիրցիալեյվիլին այդ մասին գրում է. «Դրամական կապիտալներ ունենալով հայ վաճառականները և արդյունաբերողները հաճախ թագավորներին, թագավորական ընտանիքի անդամներին և անբաժան ֆեոդալներին վարկ էին տրամադրում, գյուղերի կամ քաղաքային հողային սեփականությունների գրավով, փոխառություններ էին կազմակերպում պետության կարիքների համար...» *А. Г. Пир-цадзе* «История выступлений торгашеских амбаров в 1865 г., „Исторические записки“, № 8, 1940, с. 213—214. Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանում տվյալներ կան, որտեղ նշանավոր պետական գործիչների՝ Կ. Ա. Նաոեհեհեհի, ֆելդմարշալ Վ. Վ. Դոլգոուկովին և ուրիշներին տրամադրվում կամ նրանց խնդրանքով Ռուսաստանից Հոլանդիա դրամ փոխադրելու մասին: Մատենագրան, ձեռ. № 6241, էջ 26 ա: Հարություն Լադարյանը Ռեշադե եղած տարիներին հսկայական գումարներով վարկավորել է ռուսական հյուպատոս Ս. Ջ. Արապովին: Լադարյանների հետ սերտ կապեր է ունեցել նաև Աստրախանի նահանգապետ ու ռուս նշանավոր պատմաբան Վ. Ն. Տատիշչևը («Հարություն Լադարյանի հաշ-

Ավարտելով «ղմեի բի ջութամ ավար» կոչվող փոխան-
ցային մուրհակի քննությունը, անցնենք փոխանցային մուր-
հակի «ջութամի ավար» տարատեսակին:

«Ջութամի ավար» (այսինքն «ապրանքով մուրհակ») կոչվող փոխանցադրերով փոխառուին դրամ էր արվում նյութական երաշխավորություն՝ «պոտիկատ» ստանալու պայմանով: Ընդ որում, այդ «պոտիկատը», որպես կա-
նոն, լինում էր ինչ-որ ապրանք (թանկագին քարեր, մե-
տաքս և այլն): Մինչև դրանց քննարկման անցնելը, ծանոթանանք այդ կարգի փոխանցային մուրհակներից մի քա-
նիսին.

1. Շահվելու որդի Սարհադը 1714—17 թթ. Մոսկվա-
յում եվրոպացի մի վաճառականից (գրված է. «Ֆռանկ Բու-
դիշկովէն») ստանում է 400 թուման որպես «պոտիկատ» տալիս է 13 հակ շարբաֆ մետաքս, պայմանով որ այդ պո-
տիկատը Ամստերդամում արվի Բիւանի որդի Մարկոսին ու
նրանից ստացվի 13400 գուլդեն⁷⁷:

2. Ծատուրի որդի Մարգարը 1745 թ. Սպահանում Մի-
նասի որդի էմնիադից ու Սեթի որդի Գրիգորից (Խոջա-Մի-
նասինց առևտրական ընկերության ավագ անդամներ) ստա-
նում է 2520 ռուբլի դրամ, պոտիկատ է տալիս մարգարի-
տով լի մի կնքած «կապոց», այն պայմանով, որ այդ
մարգարիտը հասցվի Կալկաթա, հանձնվի խաշիկ աղային և
15 օր հանձնումից հետո նրանից ստացվի փոխ տրված դու-
մարը⁷⁸:

3. 1746 թ. Սպահանում վերոհիշյալ փոխատուները 540
ռուբլի «ջութամի ավար» են վերցնում տեղի Հովհաննեսի որ-
դի Ղուկասի իրենց մոտ հղող դումարից ու տալիս «պոտի-
կատ» մի «կապոց թիթե ապրանք» (այսինքն գոհարեղեն):

վեմատյան», էջ 47): Ըստ նույն աղբյուրի Շվեդիայի թագավորը (հա-
վանաբար Կարլ XII-ը) 700 թուման պարտք է ունեցել Ջուղայի նրևան
թագամասի բնակիչ Ոսկանի որդի Սաեփանին: Նույն տեղում, էջ 112:

⁷⁷ Տե՛ս Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, էջ 26ա:

⁷⁸ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 8:

Այն Կալկաթա տարվելուց և պարոն Մինասին (էլիազի որդի խոջա Մինասը) հանձնելուց 15 օր հետո վերջինս պարտավոր էր այդ գումարը հանձնել փոխատուի (վերոհիշյալ Ղուկասի) կողմից լիազորված անձնավորությունը⁷⁹:

«Ջուքամի ավաք» կոչվող փոխանցագրերում որպես փոխառու հանդես եկող վաճառականը արդեն գնած ունի թանկարժեք ինչ-որ ապրանք, որն ուղարկելու է վաճառքի մեկ ուրիշ վաճառ՝ իր գործընկերներից կամ գործակատարներից որևէ մեկին: Այդ ապրանքը գնելու համար ծախսած գումարը շահույթի հավելումով ստանալու համար նա պետք է երկար սպասեր (ապրանքը մեկ ուրիշ վաճառ կամ երկր: փոխադրելու, այնտեղ վաճառելու, ստացված դրամով մի ուրիշ ապրանք գնելու և ետ ուղարկելու համար պահանջվելու էին ամիսներ, եթե ոչ տարիներ): Փոխանցային մուրհակի այս ձևի միջոցով վաճառականները հնարավորություն էին ստանում մեծապես արագացնելու այդ գործողությունները, անմիջապես վարկատուից ստանալով «պոսիկատ» տված ապրանքի արժեքը կամ նրա մեծ մասը, և մինչև ողջ գործարքի ամբողջական ավարտումը՝ շրջանառության մեջ էին գնում վարկ ստացած գումարը:

Հասկանալի է, ինչպես «բի ջուքամ ավաքի», այնպես էլ «ջուքամի ավաքի» դեպքում փոխատու անձինք որոշակի շահ էին ստանում նշված գործարքները կատարելիս:

Մուրհակի հետագա զարգացման, միջազգային առումով ավելի լայն տարածման համար, կարևոր նշանակություն է ունեցել փոխանցման արձանագրությունը՝ «Ինդոսամենտը»-ը, որը սկսվել է կիրառվել հվրոպական երկրներում XVI դ. վերջերից կամ XVII դ. սկզբներից: Մինչ այդ, մուրհակը մի երրորդ անձնավորությունը փոխանցելու համար պահանջվում էր հատուկ լիազորագիր: «Ինդոսամենտը» մեծ չափով պարզեցրեց այդ գործողությունը: Այն տարածվելուց հետո բավարար էր համարվում հենց մուրհակի վրա փոխապահանջի ձեռքով կատարված նշումը՝ դրա-

⁷⁹ Տե՛ս Բրիտանական գրադարան, № 1047, էջ 106:

մի ստացման իրավունքը մեկ ուրիշին հանձնելու մասին: Համառոտ այդ արձանագրության հավելումով մուրհակը ստանում էր նոր բովանդակություն՝ փոխարինում էր դրամին, դառնալով որոշակի արժեքի էկվիվալենտ⁸⁰:

Պահպանվել են փաստեր այն մասին, որ փոխանցային մուրհակը հայ առևտրական կապիտալի գործունեության շրջանակներում ևս անցել է իր զարգացման վերահիշյալ փուլին ու դարձել ինդոսամենտ:

Բրիտանական գրադարանում պահվող սովորական մի փոխանցային մուրհակի վրա, օրինակ, գտնում ենք փոխապահանջ Հովհաննեսի որդի Մոսկովի ձեռագրով կատարված հետևյալ փոխանցման արձանագրությունը. «Սանատիս մուսլադն խատանի պարոն Եսադուլէ որդի պարոն Յէրապետի, որ Յէրայպետին խասացած որպէս ինձ՝ Ոհանէսի որդի Մոսկոֆիս գնե խասել: Թիվն ՌՃԻԸ (1679) համիրայ ԻՅ (դեկտեմբերի 10), Կալկաթայ»⁸¹: Այսպիսով Մոսկովն իրեն հասանելիք գումարի ստացման իրավունքը, մեկ նախադառույթյամբ փոխանցում է ուրիշի, այդ ճանապարհով հատուցելով նրան իր պարտքը կամ էլ նրանից զանազան ապրանքների զնելով: Այս արձանագրությունը կազմված է այնպիսի հստակ բանաձևով, որ վկայում է ինդոսամենտի շատ տարածված լինելու մասին:

Նշենք նաև այն, որ որոշ պարագաներում ինդոսամենտի դեր էին կատարում նաև այլ կարգի դրամական փաստաթղթերը, մասնավորապես ընկերագրերը, այսինքն որևէ մեկին վարկ տրված լինելու մասին փաստաթղթերը: 1746 թ. Հովհաննեսի կողակից Ջախաթունը, օրինակ, 2550 ռուբլի դրամի դիմաց էմնիալի որդի Հաբուխունի (իր պարատիրոջ) մոտ գրավ է դրել իրենց գործակառարների ընկերագրերը, իր

⁸⁰ Տե՛ս Дж. Плугачто, *նշվ. աշխ.*, էջ 423: Адольф Бэр, *նշվ. աշխ.*, էջ 47:

Փ. Н. Михалевский, *Очерки истории денег и денежного обращения*, т. I, *Деньги в феодальном обществе*, 1948, с. 124—125.

⁸¹ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 116:

սլարտսոմուրհակի տակ այդ կապակցությամբ գրելով հետև-
յալը. «... Բ (2) ընկերացիքին մասկուր պարոն Յարութիւնին
գրաւումն այ. ախտիարն ուրն այ. մինչ իւր մասկուր յա-
խին խասանի, յետ իւր յախին խասանելէն ապա թէ Բ. դա-
ճայ յիշեալ ընկերացիքին ախտիարն իմ՝ Զախաթունիս այ»⁸²։
Ինդոսամենտի գոյությունն ինքնին փոխանցալին մուր-
հակների մեծ զարգացում ապրած լինելու պերճախոս
փաստ է։

⁸² Բրիտանական գրադարան, № 1048, էջ 198։

ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ
ԴԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՍԱՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անդրադառնալով իտալական խոշոր վաճառականների գործունեության բնագավառներին և շեշտելով նրանց համարձակությունը, նախաձեռնող ոգին ու կազմակերպչական եռանդը, Ջ. Լուցցատոն անում է այսպիսի ընդհանրացում. «Զվախենալով հնարավոր վտանգից, նա (խոշոր վաճառականը—Շ. Խ.) ձեռնարկում էր ամեն բան. արտաքին և ներքին առևտուր էր վարում, զբաղվում էր հումքի տեսքով մահուդի և բրդի, ցորենի և համեմունքների, աղի և մետաղների մեծածախ և մանրածախ առևտրով: Նա դրամ էր ներդնում արտադրության մեջ, դրամ էր փոխանակում, վարկավորում էր մասնավոր անձանց, թաղավորների և համայնքների, մաքսատուրքերը և այլ մեծ հարկեր վերցնում էր կապալով: Նա զբաղվում էր մեկ այս, մեկ այլ, երբեմն էլ միաժամանակ, բոլոր ապրանքների տուրևառությամբ, միայն թե այդ իրեն շահույթ բերեր և բավարարեր շահի ծարավը, որը նրա բաղմաբնույթ գործունեության գլխավոր ազդակն էր»¹:

Իտալական վաճառականների առևտրի հիմնական ապրանքների այստեղ կատարված համառոտ թվարկումը միայն վերափոխելով և բրդի, ցորենի, աղի ու մետաղի փոխա-

¹ Дж. Луццато, նշվ. աշխ., էջ 367:

րեն շեշտը մետաքսի, մահուդի, լիզակի, թանկագին քարերի և համեմունքների վրա դնելով², այս նկարագիրն ամբողջապես կարելի է տարածել հայ առևտրականների վրա: Որպես տիպական օրինակ վերհիշենք ջուղայեցի խոջա Պետիկի կերպարը: Ձեռներեց այս վաճառականը, որ հաստատվել էր Հալեպում, իր ձեռքում կենտրոնացրել էր այդ նշանավոր քաղաքի տնտեսական կյանքի գրեթե բոլոր կարևոր լծակները: Սիմեոն Լեհացին, որ 1616 թ. այցելելով Հալեպ անձնական ծանոթություն էր հաստատել մեծահամբավ այս վաճառականի հետ, գրում է նրա մասին այսպիսի տողեր. «(էր) մեծ ոմն և երևելի, զի ոբալէս փաշայ մի շրջէր՝ երեսուն-քառասուն եասախշով, ունէր ենկիշերիք, սբահիք (ոստիկան-զոբականներ), և ասեն թէ քսան և շորս դալամ ամալ ունի. կօմբուկն, մուխթասիպութիւնն, սուպաղութիւնն, խաներն, համամներն և այլ ամենայն նորա ձեռքն էր»³: Խոջա Պետիկը, փորձելով իր կուտակած կապիտալի բաժով մաղցել նաև ռազմաֆեոդալական Ռուրքիայի կառավարչական աստիճանների վերին հարթակները՝ թուլատրելի սահմաններից դուրս էր եկել: Այդ հանդգնության համար նա մահապատժի ենթարկվեց: Բայց Փոքր Ասիայի, Իրաքի, Անդրկովկասի ու Իրանի տնտեսական խոշոր կենտրոններում գործունեություն ծավալած հայ առևտրականներից շատերը ընթանում էին նույն այդ ուղիով և ընդարձակելով տնտեսական իրենց գործունեության շառավիղները՝ դառնում էին մաքսատների տեսուչներ, փողերանոցների վարձակալներ, հարկերի կապալառուներ և այլն⁴: Նոր Զուլայի և մյուս հայաբնակ քաղաքների առև-

² Կոստանդ Զուղայեցին իր «Աշխարհածողովի» վերջին էջերում, հիմք ընդունելով ջուղահայերի առևտրի փորձը, տարբեր տեսակի ապրանքներից ամենակարևորը մետաքսն է համարում, երկրորդ տեղը տալիս է մահուդին, երրորդը՝ լեզակին: Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 60ր—61ա:

³ Արտավազդ աբխազ. Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, Էրբորդ հատոր, Փարիզ, 1950, էջ 281:

⁴ Զաքարիա Ազուլեցու հաղորդած տեղեկությունների համաձայն

տրբականներին շատերը տեր էին դառնում նաև կալվածքներին, տնկում էին այգիներ, կառուցում՝ ջրաղացներ, ձիթահանքեր և այլն: Հայ վաճառականների գործունեությունը տնտեսության այս բնագավառներում, նույնպես, արժանի է հանգամանալից քննության: Մինչև այս հարցերին անդրադառնալը, նշենք որ իրանում և Անդրկովկասում արտադրվող մետաքսի հումքի մի փոքր մասն էր միայն սպառվում տեղում՝ ուտայնանկ արհեստավորների կողմից: Մեծ մասը տարբեր ճանապարհներով հայ վաճառականները արտահանում էին Թուրքիա, Ռուսաստան և եվրոպական երկրներ: Հարց է ծագում, մետաքսի հումք արտադրող երկրամասերի (Գիլան, Մազանդարան, Շիրվան, Հայաստան) դյուղացիությունը կարո՞ղ էր արդյոք ինքնուրույն ձեռներեցությամբ ավանդական իր գործերը թողած՝ շերամապահությամբ ղրաղվել: Արտաքին աշխարհից կտրված՝ դյուղացիական զանգվածներն ինչպե՞ս կարող էին իմանալ, որ հեռավոր երկրների շուկաներում մետաքսի հումքի մեծ պահանջարկ կա, ինչպե՞ս կարող էին առանց անտարակուսելի երաշխիքի ձեռնամուխ լինել շերամապահությանը: Այդ հարցերն անպատասխան էլ կմնան, եթե անտեսվի հայ առևտրականների վճռական դերն այս մարզում: Առևտրական կապիտալի ներկայացուցիչներն էին,

1647 թ., երբ ինքն այցելեց էրզրում, այնտեղ գոմրուկի (մաքսահավար) էր Պետրոս Չալաբին, երբ 1651 թ. Լզավ Թիֆլիսում, այնտեղի ղառարխանեն (փոփրանոցը) գտնվում էր հայ խոջա Բեհբադի ձեռքում: Զաքարիայի եղբայր Սիմոնը 18 տարի շարունակ Լզլի է Երևանի փողերանոցի, Երեմյն միաժամանակ նաև մաքսատան կառավարի: Սիմոնից հետո փողերանոցը կապալով ստացել է ջահկեցի խոջա Աղաբեկը, 1674 թ. նրան հաջորդել է Զորագեղցի խոջա Սարգիսը: 1679 թ., երբ Զալ-խանը Երևանի խան է դառնում, էրզրումից իր մոտ է հրավիրում Ագուլեցի Մառնհին ու զառաբխանեն հանձնում նրան: Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրություն», էջ 37, 56, 71, 95, 124: Այսպիսի փաստերի թվարկումը կարելի է շարունակել, հանգելով այն եզրակացության, որ հայ առևտրավաշխատական կապիտալի ներկայացուցիչները կարևոր տեղ էին զբաղում նաև Իրանի և հարևան երկրների պետական-ֆինանսական օրգաններում:

որ լավատեղյակ համաշխարհային շուկայի կոնյուկտու-
 րային, իրենց վրա էին վերցնում շերամապահության գոր-
 ծի կազմակերպման և ընդարձակման, հումքի հավաք-
 ման, տեսակավորման, փաթեթավորման և այլ կազմա-
 կերպչական դժվարին աշխատանքների ղեկավարությունը,
 ըստ անհրաժեշտության այդ նպատակի համար վարկ տրա-
 մադրելով ինչպես տեղական ֆեոդալներին, այնպես էլ ի-
 րենց բազմաթիվ գործակատաբներին: Որպես կողմնակի
 ապացույց այս նկրակացության, հիշենք, թե ինչպիսի
 ջանքեր թափեց Սաֆար վասիլեյ Թերեքի շրջանում, շե-
 րամապահության դարգացման իր ծրագիրն իրականաց-
 նելու համար: 1710 թ. հատուկ խնդրագրով դիմելով Պետ-
 րոս Մեծին, ճարպիկ այդ վաճառականը գրում էր. «...Ան-
 ցած տարիներին ես, ստորև հիշատակալս, գնում էի Պարս-
 կաստանից Անդրեկյան տիրույթների մոտով, որոնք գտնը-
 վում են Թերեքից երկու օրվա տարածության վրա, այն-
 տեղ կան հարմար (համապատասխան) ծառեր, որոնց վրա
 կան որդեր, դրանցից էլ ստացվում է մետաքսի հումք»—և
 խնդրում է այդ վայրը հատկացնել իրեն՝ շերամապահու-
 թյամբ զբաղվելու համար⁵: Թույլատվությունը ստացվում է,
 և Հյուսիսային Կովկասում հիմք է դրվում շերամի մշակու-
 թյանը, որը հետագայում ղգալի տարածում է ստանում⁶:
 Հետագայում շերամապահական ձեռնարկություններ են
 ստեղծում նաև այլ հայ վաճառականներ՝ Օսիպ Աֆանասև,
 Ռեազ Զալիև, Մոիսեյ Սաֆարով, Նուրիջան Սերեբրեկով,
 Գուրգին Եվստանով և ուրիշներ⁷:

Այսպիսով, գյուղատնտեսության հետ ունեցած սերտ
 կապն ընկած էր հենց մետաքսի առևտուրն իր հիմնական
 զբաղմունքը դարձրած հայ առևտրական կապիտալի գոր-
 ծունեության հիմքերի հիմքում: Բայց դրանով չէին սպառ-

⁵ Н. Г. Куканова, *нзվ. աշխ.*, էջ 105:

⁶ См. Н. Н. Шавров, Описание Кавказского шелководства, Тифлис, 1891, с. 1—2.

⁷ См. Е. И. Икдова, *нзվ. աշխ.*:

վում աջդ կապերը: Ինչպես բոլոր ֆեոդալական երկրներում, այնպես էլ Անդրկովկասում և Իրանում հողը հաստատունության յուրահատուկ մի երաշխիք էր, քանի որ ապահովում էր լավ և կայուն եկամուտ և բերում էր ավելի և ավելի բարձր շահույթ համեմատած գործունեության մյուս տեսակների հետ (հաճախ 8%)⁸:

Հայ առևտրական կապիտալի հայրենիքում, ուր հողը հիմնականում պետական սեփականություն էր համարվում և հողից պանծվելիք հարկերն էին, որ տարբեր համամասնությամբ շնորհվում էին պետական ու զինվորական պաշտոնեականներ, քնդարձակ կալվածքների ձեռք բերումը անհատական հարկի դավարությունների հետ էր կապված: Չնայած դրան, հայ խոջաներին հաջողվում էր, ըստ երևույթին, հիմնականում խամ ու խոպան հողերի իրացման ճանապարհով տեղ գտնել ինչպես առանձին կալվածքների՝ վարելահողերի, այնպես էլ շատ ավելի մեծ շափով այգիների ու պարտեզների:

Արարատյան երկրում խոշոր կալվածատեր է եղել XVII դ. վերջերին ապրած երևանցի նշանավոր խոջա Սեթը: Նրան են պատկանել Նորագեղ, Նորք, Յայջի, Գյուլքյանդ գյուղերն ամբողջապես և Նզվարդ ու Ամիրի գյուղերի շորսուկիս դանկերը (այսինքն ունեւայի 3/4-ը): Սեթն, ինչպես և նրա որդիները՝ խոջա Հակոբջանն ու Գրիգորը, ունեցել են նաև «շատ այգիս, ջրաղացս, տինկս, տունս և զայլ մուլքս», որոնց մի մասը հետագայում կամ նվիրատվությամբ կամ վերավաճառվելով դարձել են էջմիածնի վանքի սեփականություն⁹: Գյուղեր ու կալվածքներ են ունեցել նաև երևանցի այլ վաճառականներ, որոնցից է եղել նաև խոջա Սուրբասը՝ Ղարաղոյունու կոչվող գյուղի տերը¹⁰: Այվազենց գերդաստանի մասին խոսելիս Զաքարիա

⁸ Տե՛ս «Социальная природа средневекового бюргерства XIII - XVII вв.», с. 132.

⁹ Զամբո, Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երևանցոյ ի Վաղարշապատ, 1873, էջ 121:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

Քանաքեուցի պատմագիրը հաղորդում է, որ պարոն Այվազի հայր Դովլաթ-Բեկը ավելացրել էր իրենց պատկանող աշգիհների ու ջրաղացների քանակը, իսկ ինքը՝ պարոն Այվազը, «Տնկեաց դաշգիս և դքուրաստանս, շինեաց և ծով մի մեծ ի տեղին՝ որ կոչի Կարբուշ-դաշտ, և յեղանակս գարնան ընդր ուխից ջրով զի յամարան եղանակին բավական լիցի անդաստանաց գեղջին»¹¹։

Մեծ թվով կալվածքներ են ունեցել նաև Նոր Զուղայի մեծահարուստ վաճառականները։ Օրինակ, Շահրիմանյանները, որ իրանի շահերից ստացել էին մեկիքի տիտղոս, տեր էին դարձել Շիրազից արևմուտք 36 մղոն հեռավորությամբ վրա գտնվող, լեռներով շրջապատված, արոտավայրերով հարուստ ու մի լիճ ունեցող քնդարձակ այն կալվածքին, որ կոչվում էր Դաշտ-ի-Արզեն¹²։

Խոջա Պողոս Վելիջանյանի կտակում, որ կազմված է 1646 թ. ու հավելվածով ամբողջացած 7 տարի հետո, տվյալներ կան, որ ջուղայեցի այդ վաճառականն ունեցիլ է Սպահանի շրջակա գյուղերում 9 կալվածք (վարելահողեր՝ ջրովի ու անջրդի), մեկ գյուղ, չորս աշղի (պտղատու և խաղողի), ուռնիների մի պուրակ (50 ծառով), մի քանի պարտեզներ, կառուցել է ջրաղացներ ու գյուղատնտեսական մթերքների մշակման այլ գործատներ և այլն։ Բազմաթիվ են եղել այս խոջայի անշարժ կալվածքները Նոր Զուղայում։ Նա ունեցել է շքեղ տալարանք, 13 տուն (մեկն էլ Ղալա գյուղում), որոնք տրվել են վարձով։ Նրան է պատկանել մի մեյդան «խրով կրպանօք», որտեղ եղել են ներկարարի, նպարավաճառի, բրնձի, ձկնի, հացթուխի կրպակներ, իսկ վեց կրպակ էլ ունեցել է Սպահանի մեջ և այլն¹³։

Պահպանվել է 1708 թ. շատ արժեքավոր մի փաստաթուղթ ջուղայեցի ամենանշանավոր գերդաստաններից մեկի՝ Շահխիսասենցների, արդեն սակավազոր դարձած ժառանգ-

¹¹ «Զաքարիա սարկաուդի պատմագրութիւն», էջ 131—132։

¹² Տե՛ս D. Maxwell White. նշվ. աշխ., էջ 6։

¹³ Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 130—132։

ների վեճերի մասին: Վիճողները Նոր Զուղայի ամենահզոր քաղանթար խոջա Սարֆրազի Մելիք Աղա որդու 4 դուստրերն են՝ Շահնաբաթը, Շախասը, Ազիզն ու Մերջանը: Վեճը հարթվելուց հետո կազմվել է մի փաստաթուղթ, որի մի հատվածը՝ այս պերդաստանին պատկանող կալվածքների թվարկումով, բարերախտաբար տպագրված է. «Մեծ ամարաթ, որ Մելիք Ազէ վաբանին ա նստած, մին ամաբաթ՝ խոջայ Վաթանի որդի Սարֆրազն ա նստած, Տարամաթի մլք, Ղլխունայ իղին, Զուղու միջին մէյդանն, Զուղու համամն, Բադամշկի իգին, Գետառի իգին, և երկու բաղարդահն, այլ և Թաբվիղու համամն, Թռսխանէն, կալինէնց տուն, մէթար Զաքարէնց տուն, Աղփաղ Վարդանէնց տուն, Փղտիկ տուն, որ Աղաղարին վարիսն ա նստած, և Միանջուղն, և Միանջուղի ջաղացն և բաղի մլքէր, որ ղուլերն նստել են»¹⁴: Այս փաստաթղթի պրանցման ժամանակ, XVIIII դ. սկզբներին Շահխիսասենցները վաղուց արդեն զիջել էին հրամանատարական իրենց զիբքերը Նոր Զուղայի տնտեսական կյանքում, սակայն, ինչպես տեսնում ենք, դեռևս հսկայական կալվածքների տեր էին. ունեին երկու ապարանք, շորս տուն, Զուղայի կենտրոնական շուկան (մեյդանը), բաղնիքներ՝ Զուղայում և Թավրիզում¹⁵, սառցաբան, ջրաղաց, մեկ գյուղ՝ Միանջուղ անունով, Տարամաթում (հավանաբար գյուղ է) մի կալվածք, երեք այգիներ և ուրիշ կալվածքներ (մլքեր), որոնցում, ինչպես գրված է փաստաթղթում, «ղուլերն նստել ան», այսինքն ամրացված ծառաների միջոցով մշակվում էին խոշոր առևտրականների պատկանող կալվածքները:

Կալվածքների մեջ, ինչպես տեսնում ենք, կենտրոնա-

¹⁴ Հ. Տեր-Հովհանյանց, նշվ. աշխ., հ. II, էջ 93:

¹⁵ Տե՛ս «Նդիա Կարնեցու Դիվանը», էջ 292: «Կայր Թարվէզ մին բաղնիք ջուղայեցի Շերիմանցոց. ևղև զի մին հայէ դարցած ջուղայեցի՝ Կոստանի որդի Մէհրաբի անունով, խէյց այս բաղնիքն, թէ ինքն աղզակից էր այն բաղնեց տիրոջն: Քանզի այսպէս սահման կայ ի մէջ պարսից մէջումն, օվ որ քրիստոնեա առճկանա, ամէն հայ աղզական ապրանքն ընտուր կհասնի»:

կան տեղ են գրավում հատկապես այգիները: Եվ դա միանգամայն հասկանալի է նախ այն պատճառով, որ այգի դարձրած հողակտորները դուրս համարվելով գյուղական համայնքների օգտագործման տակ գտնվող հողատարածություններից՝ ավելի հաստատուն գույք էին համարվում և ապա շնորհիվ այն բանի, որ այգեգործությունն էր գյուղատնտեսության ամենահեղինակալից բնագավառը: Այդ է պատճառը, որ քիչ թիվ շատ դրամ կուտակած վաճառականները տնտեսական վստահելի հենարան ունենալու հույսով, իրենց կապիտալի մի զգալի մասը հատկացնում էին այգիներ ձեռք բերելու կամ արդեն ունեցած այգիներն ընդարձակելու նպատակին: Այդպես է վաճվել նաև Զաքարիա Ագուլեցին: 1664 թ. նա 54 թուփան վճարելով գնել է իր հայրենական այգուն կից գտնվող մի այգի և 43 թուփան էլ ծախսելով կաբդի է բերել ընդարձակված այդ այգին, կառուցելով անհրաժեշտ շինություններ, մեծ հնձան և այլն¹⁶:

Ոմեն Հովսեփ, Գանձակից գրած իր մի նամակում տեղեկություն է հաղորդում Եդիա Կարնեցուն՝ 1721 թ. Շիրվանի և շրջակա նահանգների վրա լեզգիների կատարած ավազակալին արշավանքի և դրա հետևանքով հայ վաճառականներից շատերի կրած խոշոր կորուստների մասին: Դրանցից է եղել Մարգար անունով մեկը, որ Բարդախում ունեցած իր գութանում «ճոթ կու ծախէր»: Չնայած այդ արշավանքի հետևանքով նա զրկվել էր իր խանութից և այնտեղ եղած ապրանքներից, բայց իսպառ չէր կորցրել իր ապրուստի միջոցները, քանի որ տեղ էր 3—4 այգիների, ունեւ 5—6 ջրաղացների¹⁷: Ահա այդ այգիներն ու ջրաղացներն էին, որ հնարավորություն էին տալու կառուցված կամ մի ուրիշ պատճառով ազատացած վաճառականին, անձի ու գույքի ապահովության տարրական գրավականներից զուրկ այդ երկրում կորցրածը կտ բերելու հույսով շարունակելու իր գործունեությունը:

¹⁶ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 71:

¹⁷ Տե՛ս «Եդիա Կարնեցու Դիվանը», էջ 110—111:

Աշխարհատարած կապեր ունեցող հայ վաճառականները տեղի դառնալով կալվածքների ու այգիների, ջանքեր էին թափում ուրիշ երկրներից ու շրջաններից գյուղատնտեսական մշակույթի նոր տեսակներ ներմուծելու, մրգի, խաղողի և բանջարաբուստանային մշակույթի արդեն տարածված տեսակները բարելավելու ուղղությամբ: Այդ մասին, ըստ երևույթին, գիտեին Իրանի ղեկավար շրջաններում: Նրա Թավրիզի վեզիր Միրզա Իբրահիմը 1670 թ. նոր այգի էր տնկում, հատուկ մարդ էր ուղարկել Ագուլիս՝ լավագույն տնկիներ ձեռք բերելու հանձնարարությամբ: Զաքարիա Ագուլեցին հայտնում է, որ Ագուլիսից նրան տրվեց մալաշա տանձի, խնձորի, սումազի և ծիրանի 450 տնկի, նույնքան տնկի էլ բերեցին Շոռոթից և շուրջ 600—700 հոնի տնկի՝ Մեղուց¹⁸:

Հ. Հ. Սկրոդերի «Արամեան լեզվին պանձ» նշանավոր աշխատության հատվածներից մեկում պատկերված է. թե ինչպես են մի պարտեզում զվարճանալիս զրուցում հայ վաճառականները: Նրանցից մեկը տեսնելով խաղողի տարբեր տաբատեսակներ, մյուսների ուշադրությունն է հրավիրում դրանց վրա. «Թամաշայ արէք, էս թուրլու թուրլու խաղողն քանի՞ ձե, քանի՞ ունգ խաղող կայ»: Հյուրընկալն ի պատասխան ասում է. «Պարոնայք առանք հանաք տալոյ, էս իմ բաղշումս ու երկու այգումս որ ունիմ, վաքուն բաբաթ խաղող կայ»: Մեկ ուրիշը հաստատելով ավելացնում է. «Ես Ֆրանկստան մին քանի տեղ ասել եմ, թէ մեզ մօտ այսքան-այսքան բաբաթ խաղող կայ, իսկի ուղել չեն հաւատալ»¹⁹: Չհավատալու հիմք, սակայն, չի եղել և այդ զրուցում տրված է հայ վաճառականներին պատկանող այգիների ճշխության ու բարձր մշակվածության իրական պատկերը:

Հայ առևտրական կապիտալի գործունեության մասին տմբողջական պատկերացում կազմելն անկարելի է առանց

¹⁸ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 90:

¹⁹ Հ. Հ. Սկրոդեր, նշվ. աշխ., էջ 361:

արհեստագործությանն անդրադառնալու: Շ. Մոնտեսքյոն իր «Պարսկական նամակներ»-ում Իրանում հայերի կատարած դերի կապակցութեամբ գրում է, որ Շահ-Սուլեյմանի բարձրաստիճան պաշտույթաներից ոմանք, իբր, ծրագրած են եղել բոլոր հայերին կամ պարտադրել էրոնափոխութուն կամ էլ հեռանալ երկրից. «Արտաքսելով հայերին մտածում էին... վերացնել բոլոր վաճառականներին և համարյա բոլոր արհեստավորներին պետութեան մեջ: Ես վստահ եմ, որ մեծ Շահ-Աբբասը կնախընտրեր անդամատել իր զույգ ձեռքերը, քան ստորագրել նման հրամանագիր...»²⁰: Իհարկե, պետք չէ բառացի ընդունել այս վկայութիւնը, բայց այն ինչ-որ չափով արտահայտում է իրական պատկերը: Հայ արհեստավորներն, իրոք, լեզալի դեր են կատարել Իրանի խոշորագույն քաղաքներում, մասնավորապես Սպահանում և Թավրիզում:

Հ. Սկրոդերն իր վերոհիշյալ գրքում շարադրանքը դարձյալ մի հայ վաճառականի անունից ներկայացնելով, գրում է. «Ամենայն հասարակ սանիաթ մեր ազգին մէջն կայ, ինչպես ասենք դերձիք, գլխակար, բաբուշկար, դալլաք, խառատ, դուրգալ, որմնագիր, ոսկերիչ, դարբին, ջուլհակ, գրագիր, կաղմարար, ծաղկարար, ներկարար, մագաղաթագործ, ապրշմագործ, տպագիր, բասմաջի և այլ բազում»²¹:

Արհեստագործների մեծ մասը, բնականաբար, աշխատում էր տեղական շուկայի կարիքները բավարարելու համար և տնտեսապես շաղկապված չէր հայ առևտրական կապիտալին: Այլ էր այն արհեստավորների վիճակը, որոնց արտադրանքը, մասամբ կամ ամբողջապես, նախատեսված էր կամ արտաքին շուկայի կամ էլ տիրապետող դասակարգերի պահանջների բավարարման համար: Այսպես օրինակ, 1660 թ. Զաքար Շահրիմանյանը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին մատուցեց նշանավոր ադամանդակուռ գահը, որի պատրաստման համար, բնականաբար, աշխատել էին բազմաթիվ հմուտ ոսկերիչներ և արծաթագործներ: Զաքար

²⁰ Шарль Монтескье, Персидские письма, М., 1936, с. 183.

²¹ Հ. Հ. Սկրոդեր, նշվ. աշխ., էջ 341—342:

Շահրիմանյանի այդ մասին գրած ղեկուցագրերից հայտնի է դառնում, որ գահի համար անհրաժեշտ թանկագին քարերի ձեռք բերման համար Շահրիմանյան առևտրական տան գործակատարներից մեկին նախօրոք ուղարկել էին Հնդկաստան, իսկ մյուս գործակատարներն էլ, անշուշտ, կատարել են այլ հանձնարարություններ²²։ Հասկանալի է, որ ոչ մի արհեստավոր, նույնիսկ, արհեստավորական ամբողջ մի համաքարություն, սեփական միջոցներով չէր կարող այդպիսի մի մեծագին ու շքեղ, թագավորավայել գահի պատրաստումը ձեռնարկել, առանց նյութ ու պատվեր ստանալու։ Նույնը կարելի է ասել նաև շատ թանկարժեք, ոսկեթել ու թանկագին քարերով զարդարված զգեստների, զինքերի, ձիերի ասպազենի, պերճանքի այլ առարկաների մասին, որ արտաքին առևտրի մեջ կարևոր դեր էին կատարում։ Ահա, արհեստի այդ բնագավառների վրա իրենց հսկողությունն ու հովանավորությունն էր տարածել հայ առևտրական կապիտալը։ Ռուսական ցարին հղած խնդրագրերից մեկում, ջուղայեցիներն այդ մասին որոշակի տեղեկություն են հաղորդում, գրելով որ իրենք. «... ապրելով Սպահանում և այլ տեղերում մեծ արհեստագործական ձեռնարկություններ ունեն...»²³։ Այդ նույն միտքն ավելի հստակորեն ձևակերպված է մի ուրիշ փաստաթղթի մեջ, ուր խոսք կա այն մասին թե ինչու հայ վաճառականները իրավունք պետք է ունենան իրենց հետ Ռուսաստանից Իրան ոսկի գրամ տանելու։ Հիմնական պատճառ էր նշված մետաքսի հումք գնելու համար

²² *Տե՛ս* В. Восканян, Ново-торговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г., «Известия» АН Арм. ССР, 1947, № 6, с. 39—41.

Ռուսական ցարին մատուցված թանկարժեք գահը միակը չի եղել։ Իրանում Զաքար Շահրիմանյանի հոր՝ Սարհադի նախաձեռնությամբ, պատրաստվել են նաև ուրիշ գահեր տարբեր երկրների թագավորներին վաճառելու համար։ *Տե՛ս* В. Восканян, նշվ. աշխ., էջ 39. ԱԳԱԴԱ, Армянские дела 1660 г., л. 34—35.

²³ «Армяно-русские отношения в XVIII веке», т. I, с. 52.

դրամ ունենալու անհրաժեշտությունը. «Պարսկական հո-
ւում միտաքս գնելու»²⁴;

Պարզ է ուրեմն, որ Իրանի արհեստավորության այն
մասը (անկախ ազգային պատկանելիությունից), որի ար-
տադրանքի մի զգալի մասը նախատեսվում էր արտաքին
շուկաներում վաճառքի համար, տնտեսապես ենթակա էր
առևտրական կապիտալին, աշխատում էր նրա պատվերով,
հաճախ հենց նրանից էլ ստանալով մեծագին պատվերների
համար անհրաժեշտ թանկարժեք նյութերը: Հայ առևտրա-
կան կապիտալն, այսպիսով, իր ներգործությունն է ունե-
նում արտադրության վրա այն իմաստով, որ, ինչպես նը-
շել է Կ. Մարքսը, «արտադրությունն ավելի ու ավելի մեծ
չափով հանուն փոխանակային արժեքի կատարվող արտա-
դրության բնույթ է տալիս, արդյունքներն ավելի ու ավելի
է ապրանքների փոխարկում»²⁵:

Կան որոշ փաստեր, հօգուտ այն ենթադրության, որ
հայ առևտրական կապիտալն իր ազդեցությունը տարածել է
արհեստագործության այլ բնագավառների վրա ևս, հան-
դես գալով նաև մանուֆակտուրային տիպի ձեռնարկու-
թյունների ստեղծողի դերում: Այս թեղը հաստատելու հա-
մար լրացուցիչ հետազոտություններ պիտք է կատարվեն
ու նոր նյութեր հրապարակ բերվեն: Մեզ հայտնի է հետև-
յալը. Եղիա Կարնեցու գրած ու ստացած մի քանի նամակ-
ների տվյալներով 1720—1722 թթ. (գուցև և դրանից առաջ
և հետո), Թավրիզում է գտնվել ջուղայեցի մեծահարուստ
մի վաճառական՝ խոշա Ջնթլամը, որն զբաղված է եղել
այժի նուրբ մազի՝ դֆտիկի, շահավետ առևտրով: Հայտնի
է, որ եվրոպական շուկաներում դֆտիկի մեծ պահանջարկ
կար և ամեն տարի Իրանից ու Անդրկովկասի երկրներից
մեծ քանակությամբ դֆտիկ էին արտահանում Եվրոպա՝
հիմնականում Զմյուռնիայի վրայով: Այդ հումքի արտա-
հանման գործով հայ առևտրականներից բացի զբաղվում էին
նաև ֆրանսիական Արևելա-հնդկական ընկերության Իրա-

²⁴ Նույն տեղում, էջ 54:

²⁵ Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, առաջին մաս, էջ 313—314:

նում հաստատված գործակալները: Զնթլամին, ըստ հրեույթին, հաջողվել է այնպիսի քայլերի դիմել, որ ֆրանսիացիները տուժեն այդ առևտրում, և վերջիններիս, իրենց հայ գործակատարների (հատկապես Եղիայի) հետ միասին, փորձել են վրեժխնդիր լինել նրանից: Այս հարցի մասին առկա գրադրություններում ասված է, որ Զնթլամը դժտիկի հումքն արտահանելու համար, մշակելու նպատակով 100 բանվոր է աշխատեցրել. «Եւ ճնթլումն ճ (100) քարկար բանացնում է»,—գրել է Եղիա Կարնեցին²⁶: Այս շատ կարևոր տվյալը ճիշտ հասկանալու գործին օգնում է նույն Եղիան, իր մի այլ նամակի մեջ տեղեկություն հայտնելով Զմյուռնիայից Թավրիզ ժամանած մի հայի մասին, որի տվյալներով, իբր, Զմյուռնիայի քարվանսարատներում մեծ քանակությամբ դժտիկ է հավաքված: Եղիան կասկած է հայտնում այդ տեղեկության ճշմարիտ լինելու մասին, քանի որ իրեն ստույգ հայտնի էր, որ Զնթլամը այդ տարի միայն 20 բևե դժտիկ է առաքել Զմյուռնիա, իսկ մեծ մասը դեռ գտնվում է Թավրիզում²⁷: Այդ կասկածելի լուրը հաղորդողի մասին ասված է, որ նա «մեր քարխանէն տիֆտիկի բան էր արել», այսինքն մինչ այդ աշխատել էր ֆրանսիական առևտրական ընկերությանը սլատկանող քարխանայում (արհեստանոցում):

Այս տեղեկությունների լույսի տակ պարզ է դառնում, որ դժտիկը Իրանից դուրս բերելուց և եվրոպական շուկաներ արտահանելուց առաջ նախնական մշակման է ենթարկվել Թավրիզում (հավանաբար մաքրվել է, տեսակավորվել, գդվել և այլն), և այդ նպատակով գոյություն են ունեցել առնվազն երկու քարխանաներ՝ մեկը ֆրանսիական Արևելահնդկական ընկերությանը, մյուսը՝ Զնթլամին սլատկանող: Ընդ որում, Զնթլամի քարխանայում աշխատել են 100 քարվոր, այսինքն՝ վարձու բանվոր:

Ինչպես են կազմակերպվել այդ քարխանաները, աշ-

²⁶ «Եղիա Կարնեցու Դիվանը», էջ 56:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 74:

խատանքի ինչպիսի բաժանում է գոյություն ունեցել, բավարարվել են, արգյոք, տնայնագործական սովորական գործիքներով (սանդիրք և այլն), թե որոշ չափով կատարելագործվել են արտագործության միջոցները, այս և այլ կարևոր հարցեր դեռ անսխալաբան են մնում:

Արևելյան Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի սլամոնության մասնագետները իրավացիորեն նշել են, որ XVII դ. առաջին տասնամյակից սկսած մինչև նույն դարի վերջերը զգալի չափով բարվորվել է այդ երկրների տնտեսական վիճակը, թեթևացել է հարկային լուծը, սրուք քաղաքներ աղասվել են նախկին ծանր հարկերից, տնտեսությունը նշանակալից չափով բարգավաճել է. «Ըստ աղբյուրների նկարագրության, Անդրկովկասը XVII դ. կեսերին հասել էր վաղուց արդեն շտեմանված մակարդակի, ինչպես բնակչության խտության, այնպես էլ արտագրողական ուժերի վարդաքման առումով» — գրել է այդ մասին Ա. Պ. Նովոսելցևը²⁸: Սակայն, երկարատև չի եղել համեմատական վերելքի այդ ժամանակաշրջանը: XVII դ. 90-ական թվականներից սկսած, Սեֆյան Իրանի ռազմաֆեոդալական կարգերի ընդհանուր քայքայման հետևանքով, սկսվել է իրանական սեֆյան ու նրա բռնատիրական լծի տակ կեղեքվող անդրկովկասյան երկրների տնտեսական ու քաղաքական խորը ճգնաժամը: Աֆղանների արշավանքն ու տիրապետությունը հարավային Իրանում, թուրքերի ներխուժումն ու անդրկովկասյան երկրների օկուպացումը և քաղաքական անցուղարձերը XVIII դ. 20—30-ական թվականներին մեծ հարված հասցրին ժողովրդական տնտեսությանը: Իսկ Նադիր շահի տիրապետության ողբերգական տարիներին՝ ռազմավարչա-

²⁸ А. П. Новосельцев, Из истории классовой борьбы в Азербайджане и Восточной Армении в XVII—XVIII вв., «Исторические записки», № 67, 1960, с. 242.

կան ապարատի կազմակերպած ու պետական քաղաքականության մակարդակի բարձրացված թաւանն ու խժոժություններն ամենուրեք այնպիսի անօրինակ ձևեր ընդունեցին, որ նախորդ տասնամյակների ընթացքում ձեռք բերված հաջողություններից որևէ հետք չմնաց, տնտեսությունն ավերվեց ու հետադիմեց²⁹:

Հայ առևտրականների գործունեության բնագավառների, միջազգային կապերի ու տնտեսության տարբեր մարզերում կատարած դերի մասին նախորդ էջերում բերված տվյալները, որ ընդհանուր առմամբ հայ առևտրական կապիտալի որոշակի զարգացման մասին են վկայում, արդյունք էին չիմնականում տնտեսական կյանքի ընդհանուր վերելքի: Հայ առևտրական կապիտալն իր հերթին զգալի չափով նպաստում էր երկրի արտադրողական ուժերի զարգացմանը, մեծացնում արհեստագործական արտադրանքի ծավալը, նրա նպաստում գյուղատնտեսության մեջ նոր կուլտուրաների արմատավորմանը, ընդարձակում մետաքսի հումքի արդյունահանման ծավալը և այլն:

Ուսումնասիրելով կապիտալիստական հասարակության նախապատրաստական աստիճանների առևտրի և արտադրության փոխհարաբերությունների հարցերը արեւմտ-եվրոպական երկրների տնտեսության պատմության հիման վրա Կ. Մարքսը «Կապիտալի» մեջ գրել է. «Առևտուրն, իհարկե, ավելի կամ պակաս չափով կաղդի այն հասարակությունների վրա, որոնց միջև նա վարվում է. նա արտադրությունն ավելի ու ավելի կենթարկի փոխանակային արժեքին, որովհետև վաճելքներն ու սպառումը նա ավելի մեծ չափով կախման մեջ է դնում վաճառքից քան արդյունքի անմիջական սպառումից: Սրանով նա քայքայում է հին հարաբերությունները: Նա ընդարձակում է փողային շրջանառությունը: Նա աշխարհն ոչ միայն արտադրության հավելույթն է ընդգրկում, այլև աստիճանաբար կլանում է բուն իսկ այդ արտադրությունը և ամբողջ արտադրության ճյուղեր կախման մեջ է

²⁹ См. М. Р. Арунова, К. З. Ашрафян, *ibid.* № 226—254:

դնում իրենից: Սակայն այս քայքայող ներգործությունը մեծապես կախված է արտադրող հասարակության բնույթից»³⁰: Քիչ հետո նույն կապակցությամբ ասված է. «Իսկ թե քայքայման այս պրոցեսն ինչի է հանգում, այսինքն արտադրության ինչ նոր եղանակ է հնի տեղ բռնում, այս կախված է ոչ թե առևտրից, այլ արտադրության բուն իսկ հին եղանակի բնույթից»³¹:

Արտադրության բուն եղանակը իրանում և նրա քաղաքական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում տիպիկ ֆեոդալական էր. բնատնտեսությունն իշխում էր և՛ գյուղում, և՛ քաղաքում, առևտուրը գլխավորապես սպասարկում էր ֆեոդալների ու վաճառականների պահանջարկը, քաղաքները հանդիսանում էին կիսաազրարային տիպի բնակավայրեր և այլն:

Հայ առևտրականները միջնորդի դեր էին կատարում արևելյան ու արևմտյան երկրների միջև: Մի կողմից ներանք հումք էին մատակարարում կապիտալիստական զարգացման ընթացքի մեջ մտած երկրների արդյունաբերական ձևոնարկություններին, հաճախ նաև հանդես գալով արևմուտքում դեռևս անհայտ սննդամթերքի, համեմունքի դեղորայքի և օծանելիքի տարբեր տեսակների տարածողների ու արմատավորողների դերում: Հայտնի է, օրինակ, որ սուրճի գործածությունը Նվրոպայում առաջին հերթին տարածել ու պրոպագանդել են հայ վաճառականները³²: Մյուս կողմից հայ առևտրական կապիտալը արևելյան երկրներ էր ներմուծում եվրոպական ապրանքներ, իր վրա վերցնելով նաև արևմուտքի մշակույթի ու արդյունաբերության բնագավառում ստեղծվող նոր արժեքների տարածման դործը (հայտնի է, որ Թուրքիայում և Իրանում առաջին տպարաններն ստեղ-

³⁰ Կ. Մաբս, Կապիտալ, հ. III, առաջին մաս, էջ 317:

³¹ Նույն տեղում, էջ 319:

³² Հարություն անունով մի հայ 1672 թ. սրճարան հիմնեց Մարսելում, ապա Փարիզում ու Լոնդոնում: Տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ կամ յաղրնչութիւնք Հայոց և Վենետայ ի ԺԳ—Դ և ԺԵ—Ձ դարս, Վենետիկ, 1896, էջ 476, հմտ. նաև Жаклин Пирен, Открытие Аравии, пять веков путешествий и исследований, М., 1970, с. 76.

ծեցին հայ վաճառականները: Նրանք էին, միաժամանակ, որ արևելյան երկրներում սկսեցին տարածել ժամացույցներ, ակնոցներ, կերպարվեստի իրեր և այլն):

Երկրեմ էր հայ վաճառականի կնրպարը, սակայն, անբակտիկորեն շաղկապված լինելով ֆեոդալական իրանի սոցիալ-տնտեսական գոյավիճակին, նա իր գործունեությամբ անկարող էր շոշափելի ազդեցություն գործել արտադրության առկա եղանակի վրա, նպաստել հասարակության ընդհանուր զարգացմանը:

Հայ առևտրականների համար այլ պայմաններ էին ստեղծվում իրանից ու Անդրկովկասից դուրս գալուց և ուրիշ երկրներում հաստատվելուց հետո: Իտալիա, Ավստրիա, Հոլանդիա արտագաղթած հայ վաճառականները շատ կարճ ժամանակում ձուլվում էին տեղական առևտրավաշխառուական վերնախավի հետ, ձեռք բերելով նաև ազնվականի տիտղոսներ: Նրանցից շատերը եկամտաբեր տիտղոսներ էին ստանում նաև կառավարչական ու ղինվորական ասպարեզներում: Արտագաղթածների երկրորդ սերունդն արդեն միայն աղուտ հիշատակների էր պահում իր հայկական ծագման մասին: Արտագաղթը դեպի Հնդկաստան շատ ավելի մեծ ծավալ էր ընդունել: Հաստատվելով այդ երկրի դրեթն բոլոր նշանավոր տնտեսական կենտրոններում, հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները պահեցին իրենց ազգային դիմագիծը առնվազն մեկուկես—երկու դար: Հնդկահայ առևտրական կապիտալը տնտեսական իր դիրքերը պահելու համար, մանավանդ XVII դ. երկրորդ հիսնամյակի ընթացքում, համառ պայքար պետք է մղեր հվրոպական երկրների առևտրաարդյունաբերական բուրժուազիայի դեմ, որը սկսած XVI դ. մուտք էր գործել Հնդկաստանի տարբեր նահանգներ, ստեղծել իր համար ամուր հենակետեր և աշխույժ գործունեություն ծավալել այդ մեծ երկրի գաղութացման նպատակով: Այդ պայքարը հաճախ զուգորդվում էր հվրոպական կապիտալի էքսպանսիայի դեմ հնդիկ ժողովրդի մղած հերոսական պայքարի հետ: Հայերից շատերը ոչ միայն նյութական ու բարոյական օժան-

դակույթյուն էին ցույց տալիս հնդիկներին, այլև մտնում էին նրանց մարտական շարքերը և զենքով պայքարում ընդհանուր թշնամու դեմ: Այս առումով նշանակալից է խոջա Գրիգորի, կամ Գորգին-խանի ու նրա բազմաթիվ հայ զինակիցների պայքարն անգլիացիների դեմ, որպես Բենգալիայի նաւաբ Միր Կասիմի նվիրյալ ու քաջարի դաշնակիցներ³³:

Հայ առևտրական կապիտալի ամենամեծ զանգվածը XVIII դ. 20-ական թվականներից սկսած մինչև 60-ական թվականները արտագաղթելով Իրանից ու Անդրկովկասից՝ բնակություն հաստատեց Ռուսաստանի քաղաքներում, մասնավորապես, Աստրախանում, Հյուսիսային Կովկասի նորաստեղծ քաղաքներում (Ղզլար, Մոզդուկ), Մոսկվայում և Պետերբուրգում: 1725 թ. հայերի կողմից զրկած մի խնդրագրում բազմաթիվ հայ վաճառականների Ռուսաստանում մշտական բնակություն հաստատելու մասին ասված է. «Թողնելով իրենց հայրենիքը, յուրայիններին, անշարժ գույքը, ոչ փոքր իրենց կապիտալներով շատ ընտանիքներով առանց որևէ երկյուղի Ռուսաստան մեկնելով, բնակություն էին հաստատում տարբեր ռուսական քաղաքներում, ստեղծում էին ֆաբրիկաներ և տարածում վաճառականություն...»³⁴:

Դա մի ժամանակաշրջան էր Ռուսաստանի պատմության համար, երբ մինչ այդ տարանջատված իշխանություններն ու նահանգները անտեսապես միաձուլվում էին, երբ խոշոր քաղաքներում ստեղծվում ու բարգավաճում էին կապիտալիստական մանուֆակտուրաները: Տնտեսության բնագավառում ստեղծված այդ նոր վիճակը բնութագրելով, Վ. Ի. Լենինը նշել է, որ «...Այդ միաձուլումը կյանքի էր կոչվել... մարզերի միջև ուժեղացող փոխանակության, աստիճանաբար աճող ապրանքաշրջանառության, տեղական փոքրիկ շուկաները համառուսաստանյան մեկ շուկայի մեջ

³³ ՏՃՍ Թ. Խոջամալխան, Պատմութիւն Հնդկաց, Կալկաթա, 1849, էջ 94, 119—120: Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 343—344:

³⁴ «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII. века», т. III, с. 273—274.

համակենտրոնանալու հետևանքով: Քանի որ այդ պրոցեսի ղեկավարներն ու տերերը կապիտալիստ-վաճառականներն էին, ապա այդ ազգային կապերի ստեղծումը ոչ այլ ինչ էր, բայց էթն բուրժուական կապերի ստեղծում»³⁵:

Մեկ ուրիշ առիթով ևս Վ. Ի. Լենինը շեշտել է, որ ինչպես ամենուրեք, այնպես էլ Ռուսաստանում, որպես մանուֆակտուրային արտադրության ստեղծող ու ղեկավար հանդես է եկել առևտրական կապիտալի ներկայացուցիչը³⁶:

Գտնելով համապատասխան տնտեսական սլայմաններ, հայ առևտրական բուրժուազիայի Ռուսաստան արտադադթած ներկայացուցիչները նույնպես իրենց կապիտալները լաջն շափերով ներդնում են արդյունաբերության բնաշավառում, առաջին հերթին ստեղծելով մետաքսագործական ֆաբրիկաներ: Ռուսաստանում մետաքսագործական ձեռնարկությունն ստեղծելու ուղղությամբ հայ վաճառականների կողմից մեղ հայտնի առաջին որոշակի բայկը կատարել էր Իսրայել Օրին դեռևս 1709 թ., երբ նախապատրաստվում էր Իրանից վերագառնալ Ռուսաստան: Նամակներից մեկում նա գրում է, որ իր հետ պատրաստվում են Մոսկվա փոխադրվել, անհրաժեշտ սարքավորումների հետ միասին, 20 մետաքսագործ վարպետներ, որոնք Մոսկվայում հաստատվելով պետք է մետաքսի զանազան գործվածքներ արտադրեն. «Եվ ես մեկ ծառա վարձեցի, և... ցանկանում էի բերել թագավորական մեծության մոտ, որպեսզի նրանք Մոսկվայում իմ բերած մետաքսի հումքից տարբեր դիպակներ գործեն»³⁷:

Օրիի անժամանակ մահվան հետևանքով նրա այս ծրագիրն անկատար մնաց:

1775 թ. Ս. Պետերբուրգում կազմվել է պաշտոնական մի տեղեկագիր. «1775 թվականի ցուցակը մանուֆակտուր-կո-

³⁵ Լենին, ԵԼԺ, հ. 1, էջ 179—180:

³⁶ Տե՛ս Լենին, ԵԼԺ, հ. 2, էջ 498—499:

³⁷ Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. 267. П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 186.

լեզիայի ցուցակի մեջ մտնող բոլոր ռուսական ֆաբրիկաների մասին, թե որ թվականից և ում կողմից են հիմնադրված, ներկայումս ինչպիսի կապիտալի տեր են... որքան են դրանցում կցված և գնովի մարդիկ»³⁸:

Գիտական մեծ արժեք ներկայացնող այս փաստաթղթի մեջ, ինչպես նաև մի շարք այլ աղբյուրներում, հիշատակված են նախ Մոսկվայի Սրեոենսկայա փողոցում և «Չիստիև պրուդի» կոչվող վայրում գտնվող 1717 թ. Իգնատ Շահրիմանյանի կողմից կառուցված, այնուհետև Լազարյանների սեփականությունը դարձած մետաքսի ֆաբրիկաները (առաջինը, որ գնահատվում էր 20 հազ. ռ., ուներ 14 դազգաճ, երկրորդը՝ ընդամենը 3 դազգաճ), այնուհետև Մոսկվայի շրջանի Բոգորոդսկի դավառի Ֆրյանովո գյուղի մետաքսի գործարանը, որը նույն 1717 թ. հիմնադրել էին մի քանի ռուս աղնվականներ, որից հետո այն անցել էր վերոհիշյալ Իգնատ Շահրիմանյանի, ապա նրա Զաքար որդու ձեռքը, իսկ վերջինիս մահվանից հետո այն գնել էին Լազարյանները: Այս գործարանում կար 96 դազգաճ, աշխատում էին 230 բանվոր:

Ֆաբրիկաներին տրված մեծ արտոնությունները նպաստեցին XVIII դ. 30—50 թթ. Մոսկվայում մի շարք նոր ֆաբրիկաների երևան գալուն: Այդ տարիներին Մոսկվայում կառուցվեցին երկու տասնյակ մետաքսագործական նոր ֆաբրիկաներ, որոնցից հինգի տերերը, հաստատապես հայեր էին. դրանք են Լուկա Շիրվանովը³⁹, Վասիլ Խաս-

³⁸ Е. Н. Никогда, նշվ. աշխ., էջ 249—345: Հայերին պատկանող մանուֆակտուրաների մասին տեղեկություններ կան հատկապես 256, 258, 264, 266, 267, 271, 288, 294, 312—315 էջերում:

³⁹ Լուկա Շիրվանովը Թեբերի շրջանում շերամապահության հիմք դնող նշանավոր հայ վաճառական Սաֆար Վասիլևի վաղամեռիկ որդու ալրիի՝ Աննա Բոգդանովնայի հետ ամուսնանալով ոչ միայն շարունակեց Սաֆարի սկսած, բայց հետագայում լճացած գործը, այլև նոր թափ տվեց Հյուսիսային կովկասում գյուղատնտեսական նոր ճյուղերի զարգացմանը: Լուկան իր խորթ զավակների և աներձագ Գասպար Բոգդանովի հետ միասին, 1740 թ. դիմեց ռուսական կառավարությանը՝ խնդրելով հնարավորություն ընձեռել իրենց Աստրախանում, Ղզլարում և այլ քաղաք-

տառաւորի հետ միասին, Նիկոլայ Իվանովը, Ստեփան Մաքսիմով խաղաքովը, Մուսես Բորիսով Սանդունովը, Ստեփան Ֆիտոնովը, իսկ Երկուսը՝ հավանաբար հայեր (դրանք են կոչված Պյոտր Դմիտրիև Ֆիլատևը և Ալեքսեյ Եգորով Սուրաժենինովը)։ Նորաստեղծ այդ ֆաբրիկաների մասին առկա տվյալներն ուսումնասիրող Ի. Ի. Կոզանը նշում է, որ «Իրենց սոցիալական կազմով XVIII դարի երկրորդ քառորդի մետաքսագործական ֆաբրիկաների տերերը քիչ էին տարբերվում 20-ական թվականների ֆաբրիկատերերից, դրանք մեծ մասամբ I և II գիլդիայի վաճառականներ էին։ Նկատելի է միայն մոսկովյան մետաքսագործական ֆաբրիկաների մեջ հայերի թվի աճը, որոնք չսահմանափակվելով ինչպես նախկինում, մետաքսի ներմուծմամբ Մոսկվա, հիմնեցին այստեղ իրենց մետաքսագործական ֆաբրիկաները»⁴⁰։

Շատ ավելի մեծ թիվ էին կազմում հայերի կողմից Աստրախանում կառուցած մետաքսի ֆաբրիկաները։ Այստեղ ֆաբրիկատերեր էին հայազգի Սերգեյ Իվանովը, Պյոտր Վսրտանովը, Ռեադ Զալիևը, Առաքել Իսաևը, Իգնատ Իվանովը, Իվան Միրմանը, Իվան և Գասպար Բունիաթովները, Վարակ Իվանիսովը, Օսիպ Աֆանասևը և ուրիշներ։ Աստրախանի պատմական արխիվում կուտակված հսկայական նյութերը հանգամանորեն ուսումնասիրած Ա. Ի. Յուխտը հանդել է այն կզրակացության, որ «Աստրախանի մանածագործական արդյունաբերությունը XVIII դարի 40-

ներում զբաղվելու շերամապահությամբ և բրնձի ու բամբակի մշակությամբ, որպեսզի ստացված բերքը վաճառքի հանեն Ռուսաստանի ներքին շուկաներում և այլն։ Այնուհետև, նրանք խնդրում են հրապարակել հրամանագիր այն մասին, որպեսզի «Աստրախանում հիմնադրվի պարսկական տարբեր տեսակի մետաքսյա, կիսամետաքսյա և բամբակյա ու այլ դիպակների ֆաբրիկա, որտեղ ծայրագույն ջանասիրությամբ կաշխատենք, որպեսզի մետաքսը և բամբակը առատությամբ ստանանք»։ П. Т. Арутюнян, նշվ. աշխ., էջ 188—190։ Այդ մասին նյութերի աղբյուր է «Полное собрание законов Российской империи», т. XI с. 261—262, 609.

⁴⁰ И. И. Козан, նշվ. աշխ., էջ 131—133։

ական թվականների վերջին իր տրամադրության տակ ունեւր ավելի քան 200 դաղգահ»⁴¹: Հաջորդ երկու տասնամյակներում դաղգահների թիւը, անտարակույս, մեծ չափով ավելացել է: Մոսկվայից ու Աստրախանից բացի, հայերի կողմից մետաքսագործական մի քանի ֆաբրիկաներ էլ ստեղծվել էին Ռուսաստանի տնտեսական այլ կենտրոններում՝ Յարոսլավլում, Սերախովում, Կոլոմնայում: Դրանցից բացի, հայերը Ռուսաստանում հիմնադրում էին նաև մանուֆակտուրային այլ ձեռնարկություններ: 1729 թ. առաջ, օրինակ, ում հայազգի Իվան Դրիգորեւ Մոսկվայում հիմնել էր «մետաքսի հումքը ոսկով և արծաթով մանեկու ֆաբրիկա»⁴²: 1750 թ. Իվան և Դավիթ Թամազովներն իրենց եղբայրների հետ միասին, Աստրախանում ստեղծել էին սաֆյանի և յուֆտի գործարան: Իսկ 1761 թ. Պավել Ալինսը Մոսկվայում (Պրեսնայում) սաֆյանի գործարանի հիմքը դրեց⁴³: 1736 թ. ջուղայեցի Ավետ Կորոսյանը (Ավետ Կարասով) իրավունք էր ստացել Աստրախանում մահուդի գործարան հիմնադրելու և այլն⁴⁴:

XVIII դ. 30—40-ական թվականներին Աստրախանում արտադրվում և արեւելյան երկրներ էին արտահանվում «հայկական մաշիկներ» ու հայկական մոխրագույն մահուդ»⁴⁵: Նշենք նաև, որ 1667 թ. պայմանագրի կնքումից մեկ տարի հետո միայն Իրանից Ռուսաստան ժամանեցին մի քանի «գորգագործական և մետաքսագործական արհեստավոր-

⁴¹ А. И. Юхт, Армянская колония в Астрахани в первой половине XVIII века (Автореферат кандидатской диссертации), Е., 1959, с. 8. В. А. Хачатрян, Армянская колония в Астрахани во второй половине XVIII века (Автореферат кандидатской диссертации), Е., 1965, с. 4, 13.

⁴² И. И. Коган, *նշվ. աշխ.*, էջ 130:

⁴³ Տե՛ս Е. И. Индова, *նշվ. աշխ.*, էջ 266, 295:

⁴⁴ Տե՛ս Հ. Տեր-Հովհաննյանց, *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 177: Տե՛ս П. Т. Арутюнян, *նշվ. աշխ.*, էջ 190—191:

⁴⁵ Տե՛ս А. Юхт, Восточная торговля России в 30—40-х годах XVIII века и роль в ней армянских купцов, «Известия», 1956, № 8, с. 53.

ներ»⁴⁶։ Կան հիմքեր ենթադրելու, որ այդ վարպետները դա-
լիս էին աշխատելու ոչ միայն իրենց հայրենակիցների հիմ-
նադրած ֆաբրիկաներում, այլ մեծ չափով նաև ռուս ձեռ-
նարկատերերի մոտ։ Հայտնի է, օրինակ, որ Մոսկվայի
հնագույն մետաքսագործական մանուֆակտուրայում, որ
1714 թ. հիմնադրել էր Ա. Յա. Միլյուտինը, աշխատում էր
մի հայ վարպետ, որը միաժամանակ իր արհեստն էր սո-
վորեցնում 6 աշակերտների։ Վերոհիշյալ ֆաբրիկանում Միլ-
յուտինը Պետրոս Մեծին ուղղած իր մի խնդրագրում այդ
մասին գրել է. «...իսկ այդ պորժարանի մետաքս մաքրելու
և մանելու և ներկելու համար վարձեցի ես հայ վարպետի,
որին տվեցի 300 ռուբլի վարձ, դրանից բացի կերակրում
էի և՛ խմեցնում, իսկ այդ վարձի դիմաց [նա] սովորեց-
նում էր ինձ մոտ կերակրվող 6 աշակերտների, իսկ դրան-
ցից պիտանի դարձան 4 մարդ»⁴⁷։

Պետք է ենթադրել, որ հայ վարպետներ աշխատել են
նաև ռուս ֆաբրիկանաներին պատկանող մանածագործա-
կան այլ ձեռնարկություններում ևս։

Այսպիսով, հայ առևտրական բուրժուազիան՝ ջուղա-
հայերի գլխավորությամբ, XVII—XVIII դարերում ոչ միայն
իր ձեռքն էր վերցրել Իրանի ու անդրկովկասյան երկրների
արտաքին առևտրի կարևոր լծակները, այլև մրցակից շուներ
վարկատվության, դրամափոխության ու բանկային տարբեր
բնույթի գործարքների բնագավառում։ Այդ կապիտալի ներ-
կայացուցիչներից շատերը, կապալով ձեռք բերելով մաքսա-
տների ու փողերանոցների կառավարիչների շահութաբեր
պաշտոնները, երկրի ֆեոդալական վերնախավի հետ սեր-
տորեն դաշնակցած՝ իրենց բաժինն էին կորզում նաև ներ-
քին առևտրից ու վարչաֆինանսական գործարքներից։ Երկ-
րի շերամապահության ու արհեստագործության մի ծանրա-
կշիռ մասը նույնպես գտնվում էր հայ վաճառականական կա-
պիտալի հսկողության ներքո և աշխատում էր նրա պատվե-

⁴⁶ «Армяно-русские отношения в XVII' веке», с. 67—68.

⁴⁷ П. Т. Арутюнян, նշվ. աշխ., էջ 186; Н. Н. Козак, նշվ. աշխ.,
էջ 139 և այլն։

բով, սպասարկում էր նրան: Հայ խոջաները դրամի ուժով ձեռք էին բերում նաև հողային կալվածքներ, մեծ մասամբ ալգիներ, տեր դառնում ջրաղացների, ձիթհանների և գյուղատնտեսական մթերքների մշակման այլ ձեռնարկությունների, պահում էին մեծ թվով խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, մանավանդ ձիեր, ջորիներ, ուղտեր՝ իրենց առևտրական բեռների փոխադրման համար: Նոր քուղայում և ուրիշ քաղաքներում նրանք ունեին նաև շուկաներ՝ բալամթիվ կրպակներով, առանձին խանութներ, բաղնիքներ, սառցատներ և այլն: Մեծ էր, մանավանդ, նրանց պատկանող բնակելի տների քանակը, որ վարձով տրվում էին տնադուրկ քաղաքացիներին: Ի լրումն այս բոլորի, նրանցից ժմանք եվրոպական շուկաներ արտահանող հումքի որոշ տեսակների (հատկապես այծի նուրբ բրդի) նախնական մշակման համար ստեղծում էին արհեստագործական ձեռնարկություններ, որոնցում աշխատում էին, նույնիսկ, 100 վարձու բանվորներ: Այդպիսի արհեստագործական ձեռնարկությունների հետագա զարգացման և նրանց հիմքի վրա կապիտալիստական մանուֆակտուրաների ստեղծման համար, սակայն, Անդրկովկասում և Իրանում չկային համապատասխան տնտեսական և իրավաքաղաքական պայմաններ: Ինչպես վերը նշվեց, այդպիսի բարենպաստ պայմաններ կային Ռուսաստանում, որտեղ և հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները ներդնում էին իրենց դրամագլուխները արդյունաբերության մեջ:

РЕЗЮМЕ

В XVII—XVIII вв. значительная часть внешней торговли Ирана, в которой главное место занимал экспорт шелка-сырца, была сконцентрирована в руках торговой буржуазии армянской колонии Новая Джульфа. Существовало три действующих тракта, по которым шелк доставлялся в Европу (океанский, через Турцию, каспийско-волжский). В рассматриваемый период особое значение приобрел транзитный путь через Каспий в Россию.

Право на транзит по каспийско-волжскому пути, которого еще с середины XVI в. добивались правящие круги и торговые компании европейских стран, согласно русско-армянским торговым договорам 1667 и 1673 гг., получило армянское купечество Новой Джульфы.

Джульфинские армяне-ходжи при благоприятных условиях посылали в Россию не только караваны подчиненных непосредственно им купцов, но и, пользуясь своим привилегированным и командным положением, направляли по этому прибыльному пути также деятельность армянских купцов Восточной Армении и других торговых центров Закавказья.

Детальное изучение материалов дает возможность восстановить структуру автономной армянской общины Новой Джульфы: в правление избирались городской старшина (калантар), староста ремесленников (устабаши) и управляющие 20 кварталов—десятники, являвшиеся представителями известнейших торговых семей Новой Джульфы. Эти лица от имени общины вступали в сношения с правительственными органами Ирана и других стран, принимая на себя определенные обязательства, выносили решения, заключали соглашения и договоры и т. д. Именно от их имени выступали в Москве новоджульфинские купцы Степан Рамаданский

и Григорий Лусиков при подписании с русским правительством договоров 1667 и 1673 гг. К подобному заключению мы пришли на основании изложенного на персидском языке документа 1671 г., направленного русскому царю. Согласно этому документу, старшины города Новой Джульфы («дюльфинской слободы Калантарь с товарищи старшины») вторично уполномочивали Гр. Лусикова вести от их имени переговоры, объяснить, почему армяне не выполнили взятых на себя обязательств договора 1667 г. относительно транзита иранского шелка исключительно через Россию, и получить новое подтверждение условиям ведения торговли. Названные в этом документе «товарищи старшины» упоминаются и в других документах, касающихся переговоров Гр. Лусикова. В одном случае они названы «Армянской компании начальные люди», в другом — «армянские лутчие люди, которые есть в Испогани». В написанном Гр. Лусиковым 27 июля 1671 г. по-армянски прошении царю, скрепленном соответствующими подписями и печатями, говорится: «Вновь *калантар и наши компании* подписали договор с государем...»

Таким образом, Лусикова направили с поручением вести переговоры с царским правительством прежде всего калантар Новой Джульфы и другие лица (22 человека), названные «товарищи старшины», «начальные люди», «армянские лутчие люди» и, наконец, «компании» (подчеркиваем, компании, а не новоджюльфинская компания, как принято считать в научной литературе). Сопоставление подписей «товарищей старшин» с более поздним (1735 г.) списком десятников-квартильных Новой Джульфы приводит к выводу, что под документом, врученным от имени новоджюльфинцев русским властям в 1671 г., подписались калантар, устабаши и 20 квартильных.

Исследование приходно-расходных торговых книг и других документов дало возможность выявить структуру, организационные принципы и основные сферы деятельности торговых компаний Новой Джульфы. Особое внимание уделено в книге торговым фамилиям Шахриманенц, Ходжа-Минасенц и Агазаренц (Лазаревых).

Новоджюльфинские купцы вывозили свои товары

почти во все страны мира. Для деятельности армянского торгового капитала исключительную роль сыграли в Индии Сурат, Мадрас, Аккра, Калькутта, в Ираке—Басра и Багдад, в Сирии—Алеппо и Дамаск, в Турции—Токал, Смирна, Константинополь, в России—Астрахань и Москва, в Италии—Венеция, Ливорно, в Голландии—Амстердам.

Сказанное, однако, отнодь не означает, что армянский торговый капитал игнорировал внутренние рынки Ирана, Закавказья и Турции и оставался равнодушным к прибылям на этом поприще. В Новой Джульфе и других городах армянские купцы имели собственные рынки с многочисленными лавками, отдельные магазины, бани, морозильные помещения и т. д. На внутренних рынках Ближнего Востока армянское купечество имело компаньонов, известных под именем чарчи (коробейники). Бродячие коробейники обычно составляли небольшие группы в 2—3 человека, получали от крупных торговцев в кредит в основном необходимые бытовые товары (дешевые ткани, драгоценные украшения, зеркала, ножицы, иголки и т. д.) и, взвалив на собственные спины, странствовали в далеких от крупных торговых центров провинциях.

Армянские торговые компании XVII—XVIII вв., как правило, объединяли ближайших родственников. Руководство находилось в руках старшего представителя фамилии. Сообщества данного типа создавались обычно на длительное время для ведения разнообразных дел. По истечении установленного срока или же по возникшей необходимости результаты деятельности компании со всей тщательностью и строгостью анализировались, после чего, согласно решению членов ассоциации, она либо продолжала свое существование, либо ликвидировалась. Каждый представитель компании принимал пассивное участие и нес полную ответственность за деятельность компании, как и отдельных ее членов, и был обязан безоговорочно выполнять все возложенные на него руководителем (или руководством) поручения и обязанности. Материальная выгода членов компании охранялась как руководством самой компании, так и органами самоуправления и государственными властями. Члены компании имели право зарабо-

танную ими сумму («эчалмал»), а также часть приданого своих жен использовать по своему усмотрению: для создания нового фонда в пределах данной ассоциации или же организации нового сообщества уже с другими компаньонами. Вокруг крупных торговых компаний группировалось определенное количество мелких товариществ, экономические возможности которых были строго ограничены и непрочны.

Крупные армянские торговые компании Новой Джульфы принимали вклады не только от своих компаньонов, но и от посторонних лиц, которые вкладывали свои не включенные в торгово-ростовщический оборот деньги (в основном «небольшие суммы») с целью получить определенный процент от прибыли. Эти вклады в армянских источниках назывались «аманат».

В экономических центрах Восточной Армении, Закавказья и Ирана функционировали также долговременные или, напротив, краткосрочные торговые ассоциации, где родственная связь не принималась в расчет. Последние создавались обычно с целью приобретения дорогостоящих товаров, чаще всего драгоценных камней. Бывали случаи, когда при покупке слишком дорогостоящего товара компаньоны вынужденно включали в свою ассоциацию купцов другой национальности.

В монографии исследуется широко распространенная в армянской торговой среде форма ассоциации владельцев капитала—коммента—в двух ее разновидностях (односторонняя и двухсторонняя).

В случаях односторонней коммента, при которой кредитор, или «спящий партнер» («хозяин», «ага» в армянской среде), открывал кредит купцу, не имеющему собственного капитала—трактатору («товарищу» в армянской среде), кредитор, как правило, получал 66 2/3—75%, а заемщик—25—33 1/3% от общей прибыли. По-видимому, размеры дохода определялись в зависимости от функций заемщиков. Минимальный доход получали те заемщики, которые были лишены права самостоятельных решений и действовали согласно полученным от кредитора инструкциям. Выше был доход заемщиков, пользовавшихся определенной свободой действий.

При двухсторонней коммента одна из входящих в:

компанию сторон (хозяин) вносила большую часть капитала, а вторая—остальную. Действующие партнеры («товарищи») двухсторонней комменды резко отличались от «товарищей» односторонней комменды, имея почти равные со «снящим партнером» права и зачастую владея не меньшими, чем кредитор, средствами. Устойчивой таксы при определении размеров прибыли между компаньонами двухсторонней комменды не было, и решающую роль играли, вероятно, «переговоры» между сторонами.

В книге исследуются также кредитно-ростовщические отношения новоджувльфинских купцов. В XVII—XVIII вв. хищнические традиции средневекового бесконтрольного ростовщичества в сфере деятельности армянского торгового капитала еще не были изжиты и продолжали широко применяться в практике ростовщических операций (12, 18, 24 и даже 28 процентов прибыли с ссуды считались в среде ростовщиков обычной процентной ставкой). Наиболее распространенной была ссуда с 6—9 процентным ростом денег в год, что несомненно, являлось показателем более развитых экономических отношений нового времени.

В работе анализируются имеющиеся в армянских источниках многочисленные данные о форме кредита, называемом «морской ссудой», и выявляются ее разновидности в среде армянских купцов: «ек гуши авак» (односторонняя) и «до гуши авак» (двухсторонняя). Односторонним назывался тот вариант ссуды, когда получивший ссуду купец был обязан закрыть все счета с кредитором или уполномоченным им лицом там, куда прибывал загруженный его товарами корабль. Двухсторонняя ссуда учитывала морской путь от пункта отправления до места назначения и обратно.

Документы о первой разновидности «морской ссуды» преимущественно упоминают маршруты Сурат-Басра, Калькутта-Басра, Калькутта-Сурат и относятся к 80-ым гг. XVII—40-ым гг. XVIII вв. Значительные трудности связаны с выяснением процента прибыли с односторонней ссуды. Прибыль с ссуды по маршрутам Индия—Иран и Ирак составляла, по-видимому, в среднем

20%. Надо думать, что она возрастала соответственно с дальностью расстояний.

С односторонней формой «морской ссуды» тесно связывалась та разнородность кредита, которая обычно называлась «платой за проезд» («еолборджи»). За редким исключением, это была небольшая сумма, которая могла пригодиться купцам для удовлетворения возникающих во время путешествия возможных нужд, при этом размер процента прибыли резко колебался, по-видимому, в зависимости от таких обстоятельств, как личность займодавца и должника, их взаимоотношения, национальность и т. д.

В документах о двухсторонней ссуде, относящихся по большей части к 10–40 гг. XVIII в., упоминаются в основном следующие маршруты: из Мадраса в Маннлу и обратно, из Чандернагора в Джидду и обратно, из Москвы в Астрахань и обратно, из Шемахи в Астрахань и обратно, причем два последних маршрута отличались тем, что здесь морской путь сочетался с трудным, тающим неожиданности сухопутным путем.

Детально исследуется также наиболее развитая форма векселя (неотъемлемого элемента торгово-денежных операций)—переводный вексель. Переводный вексель (тратта), нашедший в сфере деятельности армянского торгового капитала довольно широкое применение, способствовал распространению торговой деятельности из Ирана и Закавказья в Россию, Турцию, арабские страны, Западную Европу, Индию, Индокитай, Филиппинские острова и Индонезию.

Переводный вексель получил на местной почве две своеобразные формы выражения.

Первая, наиболее распространенная форма—гарантийный вексель без залога (барат). В астраханском судебнике так объясняется его сущность: «Баратом (векселем) или долговой распиской называется тот документ (обязательство), с помощью которого одно лицо (заемщик) берет деньги в долг у другого (кредитора), чтобы в другом месте он или кто другой вместо него произвел расчет с кредитором или уполномоченным им лицом (требователем долга)».

В большинстве переводных векселей этого типа размер процента равняется 6 в год. Немало векселей

с условием выплаты 9% прибыли в год. Засвидетельствовано также несколько векселей, устанавливающих прибыль размером 12 % в год. Самый низкий процент прибыли от ссуды устанавливался чаще всего в тех случаях, когда в сделки вступали экономически наиболее тесно связанные друг с другом, сгруппированные вокруг одной торговой компании купцы. Заемщиками в долговых записях с условием выплаты 9% прибыли в год выступали обычно женщины, нуждавшиеся в деньгах для удовлетворения насущных нужд и потребностей оставленной на их попечение семьи. При этом обязанность выплаты по векселю ложилась на торгующих на чужбине мужей и сыновей. Договоры с условием 12%-ой годовой прибыли заключались новоджультфинскими купцами и ростовщиками с представителями армянской общины города, принадлежавшими, однако, к другому сословию, с армянскими купцами из других мест, с государственными деятелями, венценосными особами, купцами другой национальности и должностными лицами.

Вторая разновидность переводного векселя—«вексель товарам или под залог». В этом случае дебитор ссужался деньгами при определенной материальной гарантии, оставляя в залог какой-либо товар—«поткат». Заемщиками при этом были обычно владельцы дорогостоящих товаров, предназначенных для продажи в дальних местностях и странах. С помощью этой разновидности переводного векселя перед ними открывалась возможность, сразу получив от кредиторов всю или большую часть стоимости товаров, включить ее в оборот до окончательного завершения сделки.

Переводный вексель в сфере деятельности армянского торгового капитала прошел все стадии своего развития и в итоге принял форму передаточной надписи-индоссамента.

Таким образом, армянский торговый капитал в течение XVII в. и первой половины XVIII в. хотя и не отказался полностью от регулирующих кредитно-денежные отношения ростовщических принципов раннего средневековья, тем не менее, смог воспринять, включить в действие и развить на основе переводного вексе-

ля вполне прогрессивную по тому времени систему кредита денежного перевода.

В работе уделяется внимание также деятельности армянского купечества в других сферах экономики и его вклад в зарождение капиталистического производства.

Несмотря на то, что почти вся земля в Иране считалась государственной собственностью и приобретение земли в личное пользование было связано с большими трудностями, армянским ходжа это все же, видимо, удавалось, в основном за счет освоения целинных и залежных земель. Широкие прочные связи армянского купечества с крупными центрами мировой торговли давали возможность армянским купцам ввозить из других стран и местностей новые виды сельскохозяйственных культур, а также улучшать сорта местных культур.

Составить полное и цельное представление о деятельности армянского торгового капитала было бы невозможно без анализа роли и характера деятельности армянского ремесленничества в Сефевидском Иране и, в частности, в Новой Джульфе. Большая часть ремесленников работала, естественно, на местный рынок и экономически не была связана с армянским торговым капиталом. Совершенно иным было положение тех ремесленников, характер работы которых был полностью или частично подчинен требованиям внешнего рынка или господствующих классов своей страны.

Те ремесленники (независимо от национальной принадлежности), основная часть производства которых предназначалась для продажи на внешних рынках, экономически зависела от купеческого капитала, выполняла его дорогостоящие заказы, зачастую получая необходимое сырье и материалы. Воздействие и влияние армянского торгового капитала на производство совпадает с общим стереотипом этого процесса, а потому к нему в полной мере применима характеристика, данная этому явлению К. Марксом: «...все развитие купеческого капитала влияет на производство таким образом, что все более придает ему характер производства ради меновой стоимости, все больше превращает продукты в товары».

Имеются данные, позволяющие предположить, что армянский торговый капитал распространял свое влияние и на другие области ремесленного производства. Он участвовал, например, в создании предприятий мануфактурного типа.

Армянское купечество выполняло в какой-то мере роль посредника между Востоком и Западом. С одной стороны, оно снабжало сырьем промышленные предприятия стран, вставших на путь капиталистического развития. Одновременно оно нередко ввозило на Запад и распространяло новые продукты питания, пряности, лекарства, различные виды благовоний и т. д. С другой стороны, армянский торговый капитал не только импортировал в страны Востока европейские товары, но и взял на себя почетную миссию пропагандиста и в какой-то мере даже носителя западной культуры и производства.

Деятельность армянских купцов была широка и многогранна. Однако, оставаясь в тесных рамках социально-экономических отношений феодального Ирана, они были не в состоянии воздействовать на господствующий здесь отсталый способ производства. Совершенно иные возможности открывались перед армянскими купцами вне Ирана и Закавказья.

Самая многочисленная группа представителей армянского торгового капитала эмигрировала в 20—60 гг. XVIII в. из Ирана и Закавказья для обоснования в России. Армяне избрали местожительством Астрахань, Кизляр и Моздок на Северном Кавказе, Москву и Петербург. В прошении 1752 г. большой группы армянских купцов о предоставлении им права на постоянное жительство в России, в частности, говорилось: «...оставя свое отечество, свойственников, также недвижимые имения, с немалыми своими капиталами, многими фамилиями в Россию без всякого опасения выехавши, селились в разных великороссийских городах, произвели фабрики и распространяли купечество...».

Это был тот период истории России, когда хозяйственно разобщенные области страны постепенно соединялись в единое экономическое целое, в результате чего в крупных городах стали процветать капиталистические мануфактуры. Характеризуя это новое состояние

экономики и хозяйства страны, В. И. Ленин писал: «...оно вызывалось усиливающимся обменом между областями, постепенно растущим товарным обращением, концентрированием небольших местных рынков в один всероссийский рынок. Так как руководителями и хозяевами этого процесса были капиталисты-купцы, то создание этих национальных связей было не чем иным, как создание связей буржуазных».

Эмигрировавшие в Россию представители армянского торгового капитала, найдя здесь соответствующие экономические предпосылки и условия для своей деятельности, также стали вкладывать свой капитал в промышленность, в частности и главным образом в предприятия по производству шелка.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	էջ 5
Ներածություն	
ԳլՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Նոր Զուղայի ինքնավար մարմինները և առևտրական ընկերությունները	
1. 1667 թ. հայ-ռուսական առևտրական պայմանագիրը և Նոր Զուղայի ինքնավար մարմինները	15
2. Առևտրական ընկերությունները հայ խոջայական կապիտալի շրջանակներում	65
ա) Շահրիմանենց առևտրական ընկերությունը	69
բ) Խոջա-Մինասենց առևտրական ընկերությունը	81
գ) Աղաղարյանների (Հաղարյանների) առևտրական ընկերությունը	100
3. Կոմենդայի տարատեսակները	121
4. Դրամական ավանդներ	139
5. Վարձկան մշակներ և շարչիներ	143
ԳլՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Վարկա-վաշխառռական հարարերությունները	
հայ խոջայական միջավայրում	
1. Վաշխառռական վարկ	150
2. Ծովային վարկ	161
3. Փոխանցային մուրհակի (փոխանցագրի) կիրառությունը և և նրա զարգացման մակարդակը	168
ԳլՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Հայ առևտրականների դործունեությունը անտեսական այլ ոլորտներում և նրանց դերը կապիտալիստական արտադրության սաղմնավորման գործում	189
Ամփոփում (ռուսերեն)	213

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆՐԱ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԵՏ XVІІ—XVІІІ ԴԱՐՆԵՐՈՒՄ

Հրատ խմբագիր՝ Ա. Վ. Հովակիմյան
Տեխ. խմբագիր Հ. Գ. Հմայակյան
Սրբագրիչներ՝ Գ. Է. Գեղձակյան, Վ. Թ. Սիմոնյան

ИБ № 1282

Հանձնված է շտրվածքի 23.07.1987 թ.: Ստորագրված է տպագրության
8.01.1988 թ.: ՎՅ 09177: Չափը $84 \times 108^{1/32}$: Տառատեսակ «գրքի սո-
վորական», բարձր տպագրություն Պայմ. 11,76 մամ., տպագր. 14,0
մամուլ: Ներկ. մամուլ 11,76: Հրատ.-հաշվարկ. 10,03 մամուլ: Տպարանակ
1000: Հրատ. № 7198: Պատվեր № 1012: Գինը 1 ռ. 25 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին:

Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.

1 n. 25 4.

A u
76607